ԱՄԻՆԵ ԱՎԴԱԼ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՔՐԴԵՐԻ ԿԵՆՑԱՂԸ

Հրատարակվում է
Հոկտեմբերյան Սոցիալիստական
Մեծ ռեվոլյուցիայի 40-ամյակի առթիվ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР

Институт истории

АМИНЕ АВДАЛ

БЫТ КУРДОВ ЗАКАВКАЗЬЯ

Издательство АН Армянской ССР

ЕРЕВАН — 1957

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Պատմության ինստիտուտ

9(91.57)
Ա-78

ԱՄԻՆԵ ԱՎԴԱԼ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՔՐԴԵՐԻ ԿԵՆՑԱՂԸ

1284

Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն

ԵՐԵՎԱՆ — 1957

Տպագրվում է Հայկական ՍՍՌ
Գիտությունների ակադեմիայի խմբագրական-հրատարակչական
խորհրդի որոշմամբ

10808

ՆԱԽԱԲԱՆ

Քուրդ ժողովուրդը Առաջավոր Ասիայի հնագույն ժողովուրդներից մեկն է: Քրդերը ներկայումս ապրում են Իրանում, Թուրքիայում, Իրաքում, Սիրիայում, Սովետական Միությունում՝ Անդրկովկասի և Միջին Ասիայի ռեսպուբլիկաներում:

Քրդերի ծագման մասին մեզ հասած պատմական գրավոր տեղեկությունները կցկտուր են. հայտնի են զանազան դիցաբանական առասպելներ և ավանդություններ, որոնք ներկա աշխատության լուսաբանման համար իրենց էությամբ կարող են օգտակար լինել:

Մինչև այսօր քուրդ ժողովրդի պատմական անցյալի մասին չկա մարքսիստորեն շարադրված մի ամփոփ աշխատություն: XIX դարի սկզբներից արդեն բուռն հետաքրքրություն է առաջանում քրդերի կյանքի ուսումնասիրման նկատմամբ, և մինչև մեր օրերը արդեն կուտակվել է զգալի գրականություն:

Ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների ժամանակ Պարսկաստանից ու Թուրքիայից բավականաչափ քրդեր գաղթում են Ռուսաստան և ապաստան գտնում ռուսական պետության հարավ-արևմտյան ծայրամասերում՝ Արևելյան Հայաստանում և Հյուսիսային Ադրբեջանում: Սակայն քրդերի հոսանքը դեպի Անդրկովկաս շատ ավելի վաղ էր սկսվել: Դեռևս 1595 թվականին առաջին անգամ քրդական որոշ ցեղեր Թուրքիայից և Պարսկաստանից, Թուրքիայի նվաճողական քաղաքականության նկատառումներով, տեղափոխվում են Լեռնային Ղարաբաղ (այժմյան Լաչինի շրջան): 1608—1617 թվականներին Իրանի Շահ Աբասը, հետևելով Թուրքիայի օրինակին, հայ-քրդական ընդհարումներ առաջ բերելու և Զանգեզուրը իրեն ենթարկելու նպատակով, քրդական բավականաչափ ցեղեր տեղափոխում է Լեռնային Ղարաբաղ: Այ-

նույնպես բազմաթիվ ցեղեր Անդրկովկաս են տեղափոխվում XIX և XX դարերի ընթացքում, հատկապես 1813 թվականին՝ Գյուլիստանի պայմանագրի հիման վրա: Տեղափոխված ցեղերից աչքի էին ընկնում հետևյալները՝ Հասանլար, Ալամշակլար, Վալիլար, Ալփագլար, Մամալար, Սիպկա, Հասանա, Մահմդա, Հեջնկա, Ջալալիա, Բալուկա, Շամսկա և այլն: Այդ ցեղերը հետագայում տարածվում են Արևելյան Հայաստանի, Հյուսիսային Ադրբեջանի, մասամբ էլ Վրաստանի տարբեր վայրերում և մշտական բնակություն հաստատում, իսկ հետագայում՝ ռուս-թուրքական պատերազմից հետո (1877—1878), Անդրկովկաս փոխադրված քրդերի հիմնական բնակավայրը դառնում է Հայաստանը, որովհետև այդ ժամանակ Թուրքիայից (Ալիթարից) դարձյալ մեծ քանակությամբ քրդեր (եզդիներ) գաղթեցին Ղարսի մարզը և Երևանի նահանգը:

Իրենց նոր բնակավայրերում քուրդ աշխատավորությունը հայերի և անդրկովկասյան մյուս ժողովուրդների, ինչպես նաև ռուսների հետ հաստատել է եղբայրական սերտ հարաբերություններ:

Այդ բարեկամությունը մշակվել է դարերով, չնայած որ տիրող դասակարգերը ամեն կերպ խոչընդոտ են հանդիսացել դրան: Թուրքիան, Իրանը և ցարական կառավարությունը միշտ աշխատել են քրդերին օգտագործել իրենց շահերի համար: Ռուսական բանակի կապիտան Պ. Ավերյանովը գրում է, որ «19-րդ դարի ընթացքում Ռուսաստանին վիճակվել է մղել երկու պատերազմ Պարսկաստանի և չորսը՝ Թուրքիայի դեմ: Այդ պատերազմների ժամանակ, կովկասյան ռազմական գործողությունների թատերաբեմում քրդերը միշտ մասնակցություն են ունեցել նախ մեր թշնամիների և ապա մեր զինակիցների շարքում»[1]:

Չնայած քրդերի հետամնացությանը, նրանց կրոնական ֆանատիզմին և այն բանին, որ նրանց ճնշող մեծամասնությունը գտնվում էր, այժմ էլ գտնվում է, Թուրքիայում և Իրանում, այնուամենայնիվ, քուրդ ժողովրդի համակրանքը, ինչպես առաջ, այնպես էլ հիմա ռուս մեծ ժողովրդի կողմն է: Այս մասին հետաքրքրական տեղեկություններ են հաղորդում Խաչատուր Աբովյանը և Պ. Ավերյանովը:

«Նեղված և ջլատված լինելով թուրք կառավարության կող-

[1] *П. Л. Аверьянов,* Курды в войнах России с Персией и Турцией в течение XIX столетия, Тифлис, 1900, էջ 1:

մից,—ասում է Խ. Աբովյանը,—նրանք (քրդերը՝ Ա. Ա.), սակայն, չեն թաքցնում իրենց ատելությունը թուրքերի հանդեպ և նվիրվածությունը ռուսների նկատմամբ»[1]:

Քիչ չեն փաստերը, երբ ռուս-թուրքական պատերազմների ժամանակ քրդական բազմաթիվ ցեղեր անցել են ռուսների կողմը և նպաստել ռուս զորքերի հաղթանակին:

1829 թվականին Էրզրումի վրա հարձակվելու համար կոմս Պասկևիչի կազմած ռազմական պլանների մասին խոսելիս Պ. Ավերյանովը նշում է, որ այդ պլաններում մեծ հույս էր դրվում Թուրքիայի քրդերին ռուսների կողմը գրավելու վրա և նրանց ներգրավելու ռազմական միասնական գործողությունների մեջ ընդդեմ Թուրքիայի[2]: Պասկևիչը, լավ ուսումնասիրած լինելով քրդերի կյանքը Թուրքիայում, գիտեր, որ քրդերը ընդհանուր առմամբ համակրում են ռուսներին և ըստ այնմ էլ նա կազմում էր իր ռազմական պլանները:

Ռուս ժողովրդի նկատմամբ քրդերի տածած համակրանքը ցայտուն կերպով դրսևորված է քրդական հետևյալ ասացվածքում՝ «մյաթե ուրըս ճարա բեճարանա» (ռուս ժողովուրդը անճարների համար ճար է):

Բուրժուական գիտնականներից, ճանապարհորդներից և միսիոներներից շատերը քրդերին անվանել են «ավազակներ», «ավազակաբարո ժողովուրդ», «թալանչիներ», «մարդասպաններ» և այլն[3]:

Այդպիսի թյուր կարծիք քրդերի մասին գտնում ենք հայ և այլազգի բուրժուական որոշ գիտնականների ու գրողների մոտ ևս: Նման մոտեցումը արտացոլումն է բուրժուական գիտության ռեակցիոն ներկայացուցիչների կողմից զարգացրած այն հակագիտական տեսակետի, ըստ որի, որոշ, հատկապես տիրող ժողովուրդներ ի բնե կոչված են ստեղծելու և կերտելու մարդկային կուլտուրան ու քաղաքակրթությունը, իսկ մյուս, փոքր ժողովուրդները ամենաշատը կարող են ընդօրինակել և կամ հետևել նրանց:

[1] Խ. Աբովյան, *Քրդեր, «Սովետական գրականություն», Երևան, 1941, № 9—10, էջ 102:*

[2] *Տե՛ս П. А. Аверьянов,* Курды в войнах России с Персией и Турцией в течение XIX столетия, Тифлис, 1900, էջ 1:

[3] *Տե՛ս մանրամասնապես* M. Streck—Armenien, Kurdistan und Westpersien, München, 1808, էջ 46 և Fr. Bodenstedt, Die Völker des Kaukasus, Berlin, 1855, էջ 385:

Ազգագրական, բանահյուսական և պատմական մի շարք նյութեր կան, ինարկե, նաև այն մասին, որ եղել են ավազակային խմբեր, որոնք միշտ էլ կազմավորվել և գլխավորվել են քուրդ բեկերի և աղաների կողմից, սակայն դրանք չեն, որ որոշում են քուրդ ժողովրդի դեմքը:

Քուրդ ժողովուրդը, ի դեմս աշխատավորության («ռայա»), միշտ էլ ապրել է իր ազնիվ վաստակով և ստեղծել է իր ինքնատիպ կուլտուրան:

Այս հանգամանքն իր արտացոլումն է գտել բոլոր այն ուսումնասիրողների մոտ, որոնք քրդերին մոտեցել են անաչառորեն և փորձել են օբյեկտիվորեն վեր հանել ժողովրդի դարերով ստեղծած կուլտուրան: Այսպիսի փայլուն օրինակ է տվել հայ մեծանուն գրող և լուսավորիչ Խաչատուր Աբովյանը, նույնպիսի մոտեցում է ցուցաբերել նաև պրոֆ. Ս. Եղիազարյանը: Նրանք մեծ սիրով և գիտական ամենայն բարեխղճությամբ ուսումնասիրել են քրդերի կյանքն ու կենցաղը և տվել են լիարյուն այս ժողովրդի ճշմարտացի նկարագիրը:

Խ. Աբովյանը, Ս. Եղիազարյանը իմացել են քրդերի լեզուն, նրանց սովորությունները, հոգեբանությունը: Խ. Աբովյանը հայատառ քրդերենով գրի է առել քրդական բանահյուսության նմուշներ և այդ գոհարները թարգմանել է գերմաներեն՝ համապատասխան բառարանով և ծանոթագրություններով:

Խ. Աբովյանի գրի առած քրդական բանահյուսության նմուշները թե՛ իրենց գրական ձևի առանձնահատկություններով և թե՛ բովանդակությամբ շատ հետաքրքիր և արժեքավոր նյութեր են: Աբովյանը, բարձր գնահատելով քուրդ ժողովրդին, նրա ստեղծարար մտահղացությունը՝ նրա կյանքի, ստեղծագործության զանազան կողմերի, հատկապես նրա բանահյուսության մասին գրել է բազմաթիվ հոդվածներ, ուսումնասիրություններ, որոնց մեջ դրսևորել է քուրդ ժողովրդի կյանքն ու կենցաղը:

1848 թվականին Թիֆլիսում լույս տեսնող «Կավկազ» թերթի մի քանի համարներում հրատարակվում է Խ. Աբովյանի «Քրդեր» ընդարձակ հոդվածը: Հայտնի են նաև Խ. Աբովյանի ձեռագիր ու տպագրված այլ աշխատությունները՝ «Քրդեր և եզդիներ», «Ակնարկ քրդերի ծագման, ազգայնության, լեզվի, սովորությունների և նիստ ու կացի մասին», «Մի քանի դիտողություններ քրդերի և եզդիների մասին» և այլն: Այս աշխատությունները հետաքրքրական են թե՛ ազգագրական և թե՛ պատմական տեսակետից:

Խ. Աբովյանը բարձր է գնահատել քրդական ֆոլկլորը: «Քրդերի ժողովրդական պոեզիան,—գրում է նա,—ապշեցուցիչ ընթացք է ունեցել և հասել հնարավոր կատարելագործության: Ամեն մի քուրդ, մինչև իսկ քրդուհի, ի բնե հոգով բանաստեղծ է»[1]:

Պրոֆ. Ս. Եղիազարյանը հանգամանորեն ուսումնասիրել է Հայաստանի քրդերի կյանքն ու կենցաղը: Հակառակ բուրժուական գիտնականների՝ քրդերի մասին ունեցած թյուր կարծիքների, Ս. Եղիազարյանը իր աշխատություններում քրդերին անվանում է «ազնիվ», «բարի», «քաջ» ժողովուրդ, մեծարում է քուրդ ժողովրդի բանավոր ստեղծագործությունները և այլն: Եղիազարյանը գրի է առել ազգագրական և ֆոլկլորային բազմաթիվ նյութեր և այդ նյութերի ու քրդերի կյանքին խորը գիտակ լինելու հիման վրա Հայաստանի քրդերի մասին գրել է գիտական արժեքավոր ուսումնասիրություններ, կազմել է քրդերենից ռուսերեն բառարան[2]:

Նշված հեղինակներից բացի, քրդերի կենցաղի և կուլտուրայի, նրանց սովորությունների ու հավատալիքների ուսումնասիրությամբ զբաղվել են նաև ուրիշները, ինչպես նախասովետական, նույնպես և սովետական ժամանակաշրջանում: Արժեքավոր են հատկապես Թելլորի, Բոդենշտեդտի, Կարպեի, Մինորսկու, Ս. Հայկունու, Րաֆֆու, Լաղոյի (Հ. Ղազարյան), Զուրաբնի և այլոց ուսումնասիրությունները, չնայած, որ սրանց մոտ կան մի շարք անճշտություններ և սխալներ:

Սովետական ժամանակաշրջանում քուրդ ժողովրդի ծոցից ելան քուրդ գիտնականներ՝ ֆիլոլոգիական գիտությունների թեկնածուներ Հաջիե Ջնդին, Ղանատե Քուրդոն, Զարքազե Բաքոն, Խալըթե Չաչոն, Իվան Քյալաշովը. ինչպես և ոչ քուրդ գիտնականներից Սովետական Միությունում ներկայումս քրդագիտությամբ զբաղվում են Օ. Վիլչևսկին, Լ. Ցուկերմանը, Տ. Արիստովան, Մ. Ռուդենկոն և ուրիշները:

Սովետական քրդագետները, հաշվի առնելով անցյալում արվածը, արդեն լուրջ քայլեր են անում քուրդ ժողովրդի կենցաղն

[1] Խ. Աբովյան, Քրդեր, «Սովետական գրականություն», Երևան, 1941, № 9—10, էջ 103:

[2] Տե՛ս *С. Егиазаров*, Краткий этнографический очерк Курдов Эриванской губернии, „Записки Кавк. отд. Импер. Русск. геогр. об-ща", Тифлис, 1891, кн. XIII.

ու կուլտուրան մարքսիստական-լենինյան մեթոդոլոգիայով բազմակողմանիորեն ուսումնասիրելու ուղղությամբ:

Տվյալ աշխատությունը մի փորձ է՝ տալու Անդրկովկասի քրդերի անցյալ և արդի կենցաղի ամբողջական նկարագիրը, մի բան, որը մինչև այժմ արված չէ, բայց և շատ անհրաժեշտ է քուրդ ժողովրդի կուլտուրան վեր հանելու առումով:

Քրդուհին ազգային տարազով

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՔՐԴԵՐԻ ԿԵՆՑԱՂԸ ՆԱԽԱՌԵՎՈԼՅՈՒՑԻՈՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Ա. ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Անդրկովկասում քրդերի ներկայիս բնակավայրերն են՝ Հայկական ՍՍՌ մայրաքաղաք Երևանը, Ապարանի, Արտաշատի, Թալինի, Բասարգեչարի, Հոկտեմբերյանի, Վեդու, Ադրբեջանական ՍՍՌ Լաչինի, Քյալբաջարի, Կուբաթլիի շրջանները: Քրդերը մեծ թվով ապրում են նաև Վրացական ՍՍՌ մայրաքաղաք Թբիլիսիում:

Նախասովետական շրջանում քրդերի մի մասը ապրում էր Երևանի նահանգի Սուրմալույի գավառում՝ Արարատի ստորոտներում, ինչպես և Արտաշատի շրջանում, որն ընկած է Արարատյան դաշտի կենտրոնում և արևելքից կից է Վեդու, արևմուտքից՝ Էջմիածնի շրջաններին, իսկ հյուսիսից՝ Երևանին: Ապարանի շրջանը հարավից կից է Աշտարակի, հյուսիսից՝ Սպիտակի, արևելքից՝ Ախտայի շրջաններին:

Ապարանի և Ախտայի շրջանները միմյանցից բաժանվում են Ծաղկունյաց (Միսխանայի) լեռնաշղթայով, որը ձգվում է մինչև Հրազդան գետը:

Այս լեռնալանջերը հարուստ են փարթամ բուսականությամբ և լավ արոտատեղիներ են: Սրանց մեջ նշանավոր է Թեղենիս (Ալիբեկ) սարը, որը գտնվում է Ծաղկաձորի մոտ: Ապարանի շրջանի քրդաբնակ գյուղերից դեպի հարավ (Երևան) գտնվում է Արայի լեռը: Վերջինս իր դեպի հարավ-արևմուտք թեքված մասով մի խոր ձոր է ներկայացնում, որի համար հայերը նրան ավել

են «վերը պատռած» մականունը, ինչպես և քրդերն են կոչում այդ լեռը: Ծաղկունյաց լեռներից դեպի արևելք գտնվում են Գեղամա (Ագմաղանի) լեռները, որոնց փարթամ արոտավայրերը օգտագործել են նաև քրդերը: Այժմ այդ արոտավայրերը օգտագործում են Արտաշատի շրջանի կոլտնտեսությունները: Ապարանի շրջանը Սպիտակի շրջանից բաժանվում է Ծաղկունյաց լեռների վերջավորությամբ և Ղարադաղ (Սևսար) լեռով, որը նույնպես լավագույն արոտավայրերից մեկն է հանդիսանում: Արևմուտքից Ապարանին նայում է Արագած լեռը, որի լանջերը ճոխ և ընդարձակ արոտավայրեր են: Արագածի ստորոտում եղբայրական փոխհարաբերությունների մեջ ապրում են հայերն ու քրդերը:

Արագած լեռան խառնարանները լցված են ջրով, կազմելով փոքրիկ լճեր: Այդ ջրերը բուժիչ հատկություն ունեն և ժամանակին պաշտամունքի առարկա են հանդիսացել շրջակա գյուղերի թե՛ հայ, թե՛ ադրբեջանցի և թե՛ քուրդ բնակիչների համար:

Ապարանի շրջանը, որտեղ, բացի հայկական գյուղերից, կա նաև քրդական 10 գյուղ, ներկայացնում է մի հովիտ, ընկած Արագած լեռան և Ծաղկունյաց լեռնաշղթայի միջև, դա Ապարանի բարձրավանդակն է, որտեղից դեպի Աշտարակ է հոսում Քասախ գետը:

Թալինի շրջանին սահմանակից են՝ հարավից Հոկտեմբերյանի, հյուսիսից՝ Աղինի շրջանները, արևելքից շրջանի սահմանները ձուլվում են Արագածի փեշերին: Շրջանը արևմուտքից հարում է Թուրքիային, ուր սահմանագիծ է կազմում Ախուրյան գետը:

Մինչև 1925 թվականը այդ շրջանում ապրել են նաև ադրբեջանցիներ, որոնք տեղափոխվել են Ադրբեջան և Հայաստանի այլ վայրեր: Ինչպես Ապարանի, նույնպես և Թալինի շրջանների հայկական և քրդական գյուղերը գտնվում են կողք-կողքի:

Շրջանի տեղանքը լեռնոտ ու քարքարոտ է, հարթությունները շատ սակավ են, դրանք առավելապես թմբքույններ են, ընկած հանդիպակած փոքր ու մեծ բլուրների և բլրաշարքերի միջև: Կան նաև անդնդախոր ձորեր: Գետնի մակերեսը հարուստ է օբսիդիանի քարերով, որին տեղի բնակիչները «սատանի եղունգ» են անվանում: Ամռան ամիսներին արևի ճառագայթներից շիկացած բլուրները դեղնակարմրին են տալիս: Հեռվից նայելիս թվում է, թե դրանք օձերի ու կարիճների անհյուրընկալ բներ են, բայց իրականում դաշտեր և արոտավայրեր են՝ հաղթահարված մարդու

աշխատանքով: Այստեղ մշակում են «Գյամե քըրկ»[1], «Գալգալոտ» տեսակի ցորեն, ինչպես նաև գարի: Հատկապես Արագածի լանջերը գարնանը ծածկվում են փարթամ ու ճոխ կանաչով, որը, սակայն, չոր կլիմայի պատճառով շուտ է խամրում, հուլիսին արդեն այդ լանջերը խանձված՝ մոխրագույն տեսք են ստանում:

Թալինի շրջանում գետեր չկան, ընդհանրապես ջրի պակաս է զգացվում, իսկ Ապարանի շրջանը ջրառատ է: Երկու շրջաններում էլ ձմռանը այնպիսի քամիներ են լինում, որ սառնամանիքից երբեմն հնարավոր չի լինում տնից դուրս գալ: Ապարանի բարձրավանդակում, համեմատաբար, ավելի ցուրտ է լինում: Խիստ բքերի պատճառով Ապարանի և հարևան շրջանների միջև երբեմն հաղորդակցությունը շաբաթներով ընդհատվում է, Ապարանի շրջանում ձմեռը տևում է 5—6, իսկ Թալինում՝ 4—5 ամիս:

Ապարանում հաճախ տեղացող անձրևները թեև նպաստում են որոշ բույսերի աճմանը, բայց հացահատիկի վրա անբարենպաստ են անդրադառնում, իսկ Թալինի վարելահողերը ավազախառն են, առանց երկարատև անձրևների լավ բերք չեն տալիս:

Նախասովետական շրջանում Ապարանի շրջանում կար միայն մի խճուղի, իսկ Թալինի շրջանում ոչ մի կանոնավոր ճանապարհ գոյություն չուներ: Այժմ երկու շրջաններն էլ բարեկարգ խճուղիներով կապված են Երևանի, Լենինականի, հարևան շրջանների հետ, ինչպես նաև այդ շրջանների գյուղերը՝ միմյանց հետ:

Լաչինի շրջանը գտնվում է Լեռնային Ղարաբաղի և Հայկական ՍՍՌ Գորիսի շրջանի միջև: Հարավից Լաչինին սահմանակից են Կուբաթլին, արևելքից՝ Ստեփանակերտի, արևմուտքից՝ Գորիսի շրջանները, իսկ հյուսիսից՝ Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ մարզը: Լաչինը լեռնային շրջան է, նրա բարձրաբերձ լեռները ծածկված են նոսր անտառներով: Լաչինի լեռնալանջերը նույնպես լավագույն արոտավայրեր են հանդիսանում: Անցյալում այստեղ գոյություն չի ունեցել քիչ թե շատ կանոնավոր ճանապարհ, այժմ շրջանի բազմաթիվ գյուղերի միջև անց են կացվել խճուղիներ և կանոնավորապես գործում է ավտոտրանսպորտը:

Լաչինի շրջանում կան նաև ադրբեջանական ու հայկական գյուղեր: Լաչին քաղաքում ապրում են թե՛ քրդեր, թե՛ հայեր և թե՛ ադրբեջանցիներ: Լաչինում ապրող քրդերի նախահայրերը առաջացել են «ճելոյա» կոչված ցեղից, որոնք իրենց հերթին բաժան-

1 Գյամե քըրկ— բառացի՝ «քըրկ ցորեն», ցորենի սպիտակ և կլոր հատիկով տեսակ:

վում էին զանազան մեծ և փոքր «բավերին» պատրոնիմիաների, ինչպես, օրինակ՝ Հասանլար, Ալամշակլար, Վալիլար, Ալվաթլար, Մոմլար, Թավուկլար, Պիվազլար և այլն:

Լաչինի շրջանում կան 19, իսկ Կուբաթլիում՝ 10 քրդական գյուղեր, ինչպես, օրինակ՝ Վերին Ջերաբ, Ներքին Ջերաբ, Մինքենդ, Կարաքեշիշլար, Աղբուլաղ, Շելանլու, Աղջաքենդ, Զրախլու, Կամանլու, Բոզլու, Սոնար, Սավկուլար, Նիշանլու, Դիլալի-Նիշանլու, Շալվանլու, Զիլանլու, Բարալու, Կասա, Բալդ-Մահրազլու և այլն:

Ընդհանուր առմամբ շրջանը նոսր է բնակված՝ խիստ լեռնոտ լինելու և ոռոգիչ ջրի սակավության պատճառով:

Լաչինի քրդական գյուղերը մեծ մասամբ գտնվում են լեռնալանջերին և խոր ձորերի մեջ: Մինչև այսօր էլ տրակտորը և երկրագործական այլ նորագույն գործիքները շատ քիչ են մուտք գործել այստեղ: Հերկը կատարում են գութանով, իսկ հունձը՝ մանգաղով. սրանք գերանդի չեն գործածում: Բերքը կրում են ավտոմեքենաներով (եթե այդ գյուղը խճուղուն մոտ է), սայլերով, իսկ դժվարանցանելի վայրերում՝ ջորիներով և էշերով:

Լաչինի շրջանում հաճախ տեղացող անձրևները նպաստում են հացահատիկի փարթամ աճմանը և առատ բերք ստանալուն: Այս շրջանում կան բավականաչափ գետեր և բազմաթիվ վճիտ վտակներ: Լաչինում կան քարքարոտ և սևահող վայրեր: Բնակիչները հիմնականում մշակում են ցորեն:

Անդրկովկասյան բոլոր քրդերը խոսում են քրդերենի կուրմանջի բարբառով, բայց և այնպես Ադրբեջանական ՍՍՌ-ի քրդերի խոսվածքը որոշ չափով տարբերվում է Հայկական ՍՍՌ քրդերի խոսվածքից: Սովետական Հայաստանում ապրող քրդերը գրեթե ազատ խոսում են նաև հայերեն, իսկ Սովետական Ադրբեջանում ապրողները՝ ադրբեջաներեն:

Բ. ԶԲԱՂՄՈՒՆՔԸ ԵՎ ԵԿԱՄՏԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Անդրկովկասյան քրդերը նախասովետական շրջանում վարում էին մասամբ քոչվորական ու կիսաքոչվորական, մասամբ էլ նստակյաց կյանք: Առաջինները իրենց կյանքի մեծ մասը անց էին կացնում ծաղկավետ լեռներում (Լաչին, Ապարան, Թալին, Բյուլբաշար): Ուշ աշնանը լեռներից իջնում էին դաշտավայրերը՝ լեռների ստորոտների քրդական գյուղերը, իսկ ձմռանը, պրոֆեսոր

Եղիազարյանի արտահայտությամբ, իրենց գետնափոր ձմեռանոցները, վաղ գարնանը կրկին սար բարձրանում և այդպես շարունակ:

Քրդերը հիմնականում զբաղվում էին անասնապահությամբ ու երկրագործությամբ, ինչպես նաև գորգագործությամբ, թաղիքագործությամբ, մանածագործությամբ, ասեղնագործությամբ, մասամբ էլ առևտրով ու արտագնացությամբ:

Քրդերը գլխավորապես պահում էին խոշոր և մանր եղջերավոր անասուններ, հատկապես մեծ ուշադրություն դարձնելով խաշնարածության վրա:

Քոչվոր և կիսաքոչվոր քրդերի տնտեսության եկամտի հիմնական աղբյուրը կազմում էր անասնապահությունը, իսկ նստակյացներինը՝ երկրագործությունը:

Տնայնագործությունը նույնպես կարևոր տեղ է գրավել քրդերի զբաղմունքի մեջ: Դրանից ստացված արդյունքները հիմնականում ծառայել են ընտանիքի ներքին կարիքներին:

Իրենց կարիքները բազմակողմանիորեն հոգալու համար, քրդերն զբաղվում էին նաև փոխանակությամբ և առևտրով. ներքին պարզ ապրանքափոխանակությունից բացի, նրանք շուկա էին հանում մեծ քանակությամբ յուղ, պանիր, բուրդ, ինչպես նաև գորգ, կապերտ, խուրջին, թաղիք, ձեռնոց, գուլպա, գդակ (քուլոզ) և այլն:

Որոշ մարդիկ զբաղվում էին հատկապես առևտրով: Առևտրական քրդերը աշնանը գյուղերից և շուկաներից բավականաչափ գառներ էին գնում, որոշ ժամանակ պահում, գիրացնում և այդ ձմռանը վաճառում՝ ստանալով զգալի շահույթներ: Սովորական երևույթ էր դարձել այս հանգամանքը հատկապես XIX դարի վերջին: Բացի այդ, առևտրականներն զբաղվում էին տնայնագործական ապրանքների (կապերտների, գորգերի, խուրջինների, ջվալների, գուլպաների, ձեռնոցների) առուծախով:

Առևտրականների շահատակությունները իրենց արտացոլումն են գտել ժողովրդական բանահյուսության մեջ.

Բուջար, թուջարա,
Թապանդըն ժեռա ճարա:
(Վաճառականը, որ վաճառական է,
խարեությունը նրա համար միջոց է):

Զուտ քոչվորական կյանք վարող քրդերի հիմնական եկամուտը խաշնարածությունից էր ստացվում, ըստ որում այդ եկամուտը համեմատաբար ավելի էր, քան հողագործությամբ զբաղվող քրդերի

հկամուտը։ Սակայն ոչխարը գիրացնելու, նրանից շատ կաթնամթերքներ ստանալու համար, ամենից առաջ անհրաժեշտ էր ունենալ լավ արոտավայր։

Քուրդ հարուստները (աղաներն ու դավլամանդները—կուլակները), որոնք միաժամանակ դրամատերեր էին, մեծ ճարպկությամբ կարողանում էին նաև արոտավայրեր ձեռք բերել, երբեմն թանկ գնով ծախել դրանք, ուստի ամենալավ արոտավայրերին նրանք էին տիրում։

Քոչվոր հարուստ քրդերը իրենց դրամը մասամբ դնում էին շրջանառության մեջ, տոկոսով տալիս այլոց, առուծախով զբաղվում և այլն, մասամբ էլ պահում ընտանիքի քսակի մեջ՝ կուտակում, վերածելով ոսկու։ Ոսկու կուտակումը կենցաղ էր դարձել, ոսկի չունեցողներին «բոլինդագա» էին անվանում։ Մինչև օրս էլ պահպանվել է «քուրդ բե զեռ» (քուրդը առանց ոսկու) ասացվածքը, որը չունևորի նկատմամբ արհամարհանքի արտահայտություն էր հանդիսանում։

Ժամանակավորապես արոտավայրեր ձեռք բերելու համար, քրդական որոշ ցեղեր՝ ջալալցիք, ջանկացիք և բրուկանները, որոնք գլխավորապես ապրում էին Նախկին Երևանի նահանգի սահմանագլխում, մի պետության սահմանից անցնում էին մի այլ պետության սահման, գործի դնելով ոսկու ուժը։

«... Ձմեռը,— գրում է Մ. Վագները,— քրդերը ռուսաց կողմը կանցնեն, ուր փայտ և ուրիշ պիտույք գտնելը դյուրին է, ամառը սիրով Տաճկի երկիր կերթան, որովհետև հոն իրենց ոչխարներուն համար առատ, զալար խոտ կգտնեն»[1]։

Աշխատավոր քրդերի համար ավելի դժվար էր արոտավայր ձեռք բերելը, իսկ առանց արոտավայրի կքայքայվեր խաշնարած քրդի տնտեսությունը, ուստի այդ հողի վրա հաճախակի թշնամական ցեղերի միջև ծագում էր ցեղամիջյան և ներցեղային պայքար, որի հետևանքով հաճախ առաջ էր գալիս արյան վրեժխնդրություն, որը գնալով ավելի դասակարգային պայքարի բնույթ էր ստանում։

Նախասովետական շրջանում քրդական գյուղը ընկած էր ծանր հարկերի տակ։ Աղաներն ու բեկերը, գյուղի ռիսպիներն ու դավլամանդները, պետական պաշտոնյաները անխնա շահագործում էին աշխատավոր քրդերին։ Սրանք տնտեսապես քայքայվում

[1] Մ. Վագներ. Ճանապարհորդութիւն ի Հայաստան, Վիեննա, 1851, մասն Ա, էջ 64։

էին։ Կեղեքման տարածված միջոցը տուրքերի գանձումն էր բնակչությունից, որը կատարում էին ցեղապետները, բոյրապետները կամ գյուղի ռիսպին (տանուտեր)։ Գյուղացիներից կամայականորեն հավաքելով այնքան բնամթերք, որքան կարող էին, նրանք պետական տուրքերը վճարելուց հետո, մնացածը յուրացնում էին։ Երկրագործ քրդերը մեծ մասամբ ցանում էին գարի, քանի որ նրանք բնակվում էին բարձրադիր լեռնային վայրերում, ուր այդ հացաբույսը լավ է աճում, իսկ ցածրադիր վայրերում բնակվողները մշակում էին ցորեն և տարեկան, ինչպես նաև բանջարեղեն, սակայն փոքր չափով։

Հերկը արորով

Երկրագործության թե՛ տեխնիկան և թե՛ կուլտուրան խիստ ցածր է եղել՝ հողը հերկել են արորով, օգտվել են հարևան ժողովուրդների (հայերի, ադրբեջանցիների) մոտ տարածված սայլից և գյուղատնտեսական մյուս գործիքներից։ Հասարակ արոր ոչ բոլորն են ունեցել։ Չքավորները 2—3 ընտանիքով համատեղ օգտվել են մեկ արորից, մինչդեռ հարուստ ընտանիքները դաշտ են հանել 2—3 գութան՝ իրենց ամբողջ սարք ու կարգով։

1287
ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
205—2
ԳՐԱԴԱՐԱՆ

Հողի արհեստական պարարտացումը գոմաղբով քրդերի մոտ շատ քիչ է տարածված եղել, այն էլ միայն դաշտավայրերում, մինչդեռ լեռնային շրջաններում (Ապարան, Լաչին, Քյալբաջար) պարարտացումը գրեթե անծանոթ է եղել:

Երկրագործությամբ պարապող քրդերի համար կենսական նշանակություն ուներ ոռոգիչ ջուրը, քանի որ հաճախակի երաշտ էր լինում: Ոռոգիչ ջուրը նույնպես, գրեթե ամբողջությամբ գտնվում էր հարուստ քրդերի տնօրինության տակ, չնայած, որ ձևականորեն այն պատկանում էր համայնքին, և «միրաբը» պարտավոր էր հերթականորեն ջուր մատակարարել բոլորին: Սակայն նա, կախման մեջ գտնվելով հարուստներից, ենթակա էր նրանց կամքին, որի հետևանքով, աշխատավոր քուրդ երկրագործը զրկվում էր իրեն հասանելիք ոռոգիչ ջրի բաժնից: «Միրաբ սավչկա դասաե գաոլյաոխա բու» (միրաբը հարուստների ձեռքի մաքոքն է), ասում է քրդական առածը:

Ոռոգիչ ջուր կարելի էր ձեռք բերել միրաբին կաշառելու միջոցով, որը վեր էր աշխատավորների կարողությունից: Ջրի պատճառով հաճախակի տեղի էին ունենում մարդասպանություններ: Ճարահատյալ քուրդ երկրագործը ստիպված իր ցանքը թողնում էր նախախնամության հույսին, այդպիսով հաճախ զրկվելով իր տարեկան ապրուստից, մատնվում էր թշվառության:

Լավագույն ցանքատարածությունները նույնպես կենտրոնացված էին գյուղի հարուստների ձեռքին: Դրանից բացի, չքավոր գյուղացիները, հատկապես նրանք, որոնք գյուղում չէին պատկանում որևէ ազգակցական խմբի, անկարող էին լինում մշակել իրենց բաժին հողամասերը, դրա համար չունենալով անհրաժեշտ լծկան և գործիքներ, ուստի և նրանք օգնության էին դիմում գյուղի հարուստներին, իսկ վերջիններս, օգտվելով այդ հանգամանքից, դաժան շահագործման էին ենթարկում թե՛ իրենց ազգակիցներին և թե՛ մյուսներին:

Այդ բոլորի հետևանքով աղքատացած գյուղացիները իրենց ընտանեկան կարիքները հոգալու համար արտագնացության էին դիմում՝ ժամանակավոր կամ ամբողջովին տեղափոխվում էին Անդրկովկասի կենտրոնական քաղաքները (Թբիլիսի, Բաքու և Բաթումի):

Լինելով անգրագետ և չունենալով որևէ արհեստ, սրանք մեծ մասամբ զբաղվում էին բեռնակրությամբ (գլխավորապես Թբիլիսիում) և կամ ծառայում էին գործատերերի մոտ: Նրանք տարիներ շարունակ անց էին կացնում չարքաշ, մարդկային արժանապատվությունը ոտնահարող ապրելակերպ, դառը քրտինքով վաստակած ամբողջ գումարը ուղարկում իրենց ընտանիքին, որը դրանով հոգում էր թե՛ իր ապրուստը և թե՛ գոհացնում անհագուրդ հարկահաններին ու պարտատերերին:

Արտագնացությունը հատկապես XIX դարի երկրորդ կեսերից լայն տարածում էր ստացել և դարձել աշխատավոր քրդերի եկամտի աղբյուրներից մեկը: Ընտանիքի այն անդամը, որն իր անձնական աշխատանքով օտարության մեջ վաստակում էր որոշ գումար, իրավունք չուներ վատնել կամ սեփականել այն, այլ այդ վաստակը պետք է անպայման մտցներ ընտանիքի եկամտի մեջ, միացներ նրա ունեցվածքին:

Քրդական սովորութական իրավունքը նահապետական ընտանիքի ընդհանուր սեփականությունից որոշ բացառություններ էր միայն թույլ տալիս: Ընտանիքի իգական սեռին պատկանող անդամներն ունեին անձնական որոշ սեփականություն, որը կապ չուներ ընտանիքի ընդհանուր սեփականության և եկամուտների հետ, դա նրանց օժիտը, նվերներն ու հոր տնից բերած «չքարթն» էր:

Քրդուհին երբեմն իր աշխատանքի արդյունքի մի մասը (ստացված դորդագործությունից, ձեռագործներից և այլն) չէր միացնում ընտանիքի եկամտին, այլ օժիտի ու չքարթի հետ համարում էր իր անձնական սեփականությունը, որ կոչվում էր ճաբուռա ժընե արզի (կնոջ անձնական ունեցվածք): Այդ սեփականությունը երկար չէր մնում, մի քանի տարվա մեջ վերջ էր տրվում նրան: Կնոջ աշխատանքի ամեն տեսակ արդյունքները «մալխեի» գիտությամբ մտնում էին ընտանիքի եկամտի մեջ, իբրև նրա անբաժանելի մաս, որովհետև քիչ թե շատ մեծահասակ կնոջ համար ընտանիքում առանձին սեփականություն ունենալը աննպատակահարմար էր համարվում, դա թույլատրելի էր միայն երիտասարդ հարսներին:

Այնպես որ ընտանիքը իրենից ներկայացնում էր որպես ամբողջ ունեցվածքի սեփականատեր՝ իրավական հասկացողությամբ և հասարակական-տնտեսական հարաբերությունների մեջ հանդես էր գալիս հանձինս իր տիրոջ՝ մալխեի: Քանի որ ընտանիքի շարժական և անշարժ գույքը համարվում էր նրա անբաժան սեփականությունը, հետևապես ընտանիքի տնտեսական ամբողջ գործունեությունն էլ արտահայտվում էր իբրև ինքնամփոփ տնտեսություն թե՛ արտադրությամբ և թե՛ սպառմամբ:

* * *

Նախասովետական շրջանում հիմնականում բնափակ տնտեսությամբ վարող քրդերի մոտ աշխատանքի բաժանումը կատարվում էր դարերով սահմանված սովորութային իրավունքի հիման վրա, որի ելակետը սեռային և տարիքային առանձնահատկություններն էին: Դա հարատևեց մինչև կոլտնտեսությունների կազմակերպումը:

Տղամարդիկ հիմնականում զբաղվում էին դրսի աշխատանքներով՝ ոռոգությամբ, անասնապահությամբ, ինչպես նաև ռազմական գործերով և այլն, իսկ կանայք՝ տնային գործերով, կաթնամթերքների պատրաստմամբ, ձեռագործներով, երեխաների խնամքով և այլն: Քրդուհին նաև տան տնտեսն էր: Այդ ժամանակի քրդական գյուղում տնտեսական հիմնական միավորը հանդիսանում էր ընտանիքը՝ մեծ կամ փոքր: Տան մալխոեն տնօրինում էր աշխատավոր ձեռքերը, նշում ընտանիքի չափահաս անդամների պարտականությունները, որոնք սովորույթով սերնդից սերունդ էին անցնում: Տղամարդիկ, նշվածից բացի, կատարում էին այլ աշխատանքներ ևս՝ վրաններ էին պատրաստում, նորոգում գյուղատնտեսական գործիքները, տան կահկարասին, խնամում զենքերը և այլն: Պատանիները գառ, հորթ էին արածեցնում, գութանի հորիքը քշում, մշակների համար արտը կերակուր տանում և կատարում տնային թեթև աշխատանքներ:

Հարուստների ընտանիքում աշխատանքը ամոթաբեր համարվելով՝ տան մալխոեն անձամբ ֆիզիկապես չէր մասնակցում դրսի և տնային աշխատանքներին: Նա ընդհանուր ղեկավարություն էր ցույց տալիս ինչպես ընտանիքի անդամներին, նույնպես և «խուլամներին» (ծառաներին), հյուրեր ընդունում, մասնակցում հարսանիքներին և մեռելոցներին: Բայց ընդհանուր առմամբ տան մալխոեն և կավանին, յուրաքանչյուրն իր բնագավառում աշխատելով, միաժամանակ ղեկավարում էին ընտանիքի մյուս անդամներին:

Ընտանիքի իգական սեռի մեջ աշխատանքը բաժանում էր տան կավանին: Կանայք բուրդ էին գզում, մանում, գործում, կարում և կարկատում: Տան տնտեսության և եկամուտների բաշխման գործում ընդհանրապես մեծ դեր էր կատարում կավանին: Ծերունի Ալիբը (Հայկական ՍՍՌ Թալինի շրջանի Գյալթո գյուղի բնակիչ, գաղթել է Կարսի մարզից) պատմում է, որ իրենց գյուղի

մեծ ընտանիքներում անցյալում սովորաբար աշխատանքը բաժանվում էր հետևյալ կերպ. տան «պիրեն» ղեկավարում էր տան հարսներին, երեխաներին: Տան կավանին հաց էր թխում, կաթնամթերքներ, կերակուրներ պատրաստում և բաժանում տան անդամներին, գուլպա գործում: Ավագ հարսի պարտականությունն էր խմոր հունցել, ոչխար կթել, մածուն մերել, յուղ ու պանիր, տամաստ պատրաստել և այլն: Երկրորդ և երրորդ հարսները թոնիր էին վառում, գորգ, կապերտ, խուրջին գործում, կարում, կարկատում, կալը կալսում և թեղում: Փոքր հարսը վաղ առավոտյան աղջիկների հետ միասին ջուր էր բերում, սկեսրայրի և սկեսրոջ ձեռքերին ջուր լցնում, անկողինը հավաքում, տունը ավլում, կրակ անում, հյուրերի ոտքերը լվանում, նրանց և ընտանիքի մյուս անդամներին կերակուր մատուցում, տան տղամարդկանց ոտնամանները հանում, ջուր տաքացնում, երեխաներին լողացնում, ամանները լվանում, կարկատում և կատարում այլ ծառայություններ: Սրանից կարելի է եզրակացնել, որ քրդական նահապետական ընտանիքում գոյություն է ունեցել աշխատանքի որոշակի բաժանում, ընտանիքի անդամներից յուրաքանչյուրը ունեցել է իր պարտականությունները:

Աշխատանքի բաժանման այս ձևը նախնադարյան տոհմային համայնքի առանձնահատուկ գծերից մեկը պետք է համարել, որ բխում է կոլեկտիվ աշխատանքի բաշխման սկզբունքներից: Տոհմերի քայքայման շրջանում երկրագործական աշխատանքը, իբրև նոր որակ, արդեն տարբերվում էր անասնապահական աշխատանքից, որովհետև երկրագործությունն իր զարգացման պրոցեսն էր ապրում, այժմ հողը մշակվում էր երկրագործական համեմատաբար կատարելագործված գործիքներով, առաջ էին եկել գյուղատնտեսական ավելի ծանր աշխատանքներ, որոնք կնոջ ուժից վեր էին և պետք է կատարեին տղամարդիկ:

Աշխատանքի բաժանման հանգամանքը դառնում է նախնադարյան համայնքի քայքայման ազդակ, որի պատճառով տոհմի մեջ տղամարդկանց ղեկավարությամբ ձևավորվում են անհատական ինքնուրույն տնտեսություններ: Առանձին ընտանիքներն իրենց անասուններով, գյուղատնտեսական գործիքներով և այլն դառնում են տնտեսական միավորներ, արենակցական կապերի հիման վրա կազմում են ազգակցական մեծ կամ փոքր խմբեր, որոնց անդամները աշխատում են միացյալ ուժերով՝ միասին ցանում, վարում, հնձում և կալսում, ստացած բերքն էլ հավասարապես բաշխում միմյանց մեջ:

ԴԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԸՆՏԱՆԻՔ

Ա. ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱԶՄԸ

Համապատասխան պատմական, ազգագրական և ֆոլկլորային նյութերի քննությունը ցույց է տալիս, որ Անդրկովկասի քրդերը ընդհուպ մինչև XIX դարի վերջերը, հիմնականում վարելով ֆեոդալական-նահապետական հարաբերություններ, հասարակական ներքին կառուցվածքի տեսակետից ստորաբաժանված են եղել ցեղերի, որոնց մեջ էին մտնում «բաբ»-երը (ազգակցական-արենակցական խմբեր), իսկ վերջիններս կազմված էին «մալամազն»-ներից (մեծ ընտանիքներ) և փոքր ընտանիքներից:

Քրդական մեծ ընտանիքը բաղկացած էր լինում 30—70 հոգուց, իսկ փոքր ընտանիքը՝ մինչև 30 հոգու:

Համարյա մինչև XIX դարի երկրորդ կեսը Անդրկովկասի քրդերը մեծ մասամբ ապրում էին մեծ ընտանիքներով: Հետագայում, առևտրա-արդյունաբերական կապիտալի զարգացման և քրդական գյուղում դասակարգային շերտավորման ուժեղացման հետևանքով, գյուղն սկսում է քայքայման պրոցես ապրել:

Գյուղի քայքայման հետևանքով տեղի են ունենում քրդական մեծ ընտանիքների բաժանքներ: Նույն երևույթը առկա էր նաև Անդրկովկասի մյուս ժողովուրդների մոտ: «Հայերի մեջ,— գրում է Ա. Երիցյանը,— ընտանեկան բաժանքները նահապետի կենդանության ժամանակ սակավադեպ են, սակայն վերջին ժամանակ դարձել են հաճախակի երևույթ: Որքան որ գյուղը հեռու է գտնվում մեծ ճանապարհներից ու առևտրական շուկաներից, որքան որ նա չի նեղվում իրեն հատկացված հողամասերի քանակից և որքան որ ավելի թույլ կերպով է յուրացնում նորագույն ժամանակի արագ

զարգացող կենսական պահանջները, այնքան ավելի կայուն ենք տեսնում ունևոր գերդաստաններ՝ 30—40 հոգուց բաղկացած, նահապետ ծերունի գլխավորությամբ: Բայց բավական է, որ այդ պայմաններում մահանա տան մեծը՝ ծերունին, և ահա նահապետական գերդաստանն սկսում է տրոհվել: Սակայն գերդաստանի բաժանքներն ավելի հաճախ տեղի են ունենում սակավահող ու ոչ այնքան ունևոր գերդաստանների մեջ[1]»:

Նույնը կարելի է ասել քրդական նահապետական գերդաստանի մասին, որի բաժանքը նույնպես գլխավորապես տեղի էր ունենում սակավահողության հետևանքով: Այդ տեսակետից ուշագրավ է այդ ժամանակաշրջանում հորինված քրդական ասացվածքը, որը բնորոշ էր քայքայվող ընտանիքի համար:

Մալխոե մալե, մալխոե մալե,
Կուռե մալեյա վե դաուրանե:
(Տան նահապետը, տան նահապետը
Այս շրջանում տան որդին է):

Ընտանիքի ընդհանուր շահերի փոխարեն առաջ են գալիս անձնական շահեր, որոնք բխում էին փոքր ընտանիքների պահանջներից: Սասանվում է սպիտակամորուս նահապետի իշխանությունը, գլուխ է բարձրացնում և հետզհետե նրա տեղը գրավում նրա ձեռներեց, նոր պայմաններին լավատեղյակ որդին: Եղբայրների, հորեղբայրների, որդիների և թոռների բաժանքի ժամանակ, ըստ սովորության իրավունքի, հայրը պետք է բաժանվողին տար այնքան անասուն, գույք, որքան անհրաժեշտ էր նոր տնտեսություն կամ նոր ընտանիք կազմելու համար: Բաժանվողների ստանալիքի քանակը կախված էր այն հանգամանքից, թե որդիներն ու թոռները, եղբայրներն ու հորեղբայրները բաժանվում են նահապետի, հոր համաձայնությամբ, թե՞ նրա կամքին հակառակ:

Սոցիալ-տնտեսական նոր պայմաններում, երբ ընտանիքի մալխոեն կենդանի էր և եղբայրներն ու որդիները ուզում էին բաժանվել, նա արդեն անզոր էր դառնում իր միանձնյա իշխանությունից օգտվելու:

Գերդաստանում կատարվող բաժանքները երբեմն տեղի էին

---

[1] *А. Ерицов*, Казахский уезд, „Материалы по изучению экономического быта государственных крестьян Закавк. края“, Тифлис, 1886, т. II, էջ 204.

ունենում ոչ միայն ընտանիքի տնտեսության քայքայման, այլ նաև ընտանիքի անդամների միջև դժտությունների, մալխասի դառամյալ լինելու կամ նրա մահվան, տան հարսների տարբեր ազգակցական խմբերի պատկանելու և միմյանց հետ չհաշտվելու հետևանքով: Սակայն այս հակամարտություններն էլ վերջին հաշվով հետևանք էին մեծ ընտանիքում առաջացած նյութական դժվարությունների և տնտեսական հակասությունների: Երբ տան «մալխասն» ծերանում էր, հնարավորություն չէր ունենում ընտանիքը ղեկավարելու, ստիպված էր լինում քաշվել մի կողմ կամ հրաժարվել մալխասությունից, իսկ գերդաստանի անդամները արդեն միմյանց հետ չէին համերաշխվում, մանավանդ, երբ փոխարինող «մալխասն» երիտասարդ էր լինում, ապա ընտանիքը տրոհվում էր:

Եթե մեծ ընտանիքում ապրում էին բավականաչափ հեռավոր սերունդներ, ապա փոքր ընտանիքում ապրում էին միայն ծնողները իրենց որդիներով ու թոռներով, երբեմն տան «մալխասն» իր եղբայրներով:

Հայաստանի քրդերի ընտանիքների տրոհումը տեղի ունեցավ կապիտալիստական հարաբերությունները գյուղ ներթափանցելու, նրանց հողագործությամբ զբաղվելու՝ նստակյաց կյանք վարելու պրոցեսի սկզբնավորման հետևանքով:

Այսպիսով, XIX դարի երկրորդ կեսին, սոցիալ-տնտեսական նոր պայմանների շնորհիվ, քրդական նահապետական մեծ ընտանիքները մեծ մասամբ կազմալուծվեցին և առաջացան փոքր ընտանիքներ: Չնայած այս բոլորին, քրդաբնակ վայրերում մեծ ընտանիքների մնացուկները որոշ չափով, թեպետ և անդամների նվազ քանակով, իրենց գոյությունը պահպանեցին մինչև 1930 թ., որից հետո, շնորհիվ կոլտնտեսային կարգերի հաստատման ու քրդերի կուլտուրական մակարդակի բարձրացման, սրանք ևս ամբողջովին տրոհվեցին և ստացվեցին փոքր ընտանիքներ:

Բ. ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քրդական գերդաստանում ապրում էին մի քանի սերունդ՝ պապերն ու տատերը, նրանց որդիներն ու կանայք, թոռներն ու ծոռները, հորեղբայրներն իրենց ուստրերով ու դուստրերով և այլն: Փոքր ընտանիքի անդամների քանակը համեմատաբար քիչ էր, ինչպես նշեցինք վերը, ամենաշատը՝ ծնողներն իրեց զավակներով,

կամ տան մալխասն իր մի քանի եղբայրներով ու որդիները իրենց կանանցով:

Ընտանիքի անդամները պապին անվանում են «կալկո», որը միևնույն ժամանակ, եթե շատ չէր ծեր, համարվում էր տան «մալխասն», տերն ու տնօրենը: Ընտանիքի մյուս անդամները միմյանց հետևյալ կերպ են կոչում՝

Դե, դակե — մայր	Խազուր — սկեսրայր
Բավ — հայր	Խասի — սկեսուր
Կոռ — որդի	Բուկ — հարս
Ղիզ — աղջիկ	Նավի — թոռ
Բրա — եղբայր	Նավիճակ — ծոռ
Ապո — հորեղբայր	Բրազի — եղբոր որդի
Կուռապ — հորեղբոր որդի	Ղիզապ — հորեղբոր աղջիկ
Խուշկե (խակե) — քույր	Թի — տեգր

Բացի այդ, հորեղբայրն իր եղբոր որդուն կանչելիս ասում է՝ «կուռե մընը» (տղաս), աղջկան՝ «ղիզա մընը», (աղջիկս): Զավակները տան մալխասին կամ պապին անվանում են «բավո», մեծահասակ կնոջը՝ «դայե» կամ «ընե»: Ընտանիքի բոլոր անդամները իրենց արենակից հարսներին անվանում են «վնեզ»: Սրանք քրդերի հասարակական և ընտանեկան կյանքում գոյություն ունեցող ազգակցական-արենակցական կապերը դրսևորող հասկացողություններ են:

Ֆ. Էնգելսը իրոկեզյան տոհմի արենակցական—ազգակցական ապերը արտահայտող նման բառերի մասին խոսելիս, գրում է՝

«Սրանք միայն դատարկ անուններ չեն, այլ փաստորեն գոյություն ունեցող հասկացողությունների արտահայտություններ՝ արենակցության, մոտիկության ու հեռավորության, միատեսակության և անմիատեսակության մասին. և այս հասկացողությունները հիմք են ծառայում ազգակցության մի այնպիսի լիակատար կերպով մշակված սիստեմի, որն ի վիճակի է արտահայտելու որևէ առանձին անհատի մի քանի հարյուրի հասնող զանազան ազգակցական հարաբերությունները»[1]:

Ընտանիքը ղեկավարելու գործում գլխավոր ֆունկցիան պատկանում էր տան նահապետին: Մալխասն պարտավոր էր ընտանի-

[1] Ֆ. Էնգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Երևան, 1948, էջ 30:

քի տնտեսության, նրա ղեկավարման և երեխաների դաստիարակության գործում արդարացնել իրեն: Ընտանիքում մալխասից հետո ճանաչվում էին նրա եղբայրներն ու որդիները:

Անդրկովկասյան քրդերի կյանքում հայրական կամ «մալխասական» իշխանությունը ընտանիքում արտահայտվում էր երկու հատկանիշներով, առաջին՝ ընտանիքի ունեցվածքի վրա և, երկրորդ՝ տան բոլոր անդամների անձնականի վրա ունեցած սովորութական իրավունքներով, որպիսի իրավունքները մալխասն կիրառում էր ամենայն խստությամբ:

«Մալխաս գալիս» (մալխասն է գալիս), հաճախ կրկնում էին քրդերը. դա նշանակում էր՝ մալխասի կողմից դրված խնդիրը պետք է կատարվեր անշեղորեն:

Ըստ քրդական նահապետական ընտանիքի իրավըմբռնման, մալխասի իրավունքը զավակների և ընտանիքի մյուս անդամների վրա ավելի մեծ էր, քան տան ունեցվածքի վրա: Այս հանգամանքը ապացուցվում է նահապետական գերդաստանի արտադրական կենցաղի, տնտեսական պայմանների, մասամբ էլ հնագույն շրջանի ընտանիքի տրադիցիաների հետ, պայմաններ, որոնք ստիպում էին ընտանիքի բոլոր անդամներին ենթարկվել ընտանիքի մալխասին:

Քրդերի հասկացողությամբ, ընտանիքի անդամները պետք է հնազանդվեին ընտանիքի մալխասին ոչ միայն իբրև տան ղեկավարող ուժի և հոգատար ավագի կամ ծնողի, այլ նաև իբրև արտադրության հմուտ ղեկավարի, ընտանիքի տնտեսական գործերը լավագույն ձևով կազմակերպողի: Մալխասն իր իշխանությամբ նման էր տոհմապետի, միայն այն տարբերությամբ, որ տոհմերում տոհմապետին ընտրում էին, իսկ քրդական ընտանիքում, ընտանիքի անդամների փոխադարձ համաձայնությամբ, նշանակում էին եղբայրներից կամ որդիներից մեկն ու մեկին իբրև ընտանիքի ղեկավար:

Ընտանիքի ունեցվածքի նկատմամբ ավագ եղբայրներն ու որդիները և ընտանիքի մյուս անդամները նույնպես ունեին որոշ իրավունքներ, ուստի և մալխասն կարևոր գործարքների դիմելիս սովորաբար խորհրդակցում էր նրանց հետ: Դա պետք է բացատրել նրանով, որ ընտանիքի անդամներն իրենց ամենօրյա աշխատանքներով ընտանիքի համար ստեղծում էին բարիքներ, շատացնում նրա շարժական և անշարժ գույքը, իրենց արյան գնով պաշտպանում այդ ունեցվածքը ավազակներից, հափշտակիչներից: Ահա թե ինչու «մալխասն» նրանց հետ չէր կարող հաշվի չնստել: Ընտանիքի հասակավոր անդամները, այդ թվում մեծահասակ կանայք, իրենց որոշ իրավունք էին վերապահում միջամտելու ընտանիքի անդամների ձեռքով ստեղծված ունեցվածքի տնօրինմանը: Հատկապես այնպիսի ծանրակշիռ հարցեր լուծելիս, ինչպիսիք էին ցեղամիջյան և ներցեղային կռիվների, կնոջ առևանգման, վրիժառության և այլ հարցեր, տան «մալխասն» անպայման խորհրդակցում էր ընտանիքի մյուս տարեց անդամների հետ, որից հետո իր խոսքն էր ասում քրդական համայնքի «մալխասների» խորհրդին:

«Առաջ,— ասում է Լաչինի շրջանի Աղջաքենդ գյուղի բնակիչ ծերունի Ալիեր,— մեր տան տերը «միրբարան» էր: «Միրբարան» ղեկավարում էր մեր ընտանիքի ամբողջ գործունեությունը, բայց շատ անգամ նա առանց տան հասակավոր մարդկանց և կանանց գործ չէր բռնում, մանավանդ ընտանեկան եկամուտները կուտակելու ու ծախսելու ժամանակ: Նա միշտ հաշվի էր առնում ընտանիքի անդամների կարծիքը և հետո կարգադրություններ անում: Մենք հարգում ու սիրում էինք մեր ընտանիքի մեծին՝ «միրբարային[1]»:

Սա ցույց է տալիս քրդական ընտանիքի ղեկավարման դեմոկրատական կողմը, որը գոյություն է ունեցել անցյալում: Չնայած ընտանիքի «մալխասն» տան ունեցվածքի տերն ու տնօրենն էր համարվում, ինքը կառավարում գերդաստանը, այնուամենայնիվ, ամբողջ ունեցվածքը կազմում էր ընտանիքի բոլոր անդամների սեփականությունը, որից իրավունք ունեին օգտվելու ընտանիքի բոլոր անդամները հավասար չափով: Սակայն «մալխասին» ամեն ինչ իր անձնական սեփականությունը համարելու իրավունք էր վերապահվում: Երբեմն ընտանիքում առաջացած անախորժություններին վերջ տալու համար միջամտում էր ավելի ազգակցական խմբի կամ «թիրի» ղեկավարը:

Բացի շարժական և անշարժ գույքի նկատմամբ ունեցած իրավունքից, մալխասի կամ հոր իշխանությունը տարածվում էր նաև իր եղբայրների, նրանց որդիների, թոռների և ընտանիքի մյուս անդամների վրա: Այս առթիվ կան ազգագրական, ֆոլկլորային բազմաթիվ նյութեր:

[1] Գրի է առնվել հեղինակի կողմից 1955 թ. Լաչինում:

«Անցյալում,— հաղորդում է Թալինի շրջանի Գյալթո գյուղի բնակիչ ծերունի Ալրը,— մեր ընտանիքի մալխեն Աճամե Սլոն էր։ Ոչ ոք չէր կարող նրա ասածը չկատարել, նա իրավունք ուներ մինչև անգամ իրեն չենթարկվող որդիներին կամ եղբայրներին հեռացնել ընտանիքից, նրանց ոչինչ չտալով տան ունեցվածքից[1]»։

Սա ցույց է տալիս, որ քրդական որոշ ցեղերի մեջ հոր կամ «մալխեի» իշխանությունը ավելի խիստ է եղել, քան մի այլ ցեղի մեջ։ Այնուամենայնիվ, ընտանիքի անդամին այս կամ այն պատճառով իր իրավունքներից զրկելը տարածված երևույթ չի եղել։ Դա կարող էր տեղի ունենալ բացառիկ՝ ընտանիքի ընդհանուր շահերին խիստ վնասելու դեպքում, երբ ընտանիքի այդ անդամը «մալխարաք», «բեգաւ», «բեգչախ» էր համարվում, շռայլում տան հարստությունը, իր վարքով արատավորում նահապետական գերդաստանը, արհամարհում աշխատանքը, որը ընտանիքի հարստության ամենահիմնական աղբյուրն էր համարվում։ Անարժան որդիներին, եղբայրներին կամ ընտանիքի մյուս անդամներին ընտանիքից արտաքսելու և ունեցվածքից զրկելու համար քրդերը չէին մեղադրում ընտանիքի մալխեին, ընդհակառակը, նմանների մասին հասարակական կարծիք էր կազմվում, որով դատապարտվում էր նրանց վարքագիծը։ Ընտանիքի մալխեի և հոր իշխանության մեջ տան զավակների վրա ունեցած իշխանության վերաբերյալ մեծ տարբերություն չէր նկատվում։ Սովորութական իրավունքի համաձայն, տան զավակները ինչքան ենթարկվում էին իրենց հորը, նույնքան էլ պարտավոր էին ենթարկվել «մալխեին»։ Դեռ ավելին, որդիները երբեմն ավելի շատ ենթարկվում էին մալխեի, քան հոր կամքին։ Եվ դա բնական է, տոհմային տրադիցիաների համաձայն, այդ թվում՝ ըստ ավագության կարգի, որդիները պարտավոր էին նախ ենթարկվել մալխեին, ապա հորը։

Այսպիսով, անդրկովկասյան քրդական ընտանիքում «մալխեն» կարգադրիչ էր ու հրամայող, դաստիարակող, ընտանիքի բոլոր անդամները՝ փոքրից մինչև մեծը, պարտավոր էին լռությամբ և հեզությամբ ենթարկվել նրա կամքին։ Ուշագրավ է ընտանիքի անդամների վրա ունեցած մալխեական իշխանության բնութագիրը, որ տալիս է Ապարանի շրջանի Ալագյազ գյուղի բնակիչ, 97 տարեկան Լեշոն։

«Ապարանի շրջանի քրդերը (քուրդ եզդիները), հայերն ու

[1] Գրի է առնվել հեղինակի կողմից 1946 թ.։

ադրբեջանցիները միշտ հետևում էին պապենական հին ադաթին։ Մալխեն ընդհանրապես, իսկ կանանց և որդիների նկատմամբ կավանին կամ մեծահասակ մայրը ընտանիքում իշխող էին հանդիսանում։ Ընտանիքի բոլոր անդամները պարտավոր էին լսել նրանց, կատարել նրանց հրամաններն ու կարգադրությունները։ Առանց տան մալխեի և կավանու կարգադրության և համաձայնության, ընտանիքի ոչ մի անդամ ոչինչ չէր կարող կատարել, ոչ մի չափ իր տեղից շարժել»[1]։

Բացի վերևում մատնանշվածից, ընտանիքի բոլոր անդամները, առանց մալխեի կամ կավանու թելադրանքի, համարյա անզոր էին ընտանիքի հետ առնչվող դրացիական որևէ խնդիր ինքնուրույն կերպով լուծել, եթե անգամ ընտանիքի անդամների այդ ձեռներեցությունը ավելի մեծ օգուտ բերեր ընտանիքի բարեկեցությանը։ Այնուամենայնիվ, ընտանեկան սովորույթի համաձայն, հոր կամ մալխեի կառավարման այս ձևն իր էությամբ ընդունելի էր Անդրկովկասի քրդական ընտանիքի կյանքում։

Ընտանեկան հարաբերությունները պարզաբանելու տեսակետից, հետաքրքիր է գերդաստանի անդամների վերաբերմունքը մալխեի նկատմամբ՝ նրա խոր ծերության ժամանակ։ Այն ժամանակ, երբ գերդաստանի մալխեն շատ էր ծերացել և այլևս անկարող էր տունը լավ ղեկավարել, նրա անդամները, եղբայրներից սկսած մինչև հարսներն ու թոռները, սկսում էին նրանից երես դարձնել։ Սրա հետևանքով նման գերդաստանում առաջ էին գալիս անախորժություններ, տեղի էին ունենում բաժանքներ։

Այսպիսով, խոր ծերության հասակում «մալխեի» իշխանությունը կորցնում էր իր ուժը թե՛ ընտանիքում և թե՛ դրացիների մոտ։ Մալխեն ինքն էլ զգում էր, որ արդեն կորցնում է ընտանիքի անդամների և գույքի նկատմամբ իր ունեցած իշխանությունը։ Նման մալխեների մասին քրդերն ասում էին. «Ծը խռա էջըզ բույա» (ինքն իրենից ձանձրացել է)։

Մալխեն այս դեպքում ինքն էր հրաժարվում ընտանիքի ղեկավարությունից։ Նոր «մալխեն» և ընտանիքի մյուս անդամները հաշվի էին առնում ծերացած «մալխեի» խորհուրդները՝ իբրև մեծ փորձի տեր մարդու։ Մալխեն իր իշխանությունը հանձնում էր իրենից կրտսեր եղբորը կամ անդրանիկ որդուն, նայած նրանցից որն էր ընդունակ ընտանիքը լավ ղեկավարելու։ Դա կա-

[1] Գրի է առել հեղինակը 1954 թ.։

տարվում էր ընտանիքի հասակավոր անդամների համաձայնությամբ:

Ավագության կարգը պահպանվում էր նաև մալխասի մահից հետո: Թալինի շրջանի «Բարավա» կոչված եզդիական ցեղի մոտ «մալխասի» մահից հետո, սովորաբար, ավագությունն անցնում էր ամենամեծ որդուն, իսկ երբ ավագ որդին հիվանդ էր կամ անճարակ, մալխասությունն անցնում էր մահացածի միջնակ կամ կրտսեր որդուն: Արտաշատի շրջանի մահմեդական քրդերի մեջ տան իշխանությունն առաջին հերթին հանձնվում էր ավագ եղբորը, եթե «մալխասն» եղբայր չուներ՝ ավագ որդուն: Նախկին Ղարսի մարզի Տեկորի շրջանի քուրդ եզդիների մեջ նոր կամ տան «մալխասի» մահից հետո ընտանիքի նոր «մալխասի» իրավունքները փոքր չափով սահմանափակվում էին: Մալխասն այս դեպքում, ընտանեկան լուրջ խնդիրներ լուծելու ժամանակ, անպայման պետք է խորհրդակցեր հորեղբայրների, եղբայրների և ավագ որդիների հետ, ապա նրանց հետ համաձայնվելուց հետո միայն լուծում էր այդ հարցերը: Նոր մալխասն պետք է զգուշանար իր երեխաների և կնոջ համար ավելի շատ ծախսեր կատարելուց: Անձնական ծախսերը, առանց ընտանիքի մյուս անդամների համաձայնության, կարող էր առաջացնել դժգոհություն և անախորժություններ:

Անդրկովկասում, մանավանդ 1880-ական թվականներից հետո, ընտանիքում «մալխասի» անսահմանափակ իշխանության նվազեցման պատճառներից մեկը հին կենցաղի դեմ ըմբոստացող քուրդ նոր սերնդի պայքարն էր: Նոր սերնդի ներկայացուցիչներից շատերը, որոնք ապրում, աշխատում էին Անդրկովկասի կենտրոնական քաղաքներում, շփվում էին այլազգիների հետ և իրենց վրա կրում նրանց ազդեցությունը, որն էլ հենց դրսևորվում էր տնտեսական հարաբերություններում:

Այս փաստերի հիման վրա կարելի է եզրակացնել, որ «մալխասի» մահվամբ կամ նրա խոր ծերության դեպքում, ընտանեկան նոր պայմաններում, տան իշխանությունն անցնում էր հորեղբորը, կրտսեր եղբորը կամ ավագ որդուն, և շնորհիվ ընտանեկան այդ նոր պայմանների, նվազում էին նոր մալխասի իրավունքները: Դա ցույց է տալիս, որ տեղի էր ունենում ընտանիքի մալխասի իշխանության հիմքերի երերում:

Գերդաստանի «մալխասի» մահից հետո, ընտանիքի իշխանության ժառանգորդը, դա լիներ նախկին «մալխասի» եղբայրը, թե որդին, միևնույն է, չնայած մալխասական իշխանության հիմքերի

թյացմանը, իրեն էր ենթարկում տան մյուս անդամներին, նրա եղբայրներն ու որդիները, ընտանիքի մյուս անդամները և բոլոր պատանիներն ու կանայքը ընտանիքի կյանքը բարեկեցիկ վիճակում պահելու ոգով տոգորված, ամեն կերպ աշխատում էին օգնել նոր «մալխասին», միացյալ ուժերով պահպանել, ավելացնել ընտանիքի ունեցվածքը:

«Մալխաս չկասի ժի խրաբ բա, մալ յա մալա» (որքան էլ տանտերը վատ լինի, տունը մերն է), հաճախ կրկնում էին քրդերը: Բայց երբեմն էլ այս ըմբռնմանը հակառակ, որոշ ընտանիքներում առաջացած հակասությունների հետևանքով, հորեղբայրներն ու եղբայրները, որդիներն ու թոռները չէին հաշտվում այն մտքի հետ, որ իրենց նոր «մալխասն» փորձում է նույնությամբ կիրառել այն իրավունքները, ինչ որ ուներ հինը: Եթե ընտանիքի անդամները գտնում էին, որ «մալխասն» անընդունակ է ընտանիքը ղեկավարել, փոխում էին նրան, ընտանիքի մի ավելի բանիմաց ու գործունյա, բայց անպայման տարիքով ավագ անդամներից մեկով: Սակայն այսպիսի դեպքեր քիչ էին պատահում: Եթե տվյալ ընտանիքում ղեկավարելու համար համապատասխան տարիքի մարդ չկար, այն ժամանակ ընտանիքի ղեկավարման գործը, անդամների պահանջով, իր վրա էր վերցնում կրտսեր եղբայրներից կամ որդիներից ամենից ընդունակը: Սակայն այսպիսի ընտրություններ հազվադեպ էին և բնորոշ չէին քրդական ընտանեկան կենցաղին: Եթե «մալխասն» ընտանիքի թե՛ տնտեսական գործունեության և թե՛ անդամների անձնականի նկատմամբ տեր ու անօրեն էր, հրամայող ու ղեկավար, ապա հայրը իշխում էր միայն կնոջ և զավակների վրա և իրավունք չուներ խառնվելու ընտանիքի մյուս անդամների գործերին: Ինչքան որ «մալխասն» և հայրը խիստ էին ընտանիքի պատիվը բարձր պահելու գործում, այնքան էլ բարի էին և սրտացավ ընտանիքի անդամների նկատմամբ: Քրդական նահապետական ընտանիքի անդամների մեջ կար սեր և համակրանք միմյանց հանդեպ: Հոր կամ ընտանիքի «մալխասի» սերը այնքան ուժեղ էր որդիների նկատմամբ, որ հաճախ «մալխասն» կամ հայրը տան ղեկավարությունը հանձնում էր ավագ որդիներից մեկն ու մեկին, որը «մալխասի» օգնությամբ սովորում էր տան ղեկավարել[1]:

[1] Տե՛ս *С. А. Егиазаров*, Краткий этнограф. очерк курдов Эриванской губернии, „Записки Кавк. отд. русск. геогр. об-ва“, Тифлис, 1891, кн. XVIII (вып. II), էջ 95:

Նախասովետական շրջանի քրդական ընտանիքում չնայած իշխում էր նահապետականությունը, այնուամենայնիվ, քրդուհին զգալի կշիռ ու ազատություն էր վայելում, որը բացատրվում է տոհմային մայրիշխանական կարգերի մնացուկների զգալի առկայությամբ: Մալխասից հետո ընտանիքում ամենանշանակալից դեմքը, ինչպես ասվեց, «կավանին» էր, որը սովորաբար մալխասի կինն էր լինում և թե՛ տան կանանց մեջ, թե՛ երկու սեռի կրտսերների նկատմամբ ղեկավարի դերում էր գտնվում: Նա նրանց մեջ կատարում էր աշխատանքի բաժանում: Տան մառանի բանալիները գտնվում էին նրա ձեռքին, մալխասի բացակայության դեպքում հաճախ նա կատարում էր մալխասի ֆունկցիաները ընտանիքում: Կավանիի խոսքը անխտիր հաշվի էր առնվում ընտանիքի բոլոր անդամների կողմից: Բացի նրանից, որոշ իրավունքներ ունեին նաև ընտանիքի մյուս կին անդամները, որոշ դեպքերում կավանին կամ անվանի քրդուհիներից որևէ մեկը հանդես էր գալիս իբրև ցեղապետ, վրիժառու, պայքարի ընթացքում հերոսուհաբար կռվում և այլն: Նրանք մասնակցում էին ցեղային խորհրդի ժողովներին:

Ինչպես գիտենք, մատրիարխատի օրով թե՛ ընտանեկան և թե՛ հասարակական հարաբերություններում մայրը, կինը ղեկավար դեր է կատարել, նա է անօրինել հասարակական և ընտանեկան գործերը: Տղամարդը տոհմի սովորական անդամ է եղել՝ որսորդ, աշխատող, բայց ոչ ղեկավար:

Քոչվորական և կիսաքոչվորական կյանք վարող քրդերի մոտ կանայք, նստակյաց կյանք վարող քրդերի և հարևան ժողովուրդների կանանց համեմատությամբ, ավելի ազատ և համարձակ են եղել:

Այս երևույթը դրսևորվել է քրդական բազմերանգ բանահյուսության մեջ ևս: Բազմաթիվ հեքիաթներում քրդուհին հանդես է գալիս իբրև տիրապետող, ուժեղ կամքի տեր, ինքնուրույն, հպարտ, հրամայող, օգնող, անխարդախ, անձնազոհ և ռազմասեր: Քրդուհու բնավորության այդպիսի գծեր տեսնում ենք «Զըլի», «Մամե և Զինե», «Մամե և Այշե» և այլ պոեմներում: Քրդուհին երբեք չէր ծածկում, տղամարդկանց հետ համահավասար չափով մասնակցում էր ռազմական գործողություններին: «Բասե» պոեմի հերոսուհի Բասեի գլխավորությամբ քրդական Սիպկա ցեղը հաղթում է քրդական Մահմդա ցեղին, ռազմի դաշտում թողնելով հարյուրավոր սպանված ու վիրավոր:

Ահա թե ինչ է ասում Բասեն.

«Եվ նիզակը իմ ձեռքին,
Հետևեցե՛ք ինձ, եղբայրնե՛ր,
Զարկեցե՛ք թշնամիներին անխնա,
Հաղթենք մենք ռազմի դաշտում»[1]:

Ինչքան որ Բասեն բարի է և անխարդախ, այնքան էլ խիստ է և անխնա թշնամիների նկատմամբ:

Մինչև անգամ նախասովետական շրջանում, ցեղամիջյան և ներցեղային կռիվների ժամանակ քրդուհիները բավական մեծ դեր էին խաղում, իրենց ամուսինների, ցեղակիցների հետ միասին կռվում էին ախոյանների դեմ:

Տղամարդու և կնոջ հարաբերությունների պատկերը ընտանիքում միանգամայն այլ է հայրիշխանության օրոք: Մայրական իրավունքի տապալումով «տղամարդը իր ձեռքն առավ նաև տան ղեկավարությունը և կինը կորցրեց իր պատվավոր դիրքը, ստրկացվեց, դարձավ լոկ նրա ցանկությունների ստրկուհին և երեխա ծնելու հասարակ գործիք»[2]:

Այս երևույթը իր ցայտուն դրսևորումն է գտել նաև անդրկովկասյան քրդերի կենցաղում: Նախասովետական շրջանում քրդուհին, հայրիշխանական ընտանիքի սովորությունների հիման վրա, պարտավոր էր ամուսնու արենակից հասակավոր մարդկանց նկատմամբ լինել չխոսկան: Այդ պատճառով էլ դիմացինին իր միտքը հաղորդելու համար քրդուհին սովորաբար խոսում էր դիմախաղերով և ձեռնալեզվով:

Գլխավորապես կրտսեր հարսը ընտանիքում և ընտանիքից դուրս պարտավոր էր ամուսնու և ընտանիքի հասակավոր մյուս բոլոր անդամների կամքը կատարել, այլապես նրան տալիս էին «բեշարմ», «ֆարդ», «ուդալըմ» և այլ ածականներ: Բացի ընտանիքը ղեկավարող այրից, քրդուհին իրավունք չուներ մասնակցել հասարակական գործերին, հավաքույթներին և որևէ խնդրի շուրջն իր վերաբերմունքը ցուցաբերելու, իսկ կավանին սահմանափակ իրավունքներ ուներ և այն էլ միայն ընտանիքի շրջանակներում:

[1] Տե՛ս մեր «Թալինի շրջանի ազգագրությունը» աշխատությունը, որը գտնվում է Պետ. Պատմական թանգարանի ազգագրական արխիվում:

[2] Ֆ. Էնգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Երևան, 1948, էջ 75:

Այս երևույթները հայրիշխանական հարաբերությունների արգասիք են և մնացուկային ձևով շարունակվում էին գոյություն ունենալ անդրկովկասյան քրդական գերդաստանում:

Քրդական նահապետական մի գերդաստանից մի այլ գերդաստան տեղափոխվող կինը բացի օժիտից, որը նրա անձնական սեփականությունն էր հանդիսանում, իրավունք չուներ իր հետ ունեցվածք վերցնելու:

Ընտանիքում ամուսնու վերաբերմունքը կնոջ նկատմամբ ցույց էր տալիս, որ կինը նրա ստորադրյալն է, իսկ ինքը կնոջ գլխի տերը, նրա կյանքի տնօրինողը: Կնոջ ընտանեկան փակ կյանքը, նույնիսկ իր ամուսնու հետ այլոց ներկայությամբ չխոսելը և անգամ միմյանց անունը տալն ամոթ համարելը (լավագույն դեպքում ամուսինը կնոջը կանչում էր «կլաճե» բառով), ամուսնու խանդոտության պատճառով տղամարդկանց հետ ազատ չխոսելն ու հարևանների տուն քիչ գնալը, տղամարդկանց հետ սեղան չնստելը, հասարակության մեջ քիչ երևալը ու նման սահմանափակումներ քրդուհուն դրել էին նվաստ վիճակի մեջ:

Կնոջ վիճակը ընտանիքում պարզաբանելու տեսակետից հետաքրքիր է նաև այն փաստը, որ քրդական ընտանիքում կնոջ համար մեծ ամոթանք էր համարվում դատարան գնալը, մինչև անգամ վկայություն տալը որևէ հանցագործի վերաբերյալ: Կնոջ համար ընտանիքում ստորացուցիչ էր այն հանգամանքը, որ նրան անսուրբ էին անվանում: Քրդերի կարծիքով, կնոջն անսուրբ էին դարձնում դաշտանն ու ծննդաբերությունը, դրա համար էլ սրբավայրերում, շեյխերի սուրբ օջախներում կնոջն իրավունք չէր տրվում զոհաբերվող անասուններ և թռչուններ մորթելու:

Կնոջ նվաստացումը առկա էր քրդական թե՛ շահագործող և թե՛ աշխատավորական ընտանիքներում, միայն այն տարբերությամբ, որ աշխատավորական ընտանիքի կանանց համեմատությամբ, աղաների, բեկերի կանայք գտնվում էին հրամայողի դերում և անխնա շահագործում էին «ջարիներին» ու «խուլամներին»:

Շահագործող դասակարգի ներկայացուցիչների կանանց ապրելակերպը տարբեր էր աշխատավորական ընտանիքների կանանց ապրելակերպից: Աղաների, բեկերի և հարուստների կանայք ապրում էին փարթամության մեջ, չէին աշխատում, վայելում էին ուրիշների աշխատանքը: Ահա թե ինչ է գրում այդ մասին քրդերի կենցաղին քաջածանոթ Խաչատուր Աբովյանը:

«Իշխանների և ավագների կանայք,— ասում է նա,— սիրում

են պճնազարդվել, հագնվում են մեծ ճաշակով, ման են գալիս մետաքսե թանկագին զգեստներով, լանջ ու գլուխը զարդարում են թանկարժեք ակներով, արծաթով, ոսկով, մարգարիտներով և սովորաբար ամբողջ օրն անց են կացնում անգործության մեջ, շըրջապատված ստրուկների և ստրկուհիների խմբերով, իսկ հասարակ մարդկանց կանայք, ընդհակառակը, կատարում են բոլոր տնային և դաշտային ծանր աշխատանքները»[1]:

Ընտանիքում մայրը կամ կավանին հարսներին սովորեցնում էր գորգ գործել, կարել, տուն մաքրել, ծառայել հյուրերին, տան մեջ կատարել բազմաթիվ այլ ծառայություններ. մի խոսքով այն, ինչ որ նա ինքը գիտեր: Գործել և կարել չիմանալը քրդուհու համար ամենամեծ ամոթն էր համարվում:

Աղջիկ ուզելու ժամանակ առաջին հերթին հարցնում էին, թե ալինչ աղջիկը «զանայա՞», ասել է՝ գորգ, գուլպա, ձեռնոց գործել գիտի, թե չէ: Ինչպես մալխոեին, նույնպես և տան կավանու նկատմամբ վատ վերաբերվող հարսը կամ տան կինը ապերախտ էր համարվում, վատ արարքի տեր, իր ցեղն ու բարը չճանաչող կամ արհամարհող:

Կավանին ոչ միայն կատարում էր տան գործերը, այլև զբաղվում էր կանանց և երեխաների դաստիարակման գործով, ուշի-ուշով հետևում էր հարսների և աղջիկների բարոյականությանը: Բավական էր, եթե հարևան տղամարդկանցից մեկը շեղ աչքով նայեր տվյալ ընտանիքի հարսներից կամ աղջիկներից մեկն ու մեկին, այն ժամանակ առաջ էր գալիս անախորժություններ: Երբ կավանին տեսնում էր, որ հարսներից մեկն ու մեկը խելոք է, շատ ըմբռնող, նա վստահում էր նրան տնային որոշ գործերը ինքնուրույն կերպով կատարելու, ինչպես, օրինակ՝ կաթնամթերքներ պատրաստել, տան աղջիկներին և հարսներին ղեկավարել, կերակուր պատրաստել և այլն: Դա կատարվում էր նրա համար, որպեսզի կավանու բացակայության ժամանակ վերջինս կարողանար կանացի գծով ընտանեկան գործերը վարել: Այստեղ, իհարկե, նախապատվությունը տրվում էր ավագ հարսին կամ ավագ եղբոր կնոջը, թեկուզ վերջինս հասակով փոքր լիներ կրտսեր եղբայրների կանանցից:

Ընտանիքում եղբայրների և հարսների փոխհարաբերությունների մասին խոսելիս պետք է նշել, որ փոքր եղբայրները մեծ

[1] Խ. Աբովյան, Քրդեր, «Սովետական գրականություն», № 9—10, Երևան, 1941, էջ 97:

եղբայրների, իսկ փոքր հարսները մեծ հարսների նկատմամբ խոհեմ էին պահում իրենց:

Ընտանեկան պայմաններում ավելի վատ էր նորահարսի վիճակը: Ընտանիքում հարսները կատարում էին ամեն տեսակ աշխատանքներ, մանավանդ նորահարսները, որոնք պարտավոր էին ամենից առաջ խոնարհաբար կատարել մայրերի, կավատու, տեգրերի և ավագ հարսների կարգադրությունները: Ընտանիքում անտանելի վիճակ էր ստեղծվում այն հարսի համար, որի կուսությունը նախքան նորափեսայի տուն գնալը խախտված էր լինում: Այս դեպքում ընտանիքի բոլոր անդամները, ողջ շրջապատը նախատում էին նրան, նա դառնում էր ծեծի, արհամարհանքի առարկա և հեռացվում էր ընտանիքից: Բացի այդ, դրա համար ամբողջ ընտանիքին սպառնում էր դժբախտություն, այսինքն՝ ընտանիքում դըրվում էր իրենց հարսի պատիվը խախտողից վրեժ լուծելու խնդիրը, որի հետևանքով կորչում էին տասնյակ կյանքեր: Քրդուհու համար անտանելի վիճակ էր ստեղծվում նաև բազմակնության հետևանքով: Ընտանիքում հաճախ տեղի էին ունենում դժբախտություններ: Ունևոր տղամարդը մինչև երեք կին էր առնում՝ նրանց լուրաքանչյուրի համար վճարելով գլխագին: Այդ հնարավորություններից զուրկ էին չքավոր տղամարդիկ:

Մահմեդականությունը նույնիսկ խրախուսում էր բազմակնությունը: Եզդիական կրոնն էլ դեմ չէր բազմակնությանը: Մի տղամարդու կանայք իրար նկատմամբ կոչվում են «հևուի»: Սրանք շարունակ նախանձում էին միմյանց և ամեն մի չնչին բանի համար կռվում ու նախատում իրար: Սրանցից շատերը, չդիմանալով հետխական կյանքին, փախչում էին այլ տղամարդկանց հետ: Հարուստը միջոցներ ուներ իր ունեցած կանանց թիվն ավելացնելու մի դեռատի աղջիկ ևս, վերջինիս ցանկությունը իր ծնողների և պամաների կողմից քիչ էր հաշվի առնվում:

Ընտանեկան հարաբերությունները պարզաբանելու տեսակետից անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև քրդական ընտանիքում գոյություն ունեցող ավագության կարգի վրա:

Ավագության կարգը տոհմային շրջանի հասարակական փոխհարաբերությունների արգասիք է և առաջ է եկել աշխատանքի հասակային բաժանման հիման վրա: Դրանով հարգվում էր կյանքի փորձառությունը ձեռք բերած և իմաստությունը յուրացրած ավագ սերունդը:

Տոհմային այդ սովորության վերապրուկը շատ ուժեղ էր անդրկովկասյան բոլոր քրդերի մեջ և բավական մեծ դեր էր խաղում նրանց ընտանեկան կյանքում: Ըստ ավագության կարգի, կրտսերը պարտավոր էր ենթարկվել ավագին և ամեն դեպքում նախապատվությունը տալ նրան, դա լիներ կին, թե տղամարդ, միևնույն է:

Ընտանեկան կյանքում ավագության կարգը հետևյալ կերպ էր դրսևորվում: Տանը ընտանիքի բոլոր անդամները նստում էին ավագության կարգով: Ամենապատվավոր տեղը տրվում էր ընտանիքի ամենաավագ անդամին (տղամարդիկ առանձին էին սեղան նստում): Թե՛ կերակուր բաժանելիս, թե՛ ճաշելիս, թե՛ ամուսնանալիս, նույնիսկ քնելիս ավագության կարգը պահպանվում էր: Կանանց մեջ հարգանքի կարգը ավելի ուժեղ էր: Ավագության կարգի համաձայն, եթե մեկը ներս էր մտնում, նրանից կրտսերը ոտքի էր կանգնում և իր տեղը հրամցնում ավագին: Նույն հարգանքն այժմ էլ շարունակվում է մեծերի նկատմամբ: Տան մեծի մոտ փոքրը խոնարհություն էր համարում՝ ամոթխածությամբ լռություն պահպանել: Տան մեծի մոտ կրտսեր տղամարդու համար ամոթ էր համարվում իր կնոջ հետ աղատ խոսել, իր երեխային գրկել: Որևէ գործ կատարելիս, խորհրդակցելիս, ուտելիս, խմելիս, նստելիս, հյուր գնալիս, լողանալիս և այլն առաջնությունը տրվում էր ավագ կնոջը:

Քրդուհիների մեջ ավագին հարգելը արտահայտվել է նաև չխոսկանությամբ: Այդ նպատակով հարսները երկար ժամանակ չէին խոսում իրենց կեսրայրի ու սկեսրի և տեգրի հետ: Հարսները խոսում էին միայն չամուսնացած տալերի հետ: Նրանք սկեսրի և սկեսրայրի մոտ խոսում էին դիմախաղով, ձեռքերի, գլխի և ուսերի շարժումներով, երեխայի միջոցով, հազվագյուտ դեպքում՝ բացականչություններով:

Տան ղեկավարի մահանալուց հետո, նրան փոխարինում էր նրա ավագ եղբայրը, ավագ եղբոր մահից հետո տան ղեկը անցնում էր կրտսեր եղբոր ձեռքը: Նույնն էր կատարվում կանանց գծով: Եթե սկեսուրը մահանում էր, տան տնտեսական գործերի ղեկավարումը անցնում էր մեծ հարսին, վերջինիս մահանալու դեպքում էլ՝ նրանից կրտսեր հարսին և այլն:

Մեծ է հարգանքը ծնողների նկատմամբ, «վախտա դըբեն գե ու բավ, ռո դըլակընա» (երբ ասում են հայր ու մայր, սիրտն է կանգնում), ասում է քրդական խորիմաստ ասացվածքը:

Փոխադարձ հարգանքի տեսակետից մեծ նշանակություն ուներ նաև ընտանիքի անդամների միմյանց դիմելու ձևը։ Ծնողների ներկայությամբ հայրը տղային անվանում է «լաւո՛ մըն» (իմ որդի), տղաներն ու աղջիկները հորը՝ «բավե մա» (մեր հայր), կամ «դյա

Ավագների խորհուրդ

մա» (մեր մայր), թոռներն ու ծոռները պապին կոչում են «կալկե մա», (մեր պապին), տատին՝ «պիրկա մա», հարսները սկեսրայրին՝ «խաղուրե մա», սկեսրոջը՝ «խուասիա մա», քեռին իր քրոջ որդուն՝ «կուռէխուշկ» (քրոջ տղա), «դոտխուշկ» (քրոջ աղջիկ), վերջիններս էլ նրան անվանում են «խալո»։

Ի՛նչ հարգանքի, աներն ու փեսան նույնպես իրար անուններ չէին տալիս։ Աները փեսային անվանում է «զավա», իսկ փեսան աներոջը՝ «խազուր», զոքանչին՝ «խասու»։

Գլխատունը փոքր լինելու դեպքում ծերերն ու պառավները քնում էին առանձին սենյակներում, իսկ հարսներն ու ամուսինները՝ առանձին։ Ըստ սովորության, ավագության կարգը պետք է պահպանվեր նաև «հետինների» մեջ, բայց նրանց մեջ տեղի ունեցող անհաշտությունների ու նախանձի պատճառով խախտվում էր այդ կարգը։

Ավագության կարգը արտահայտվում էր նաև հյուրընկալության ժամանակ։

Քրդական «Մամե և Զինե» կամ «Մամե Ալան» սիրային վիպերգում հյուրասիրությունը այնքան մեծ տեղ է գրավել, որ պոեմի գլխավոր հերոս Ղարաթաժդինը, եղբայրներ Ճականի և Աֆանի (կամ Հասանի) համաձայնությամբ, հանուն հյուրասիրության և դաստիարակության, իր հարսին՝ Զինե խաթունին (Ճականի նշանածին) տալիս է իրենց մոտ՝ «Ջզիրա Բոթան» հյուր եկած, Զինեի սիրով տարված Մամե Ալանին։

«Մամե Ալան» վիպերգում եղբայրներից մեկը՝ Հասանը, Մամեի մասին ասում է՝ Yro yan emê meraqê dilê mêvanê xwe bi cameri biqedinin, yan jî emê navê xwə jî dinê hilînin[1] (այսօր տղամարդու պես մենք մեր հյուրի ցանկությունը պետք է կատարենք կամ մենք մեր անունը աշխարհից պետք է վերացնենք)։ Հյուրը լիներ տղամարդ (տղամարդկանց մեջ) կամ կին (կանանց շրջանում) միևնույն է, նա մեծարվում էր և նրան տրվում ամենապատվավոր տեղը։

Հյուրասիրությունը իբրև առհասարակ արևելյան ժողովուրդների, այդ թվում և քրդական աշխարհում բարձրագույն և անխախտելի սովորույթ էր։ Հյուրին հյուրընկալելու, նրան ծառայելու հիմնական պարտականությունները ընկնում էին տան տիկնոջ կամ հարսների վրա։ Սովորաբար, երբ հյուրը իջնում էր քրդի դռանը, տանտերը նրա համար ոչխար էր մորթում, ընտիր կերակուրներ պատրաստում, իսկ տան հարսի պարտականությունն էր՝ առաջին հերթին լվանալ նրա ոտքերը, ապա հեռանալ։ Ամենաէականն այն է, որ այս բոլորը կատարվում էր մեծ լռությամբ և խորհրդավորությամբ, եթե նման մեծարանքը մերժվեր հյուրի կողմից, դա մեծ վիշտ էր պատճառում հյուրընկալողներին։ Ավելի մեծ վիշտ էին ապրում ընտանիքի մալխոէն և կավանին, որոնց համար պատիվ էր համարվում այս կամ այն ծառայությունը մատուցել ծանոթ, թե անծանոթ հյուրին։ Մալխոէն և կավանին ուրախանում էին իրենց այն հարսով, որը հյուրին պատվավոր և արժանի կերպով ընդունել գիտեր և այդպիսով բարձր էր պահում իրենց ընտանիքի և այն ցեղի կամ պատրոնիմիայի անունը, որին պատկանում էր իրենց ընտանիքը։

«Լե, լե» երգում, կավանին գովում է իր այն հարսին, որը հյուրի նկատմամբ աչալուրջ է եղել. կավանին ասում է՝

[1] Roger Lescot, Textes kurdes. Mame Alan, Beyrouth, 1942, էջ 162։

«Հյուր է եկել մեզ սիրելի՝
Դադոն հեռու աշխարհից.
Իմ հարսս — Գուլեն, Թող ապրի,
Լվա հյուրի ոտքերը»:

Ընտանիքի անդամները այնքան խորհրդավոր և ակնածությամբ էին նայում հյուրընկալության վրա, որ երբ թշնամին ոտք էր դնում իրենց տուն, տվյալ տան անդամներից ոչ մեկը չէր համարձակվում վիրավորել կամ դիպչել թշնամի հյուրին, իսկ տնից դուրս գալուց հետո վերջինս նույն թշնամին էր հանդիսանում:

Այսպիսով, ավագության կարգը տարածվում էր նաև հյուրերի վրա, ինչպես այդ տալիս է «Մեւան մեւանե խուադեա» (հյուրը աստծու հյուրն է) քրդական ասացվածքում:

* * *

Քրդական ընտանեկան հարաբերությունները ավելի լավ հասկանալու համար հետաքրքիր են նաև պատրիարխիական հարաբերությունները:

Պատրիարխիան առաջ է եկել տոհմերի քայքայումից հետո: Պատրիարխիայի մեջ մտնում էին արենակցական-ազգակցական սերտ կապերով միմյանց հետ կապված ընտանիքների խմբերը, որոնց անդամները պատրաստ էին ամեն կերպ պաշտպանել միմյանց: Նրանց տները կողք-կողքի կազմում էին մի առանձին թաղ: Այս ընտանիքները թե՛ տնտեսապես և թե՛ բարոյապես օգնում էին միմյանց, որոշ ապարեգներում նրանց տնտեսական գործունեությունը միասնական էր:

Անդրկովկասյան քրդական ընտանիքների այս խմբերը ունեին իրենց պետերը, բարապետները, որոնք գրեթե ցեղապետների դեր էին կատարում քրդերի մեջ: Անդրկովկասյան քրդական պատրիարխիան ուներ հետևյալ հատկանիշները՝

Առաջին՝ բարը կամ պատրիարխիան ուներ ընդհանուր արոտավայրեր:

Երկրորդ՝ ընդհանուր հող (աուրին):
Երրորդ՝ երբեմն աշխատանքը տարվում էր կոլեկտիվ ձևով:
Չորրորդ՝ վրեժառու էր թշնամու հանդեպ:
Հինգերորդ՝ ուներ ընդհանուր գերեզմանատուն:
Վեցերորդ՝ կից բնակարանների միջնապատում թողնված

ակնատը, որի միջոցով բարեկամները հաղորդակցության մեջ էին մտնում միմյանց հետ:

Պատրիարխիայի անդամները իրենց համարում էին մի նախահորից սերված մարդիկ: Պատրիարխիայի անդամների համերաշխությունը հաճախ խախտվում էր քրդերի մեջ գոյություն ունեցող դասակարգային պայքարի, ցեղամիջյան և ներցեղային կռիվների

Քրդական ակնատ

շնորհիվ, պայքար, որ տեղի էր ունենում բատրակ խալամների, չքավորների ու նրանց պատրիարխիակից և ոչ-պատրիարխիակից հարուստների միջև, չնայած դրան, այնուամենայնիվ, այլ պատրիարխիաների, ցեղերի դեմ պայքարելիս, տվյալ պատրիարխիայի անդամները հանդես էին գալիս միացյալ ուժերով:

Գ. ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ, ՀԱՐՍԱՆԻՔ

Ամուսնություն.— *Ինչպես բոլոր ժողովուրդների, այնպես էլ քրդերի կենցաղում առանձնահատուկ տեղ է գրավում ամուսնությունը: Նախասովետական շրջանում Անդրկովկասի քրդերի ընտանեկան կյանքում գոյություն ունեցած ամուսնության ձևերն ու*

դրանց հետ առնչվող սովորությունները մեծ նշանակություն ունեն ընտանիքի անդամների փոխադարձ հարաբերությունները և ընդհանրապես քրդերի կենցաղը պարզաբանելու տեսակետից:

Անդրկովկասի քրդերի մեջ մեծ տեղ էր տրվում էնդոգամ ամուսնությանը: Ընտանիքում երբ խոսք էր լինում ամուսնության մասին, ասում էին՝ «օրնդա մարվ կնեգա խո բըստինա» (լավ է մարդ իր կնեգին առնի), բայց և սովորական էր նաև էքզոգամ ամուսնությունը: Այնուամենայնիվ Անդրկովկասի քրդերի մեջ գոյություն չունեին զուտ էնդոգամ կամ էքզոգամ ցեղեր կամ բաներ:

Ամուսնական կապերի մեջ մտնելու առումով, քրդերի մոտ արենակցական ազգակցականությունը բաժանվում էր երկու կարգի: Ծնողներ, նրանց որդիները, թոռներն ու ծոռները, կամ վարից վեր՝ ծոռներն ու թոռները, նրանց որդիներն ու ծնողները, մինչ պապը և այլն, խառնակի գծով ծնողներն ու նրանց եղբոր և քրոջ որդիները, քեռիները և այլն:

Քրդական սովորութական իրավունքով առաջին կարգի արենակիցների մեջ ամուսնությունը արգելվում էր, երկրորդ կարգի արենակիցների մեջ՝ թույլատրվում: Սրանք սովորաբար աղջիկներին ամուսնացնում էին փոքր՝ 12—15 տարեկան հասակում: Ծնողների, պամանների կողմից սիրո ասպարեզում աղջկա և տղայի զգացմունքներին քիչ տեղ էր տրվում:

Անդրկովկասյան քրդերի մեջ ընդունված էր ամուսնության վեց ձև՝ «բեշիկ քյարթմա», «նշանկըրըն», առևանգում, «սարդաունշաանդըն», «բժրդելի», բազմակնություն:

Մինչև Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան անդրկովկասյան քրդերի մեջ սովորական երևույթ էր կնոջ առևանգումը և բազմակնությունը: Քուրդ աղաներն ու բեկերը, ցեղապետներն ու բարապետները, որոնք ունեին բոլոր հնարավոր միջոցները գլխագին վճարելու, կնություն էին վերցնում 1—3 կին: Չնայած բազմակնության սովորությանը, այնուամենայնիվ, տիրող ձևը մենամուսնությունն էր, որը պետք է լիներ անխախտ, մինչև ամուսիններից մեկն ու մեկի մահը: Սրանց մեջ ամուսնության բոլոր ձևերը, բացի «բարդելիությունից»[1], կատարվում էին գնմամբ:

[1] Մանրամասն տե՛ս մեր աշխատությունը՝ Քուրդ կինը նահապետական ընտանիքում ըստ ազգագրական և ֆոլկլորային նյութերի, «Պետ. Պատմական թանգարանի աշխատությունների ժողովածու», Երևան, 1948, հ. Ա., էջ 213:

Ամուսնության այս ձևը նախնադարյան տոհմային կարգերից՝ հայրիշխանության շրջանից է գալիս: Սրա հետ միասին, միաժամանակ ծագել է նաև կնոջ առևանգումը և գլխագինը: Երբ ամուսնանում կամ առևանգվում էր որևէ տոհմի աղջիկ, տղայի տոհմը պարտավորվում էր աղջկա տոհմին անասուններ կամ որևէ այլ բան տալ, որպեսզի ծածկվեր այն վնասը, որ կրում էր աղջկա տոհմը՝ աշխատող ձեռք կորցնելու պատճառով: Տոհմերի քայքայման շրջանում, առևտրական փոխանակության զարգացումով, գնումը սկսում է ծավալվել, արմատավորվում է գլխագինը:

Այսպիսով, ինչպես մայրիշխանական, այնպես էլ հայրիշխանական տոհմերը ունեին իրենց ընդհանուր սեփականությունը և քանի որ կինն էլ հայրիշխանական շրջանում հանդես էր գալիս իբրև տոհմի ընդհանուր սեփականության մի մասնիկ, նա նույնպես ենթակա էր առուծախի: Հայտնի է, որ հայրիշխանության շրջանում կինը նվաստ վիճակի մեջ էր գտնվում. նա հանդես էր գալիս իբրև աշխատավոր ձեռք, սրա հետևանքով տոհմերի միջև կնոջ առևանգումն ու ապրանքներով փոխանակելը անհրաժեշտություն էր հանդիսանում: Ֆ. Էնգելսը հայրիշխանության կապակցությամբ կնոջ մասին գրել է.

«Ընտանիքի նախկին ձևերի ժամանակ տղամարդիկ երբեք կանանց պակասություն չէին ունենում, ընդհակառակը՝ պետք եղածից ավելի կին կարող էին գտնել, այժմ կանայք հազվագյուտ դարձան և նրանց հարկավոր էր փնտրել»[1]:

Ըստ Էնգելսի, հենց այդ «փնտրելն» էր, որ բազմաթիվ ցեղերի, ժողովուրդների մեջ արմատավորեց գլխագինը: Այդ երևույթը քրդերի մոտ հարատևում է մինչև XIX դարի վերջերը: Այժմ էլ Հարավային Աֆրիկայի թափառաշրջիկ ցեղերի մեջ ամուսնությունը կատարվում է գլխագնով, որ նրանց լեզվով կոչվում է «լոբոլո»: Իբրև լոբոլ նրանց անասուն են տալիս, առանց դրան նրանք չեն պատկերացնում ամուսնություն[2]:

Աֆրիկյան տոհմապետը լավ էր հասկանում, որ «երբ աղջիկը մարդու է գնում, նա մտնում է ուրիշի տոհմի մեջ, նրա սեփական տոհմը կորցնում է „amandhla", այսինքն՝ «ուժ». այդ կորու-

[1] Ֆ. Էնգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Երևան, 1948, էջ 63:

[2] Д. А. Ольдерогге, Из истории семьи и брака, „Советская этнография", 1947, № 1, էջ 4:

տը պետք է փոխհատուցվի»[1]: Քրդերի հասկացողությամբ կին առնել, նշանակում էր ավելացնել ընտանիքի աշխատավոր ձեռքերը և ապահովել նոր սերնդի աճը, ուժեղացնել գերդաստանի, բաժրի տնտեսական և ռազմական ուժը, իսկ աղջիկ մարդու տալով տուժում էր տվյալ գերդաստանը, թուլանում է ցեղի կամ բաժրի թե՛ տնտեսական, թե՛ հասարակական ուժը, դրա համար էլ փոխանակման ժամանակ գերդաստանի անդամները, այնքան էլ չէին ափսոսում իրենց շարժական և անշարժ գույքին, նրանք աշխատում էին, որքան հնարավոր է, ավելին տալ և փոխարենը կին բերել: Դրանով տարածվում էր նաև բազմակնությունը:

Մեր կարծիքով, նախասովետական շրջանում անդրկովկասյան քրդերի մեջ գոյություն ունեցող և այժմ էլ արտասահմանյան քրդերի կյանքում պահպանվող «բարդելի» ամուսնության ձևը ծագել է տոհմային շրջանում, կանանց՝ ապրանքների հետ փոխանակելու սովորությունից:

Քրդերի մոտ քույրերի փոխանակությամբ կատարվող ամուսնությունը («բարդելի») այն աստիճանին էր հասել, որ հաճախ այդ արվում էր երեխաների, երբեմն էլ դեռևս չծնվածների նկատմամբ: Այս սովորությունը արևելյան բազմաթիվ ժողովուրդների մեջ կոչվում է «բեշիքքյարթմա» (օրորոցախաղ), որ նշանակում է օրորոցում ամուսնացնել, օրորոցի վրա խաղ գնել: Բեշիքքյարթման նույնպես կատարվում էր գնով: Երեխաները տարիքի հասնելուց հետո, եթե իրար չէին սիրում, աղջիկը փախչում էր իր սիրած երիտասարդի հետ:

Բազմակնությունը անցյալում տարածված էր թե՛ մահմեդական և թե՛ քուրդ եզդիների մեջ: Ֆր. Էնգելսի վկայությամբ, բազմակնությունը ձևավորվել է բարբարոսության վերին աստիճանում:

«Զույգամուսնության և մենամուսնության միջև,— ասում է նա,— բարբարոսության վերին շրջանում, խցկվում է տղամարդկանց տիրակալությունն ստրկուհիների վրաբերմամբ և բազմակնությունը»[2]:

Այնուհետև Էնգելսը գրում է.

«Իրականության մեջ տղամարդու բազմակնությունն անշուշտ ստրկության հետևանք է և մատչելի է բացառիկ դիրքեր գրավող առանձին անհատների համար միայն»[3]:

[1] W. Wagner, Itschr. f. Ethnologie, Bd 67, 1935, էջ 369:

[2] Ֆ. Էնգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Երևան, 1948, էջ 98:

[3] Նույն տեղում, էջ 80:

Սա ամբողջությամբ վերաբերվում է նաև քրդերի անցյալ նախասովետական կենցաղին: Տան մեջ բազմակին տղամարդու կանայք ուղղակի նրա անձնական սեփականությունն էին կազմում, նրա քմահաճույքների առարկան: Եթե տվյալ նահապետի, ցեղապետի կամ բազմակին մի այլ մարդու կանանցից մեկը աղաների սերնդին էր պատկանում, նա թե՛ ընտանիքում և թե՛ իր ամուսնու մոտ վայելում էր որոշ արտոնություններ:

Ընտանեկան կյանքում, ըստ սովորութական իրավունքի, «ՀԵՈՒԻՆԵՐԸ» աղայական ծագում ունեցող հեուիի նկատմամբ պետք է լինեին ողջախոհ, իրենց պահեին «ջարիների» դերում, ծառայեին նրան: Երբեմն հեուիներից ոմանք չէին ենթարկվում իրենց խանումին՝ աղայական ծագում ունեցող հեուի կնոջը:

Հեուիների մեջ մեկը համարվում էր «ժընա սարա» (գլխավոր կին), որը եթե տան կավանին էլ չէր, այնուամենայնիվ, մյուս կանանց համեմատությամբ, նրան տրվում էր ավելի լայն իրավունքներ, որոնք արտահայտվում են հետևյալում՝ սովորութական իրավունքի հիման վրա բոլոր հեուիները պետք է ենթարկվեին իրենց մեծին: Ամուսնու «դոգմայը» առաջին հերթին պետք է տրվեր մեծ կնոջը: Տան գործերը առաջին հերթին պետք է կատարեր կրտսեր հեուին, ապա մեծահասակները կամ գլխավոր կինը: Սա արդեն ավագության կարգից է գալիս, որի մասին խոսվեց վերը: Ընտանեկան որոշ խնդիրներ լուծելու համար պատրոնիմիայի անդամների և մյուս հարևանների հետ առաջին հերթին գլխավոր կինն էր մտնում հարաբերությունների մեջ: Երեխաներին դաստիարակելու գործում ընտանիքում նախապատվությունը տրվում էր մալխանին, կավանուն կամ հեուիների մեջ գլխավոր կնոջը և մորը:

Հեուության ձևը գոյություն ուներ նախասովետական Ադրբեջանում, օսերի, թուրքերի, պարսիկների, արաբների և այլ ժողովուրդների մեջ: Ադրբեջանցիների մեջ հեուին կոչվում էր «գյունի», թուրքերի մոտ՝ «կումա», օսերի մոտ՝ «նոմուլուս»:

«Հյուսիսային և հարավային Օսեթիայում,— ասում է Մ. Կովալևսկին,— սովորություն կար մի քանի կին պահել, որոնցից մեկը համարվում էր գլխավորը, իսկ մնացածները երկրորդական կանայք, որոնք միմյանց նկատմամբ կոչվում են նոմուլուս»[1]:

Բազմակնությունը օժանդակում էր «լևիրատը»: Անդրկովկասյան քրդական ընտանիքում, երբ մեռնում էր տղամարդը, տեղ-

[1] М. Ковалевский, Современный обычай и древний закон, Москва, 1886, էջ 232:

րերից մեկն ու մեկը, որի հասակը ներում էր, ըստ սովորության, իրավունք ուներ կնությամբ վերցնել իր մեռած եղբոր կնոջը՝ հարսին: Մեռած մարդու կինը, նախկին հարսը, այժմ դառնում էր հեուի: «Ուստ անխա մընդա նվխիրա» (ճակատիս այդպես էր գըրված), ասում էր վերջինս և լալիս: Դրան դեմ չէին լինում նաև նոր հեուիի ծնողները, որովհետև դա կատարվում էր սովորութական իրավունքի հիման վրա: Հեուին էլ, ստիպված թեկուզ հանուն իր երեխաների, աշխատում էր իր հեուիի կամ հեուիների հետ ապրել ողջախոհությամբ:

Այրիացած կինը, երկար չամուսնանալու դեպքում, դժվարությամբ էր համակերպվում հեուիության վիճակին. Նա վերադառնում էր իր ծնողների մոտ և ամուսնանում այլ տղամարդու հետ: Իսկ երբ մահացած ամուսնու ընտանիքում բռնություն էր գործադրվում նրա կամքի վրա, այն ժամանակ այրիացած կինը առևանգվում էր իր սիրած տղամարդու կողմից: Եթե փեսան մի կնոջ ծնողների հետ գտնվում էր ավելի մտերիմ հարաբերությունների մեջ, մյուս հեուիների մոտ իրենց ամուսնու հանդեպ ատելություն էր առաջ գալիս: Նրանց մեջ նախանձ և ատելություն էր առաջ գալիս նաև աշխատանքի անհավասար բաշխման հետևանքով:

Իր ամուսնու մոտ գեղեցիկ հեուին հպարտանում էր իր առավելությամբ և աշխատում նրա ուշադրությունը միշտ իր վրա սևեռած պահել: Եթե հեուիներից մեկը ձգտում էր իր աշխատասիրությամբ դուր գալ ամուսնուն, մյուսն էլ նույն բանին էր ձգտում՝ ցուցաբերելով իր ցեղային «բարձր» հատկանիշները: Նման հակադրությունների պատճառով հեուիների և ամուսնու ու նրա կանանց մեջ առաջ էր գալիս խոր ատելություն: Այնպես որ իրենց ամուսնուն ատող հեուիներից շատերը ընտրում էին առևանգման ճանապարհը, որի հետևանքով սկսվում էր վրիժառությունը:

Հեուիների դառն վիճակը ցայտուն կերպով արտահայտված է քրդական բազմաժանր ֆոլկլորում: «Ղաշանգե» երգում հեուի քրդուհին անիծում է իր ծնողներին նրա համար, որ իրեն չեն տվել իր սիրած, չքնաղ Ղաշանգին, այլ տվել են տարեց հարուստ Ահմադին, որն ունի հեուի կանայք:

«Ծնողներս օր ու արև չտեսնեն,
Եվ թող միշտ հիվանդ լինեն,
Իսկ նրանց ծնկները դողան,
Ընկնեն անկողին ու մեռնեն տանը:

Նրանք ինձ չտվին իմ սիրած յարին,
Աչքիս լույսին՝ իմ Ղաշանգին,
Այլ դալանի համար տվին հարուստ Ահմադին,
Որին չէի սիրում, նա ունի երկու կին»[1]:

Այս երգի մեջ ցայտուն կերպով արտահայտված է քրդուհու անհուն վիշտը և խոր դժգոհությունը:

Կովալևսկու վկայությամբ, այս երևույթը համարյա նույնությամբ գոյություն ուներ Օսեթիայում: Օսերի մոտ լևիրատի զարգացման հետագա էտապում տեգրը կենակցում էր այրի կնոջ հետ և դա պահպանվում էր շնորհիվ այն բանի, որ օսը իր կնոջ վրա նայում էր այնպես, ինչպես իր սեփական շարժական և անշարժ գույքի վրա[2]:

Հնագույն շրջանում Առաջավոր Ասիայի համարյա բոլոր ցեղերի և ժողովուրդների կյանքում գոյություն է ունեցել լևիրատը: Այսպես, խեթական օրենքների № 220 հոդվածը ասում է.

«Որևէ տղամարդ մահանալու դեպքում, վերջինիս եղբայրը սովորույթի իրավունքի հիման վրա ամուսնանում է նրա կնոջ հետ: Այդ կնոջ հետ կարող է ամուսնանալ նաև մահացածի հայրը: Իսկ եթե հայրը մահանա, նրա եղբայրներից մեկն ու մեկը նույնպես կարող է ամուսնանալ նրա կնոջ հետ, որը թույլատրվում է օրենքով»[3]:

Լևիրատը նրա համար էր, որպեսզի չպակասեր հայրական տոհմի աշխատուժը, ռազմական կարողությունը և երեխաների աճը:

Լևիրատ ամուսնության ժամանակ կնոջ ծնողներին գլխագին չէր տրվում, «նաքահ» ծիսակատարություն չէր կատարվում, հետևաբար տեղի չէր ունենում նաև հարսանիք:

Նոր ամուսինների միացման համար հանդես էր գալիս մոլլան (մահմեդական քրդերի մեջ) և շեյխը (քուրդ եզդիների մեջ): Նրանք տղամարդուն դիմելով ասում էին՝ «ավա ժընա լը տե հալալ բա» (այսինչ կինը հալալ լինի քեզ). դրանով էլ վերջանում էր ամեն ինչ: Այլ ծիսակատարություններ չէին լինում:

Նախասովետական շրջանի քրդերի մեջ գոյություն ուներ նաև կնոջ առևանգման սովորությունը: Առևանգումը չէր կարելի մենակ

---

1 Ասաց Ապարանի շրջանի Ալագյազ գյուղի բնակիչ Աթամե Սլեմոն, գրի է առել հեղինակը 1955 թ.:

2 Տե՛ս *М. Ковалевский,* Современный обычай и древный закон, 1886, էջ 286:

3 *Louis Delaporte,* Les Hittites, Paris, 1936, էջ 220:

կատարել, դա մինչև անգամ մեղք էր համարվում: Կնոջ առևանգումը կատարվում էր ուրիշների՝ մոտիկ ընկերների, ցեղակիցների, բարեկամների օգնությամբ: Այստեղ մեծ դեր էին կատարում արենակից պսմամները, որոնք խումբ կազմելով և այդ խմբի անդամներից մեկի ղեկավարությամբ արշավում էին աղջկա բակի կամ գերդաստանի վրա և առևանգում նրան: Առևանգողների խումբը քրդերեն կոչվում է «քոմ»: Նույնիսկ քրդական հեքիաթներում տեղ է գտել այս երևույթը: Հեքիաթների հերոսները, չնայած նրանց գերբնական, արտակարգ ուժին, միայնակ չեն գործում, նրանք իրենց սիրած աղջկան առևանգում են պսմամների, դաստիարակների օգնությամբ:

Իհարկե, ոչ միշտ էր հաջողվում հեշտությամբ աղջիկ փախցնել, վերջինս էլ իր ցեղակիցներից ուներ պաշտպաններ:

Աղջկան առևանգելու ժամանակ, նրա արենակից պսմամները շուտափույթ զինվում էին և դուրս գալիս առևանգողների դեմ: Կան հարսանեկան բնորոշ սովորություններ, որոնք արտացոլում են «բըքամախ» (առևանգմամբ) ամուսնությունը:

Նախքան նշանդրեքը, մայրենի և տղայի ծնողների փոխադարձ համաձայնությամբ, հեղինակավոր պսմամներից մեկը մի քանի տղամարդկանց և կանանց հետ միասին գնում էր աղջկա հոր տուն և առաջարկություն անում, որ ծնողները «արեկըրն» տան: Եթե այդ առաջարկությունը հավանություն էր գտնում նաև աղջկա տերերի կողմից, այդ ժամանակ արեկրընից մի քանի օր հետո սկսվում էր նիշանկըրընը. տղայի տերերը իբրև խնամախոսներ գնում էին աղջկա տուն, իսկ գլխագինը որոշելուց հետո, սկըսվում էր նաքահը[1]:

[1] Նաքահ կոչվում է այն արարողությունը, որը նշանդրեքի կամ հարսանիքի ընթացքում էր կատարվում: Արարողության ժամանակ, հոգևորականի բացակայության դեպքում, մի ուրիշ հեղինակավոր անձ իր բութ մատը դնում էր աղջկա հոր, հայր չլինելու դեպքում՝ հորեղբոր, վերջինս չլինելու դեպքում՝ պսմամներից մեկին ու մեկի աջ բթամատին: Մի երրորդ անձ կանգնում էր աղջկա տիրոջ և տղայի ներկայացուցչի մոտ իբրև վկա, տղայի ներկայացուցիչը ասում էր, օրինակ՝ Բադրի աղջիկը, անունը Զադան, Բադրի արգանդում մեծացած, աստուծու կամքով, Ռասուլի ցանկությամբ՝ նաքահով, որպես կին, զույգեր դառնալու համար տալի՞ս ես մեր սիրելի, քաջ և խելոք Բադոյին՝ Բեդոյի որդուն, Լաթիֆեի արգանդում մեծացած, աստծու կամքով, Ռասուլի ցանկությամբ զույգեր դառնալու, նաքահով, հրեշտակի սեփական գրչով գրած, աջ ձեռքով բռնած, տալի՞ս ես: Աղջկա հայրը պատասխանում էր՝ համաձայն եմ: Վերջին բառը լինում էր՝ «փաթհա», ասել է, թե՝ վերջ արարողության:

Նաքահից հետո, պսմամներից մեկը, իբրև ուղեկան, բերած մատանին անց էր կացնում աղջկա մատնեմատը, գունզգույն փուշիներից մեկը կապում նրա գլխին, որից հետո սկսվում էր կերուխումը[1]:

Կերուխումից մի երկու ամիս հետո տեղի էր ունենում «դարմալի» (հարսին տնից դուրս հանելու ծիսակատարությունը):

Դարմալիի օրը տղայի պսմամները մտնում էին հարսի տուն, նվերներ տալիս նրան, իսկ աղջկա ծնողները փոխադարձ նվիրատվության ձևով իրենց արվելիք գլխագնի չափը պակասեցնում էին: Եթե աղջկա գլխագինը, ասենք՝ 30 ոչխար էր, հինգ ոչխար նվիրում էին իրենց փեսայի ներկայացուցիչներին: Այսպիսով, աղջկա գլխագինը մնում էր 25 ոչխար: Դրանով էլ վերջանում էր դարմալին: Դարմալիի օրը միմիայն հարսի կնեգները կարող էին նրան տանել մոտակա դաշտ՝ զբոսնելու և ուրախանալու: Դաշտում, լեռներում նրանք երգում էին հարսանեկան, աշխատանքի, սիրո և բնությանը նվիրած սրտառուչ երգեր, ծաղկեփնջեր էին կազմում և ուրախանում: Ահա այդ երգերից մեկը՝

«Ես յար ունեմ, ծաղիկ ունեմ,
Ես ազատ եմ էս աշխարհում,
Էս աշխարհը իմն է, ջա՜ն,
Վա՜յ լե՜, լե՜, լե՜, վա՜յ, լե՜, լե՜:

Յար ու ծաղիկ մի հատ ունեն,
Ես ազատ եմ էս աշխարհում,
Էս աշխարհը իմն է, ջա՜ն,
Վա՜յ լե՜, լե՜, լե՜, վա՜յ լե՜, լե՜:

Դարմալիի ժամանակ, հարսին տնից հանելու պահին, առաջին հերթին արվում էր «կնեգ» անունը, իսկ կնեգ, ինչպես նշել ենք վերը, նշանակում է տոհմի աղջիկ-զավակ, տոհմի անդամ: Դարմալիի ժամանակ մինչև անգամ արգելվում էր հարսին առանց կնեգների ուղեկցությամբ տնից դուրս հանել:

[1] Քանի որ քուրդ եզդիները գործ էին ածում ոգելից խմիչքներ, ուստի նշանդրեքի սեղանի վրա և ընդհանրապես խրախճանքների ժամանակ կենացներ էին խմում, իսկ մահմեդական քրդերը խմիչքների փոխարեն գործ էին ածում «շարբաթ»: Հարսանյաց ուրախության ժամանակ թե՛ կենաց խմողները և թե՛ շարբաթ գործածողները նշան գրվածներին բարեմաղթում էին երջանկություն և երկար կյանք:

305—4

Նաքանից և զարմալլից հետո կատարվում էր «շիրանի» կամ «շիրնալի», որը նշանդրեքից հետո հանդիսավոր խնջույք էր հանդիսանում: Քրդական որոշ ցեղերի (բրուկա, զարկա, ջալալիա) մեջ նաքանը շիրանուց հետո էր կատարվում, այն ժամանակ, երբ փեսայի ծնողները հարսանիքի պատրաստություն էին տեսնում:

Շիրանին ավելի ուշ շրջանի հասարակական հարաբերությունների արգասիք է: Դա կապվում է մասնավոր սեփականության ուժեղացման հետ, որովհետև զարմալլից հետո, սովորութական իրավունքի հիման վրա, կարող էին նշանդրեքը չեղյալ համարել, իսկ շիրանիի խնջույքից հետո այդ բանը չէր կարող տեղի ունենալ, քանի որ շիրանիի օրը աղայի սերբը գլխագնի կեսը կամ 3/4 մասը արդեն հանձնել էին աղջկա ծնողներին: Շիրանիից հետո աղջիկը արդեն աղայի ընտանիքի անդամ էր համարվում:

Մինչև հարսանիքը աղջկա ծնողները նախօրոք պատրաստում էին նրա օժիտը, որին քրդերը «ջհեզ» են անվանում: Ջհեզը կարող էր լինել հարուստ կամ աղքատ, նայած աղջկա ծնողների կարողությանը: Ջհեզն առհասարակ կազմված էր լինում տնային պարագաներից՝ անկողին, գործվածքներ, կահ-կարասի, ոսկեղեն և արծաթեղեն զարդեր, հագուստեղեն, կոշկեղեն, գլխի հարդարանքի իրեր և այլն: Ջհեզի մեջ սովորաբար աչքի էին ընկնում տղամարդկանց գուլպաները:

«Սարդավարին» սկսում էր հարսանյաց ուրախությունը: Գյուղերից եկած խուանդիները հավաքվում էին նորափեսայի տանը, որից հետո սարդավարի (կամ քավորի) կարգադրությամբ նրանք բաժանվում էին գյուղի ընտանիքների վրա, իբրև «մեհանեգ ազիզ» (սիրելի հյուր): Սարդավարին զոմերից մեկը դարձնում էր հարսանքատուն, որտեղ հավաքվում էր գյուղի հասարակությունը: Առավոտյան շուտ սարդավարին խուանդի ձիավորները, «բարբուխ» հետ միասին, առանց փեսայի մասնակցության, գնում էր հարսի ծնողների տուն: Հարսը տնից դուրս հանելու ժամանակ, հարսի ընտանիքի անդամները քավորից նվերներ էին ստանում: Բացի այդ, «բալդին բուկին» (հարսի բարձ) դուրս հանելու ժամանակ 10—15 ոսկի փող էին ստանում: Սարդավարից ստացած նվերներն ու դրամը հանձնվում էին հարսին: Այդ նվերները օժիտի հետ միասին կազմում էին հարսի անձնական սեփականությունը:

Մի քանի օր ուրախանալուց հետո, բաց էին անում հարսանեկան սեղանը, իսկ խնջույքից հետո սկսվում էր «սաչուն» (կանչ): Հարսանյաց ուրախությունից հետո տեղի էր ունենում «խըլաթը», որով ստուգվում էր նորահարսի կուսությունը:

Եթե պարզվեր, որ հարսի կուսությունը մինչև այդ խախտված է, այն ժամանակ առանց խղճի խայթի նրան խայտառակ ձևով վերադարձնում էին հոր տուն:

Ամուսնալուծությունը քրդերի մեջ ծայրահեղ դեպքում էր կատարվում: Ըստ ժողովրդի հասկացողության, ամուսնությունը ցմահ կնքվող մի անքակտելի գործարք է: Այս ըմբռնումը գոյություն ուներ ոչ միայն անդրկովկասյան, այլև բոլոր քրդերի մոտ, այժմ էլ «դերսիմցիների մոտ ամուսնալուծություն գոյություն չունի,— գրում է Նուրի Դերսիմին,— բայց անհավատարիմ կինը հեռացվում է ընտանիքից: Կինը իր ամոթալի վարքը ուղղելու դեպքում, ամուսինը կնոջը վերստին ընդունում է ընտանեկան հարկի տակ»[1]:

Հարսանիքից 7—9 ամիս հետո, նորապսակի եղբայրը կամ նրա հորենական տան անդամներից մեկը գնում էր փեսայի տուն՝ իրենց աղջկան «դեյին» («դարձ») տանելու համար:

Նորահարսը գնում էր հոր տուն, մի երկու ամիս, երբեմն էլ երեք ամիս մնալուց հետո, իբրև նվեր, ծնողներից ստանում էր անասուններ և հագուստեղեն: Հերանց տնից ստացած այս նվերները, առաջին հերթին անասունը, կոչվում է «շքարթ»: Ինչպես ջհեզը, այնպես էլ շքարթը ամուսնու տան մեջ կազմում էին հարսի անձնական անձեռնմխելի սեփականությունը:

Մ. Օ. Կոսվենը բազմաթիվ ժողովուրդների մեջ գոյություն ունեցող հարսանեկան «դարձ» սովորության մասին խոսելիս գրում է.

«Այդ կարգը կայանում է նրանում, որ ամուսնացած կինը մինչև անգամ խստացրած մենամուսնության և պատրիարքալ եղած ժամանակ, ամուսնանալուց և ամուսնու մոտ գնալուց հետո, անհրաժեշտաբար վերադառնում է իր հարազատ տունը, որտեղ մնում է քիչ թե շատ երկարատև ժամանակ, ըստ որում, երբեմն այդ դարձը կրկնվում է: Դարձը հատկապես տեղի էր ունենում հղիու-

[1] *Dr. Vet. M. Nuri Dersimi*, Kurdistan tarihinde Dersimi, Alep, 1952, էջ 37:

թյան ժամանակ. այնպես որ նա պատվում էր իր հարազատ տանը»[1]:

Այս սովորությունը մայրիշխանությունից հայրիշխանության անցնելու շրջանի հասարակական հարաբերությունների արգասիք է: Այստեղ վերապրուկային կերպով պահպանվել է կնոջ անցման պրոցեսը իր տոհմից ամուսնու տոհմը:

Հարսանիքի ժամանակ, երբ հարսին հոր տնից հանում էին, նախքան փեսայի տուն տանելը, նրան տանում էին քավորի տունը: Նորահարսը ամբողջ օրը, երբեմն էլ նաև գիշերը մնում էր նրա տանը, հյուրասիրվում, նվերներ ստանում նրանից և նրա ազգականներից: Բայց եթե քավորը թույլ տար իրեն սեռական կապ հաստատել նորահարսի հետ, դա կճանաչվեր իբրև բարձրագույն անպատվություն և բարոյական պղծություն:

Առհասարակ, քավորը համարվում էր հարսի մտերիմ բարեկամը, նա երբեք չպետք է մոռանար նրան: Քավորը, սովորաբար, պետք է լիներ նշանավոր հարուստ մարդ՝ ազա, իշխան: Այդ սովորության հիման վրա կարելի է եզրակացնել, որ քավորները հնագույն շրջանում հիմնականում եղել են տոհմապետներ, ավագներ, արտոնություններ վայելող անձինք: Այս ինստիտուտի զարգացման հիման վրա է, որ հետագայում ֆեոդալական հասարակության պայմաններում օրինականացվում է առաջին գիշերվա իրավունքը:

«Որոշ ժողովուրդների մեջ,— ասում է Ֆ. Էնգելսը,— փեսայի ընկերներն ու բարեկամները կամ հարսանեկան հյուրերը հարսանիքի ժամանակ օգտվում են իրենց հնավանդ իրավունքից հարսնացուի վերաբերմամբ, և մինչև փեսացուն այդ հերթում ամենից վերջինն է լինում: Այդպես էր հին աշխարհում, Բալեարյան կղզիներում և աֆրիկյան ավգիլների մեջ, իսկ բարեաների մեջ, Հաբեշստանում դեռ այսօր էլ նույնն է տեղի ունենում: Ուրիշ ժողովուրդների մեջ որևէ պաշտոնական անձ, ցեղապետը կամ տոհմապետը, կացիկը, շամանը, քուրմը, իշխանը կամ որևէ այլ մեկը ներկայացնում է ամբողջ համայնքը և գործադրում է առաջին գիշերվա իրավունքը հարսի նկատմամբ»[2]:

---

[1] *М. О. Косвен*, Авункулат. „Советская этнография“, № 1, Москва, 1948, էջ 11:

[2] Ֆ. Էնգելս, *Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը*, Երևան, 1948, էջ 69:

Քավորից նվերներ ստանալուց հետո, հարսը հոգեկան մեծ բավարարություն էր ստանում և ուրախ էր լինում, որ լավ քավոր ունի: Հարսն էլ իր հերթին քավորի նկատմամբ ցուցաբերում էր մեծ պատիվ ու հարգանք, նա պատրաստ էր քավորի ցանկությունները կատարել՝ նրա ոտքերը լվանալ, հյուրասիրել, սրբիչ մատուցել, մի խոսքով, խոնարհաբար ծառայել նրան, հատկապես հասարակության առաջ լինել պատկառելի:

Հարսանիքից հետո հարսը հաճախ լինում էր քավորի տանը, առանձին աշխատանքների ժամանակ օգնում նրա ընտանիքի անդամներին: Նման իրավունքներ քավորն ուներ նաև հարսի ամուսնու, ընտանիքի կրտսեր անդամների նկատմամբ:

Հարսանեկան սովորությունների մեջ հետաքրքիր է նաև «ռավանդնա բալգին բուկե»-ն (հարսի բարձը փախցնել) և «դարա բուկե ու զավեն»-ն (հարսի և փեսայի ծառ), որ հայերի մեջ հայտնի է «ուրցը» անունով:

Այն ժամանակ, երբ փեսան իր ընկերներով «դարա բուկեն ու զավեն» ձեռքին սպասում էր հարսին (տան երդիկի վրա), ջրհղավորներից մեկը «բալգին բուկեն» փախցնելով, բերում, տալիս էր փեսային, որից հետո, հարսը շրջապատված ընկերուհիներով «բարբուլով» մտնում էր տան շեմքին, իսկ փեսան նրա գլխին թափ էր տալիս մրգերով զարդարված ծառը: Հարսին փեսայի տուն տեղափոխելու ժամանակ «բալգին բուկեն» փախցնելը, մեր կարծիքով, պետք է կապել առևանգմամբ ամուսնության հետ, իսկ բարձը միայն փեսային հանձնելը, իբրև նշանցուկ, ցույց է տալիս զուգամուսնությունից մենամուսնության անցնելու պրոցեսը:

Հայրիշխանության շրջանում հայրական տոհմի տղամարդիկ իրենց սերնդի աճը ապահովելու, աշխատավոր ձեռքերը շատացնելու և տոհմի ռազմական ուժը հզորացնելու համար այլ տոհմերից կանայք էին փախցնում: Սկզբնական շրջանում, սովորութական իրավունքի հիման վրա, առևանգված կինը պատկանում էր տղամարդկանց միությանը, կամ առևանգողների խմբին, որի անդամներից մեկն էր հանդիսանում ինքը՝ առևանգողը, որից հետո առևանգված կինը պատկանում էր նրան:

Քրդերի հարսանեկան այդ սովորության՝ բալգին բուկե փախցնելու մեջ խորհրդանշվում է կնոջ առևանգման ակտը, իսկ դարա զավեն կամ «դարա բուկե զավեն» հարսանեկան սովորության մեջ մոգական միջոց է, որը նպաստելու է նորապսակների արգա-

սովորությանը։ Այս ծիսակատարության մեջ կարելի է տեսնել նաև բնության երևույթի՝ ծառի պաշտամունքի տարրերը։

Հարսին փեսայի տուն դրանը իջեցնելու ժամանակ, ծառը նրա գլխին թափ տալու միջոցին, մի կին հարսի ոտների տակ գնում էր մի գդալ կամ ափսե, որը կոխկրտելով պետք է կոտրեր նորահարսը։ Եթե հարսի ոտքերի տակ գցած գդալը կամ ափսեն ջարդվեր, այդ նշանակում էր, որ հարսը կլիներ խոնարհ, պատվով և որդաբեր։

Հարսանեկան սովորության մեջ հետաքրքիր է նաև «սաչուն», որը անմիջապես բխում է գլխագնի սովորությունից։ Քանի որ ամուսնացած երիտասարդը, իբրև գլխագին, իր ունեցվածքից զգալի բան էր տալիս հարսի ծնողներին և եթե նրա ընտանիքը չքավոր էր, կարող էր տնտեսապես քայքայվել, իսկ եթե նույն ընտանիքում մի քանի երիտասարդ ամուսնանային, այն ժամանակ ավելի վատ կլիներ այդ ընտանիքի վիճակը, ուստի և տնտեսական անկումից փրկվելու համար ցեղակիցներն օգնում էին նորափեսայի ընտանիքին։ Այդ օգնության ձևերից մեկը հանդիսանում էր «սաչուն»։ Սաչուի ժամանակ իր նյութական օգնության չափը սաչուի սեղանի մոտ առաջին հերթին հայտնում էր արենակից պապը, որից հետո՝ մյուսները։ «Խնամիների» նյութական օգնության չափի մասին հարսանիքի սեղանի վրա հայտարարում էր քավորը հետևյալ կերպ. «Մեր սիրելի խնամի Դավիթչե Ջալին հարսանեկան սեղանին նվիրեց մեկ ոչխար, այսքան դրամ, «մալխավա» («տունը շեն մնա»)։ Դրամը հանձնվում էր հարսանքատիրոջը, իսկ անասունները մի երկու օրից հետո խնամիները ուղարկում էին նորափեսայի տուն։

Քրդերի կյանքում վատ հետևանքներ էր ունենում «խըլյաթ» կամ «մարկըրըն» կոչվող սովորությունը։ Հարսանիքի վերջին օրը, երեկոյան, հարսի կուսությունն ստուգելու համար հրավիրվում էին փեսայի և հարսի ազգական կանայք, որպես «մեանրե խերե» (բարի հյուրեր)։ Փեսայի մայրը կամ տան կանանցից մեկը հյուրերին ցույց էր տալիս հարսնացուի սպիտակեղենը, երբ դրա վրա լինեին կուսության խախտումը հաստատող նշաններ (արյան հետքեր), ապա հյուրերը ուրախանում էին, գովաբանում նորահարսին և նրա ծնողներին, իսկ եթե նորահարսի կուսությունը չէր հաստատվում, նրա համար ստեղծվում էր անտանելի վիճակ։ Նրան հաճախ խայտառակ ձևով վռնդում էին տնից։

Այդ սովորությունը գոյություն է ունեցել ոչ միայն քրդերի, այլև անդրկովկասյան մյուս ժողովուրդների մոտ։

Հարսանեկան աչքի ընկնող սովորություններից մեկն էլ այն էր, որ երբ հարսին ամուսնու տուն էին տանում, նորափեսան թաքնվում էր որևէ տեղ կամ տնից դուրս էր գնում, մինչև ուշ երեկո, երբեմն էլ ամբողջ գիշեր։ Քրդաբնակ որոշ շրջաններում, ինչպես, օրինակ՝ Թալինում, Քյալբաջարում, Ղարսի մարզի Տեկորի շրջանում, ամբողջ հարսանիքի ընթացքում, բացի «դարա զավե» ծիսակատարությունից, փեսան բացակայում էր։

Հարսանեկան ուրախության ժամանակ մեծ հետաքրքրություն էր ներկայացնում նաև ջրիդը, առանց որի ոչ մի հարսանիք տեղի չէր ունենում։ Ջրիդավորների կամ զինված խմբի ներկայությունը հարսանիքում պետք է բացատրել նրանով, որ աղջիկ առևանգողները բնականաբար հանդիպում էին դիմադրության։ Ջրիդի ժամանակ արտահայտվող որոշ ընդհարումներ խորհրդանշում են հնագույն շրջանում առևանգման ժամանակին տեղի ունեցած արյունալի կռիվները։

«Բալգեն բուկեն» փախցնելու ժամանակ,— ասում է Ապարանի շրջանի Ալագյազ գյուղի բնակիչ ծերունի Լեշոն,— ջրիդավորների մեջ տեղի էին ունենում ընդհարումներ, իսկ եթե հարսը այլ գյուղից էր, փեսայի գյուղի ջրիդավորները դեմ էին գնում այլ գյուղերից եկած ջրիդավորներին։ Սրանց մեջ սկսվում էր կատաղի կռիվ՝ բալգեն բուկեն փախցնելու համար։ Մեկ-մեկ պատահում էր, որ կռվի ժամանակ տղամարդիկ ձիուց ընկնում էին և վիրավորվում»։ Սա երբեմն լուրջ բնույթ էր ընդունում և տեղիք էր տալիս վրիժառության։

Հարսանեկան ջրիդի մասին քրդական ֆոլկլորում կարելի է գտնել բազմաթիվ երգեր, որոնց մեջ պարզորոշ կերպով արտահայտված է հարսնածի հրապարակային բնույթը։ «Ջրիդավոր եմ» երգի մեջ ջրիդավորը դիմելով հարսին, ասում է՝

Ջրիդավոր եմ, ջրիդավոր,
Ջրիդ կանեմ արագ թափով,
Կփախցնեմ նշանը քո,
Թշնամուն կհաղթեմ ես իմ «ցրմով»։

Այս երևույթը արտահայտվում էր հարսանեկան մի այլ սովորության մեջ ևս։ Լաչինում քավորի գլխավորությամբ հարսնառուները հոր տնից հարսին հանելու ժամանակ, աղջկա արենակից պատանիների կողմից հանդիպում էին դիմադրության, դուռն շեմքին

կանգնած չէին թողնում, որ հեշտությամբ աղջիկը դուրս գնա. դիմախաղով ցույց էին տալիս, որ իբր թե զենքերով կռվում են հարս տանողների դեմ: Այս սովորության մեջ ամենագլխավորն այն է, որ թե՛ հարս տանողները և թե՛ հարսի պաշտպանները տղամարդիկ էին, կանայք իրավունք չունեին այդ գործում խառնվելու: Բայց հակառակ սովորական իրավունքի, կանայք ևս երբեմն խառնըվում էին դիմադրությանը: Հարսի բարեկամների դիմադրությունը վերջ էր տրվում միայն այն ժամանակ, երբ նրանք փեսայի պամանիներից համապատասխան նվերներ էին ստանում (դրամ, գույնզգույն փուշիներ և այլն):

Նույն սովորությունը տեսնում ենք Արտաշատի շրջանի քըրդերի մեջ: Ըստ սովորության, երբ հարսը դուրս պետք է գնար հայրենական օջախից, մինչև կնքները հարսին հարսանեկան հագուստներ հագցնեին և «ճավ կլղանա» (աչքերը ծածկեին), վերջինիս եղբայրներից կամ պամանիներից մեկը կանգնում էր դռան մոտ, ձեռքը ձգում փեսայի բարեկամներից մեկի օձիքը և պահանջում «փեշքեշա բակե» (հարսի ընծա), որը, ըստ սովորական իրավունքի, տրվում էր հարսին և, ինչպես օժիտ, կազմում էր նրա անձնական սեփականության մի մասը:

Ապարանի շրջանի քրդերի մեջ փեսայի բարեկամներից ստացած նվերները անմիջապես հանձնում էին հարսի արենակիցներին:

Իրենց սկզբնական իմաստը կորցրած ծիսական այս ձևերից, սովորություններից կարելի է եզրակացնել, որ այդ ընծաները, դրամական վճարումները արտահայտում են նախկինում գոյություն ունեցող փրկանքի գաղափարը:

Անցյալում կին առևանգողները, սիրողների հետ հաշտվելու նպատակով, տուժող կողմին տալիս էին փրկանք և այդ միջոցով խուսափում սպասվելիք վտանգից: Փրկանքը հետագայում, տնտեսական-հասարակական նոր պայմաններում, այլափոխվում է և իր արտահայտությունը գտնում ժողովրդի կենցաղում ու բանահյուսության մեջ: Կան քրդական հարսանեկան այլ սովորություններ և բանահյուսական բազմաթիվ նյութեր, որոնց մեջ ցայտուն կերպով իրենց արտահայտությունն են գտել առևանգումից հետո հարսի և փեսայի պամանիների միջև ստեղծված թշնամական հարաբերությունները, որոնք ձևականորեն դրսևորվում էին հարսանեկան ուրախության ժամանակ: Ձևական թշնամական վերաբերմունք կարելի է տեսնել հետևյալ սովորությունների մեջ՝ Լաչինում, Հասանկալը ցե-

ղի մեջ հարսի արենակիցները և մոտիկ ընկերուհիները ամեն կերպ աշխատում էին կատակի ձևով ծաղր ու ծանակի ենթարկել փեսայի բարեկամներին ու ընկերներին: Ադրբեջանի «Մանթիզա Շատլիկա» քրդերի մոտ, ծերունի Մահմեդի պատմածի համաձայն, եթե փեսայի մայրը հարսնառների հետ գնում էր հարսին բերելու, նրանք ծաղրվում էին հետևյալ կերպ.

Խնամի, մեր աչքերի վրա տեղ ունես,
Խնամու տակ դրեք մի «ջըլ» հնոտի,
Ճամփա տվեք թող նստի:
Խնամի, դատարկ բոխչա ես բերել,
Ուզում ես հարսին նվիրել,
Ջլինի գաթաները ճամբին ես կերել:

Մեջն արծաթ, մարջան կա,
Բայց գրոշի արժեք չունեն,
Որովհետև նրանք հին են.
Հաց բերեք, թող խնամին ուտի,
Որ մեր տնից գիրացած գնա:
Խնամի, մեր աչքերի վրա տեղ ունես,
Խնամու տակ դրեք մի «ջըլ» հնոտի,
Ճամբա տվեք թող նստի[1]:

Համարյա նույն կերպ վիրավորանքի պատկերն է ներկայացնում հետևյալ սովորությունը՝ հարսանքատանը (դոմում), դհոլզուռնայի նվագակցությամբ, երբ մեղմ ու համաչափ ընթանում էր գովանդը, այդ ժամանակ փեսայի կողմից հանդես եկող «լեպոկը» հարսանքավորներին ուրախացնելու համար ծամածություններ էր անում: Լեպոկը առաջին հերթին ծաղրում էր հարսի բարեկամներին: Նա երբեմն մոտենում էր հարսի ծնողներին և իբր նրանց սիրտը շահելու, վշտերը վանելու համար համբուրում էր նրանց թշերը, բայց միևնույն ժամանակ ծաղրելով նրանց, հեռանում էր, ասելով. «Եմ գիզա տա դըրըն» (մենք ձեր աղջկան տանում ենք): Վերջիններս հաճախ կատակով հարվածում էին նրա գլխին:

Ապարանի շրջանի Փոքր Ջամշլու գյուղի բնակիչ, հանգուցյալ Սարհնգի պատմելով, Ղարսի մարզի քրդաբնակ գյուղերում սովո-

[1] Գասմեյ լաչինցի Մահմեդը, 71 տարեկան: Գրի է առել հեղինակը 1955 թ., Լաչինում:

ություն կար, որ երբ հարսին տնից դուրս էին հանում, փեսայի բարեկամները հարսի ծնողների իրերը հափշտակում էին և չէին վերադարձնում:

Այդ պատճառով հարսի ծնողները և ընտանիքի մյուս անդամները արկղներում էին պահում իրենց մանր-մունր իրերը: Ըստ հարսանեկան սովորության, տնից մեծ արժեք ունեցող իրեր գողանալը կամ հափշտակելը արգելված էր: Թալինի շրջանի քրդերի մոտ, հարսին փեսայի տուն տանելու ժամանակ, փեսայի դաստաբրակներն ու ընկերները, ծաղրելով հարսի բարեկամներին, ասում էին՝

Մենք տանում ենք, տանում,
Ձեր աղջկան տնից հանում,
Թող մոր աչքերը դուրս գան,
Թող հորաքրոջ աչքերը դուրս գան,
Թող մորաքրոջ աչքերը դուրս գան,
Թող փնտռեն ու մահ գան,
Էլ չեն գտնի կնեղ աղջկան:
Մենք տանում ենք, տանում,
Թող նվագի դհոլ-զուռնան,
Տխուր նվագի հետ սյուլես,
Բոլորդ լաց եղեք, ահա՛,
Իսկ մենք ուրախանանք[1]:

Նախասովետական շրջանի Կուրաթլուի քրդերի մեջ, եթե «ռեակըրնի» ժամանակ փեսան քիչ կամ վատ նվեր էր բերում, այդ դեպքում հարսնացուի կողմի երիտասարդները թեթև ծեծում էին նրան և նրա դաստաբրակներին: Հարսանեկան «բուկ բար փարդե» (հարսը վարագույրի ետև) սովորության մեջ կեղծ ձևով արտահայտված են երկու կողմերի թշնամական հարաբերությունները: Արթիկի շրջանի Քարվանսարա գյուղի քրդերի մեջ հարսին սկեսրայրի տուն տանելուց հետո, ինչպես փեսայի կողմից, այնպես էլ հարսի բարեկամները ներս էին խուժում այնտեղ, որտեղ տան մի անկյունում վարագույրով թաքնվել էր հարսն իր ընկերուհիներով: Փեսայի դաստաբրակներն ու ընկերները գնում և կանգնում էին վարագու-

[1] Ասաց Թալինի շրջանի Գյալթո գյուղի բնակիչ, 75 տարեկան Այիբը: Գրի է առել հեղինակը 1946 թ.:

րի մոտ: Հարսի «ռունշասնդնի» համար փեսայի կողմի մարդիկ նվերներ էին տալիս աղջկա բարեկամներին և ընկերներին: Ընծանվերներ չտալու կամ վատ նվերներ ներկայացնելու դեպքում, հարսի բարեկամները կեղծ ձևով թշնամական հարաբերությունների մեջ էին մտնում փեսայի բարեկամների հետ: Թշնամական հարաբերությունները դրսևորելու համար, նրանք թափ էին տալիս իրենց աջ ձեռքերը, ի նշան գժտացիններին ծեծելու: Իսկ հարսի բարեկամներից ներկա ղունդողները, ասում է նույն շրջանի Քարվանսարա գյուղի բնակիչ Շիրնշահե Ամարը, մոտենում էին ջղայնացած, խնդրում, որ նրանք բավականանան փեսայի կողմի մարդկանց տված նվերներով: Այդ ժամանակ տեղի էր ունենում նաև հրաձգություն:

Հրաձգությունը թե՛ բոլոր խնամիների, թե՛ դաստաբրակների և թե՛ նրա ընկերների կողմից տեղի էր ունենում հարսանիքի ամբողջ ընթացքում, մանավանդ, երբ աղջկան ուղեկցում էին դեպի փեսայի տուն:

Վերջին շրջանում, հարսանիքի ժամանակ հրաձգությունը զվարճության միջոց է եղել:

Նախասովետական շրջանում, քրդերի հասկացողությամբ, հրաձգությունը միաժամանակ ծառայել է որպես հարսից և փեսայից չար ոգիները հեռացնելու միջոց:

Ձևական թշնամական հարաբերությունների նշանները դրսևորվում էին նաև հետևյալ սովորության մեջ: Անդրկովկասյան համարյա բոլոր քրդերի կյանքում նորահարսի թե՛ ծնողները և թե՛ ընտանիքի մյուս անդամները, բացի հարսի եղբորից, հարսանիքի ժամանակ չէին գնում փեսայի տուն: Նույն հարաբերությունների նշաններն ավելի շատ են արտահայտվում քրդուհուն «գելյության» տանելու սովորության մեջ, որի մասին իր տեղում խոսվել է:

Մինչև նորահարսին գելի տանելը խնամիների ընտանիքների անդամները միմյանց տուն չէին հաճախում: Նման կեղծ, խզված ընտանեկան հարաբերությունները հարսանիքից հետո, պետք է բացատրել հնագույն շրջանում կնոջ և փեսայի ընտանիքի միջև գոյություն ունեցած հակասություններով, հատկապես առևանգման հետևանքով երկու ընտանիքների միջև ստեղծված հակադրություններով:

Քրդական հարսանիքի մեջ հայտնի է նաև օժիտի սովորությունը: Օժիտը հարսի համար ստեղծվում էր հերանց տան կողմից տրված և այլ նվերներից: Եթե ռուսների, անդրկով-

կալյան հայերի, վրացիների մեջ գրեթե վերացել էր գլխագինը և գոյություն ուներ լոկ օժիտը, քրդերի մոտ գոյություն ուներ թե՛ գլխագինը և թե՛ օժիտը: Այս գաղափարը հին հռոմեական իրավունքի մեջ հայտնի էր dos անունով: Dos-ը ինչպես քրդերի, նույնպես անդրկովկասյան այլ ժողովուրդների մեջ կազմում էր կնոջ անձնական սեփականությունը: Անձնական այդ սեփականությունը նախասովետական շրջանի անդրկովկասյան ժողովուրդների մոտ հատկապես աչքի էր ընկնում հայկական հարսանեկան սովորություններում, իսկ գլխագին տալու գործում կարելի էր տեսնել լոկ որոշ մնացուկներ, որոնք գոյություն ունեին հետամնաց շրջաններում:

«... Շատ գավառներում (Հայաստանի՝ Ա. Ավդալ),— գրում է Խ. Սամվելյանը,— օժիտը դարձել է արդեն մի անհրաժեշտ պահանջ, եւ մեղմված գլխագին տալու սովորությունը, որ հիրավի այդպիսի տեղերում սկսում է վերանալ և դառնալ մի մեռած ձև, հնոտիքի մեջ ընկած մի սովորություն»[1]:

Տոհմային շրջանից մնացած այդ վերապրուկները՝ դալանի և ջեհեզի առկայությունը քրդական հարսանեկան սովորությունների մեջ, պետք է բացատրել քրդերի հետամնացությամբ: Ճիշտ է, տան մալխաեն ամեն ինչի տերն էր, նա իր ընտանիքում օգտվում էր անսահման իրավունքներով, սակայն ձեռնպահ էր մնում ջեհեզի հարցում, հակառակ դեպքում նա կդառնար նախատինքի առարկա: Ջեհեզի վրա իրավունք չուներ ձեռք բարձրացնելու նույնիսկ հարսի ամուսինը: Այդ պատճառով, հերանց կազմած ջեհեզը՝ փեսայի պամաններից և բարեկամներից ստացած նվերները հարսը կամ նրա կեսուրը ցույց էին տալիս մալխաեին: Նորահարսի ստացած դրամական ու այլ ընծաները, թե՛ նշանդրեքի, թե՛ հարսանիքի և թե՛ վերջին ժամանակ միասին վերցրած, քրդերեն կոչվում է «հարու-հարուկե» (հարսի ունեցվածք), որի մի մասը նորահարսը իրավունք ուներ թողնել ծնողների մոտ:

Այսպիսով, անդրկովկասյան քրդական ընտանիքում տեսնում ենք մի կողմից տան տիրոջ անսահմանափակ իրավունքը թե՛ տնտեսության և թե՛ ընտանեկան կյանքում, մյուս կողմից հարսների անձնական սեփականություն կազմող «հարունա բուկեն», որի վրա չէր տարածվում նրա իրավունքները:

Այս երևույթը պետք է բացատրել նրանով, որ «հարունա

[1] Խ. Սամվելյան, Առևանգմամբ և գնմամբ ամուսնություն, «Ազգ. հանդես», Թիֆլիս, 1906, էջ 81:

բուկեն» ոչ այլ ինչ է, քան մի հնագույն մնացուկ այն դարաշրջանից, երբ արտադրողական ուժերի զարգացման հետևանքով մայրական տոհմը տեղի տվեց հայրական տոհմին:

Արտադրական նոր հարաբերությունների շնորհիվ վերացավ մայրիշխանությունը, բայց սկզբնավորվող հայրիշխանության ծոցում պահպանվում են մայրիշխանության մնացուկները, որոնք մինչև օրս էլ այս կամ այն չափով արտահայտվում են ժողովուրդների կենցաղում: Սրանք ավելի ուժեղ էին հատկապես անդրկովկասյան քրդերի կյանքում: Այս մնացուկները ցույց են տալիս, որ քրդերը եւս ունեցել են մայրական տոհմ, որի թե՛ տնտեսական և թե՛ հասարակական գործերը վարել է ինքը՝ կինը:

Քրդերը բաժանվող, բայց մեծ ջեհեզ ունեցող հարուստ կնոջ նկատմամբ գործ էին ածում հետևյալ ասացվածքը. «Թալաշ նինա, ջեհեզե ուե նիվե հարունա մալեյա» (հոգ չէ, նրա օժիտը տան ունեցվածքի կեսն է), ասել է, թե գերդաստանից բաժանվելուց հետո հարսը իր ամուսնու և երեխաների հետ կարող են օժիտով ապրել: Օժիտով տուն պահելու գաղափարը Անդրկովկասի քրդերի կյանքում ավելի ցայտուն է դառնում 70-ական թվականներից հետո, երբ գերդաստանը քայքայման ուժեղ պրոցես էր ապրում:

Այնուամենայնիվ, անհրաժեշտ է կրկին նշել, որ անդրկովկասյան բոլոր քրդերի մեջ զուգընթաց գոյություն են ունեցել գլխագինը և օժիտը:

Հնագույն շրջանում, հայրիշխանական տոհմում հետզհետե ավելանում էր գլխագնի քանակը, որպեսզի աղջկա հետ տրվող օժիտով չթուլանար տոհմի տնտեսական ուժը: Այդ է ցույց տալիս անդրկովկասյան քրդերի կյանքում գոյություն ունեցող այն սովորությունը, երբ նշանդրեքից հետո, մինչև կիսով չափ չէր տրվում գլխագինը, լրիվ չափով չէին պատրաստում օժիտը: Այս սովորությունը գոյություն ուներ նաև օսերի մեջ: Օսերը կովկասյան տեղական վարչական մարմինների պահանջով 1866 թվականին, փոխադարձ համաձայնությամբ, որոշում են վերացնել իրենց կենցաղում գոյություն ունեցող վնասակար սովորությունները: Նրանք վճռում են նաև իրենց հարսանեկան սովորությունների մեջ գոյություն ունեցող իրադի (գլխագնի) մի երրորդ մասը հատկացնել օժիտ պատրաստելուն[1]:

[1] Տե՛ս *М. Ковалевский*, Современный обычай и древный закон, Москва, 1886, հ. 1, էջ 248:

Հայերի կենցաղում էլ տեսնում ենք օժիտի ու գլխագնի սովորություններ, առնչված միմյանց հետ: Գանձակի հայերի մեջ այն գումարը, որ տղայի ընտանիքը վճարում էր աղջկա ընտանիքին իբրև գլխագին, կոչվում էր «երեսչուր» կամ «պխինքի փող», որովհետև այդ գումարի մի մասը ծախսվում էր օժիտի վրա[1]:

Աբասթումանի շրջակայքում բնակվող քրդերի մեջ օժիտը, ինչպես նաև գլխագինը սովորական երևույթ էր: Ղարսի շրջանի քրդերի մոտ հարսի համար գոյացած բոլոր նվերները և գլխագնի մի մասը հանձնվում էր աղջկա մորը, որը այն ծախսելու իրավունք չուներ՝ ընտանիքի մյուս անդամների կամ իր որդիների համար: Նախիջևանի Մանթիդա Շաուլովկա քրդերի մեջ մի այնպիսի սովորություն կար, ըստ որի մինչև գլխագնի մի մասը չտրվեր աղջկա մորը, արգելվում էր օժիտ պատրաստել:

Այս նյութերի հիման վրա կարելի է եզրակացնել, որ անդրկովկասյան ժողովուրդների, այդ թվում քրդերի մեջ գլխագնի մի մասը, սովորութական իրավունքի հիման վրա հատկացվում էր օժիտ պատրաստելուն: Ինչպես տեսնում ենք, նախասովետական շրջանում քրդերի հարսանեկան սովորությունների մեջ օժիտն ու գլխագինը համատեղ և շաղկապված, միմյանցով պայմանավորված են հանդես գալիս:

Դ. ՏՂԱԲԵՐՔ, ԵՐԵԽԱՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Անդրկովկասյան քրդերն իբրև լեռնականներ, իրենց մանկական հասակում հայտնի են ճկունությամբ, աշխուժությամբ, ճարպկությամբ և ընդհանրապես առողջությամբ: Ընտանիքը, թիրը և ամբողջ ցեղը շահագրգռված էին ավելացնել իրենց անդամների թիվը, որը կատարվում էր սերունդ բազմացնելու միջոցով, ուստի և հասկանալի արու զավակի ծնունդը մեծ ուրախություն էր պատճառում: «Կուռ ստունա մալեյա» (տղան տան սյունն է), հաճախ կրկնում էին պառավները: Տղան հանդես էր գալիս իբրև ժառանգորդ, հայրական ծուխը ծխեցնող: Եթե շատ երեխա ունենալը բախտավորություն էր համարվում, ապա չունենալը դիտվում էր որպես պատուհաս, դժբախտություն[2]:

[1] Տե՛ս Եր. Լալայան, Գանձակի գավառ, «Ազգ. հանդես», Թիֆլիս, 1901, Բ. գիրք, էջ 22:

[2] Այս երևույթը առկա է եղել նահապետական կյանքով ապրող շատ ժողովուրդների մոտ: Այսպես, դոլգանուհին խիստ ուրախանում էր, երբ զգում

Սակայն, տղայի համեմատությամբ, աղջկա ծնունդը ընտանիքում այնքան էլ բարյացակամորեն չէր ընդունվում, ուստի և նախքան ծնունդը, ընտանիքի անդամները աղոթում էին՝ «Յա Մահմեդ, բրրա կուռ բա» (ո՛վ Մահմեդ, թող տղա լինի), «Յա Շամս, բրրա կուռ բա» (ո՛վ Շամս, թող տղա լինի) և այլն: Տղա ծնվելիս խնջույք էին սարքում, ընտանիքի անդամներն ու ցեղակիցները աչքալույս էին տալիս միմյանց, հանուն «խաթունա փարխանի», ոչխար էին մորթում և հում միսը բաժանում հարևաններին:

Աղջկա ծնունդը լռությամբ էին դիմավորում: Նման խտրականությունը տղա և աղջիկ զավակների նկատմամբ հատուկ չի եղել միայն քրդերին: Մ. Կովալևսկու վկայությամբ, օսերի մեջ աղջիկ ծնվելու դեպքում հայրը ոչ միայն չէր դրսևորում որևէ ուրախություն, այլև տխրում էր[1]:

Գանձակի գավառի հայերի մեջ «աղջկա ծնունդը ոչ թե ուրախություն,— ասում է Լալայանը,— այլ տխրություն է պատճառում թե՛ ծնողներին և թե՛ ազգականներին: Մայրը կարծես մի հանցանք գործած՝ կուչ է գալիս, ամուսինը երբեմն բարկանում է կնոջ վրա, երբեմն էլ ամենակոպիտ խոսքերով հայհոյում նրան:: Սկեսուրը անիծում է նրան, ասելով. «Ջահել տղես օրը սևացրիր աղջկերք բերելով, չինող կարվիս»: Ազգական կանայք գալիս են ոչ թե աչքալույս տալու, այլ մխիթարելու. «բան չկա, աղջիկ բերողը տղա էլ կբերի, հերն ու մերը սաղ ըլնին»[2] և այլն:

Երեխայի ծնունդը տեղի էր ունենում թոնրատանը, քոչվորության ժամանակ՝ վրանում, առանց բժշկի, մանկաբարձուհու՝ պիրե-տատմեր հսկողությամբ, որը ծնունդը դյուրացնելու նպատակով իրապես օգնող միջոցների հետ միասին գործ էր դնում նաև կախարդական հնարներ: Քոչվոր քրդուհին, ինչպես նշեցինք վերը, ծննդաբերում էր վրանում: Երկունքն սկսվելը քրդուհու համար մահվան դուռը գնալ էր նշանակում: Իսկույն հրավիրում էին պիրե-տատմերը, որի առաջին գործը լինում էր մետաղե իրեր հավաքելը և դրանք ծննդկանի անկողնու շուրջը դասավորե-

էր, որ ինքը հղի է և այդ մասին անմիջապես հայտնում էր ընկերուհիներին, որոնք լուրը տարածում էին շրջապատում (տե՛ս *А. А. Попов*, Семейная жизнь у долган, „Советская этнография", 1946, № 4, էջ 110):

[1] *М. Ковалевский*, Современный обычай и древный закон, 1886, էջ 232:

[2] «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1901, էջ 58:

նը, որպեսզի, ըստ ժողովրդի հավատացողության, չար ոգին (ալքը) չմտներ ծննդկանին: Ծնունդը դժվարանալու դեպքում գործադրում էին հետևյալ կախարդական միջոցները՝ չար ոգիներին ծննդկանից վանելու նպատակով հրացան էին արձակում, աղոթքով դիմում էին աստծուն, Մահմեդին, Մալաքևտազին, որպեսզի նրանք օգնության հասնեին երկունքով տառապող կնոջը, նրա ուշագնացության դեպքում ականջն էին քաշում և ավելով ջուր սրսկում գլխին, հավատալով, թե չար ոգիները փախչում են ավելից, ձի էին բերում ծննդկանի մոտ, խրխնջացնել տալիս, որ կինը լսեր և շուտ ուշքի գար, երկաթե իրերով թեթև խփում էին կնոջը, որ ալքը նրանից հեռանար, տան ծխնելույզից կախում էին մի կապ աղի թոք, որպեսզի չար ոգին խաբվեր և ծննդկանի թոքերը հանելու և նրան մեռցնելու փոխարեն, տարվեր աղի թոքով, փախչեր այն և դրանով մահից «փրկեին» ծննդկանին ու նորածինը: Ծննդկանին «փրկելու» համար նրա բախտը հանձնում էին բարի ոգի համարվող Խաթունա Փարխանին:

Ըստ քրդերի անիմիստական հայացքների, ծննդկանն ազատվելուց հետո Խաթունա Փարխանը պառավ մոր հետ միասին իբր թե գրկում է երեխային, փաթաթում, դնում բարուրի մեջ ու դպչում կանգնում նրա կողքին, հաճախ անցնում դռան մոտ ու կանգնում այնտեղ, որպեսզի խափանի չար ոգիների մուտքը: Ըստ նրանց հայացքների, դռնից կամ երդիկից ներս մտնող չար ոգուն Խաթունա Փարխանը բռնում, վիզը ոլորում, դնում էր ծնկի տակ, խեղդում և ապա դուրս շպրտում: Այդ էր պատճառը, որ քրդուհին իր նորածին երեխային լողացնելու ժամանակ միշտ հիշում էր Խաթունա Փարխանին և նրանից օգնություն խնդրում, ասելով.

Խաթունա Փարխան, օգնի՛ր մեզ,
Չարքերից պահպանի՛ր ինձ և իմ մանկան.
Թո՛ղ նա սրտոտ, խելոք լինի,
Թո՛ղ նա քո լայն թևերի տակ հովանավորվի,
Թո՛ղ նա քեզնից չխրտնի:

Կային կանայք, որոնք հենց սկզբից երեխային պահում էին «հելքանում»: Սովորաբար, աղջկա ծնունդից հետո, երեխաները դնում և մոտիկներին աչքալույս էին տալիս՝ ղանագան նվերներ

[1] Ասաց Թալինի շրջանի Գյալթո գյուղի բնակիչ Ալիբը, գրի է առել հեղինակը 1946 թ.:

տանալու համար: Դրանից հետո շնորհավորելու էին գալիս համագյուղացիները: Հարևան կանայք համեղ կերակուրներ էին բերում ծննդկանի համար: Այն կանայք, որոնց երեխաները չէին ապրում, մահանում էին, սովորաբար մինչև նորածնի քառասունքը լրանալը չպետք է այցելեին ծննդկանին, որովհետև, ըստ ժողովրդի ըմբռնման, նրանց հետ մահ էին գալիս չարքերը:

Տիրող սովորության համաձայն, կնոջ ծննդաբերության օրը նրա ամուսինը տնից որոշ ժամանակով անհայտանում էր:

Այս սովորությունը, ինչպես նաև ծննդաբերության հետ առնչվող մի շարք այլ սովորություններ, հավանաբար նահապետական տոհմային կարգերի խմբային ամուսնության շրջանի մնացուկ են, այն շրջանի, երբ հայտնի չէր երեխայի հայրը, որտեղից էլ հետագայում պահպանվել է վերջինիս խուսափումը նորածնից: Այս նշանակում է, որ այդ շրջանում ծննդկանն ու մանուկը ամբողջովին պատկանել են մայրական տոհմին:

Ազատվելուց հետո ծննդկանին կերակրում էին տաք կերակուրներով, որոնց մեջ ամենահարգելին համարվում է «ժաժին»: Սուրմալուի գյուղերի սովորությամբ, եթե երեխան ծնվելուց հետո մահանում էր կամ առհասարակ տվյալ ծնողների երեխաները եթե չէին ապրում, վերջին ծնվածի համար չարքերին խաբելու նպատակով ընտրում էին քրիստոնյայի անուն, օրինակ՝ Կարո, Խաչիկ, Իվան, Սերգեյ, Սարգիս, Շուշան և այլն, քանի որ, ըստ նրանց, խաչապաշտները չարի մարմնացում են, իսկ չարը չարին չի կպչի, չի վնասի և երեխան կապրի:

Քառասունքից հետո ծննդկանի տունն էր մտնում «փիրե բուկեն», երեխայի մազերից մի փունջ կտրում, դնում տան պատի անցքերից մեկի մեջ և ծնողների համաձայնությամբ անվանակոչում երեխային:

Բոլոր քրդերը թլպատում էին իրենց տղաներին: Թլպատումը կոչվում է «սուննաթկըրին»: Այս հեթանոսական սովորությունը տարածված է եղել աշխարհի բազմաթիվ ժողովուրդների մեջ (Աֆրիկայում, Ավստրալիայում, Մալայան արշիպելագում, Հնդկաստանում, Արաբիայում, Պակիստանում, Թուրքիայում, Իրանում, հրեաների մեջ և այլն):

Սկզբնական շրջանում թլպատումը ունեցել է առողջապահական նշանակություն, իսկ հետագայում սրբագործվել է մահմեդական կրոնի կողմից: Սեռական հարաբերության հետևանքով վարակումից առաջացող հիվանդությունները կանխելու նպատակով էր

305—5

կատարվում թլպատումը, կարծելով, թե վարակումը մաշկի մեջ եղած ինչ-որ գերբնական չար ուժից է առաջանում:

Աղջիկների թլպատումը XVIII դարում անգլիկանյան քըրդերի մեջ գոյություն չի ունեցել, ինչպես այդ եղել է Ամերիկայում և հին Արաբիայում:

Սկզբնական շրջանում թլպատումը կատարում էին հասուն հեքիմները, որոնց մեծ մասը քուրմեր և առհասարակ հոգևորականներ էին լինում, իսկ հետագայում այդ ֆունկցիան անցնում է բժիշկներին:

Անգլիկանյան քրդերի մեջ թլպատումը կատարվում էր հեքիմների միջոցով: Թլպատման ժամանակ չամիչ և նուխուդ էին դնում տղայի բերանը: Թլպատող վարպետը վերցնում էր մի փոքրիկ դանակ և ասում.

Ով աստված, օգնող ես,
Ով աստծու առաքյալ Մահմեդ,
Այս տղային առողջ պահի՛ր,
Նրան սերունդով պահի՛ր:

Այդ ասելով, նա անմիջապես կտրում էր տղայի առնանդամի առաջին մասի մաշկը, կտրած տեղը դեղ քսում և երեխային պառկեցնում անկողնում: Թլպատման մոմենտին տան տերը կատարում էր զոհաբերություն[1]:

Թլպատման ժամանակ, բացի զոհաբերությունից, կատարում էին նաև կրոնական այլ արարողություններ, որոնք առնչվում էին ֆալուսի և կանացի պաշտամունքի հետ: Եթե ընտանիքի արու անդամներից մեկն ու մեկը թլպատված չէր լինում, նրան համարում էին «հարամ», մինչև անգամ չէին ուզում նրա հետ սեղան նստել: Չթլպատված քուրդը իրավունք չուներ զոհաբերվող կենդանուն մորթել:

Ընտանիքում ատելության առարկա էր հանդիսանում ամուլ կինը: Քրդական ընտանիքը պետք է շատ երեխա ունենար, դրա համար ամլությունը աստծու պատիժ էր համարվում: Ամուլ կինը չէր սիրվում ամուսնու կողմից, հատկապես սկեսուրից: Երեխաներ ունենալու նպատակով, բազմակնության սովորության հիման վրա,

[1] Անգլիկանյան քրդերը թլպատման օրը սովորաբար ոչխար էին զոհաբերում, աղքատ ընտանիքները, ոչխար չունենալու պատճառով, հավ կամ աքլոր էին մորթում և միսը բաժանում հարևաններին:

ամուլ կնոջ ամուսինը մի «հևուի» կին էր բերում, որպեսզի նրանից երեխա ունենա:

Երեխաներ ունենալու համար ամուլ քրդուհին իր ամուսնու հետ դիմում էր մի շարք միջոցների: Դիմում էր «քոչակին», իսկ վերջինս նրա համար բրդե գույնզգույն թելերից փոքրիկ կծիկ էր պատրաստում և տալիս կնոջը, որ նա կապի փորի վրա՝ իբրև հմայիլ: Ամուլ քրդուհին մատաղ անելուց հետո երկու օր քնում էր սրբավայրում, լեռների գագաթին, բաց դաշտում՝ սուրբ քարերի, աղբյուրների մոտ և աղոթում, որ աստված իրեն երեխա պարգևի: Քոչակի թքից մի կաթիլ քսում էր փորին: Ամուլ կինը ամուսնու հետ մոլլայի մոտ էր գնում, որ մոլլան նրանց համար «նըվշտա» պատրաստեր, որպեսզի կանանց ու տղամարդկանց սեռական օրգաններին վնաս տվող չար ոգիները հեռանային: Ամուլ կինը դիմում էր շեյխի, մոլլայի միջնորդությանը, որպեսզի շեյխը կամ մոլլան սուրբ օջախում աղոթեր իր համար և այլն:

Վատ երևույթ էր համարվում կնոջ արհեստական վիժումը, որին դիմում էին ծայրահեղ դեպքերում՝ ընտանեկան վատթար պայմանների, ծանրաբեռնվածության և այլ դրդապատճառների հետևանքով: Արհեստական վիժումը հետևյալ կերպ էր կատարվում՝ հղի կնոջ փորի վրա ծանր քար էին դնում, հղի կինը բարձր պատից ներքև էր թռչում, պիրեն տրորում էր հղի կնոջ փորը, դառնահամ բույսերի արմատները եփում, դրա ջրից հղի կնոջը երկու բաժակ խմեցնում էին:

Արհեստական ձևով վիժող կինը ընտանիքում պատիվ ու հարգանք չուներ: Ամենալավ կինը նա էր համարվում, որը շատ երեխա էր ունենում, խնամում ու մեծացնում նրանց: Նորածին երեխային բարուրում էին մի քանի կտոր շորերի մեջ, կապում հաստ թելերով և դնում ճոճի մեջ: Քրդուհին երեխային գիշերը սովորաբար կերակրում էր իր ծոցում, անկողնում, ուստի և քնած ժամանակ, անզգուշության հետևանքով, երբեմն ընկնելով երեխայի վրա, խեղդամահ էր անում նրան: Երեխան մինչև երկու տարեկան հասակը սնվում էր մոր կաթով: Մոր կաթը կտրվելու դեպքում, կովի կաթի հետ խառնում էին եփած ջուր և տալիս նորածին երեխային կամ նրան հանձնում էին շատ կաթ ունեցող որևէ կնոջ կերակրելու համար: Երեխային այլազգի կնոջ մոտ կերակրելը արգելվում էր: Ոտքի ելնող երեխայի համար պատրաստում էին քայլելը դյուրացնող պարագաներ, որոնց մեջ աչքի էր ընկնում

«քննելը»: Երեխան քնելի վրա վարժվում էր այնքան ժամանակ, մինչև նա կարողանում էր ինքնուրույն կերպով քայլել:

Երեխայի ատամները երևալու ժամանակ նրա մայրը «դանու» էր պատրաստում և այլ մթերքների ու մրգերի հետ բաժանում հարևաններին: Կաթնատամի ընկնելու հետ կապված գոյություն ուներ հետևյալ սովորությունը՝ պառավը ընկած ատամը գցում էր ծալքի հետևը և ասում.

Պառավ, առ քեզ փայտե ատամներ,
Տուր իմ մանկանը ոսկե ատամներ,
Թող աստված մեզ հետ լավ լինի[1]:

Թոթովելիս երեխայի առաջին բառերն էին՝ «դայի», «բավո», «ըննե», «պիրե», «կակա» և այլն:

Քրդական հարուստ բանահյուսության մեջ գտնում ենք բազմաթիվ մանկական սրտառուչ երգեր, որոնց մեծ մասը հյուսվել են մոր կողմից. որոնց մեջ ցայտուն կերպով արտահայտված են մոր զգացմունքները, նրա գգվանքը հարազատ զավակների նկատմամբ: Ահա այդ երգերից մի երկուսը, որոնց մեջ մայրը գովելով որդուն, ասում է՝

Ես լավ տղա ունեմ,
Նա վերցրեց պարսատիկը,
Աղավնու աչքերը հանեց,
Եվ դրանով մեծ անուն վաստակեց[2]:

«Սինգե զար» (դեղին կուրծք) մանկական երգի մեջ մայրը փաղաքշական բառերով դիմում է իր աղջկան.

Դեղին կուրծք, դեղին կրծքի վրա,
Փայլում են կապույտ ուլունքներ,
Տեսնելիս տղաների սիրտն է այրվում:

Նրա մազերը գանգուր են,
Ձեռը գլխին՝ սաղում է նրան,
Տղան եկավ մոտովս անցավ,
Ձեռը տեսավ դմայլեցավ[3]:

[1] Ասաց Արթիկի շրջանի Բարվանոտա գյուղի բնակչուհի Բասենե:
[2] Ասաց նույն գյուղի բնակչուհի Նազոյա Նազըը, 70 տարեկան, անգրագետ, գրի է առել հեղինակը 1948 թ.:
[3] Ասաց նույն մարդը, գրի է առնվել նույն թվականին:

Սովորաբար 2—3 ամիս շարունակ, ամեն օր լողացնում են նորածին երեխային, ապա տակի շորերը փոխում, բարուրում:

Չարից փրկելու համար դիմում էին հետևյալ միջոցներին, որոնք անմիջապես բխում են քրդերի անիմիստական հայացքներից: Երկաթե իրեր էին դնում երեխայի օրորոցի մեջ, որպեսզի երեխան դիվահար չլինի, օրորոցի մոտ նստած մայրը հաճախ մրմնջում էր «Խաթունա Փարխանե» անունը, որպեսզի նա երեխային պահպանի չարքերի դիտավորություններից, կապույտ ուլունք էին կապում երեխայի աչքի վրա, որպեսզի երեխան գլուխը շարժելիս ուլունքը ճոճվեր և չարքերը փախչեին նրանից, չարքերին վանելու և գեղեցկության համար երեխայի գլխարկից կախում էին արծաթե զարդեր, հմայող կանանց մոտ հանգուցավոր թելեր էին բերում և կապում երեխայի մեջքին:

Չորսից—վեց տարեկան հասակից հետզհետե լայնանում էին երեխայի դաստիարակության շրջանակները: Ընտանիքում երեխաներին դաստիարակում էին մալխուեն, պապն ու տատը և ծնողները՝ ընտանիքի մյուս անդամների հետ միասին: Երեխաները դաստիարակվում էին նաև իրենց շրջապատում, հատկապես օդաներում, որտեղ երեկոները ժամանցի նպատակով հավաքվում էին հարևանները, արենակից պամամները և ուրիշները: Ինչպես մալխուեի, այնպես էլ հոր հեղինակությունը տան երեխաների աչքում շատ բարձր էր: Պրոֆ. Եղիազարյանը միանգամայն ճիշտ կերպով է ընդգծել քուրդ մալխուեի, հոր և երեխաների փոխհարաբերությունները. «Հոր կամքը,— ասում է նա,— զավակների համար սուրբ է»[1]:

Ընտանիքում այն զավակները, որոնք չէին ենթարկվում մալխուեին, հորը, հորեղբորը կամ քեռուն, հասարակության մեջ նախատինքի էին արժանանում: Նրանք «բե օջախ» էին համարվում: Ամենից առաջ ընտանիքի մալխուեի իշխանությունը զավակի վրա արտահայտվում էր նրանով, որ նա, սովորութական իրավունքով, իրավասու էր կարգադրություններ անելու իր որդիներին, թոռներին և ծոռներին: Եթե ընտանիքը աղքատ էր, մալխուեն զավակներին, փոքրահասակներին, որոնք քիչ թե շատ ընդունակ էին աշխատանքի, տալիս էր հարուստների մոտ ծառայության: Փոքր հասակից խոնարհ, լուռ և աշխատասեր երեխաների մասին ասում

[1] Записки кавказского отдела импер. русского геогр. общ-ва, 1891, вып. XIII, էջ 52:

են՝ «թմբլոկ չէ, ժը բըրքայե չեյա» (խոսք գալը դեռևս գառնանոցից է հայտնի լինում)։

Նախասովետական շրջանում քրդական գյուղում դպրոցներ չկային։ Այնպես որ անդրկովկասյան քրդական գյուղը խարխափում էր տգիտության ու խավարի մեջ։ Միայն հատ ու կենտ հարուստ քրդեր կամ աղաների և բեկերի որդիներ սովորում էին այլազգիների դպրոցներում։ Հատկապես քուրդ եզդիների մեջ ուսումը մեղք էր համարվում, իսկ աղջիկներին խիստ արգելված էր սովորել։ Այսպիսով, քուրդ երեխաները մնում էին անգրագետ։ Քրդական գյուղում դպրոցին և կուլտուրական մյուս օջախներին փոխարինում էին թոնրատունն ու օդան։ Թոնրատանը, թոնրի շուրջը հավաքված, տատը, մայրը, իսկ օդայում, գուսանները պատմում էին իրենց նախնիների, պապերի, ժողովրդական հերոսների քաջագործությունների, նրանց թույլ կողմերի, կնոջ առևանգման, վրեժխնդրության, հաճախ տեղի ունեցող ցեղամիջյան և ներցեղային կռիվների, դասակարգային պայքարի և բազմաթիվ այլ երևույթների մասին։ Երգիչները երգում էին գյուղացիական, աշխատանքի, սիրո, ժողովրդական հերոսների մասին հորինված սրտառուչ երգեր։ Երեխաները զմայլված լսում էին պատմողներին և սարսում նրանց երգերով ու պատմություններով, լսում նրանց խրատները և դաստիարակվում իրենց նախնիների, պապերի ու պապանների ոգով։

Քրդական ժողովրդական ստեղծագործություններ՝ «Մամե և Զինեի», «Զամբիլֆրոշի», «Կառ ու Քուլուկե Սլեմանե Սլիվիի», «Ճըբըլիի», «Միրզամհգա Մջեգարեի» և մյուսների դրական հերոսների լավագույն հատկանիշներից մեկն էլ խոհեմությունն ու մեծերին հնազանդվելն է և չարիքի դեմ պայքարելը։

Պետք է լսել մալխուեին, հորը։ Մալխուեի խոսքը իր ընտանիքի անդամների, ամենից առաջ երեխաների համար սուրբ է և վերջնական, հոր խոսքը չկատարողը «բեդուե», կրկնում էին երգիչներն ու պատմողները։ Նույն ոգով երեխաներին խրատում էր նրանց մայրը։

Քուրդ տղամարդը իրեն համարում էր կնոջ ու երեխաների սեփականատեր, իսկ տան մալխուեն ընտանիքի բոլոր երեխաներին համարում էր իր զավակները՝ մի նախահորից սերված ուստրեր ու դուստրեր։ Երեխաներին ներկայումս էլ անվանում են «կուռե մալե» (տան տղա), «քիզա մալե» (տան աղջիկ), այսինքն՝ նրանք պատկանում

են տվյալ տոհմին, ընտանիքին, որի պատիվը բարձր պետք է պահեն։

Քրդուհին թեպետ ընտանեկան պայմաններում ավելի քիչ իրավունքներ ուներ, բայց իր երեխաներին դաստիարակելու գործում լիիրավ էր։ Ընտանիքում նրանք դաստիարակության մի վնասակար միջոցի էին դիմում՝ որոշ մայրեր իրենց երեխաներին դաստիարակելու համար վախեցնում էին գերբնական ուժերով, տալով չար ոգիների անունները, այսպիսով դեռ փոքր հասակից երեխաներին ահ ու սարսափի էին ենթարկում։

Երեխաները պարտավոր էին մալխուեից, հորից ավելի շատ ենթարկվել քեռիների կամքին, հարգել և սիրել նրանց. «Խալ ժը բավե զեդայա» (քեռին հորից ավելի է), հաճախ կրկնում են քրդերը։

Անդրկովկասյան քրդերի մեջ երեխաների դաստիարակման առնչությամբ կար հետևյալ սովորությունը՝ երեխան 6—7 տարեկան դառնալուց հետո անպայման պետք է «վագառանդն» (վերադարձ) կատարեր քեռու տուն մոր հետ միասին (երբեմն առանց մոր) և մի քանի ամիս մնար այնտեղ։

«Վագառանդնը» մայրիշխանությունից հայրիշխանության անցնելու շրջանի մնացուկային երևույթ է և խիստ կարևոր՝ տոհմային կարգերի ուսումնասիրման տեսակետից։ Սա ցույց է տալիս երեխայի անցումը մայրական տոհմից հայրականին։ Այս երևույթը (ավունկուլատ) գոյություն է ունեցել Աֆրիկայում, Եվրոպայի, Մելանեզիայի մի շարք ժողովուրդների մեջ։ Ահա թե ինչ է գրում Մելանեզիայում այդ երևույթի առկայության մասին Մ. Օ. Կոսվենը.

«Երեխաների դարձը,— ասում է նա,— ինչպես երևում է, բավականաչափ լայն տարածում է գտել Մելանեզիայում։ Տրոբրիանդյան կղզիներում երեխան արդեն փոքր հասակից գիտե, որ այն գյուղը, որտեղ ապրում է նրա մորեղբայրը, նրա կադա— իր գյուղն է, որ այնտեղ գտնվում է նրա ունեցվածքը, այդ գյուղի հետ կապված են նրա հասարակական իրավունքները, նրա լոկալ հայրենասիրությունը, նրա ամբողջ ապագան։ Հակառակ դրան, նա իր հորանց գյուղում համարվում է օտար և զրկված որևէ իրավունքից։ Եվ երեխաները մնում են ծնողների մոտ մինչև արբունքի հասնելը, որից հետո պարտադիր կերպով անցնում են մոր տոհմի մեջ, սովորաբար իրենց քեռու մոտ»[1]։

[1] *М. О. Косвен*, „Советская этнография“, 1948, № 1, էջ 13։

«Մալխուխի» վերաբերմունքը դեպի երեխաները ավելի խիստ էր, քան քեռիներինը: Քեռիները ավելի փաղաքշող էին, իսկ մալխուխն և հայրը՝ կարգադրող, հրամայող: Վերջիններս երեխաների բախտի լիիրավ վճռողներն էին:

Աղջիկներին դաստիարակելու գործը հիմնականում գտնվում էր պիրեի, կալանու և մոր ձեռքում: Ինչպես մալխուխն կամ հայրը տղաների, այնպես էլ կալանին կամ մայրը աղջիկների մեջ աշխատանքի բաժանում էին կատարում, կարգադրություն անում տան առօրյա գործերը կատարելու մասին և այլն:

Երեխաները համարյա 7—9 տարեկան հասակում սկսում էին տանը և դրսում թեթև աշխատանքներ կատարել՝ գառներ արածեցնել, տուն ավլել, դուլթանի հորիք քշել, ջուր տանել դաշտում աշխատողների համար և այլն: Պիրեներն ու մայրերը աղջիկներին դաստիարակում էին այնպես, որ նրանք լինեն խոնարհ, խելոք: Բայց դա դեռ բավական չէր: Մինչև ամուսնությունը աղջիկը պետք է հոր տանը մի քանի սովորեր՝ որպեսզի հարս դարձած ժամանակ սկեսրոջ կողմից արհամարհանքի չարժանանար, չստանար «բեմարիֆաթ» որակումը: Այդ նպատակով տան պիրեն, կալանին կամ անմիջական մայրը իրենց պարտքն էին համարում աղջկանը սովորեցնել՝ ավլել, բուրդ գզել, թել մանել, գուլպա, գորգ գործել, շոր կարել, կարկատել և այլն:

Ամենահարգի արհեստը քրդուհու համար գորգագործությունն էր համարվում: Անդրկովկասի համարյա բոլոր քրդերը զբաղվում էին գորգագործությամբ: Քրդերի մեջ գորգագործությամբ զբաղվում էին միմիայն կանայք: Բացի գորգագործությունից, քրդուհիներն իրենց աղջիկներին սովորեցնում են նաև հյուսել, մանել, ասեղնագործություն: Այդպիսի գործերով զբաղվելը տղամարդկանց համար ամոթ էր համարվում:

Հայտնի են քուրդ աղջիկների ձեռքով գործված քրդական ցեղերի անունները կրող «զիլլի», «մլլի», «խանքեֆի», «սիպկանի» գորգերը:

Քրդական ֆոլկլորում ցայտուն կերպով արտահայտված են գորգագործ աղջկա մոր զգացմունքները: «Զինե» ասեղնագործության մեջ մայրը շատ ուրախ է, երբ տեսնում է, որ իր աղջիկը լավ գորգեր է գործում.

Իմ աղջիկը գորգագործ է,
Գորգ է գործում ամեն օր.

Իմ աղջիկը շնորհքով է,
Գորգ է գործում օր բոլոր:

Սև ու կարմիր թելեր ձեռքին,
Գորգեր է միշտ նա գործում,
Անուշ ծիծաղն է միշտ դեմքին,
Տունն է լցնում գորգերով:

Իմ աղջկան ով աչքով տա,
Զուխտ աչքերով կուրանա,
Իմ աղջիկը գորգագործ է, ահա,
Նախշեր է անում գորգի վրա[1]:

Երեխաները, հատկապես աղջիկները դաստիարակվում էին հյուրին արժանավայել ընդունելու ոգով: Քրդերի տանը հյուր իջևանելիս, ըստ սովորության, 8—14 տարեկան աղջիկը նրան մատուցում էր ջուր, կերակուր, լվանում էր նրա ոտքերը, պատրաստում անկողինը և այլն, բայց այդ բոլորը կատարելիս նա ազատ կերպով խոսում էր հյուրի հետ, միայն խիստ համեստ ու խոնարհ էր պահում իրեն, հյուրի մեջ տեսնելով խորհրդավոր, վերուստ առաքված անձնավորություն:

Քրդական հետամնաց կյանքը երեխաների մեջ դաստիարակում էր բնության ուժերի պաշտամունք: Նրանք խորապես հավատում էին, որ կան գերբնական ուժեր, որոնք երկու կարգի են բաժանվում՝ բարի ու չար, որ իրենց կյանքն ու ճակատագիրը ամբողջովին գտնվում են այդ ուժերի տնօրինության տակ, ուստի իրենք ամեն կերպ պետք է սիրաշահեին թե՛ մեկին և թե՛ մյուսին, որպեսզի առաջինը չմոռանար իր բարիքները, իսկ երկրորդը մեղմանար և քիչ չարիք գործեր:

Եթե աշխատավորական ընտանիքի մալխուխն, պիրեն և մայրը երեխաներին դաստիարակում էին աշխատասիրության ոգով, ապա աղայական, բեկական ընտանիքում աշխատանքը «փեշե քյարա» (խշու գործ) էր համարվում: Աղաների, բեկերի և առհասարակ հարուստների որդիները, փոքր հասակից դաստիարակվելով աշխատանքն արհամարհելու ոգով, ապրում էին իրենց «խուլամների» աշխատանքով և շռայլ կյանք էին վարում:

Կան բազմաթիվ աշխատանքային երգեր, ուր գովերգվում է

[1] Ասաց Արտաշատի շրջանի Ներքին Նեջըլու գյուղի բնակչուհի Զայթունը, 65 տարեկան, անգրագետ: Գրի է առել հեղինակը 1953 թ.:

ազնիվ վաստակը։ «Միրո» երգի մեջ մայրը գովաբանում է իր որդի Միրոյի ջանասիրությունը։

Իմ Միրոն գառնարած է,
Ընտանիքում սիրված է.
Նա գառները լավ է պահում՝
Մեր դաշտերում արածեցնում,
Իր գառներին միշտ փայփայում[1]։

«Ղիզա մընա» (իմ աղջիկ) երգում մայրը նույնպես գովերգում է գուլպա գործող իր աղջկան.

Գուլպա է գործում իմ աղջիկը,
Ջանասեր է, ժիր և աշխույժ.
Նա գուլպա է սիրուն գործում,
Վրան կարմիր նախշեր անում[2]։

Սակայն քրդերի կենցաղում գոյություն ունեցող մի շարք երևույթներ խիստ բացասաբար էին անդրադառնում երեխաների դաստիարակության վրա։ Այդպիսի երևույթներից էին հատկապես հևուխությունը, արյան վրիժառությունը։ Այսպես, եթե հևուխներից մեկը շատ տղա էր բերում, իսկ մյուսը կամ բոլորովին երեխա չէր ունենում, կամ էլ միայն աղջիկ էր ունենում, առաջինը ամուսնու և ընտանիքի մյուս անդամների կողմից առանձին հարգանքի էր արժանանում, իսկ վերջինը՝ արհամարհանքի։ Չբեր կանայք նախանձում էին երեխա բերող կնոջը և ամենաչնչին բանի համար ընդհարվում նրա հետ։ Պատահում էին դեպքեր, երբ նախանձից դրդված, հևուխներից մեկը կամ երկուսը խեղդամահ էին անում տղա բերող մյուս հևուխի կնոջը։ Աղջիկ բերող հևուխները նույնպես նախանձում էին տղա բերող կնոջը և թշնամանում նրա հետ։

Զանազան պատճառներով խեղդամահ արված կնոջ որդիները երբեք չէին հանդուրժում իրենց մոր ողբերգական մահը և հասունանալուց հետո աշխատում էին լուծել մոր արյան վրեժը։ Նրանք մինչև անգամ թշնամական դիրք էին բռնում խորթ մորից սերված եղբայրների և քույրերի նկատմամբ, հաճախ սպա-

[1] Ասաց Արտաշատի շրջանի Նեջրլու գյուղի բնակիչ Բադրե Ղազը 1953 թ.։

[2] Ասաց նույնը, գրի է առնվել նույն թվականին։

նում կամ խեղդամահ էին անում իրենց հանցագործ խորթ մորը կամ մայրերին և դրանով լուծած համարում իրենց հարազատ մոր արյան վրեժը։

«Ղարսի մարզի Տեկորի շրջանի Բազարջուղ գյուղի բնակիչ Բարոև Հասոն,— ասում է Ապարանի շրջանի Ալագյազ գյուղի բնակիչ Աթամե Սլթոն,— ուներ երեք կին, որից մեկը՝ Գյուլիզարը, միշտ տղա էր ծնում. նա արդեն ուներ երեք տղա։ Հևուխներից մեկը՝ Բադիլը միշտ աղջիկ էր ծնում, իսկ Այշանը բոլորովին երեխա չէր ունենում։ Բադիլն ու Այշանը նախանձի հողի վրա, օրը ցերեկով, իրենց գոմում խեղճ Գյուլիզարին խեղդամահ արին։ Սրա տղաները այդ ժամանակ դեռ փոքր էին։ Տասներկու տարուց հետո նրանք արդեն մեծացել էին և դարձել մեծ տղաներ։ Նրանք նույն գոմի մեջ, եթե չեմ սխալվում 1914 թ., նույնպես խեղդեցին իրենց մորը սպանող երկու խորթ մայրերին՝ Բադիլին և Այշանին։ Ինչպես որ՝ «հայֆ պեշ հայֆեա» (վրեժի դիմաց վրեժ)։

Այս երևույթը ավերածություն էր բերում ժողովրդին, որովհետև «Քրդերի մեջ ևս ցեղի անդամն իր ցեղակիցների հետ կամ ինքն անձամբ, պարտավոր էր իր սուծած ցեղակցի վրեժը լուծել՝ դա համարվում էր նրա սրբազան պարտականությունը»[1]։

Այս սկզբունքից ելնելով, քուրդ երեխան դեռ մանկական հասակից համոզվում էր, որ ինքն անձամբ պարտավոր է իր սուժած արենակցի արյան վրեժը լուծել։ Եվ իսկապես, ցեղամիջյան և ներցեղային կռիվների ժամանակ 13—15 տարեկան տղաները տղամարդկանց և կանանց հետ համահավասար ռազմի դաշտում կռվում էին թշնամու դեմ։

Վրիժառության գաղափարը ցայտուն կերպով արտահայտված է տղաներին վերաբերող քրդական խորիմաստ հետևյալ առածի մեջ՝ «Թարխաներ բռնա քերեյա» (արու գառը դանակի համար է)։

Վրեժ լուծելու նպատակով երեխաները հաճախ, մեծերի դրդմամբ, այրում էին թշնամու խոտի, հացահատիկի դեզերը, թունավորում նրանց անասուններին և այլն։ Ախոյանը երբեմն հանցագործության տեղը բռնվող երեխային խեղդամահ էր անում, այստեղից էլ առաջ էր գալիս երկարատև «բասկությունը», որի հետևանքով տեղի էին ունենում ցեղամիջյան կատաղի կռիվներ։

[1] Տե՛ս մեր աշխատությունը՝ Արյան վրիժառությունը քրդերի մեջ և նրա վերապրուկների վերացումը սովետական պայմաններում, «Աշխատություններ Հայաստանի Պետ. Պատմական Թանգարանի», Երևան, 1952, հ. 4, էջ 225։

Այսպիսով, ցեղերի, բոլերի և ընտանիքների միջև նախասովետական շրջանում ուժեղ կերպով պահպանվում էր արյան վրիժառության սովորությունը, որը նույնպես բացասաբար էր անդրադառնում երեխաների դաստիարակության վրա:

Ե. ԶԳԵՍՏՆԵՐ ՈՒ ԶԱՐԴԵՐ

Այստեղ մեր նպատակը չէ զբաղվել քրդերի զգեստների, զարդերի ծագման և փոփոխման հարցերով, դա առանձին թեմա է, որով հետագայում պետք է զբաղվել, այլ կանգ ենք առնելու նրանց տեսակների, կենցաղում գործածելու յուրահատուկ կողմերի և կրած ազդեցությունների վրա:

Աղջիկները հագնում էին թեթև զգեստներ՝ մեկից—երկու գեյրա, իսկ կանայք, այդ թվում նորահարսը՝ 4—5 գեյրա: Փոքր աղջըկա գեյրայի համար գործ էին ածում 3—4, իսկ կանանց համար՝ 6—7 մետր կտոր: Կտորը շատ էր գնում նրա համար, որովհետև քրդուհիների գեյրաները գոտուց ներքև բազմածալ էին լինում: Գեյրան կրծքից է բացվում, թևերը երկար են, կարճ թևերով գեյրա հագնելը ամոթ էր համարվում: Մահմեդական և եզդի քրդուհիների գեյրաները նման են իրար, միայն այն տարբերությամբ, որ ադրբեջանցի կնոջ զգեստների ազդեցությամբ, մահմեդական քրդուհու գեյրայի փեշից մինչև վերև կարում են ժապավենաձև լայն կտոր: Եզդուհին գեյրայի ներքին մասից՝ եզրին կից, կարում է եռանկյունի զարդանախշված ժապավեններ: Այդ ժապավենների եռանկյունի լինելը ունի պաշտամունքային նշանակություն, որի մասին կխոսենք ստորև:

Այժմ էլ աղջիկների մեծ մասը հագնում են երկար շապիկ և վարտիք: Եզդուհիները վարտիքը կարում էին սպիտակ, իսկ մահմեդականները՝ կապույտ կամ կարմիր կտորից: Եզդուհիները մեղք էին համարում կապույտ կտորից փոխնորդ հագնել: Կանանց շապիկի համար վերցնում էին 5—6 մ, իսկ տղամարդկանց՝ 3 մետր կտոր: Կանանց մոտ շապիկը հասնում էր ծնկներին, երբեմն ավելի ցած, բայց այնպես, որ գեյրաների տակից չերևար: Շապկի թևերը երկար էին, կուրծքը մեջտեղից բացվում էր մինչև գոտկատեղը և կոճկվում մի կոճակով: Շապկի քղանցքների շուրջը գույնզգույն բանվածքներ էին անում: Քրդուհիներն ունեին նաև առանձին տոնական զգեստներ, որոնք կարում էին թանկագին նուրբ կտորներից՝ կանաուզից և առհասարակ մետաքսից: Քանի որ քրդուհիները հարսանյաց հանդեսներին գոգնոցներ քիչ էին կապում, ուստի նրանց տոնական զգեստների ներքևից երևում էր ղալթանով գործված, ծալքավոր խշխշան կանաուզե շապիկը:

«Զավունը» կամ «անթարին» հարսանեկան ամենագործածական հագուստն էր: Քրդական «Սիպկա» ցեղի անդամները այն կոչում են «զավուն», իսկ «Հասանա», «Բալանդուրա», «Ռաշկոտա», «Պիվազա» ցեղերը՝ «անթարի»: Անթարին գոյություն ուներ նաև հայերի մոտ, բայց հայկական և քրդական անթարիները տարբերվում էին միմյանցից իրենց զարդանախշերով, կարելու ձևով և կտորի որակով: «Անթարի կարում են անթիլմասուց, սավայիրից, ատլասից և այլն,— ասում է Ջավախքի հայերի մասին Ե. Լալայանը,— այն հասնում է մինչև ոտքերը, թևերը շատ երկար չեն անում, այլ հասնում է մինչև դաստակը»[1]:

Քրդուհու անթարին կարում էին միայն ատլասից, հայկական ֆարաջայի ձևով, աջ ու ձախ կողմերից քղանցքները մինչև գոտին ճեղքված և եզրափակված կարմիր ղալթանով:

Հակառակ հայկական անթարուն, քրդականի թևերը երկար են, անցնում են դաստակից: Թևերի վրա, դաստակի մոտ կան «տիրշըկներ», որոնք նույնպես ժապավենաձև ղալթանով եզրափակված են, սրա կուրծքը չի կոճկվում, այլ լայն բաց է մնում:

Քրդուհու անթարին հայուհու անթարու նման գրպաններ չունի:

«Թաթարին» նույնպես հարսանեկան հագուստներից է: Անդրկովկասյան մյուս ժողովուրդները թաթարի չունեն: Այն կարում էին կարմիր կամ կապույտ մահուդից, հասնում է մինչև կնոջ ոտքերը, գեյրայի նման ետևից ունի լայն ծալքեր, կուրծքը կիսով չափ փակ է լինում, ունի երկար թևեր, զավունի նման տիրշըկներ չունի: Սրա թևերը եզրափակված են լինում սև կամ կարմիր ղալթանով: Այս հագուստը հագնում էին նաև ոչ տոնական օրերին, բայց համարվում էր հարսանեկան զգեստ: Չքավոր կանայք, որոնք մի կերպ ձեռք էին բերում այս հագուստը, հագնում էին տոն կամ հարսանյաց ուրախության օրերին:

Բոլոր քրդուհիները՝ մեծից սկսած մինչ փոքրը, «շալըկ» էին գործածում: Շալըկը կարում էին կարմիր և կապույտ կտորից (1—$1^{1}/_{2}$ մետր) և «բաններով» կապում աջից: Քրդուհիներն ունեին և այժմ էլ ունեն նաև թանկագին կտորներից կարած գոգնոց-

[1] Եր. Լալայան, Ջավախք, Թիֆլիս, 1897, Ա. հատոր, էջ 115:

ներ, որոնք պահում էին փակ արկղներում և կապում միայն տոն օրերին։ Աշխատանքի ժամանակ հագնում էին հասարակ գոգնոցներ։ Տնական «շալըկները» եզրափակված էին լինում կլապիտոնով։

«Խրխան».— Սա նման է հայկական խրխային։ Կարճ է, կարում էին թավիշից և հասնում էր մինչև գոտկատեղին։ Թևերը երկար են, կրծքի վրա ունի լայն բացվածք։ Խրխան աջևից և ներքևից եզրափակված է լինում կլապիտոնով։ Նույն ձևով եզրափակում էին նաև թևերը՝ եռանկյունի զարդանախշերով։ Խրխան հագնում էին զավունների կամ թաթարինների վրայից միայն պճնվելու համար։

Քրդուհիները տնամաններից հագնում էին սև գույնի «կոնդրաներ» և ձեռքով գործված նախշուն գուլպաներ։ «Կոնդրաները նման են «բուռնոշկա» կոչված կանանցի կոշիկներին թե՛ իրենց բարձրությամբ և թե՛ տեսքով, առաջին մասը չի բացվում։ Կոնդրան ոտքերի սովորական չափից մի քիչ մեծ էր լինում, այնպես որ ազատ կերպով կարելի էր ոտքը դնել մեջը և հանել։

Կանանց գլխի հարդարանք և զարդեր.— Ամենից առաջ մազերը սանրում են, աջևի մազերը ճակատի և ականջների վրայից ետ են տանում և 10—12 ծամ հյուսում։ Աղջիկներն իրենց ծամերի ծայրերին գույնզգույն ուլունքներ էին անցկացնում։ Այդ ուլունքների մեջ տեղադրում «մորիա խաուն» (քնարեր ուլունք), «մորիա ճավա» (աչքի ուլունք) և պաշտամունքային նշանակություն ունեցող այլ ուլունքներ։ Սրանք կեղտոտելը կամ վայր գցելը մեղք էր համարվում։

Աղջիկները ծածկում էին կարմիր ֆես կամ ֆինո, մոտ 20 սմ երկարությամբ՝ փլուսկլուլով, որն իջնում էր թիկունքին։ Փլուսկլուլի վերին մասի վրա կարում էին կլապիտոնի մի կտոր, իսկ ֆեսի վերին մասը ծածկում էին արծաթե 20 կոպեկանոցներով։ Ֆեսի վերին մասում 20 կոպեկանոցների կողքին, շղթայաձև կարում էին նաև մարգարիտներ և ֆեսը գլխին դնելուց հետո կապում փուշիներով։

Ամուսնացած կինը գլխին քոֆի էր դնում։ Ետևից բարձր տեսք ունեցող քոֆին գլուխներին էին դնում նաև (այժմ էլ որոշ վայրերում դնում են) մահմեդական քրդուհիները, իսկ կլորները (մեծ մասամբ) եզդուհիները։ Քոֆու վրա կարում են արծաթյա դրամներ, ֆեսի կողքին՝ ճակատի վրա կախում ոսկյա շարան, որը կոչվում է «դոլե գևաս»։

Ձախ այտի վրա քոֆուց կախում էին «դոտըկը» և դեմքին փայլ տալու համար կապում էին գույնզգույն փուշիներ, աչքերը ծարիրում. բացի «զարաֆիլից», որ քրդուհիները դնում էին քըթներին (որում նախօրոք անցք էր լինում բացված), գործածում էին նաև այլ զարդեր, ինչպես, օրինակ՝ «բարչանգ»։ «Բարչանգը» արծաթե մի շղթա է, որից արծաթե թելիկներով կախված են փոքրիկ ձվաձև զարդեր։ Այդ շղթայի ծայրին ամրացնում են արծաթե մի գնդասեղ, հպված քունքերին։ Այսպիսով, բարչանգը ամրանում էր պարանոցին։

Քրդուհիները ամենից շատ գործ էին ածում գոհարներ, որոնք կախում էին ականջներից։ Սրանք գրեթե չէին տարբերվում անդրկովկասյան մյուս ժողովուրդների կանանց ականջօղերից։ Քրդուհին մեծ ուրախությամբ կկախեր պատահած գոհարը, միայն թե այն գեղեցիկ լիներ։ Չէին առնում միայն ականջօղերը, որոնց վրա կար խաչ կամ խաչաձև զարդանկար։ Խաչաձև գոհար կամ այլ զարդ մարմնից կախելը մահմեդական աշխարհում մինչև անգամ հանցանք էր համարվում։

«Բարչենիկ».— Կախում էին քունքերի վրա։ Սա արծաթե, ոսկեջրած սրտիկների շարան է, որոնց կողքից կախված են լինում արծաթե փոքրիկ այլ գնդիկներ, մեջտեղում մի փոքրիկ ուլունք կամ թանկագին, բայց փոքրիկ քարեր նստեցրած։ Բոլոր գնդիկները կախված են լինում արծաթե շղթաներից, որոնցից առաջինները երկար են, մյուսները կարճ։

Կանանց զարդերից հայտնի են նաև «ռախտերը»։ Ռախտը բաղկացած է արծաթե դրամի 4—5 շղթայից, երբեմն շրջանիկներից մեկը ուլունքներով զարդարված փոքրիկ շղթա է լինում։ Ամենավերջին շրջանիկից կախում են արծաթյա ռուբլիանոց, որը բոլոր շրջանիկների համար կենտրոն է դառնում։ «Ռախտի» ծայրից կարում են կանթեր կամ փոքրիկ ճարմանդներ և ամրացնում ուսերին։

Ձեռքի դաստակի մոտ «բազն» էին անցկացնում՝ նախ իբրև չար ոգիներից պաշտպանվելու միջոց և իբրև զարդ։ Նույն նպատակին էին ծառայում սև կամ կարմիր գույնի ուլունքների շղթաները, որոնք բազների փոխարեն փաթաթում էին դաստակի վրա՝ բավականաչափ լայն։ Դրանց մեջ տեղավորված էին լինում հմայական նշանակություն ունեցող քարի մեծ ուլունքներ։

«Խրխալը» պղպղատից պատրաստված ապարանջան է, որը նույնպես ծառայում էր իբրև չար ոգիներից պաշտպանվելու միջոց։

Տղամարդկանց զգեստներն ու զարդերը ավելի հասարակ էին, քան կանանցը: Տղամարդիկ հագնում էին՝

«Չուխա», որը կարում էին 4—5 մետր մահուդից, հագնում էին թե՛ տոն և թե՛ աշխատանքային օրերին: Ներքին մասը լայն է, որովհետև կարված է ծալքերով: Կրծքի աջ և ձախ կողմերի վրա կարված են լինում «փշալղների» տեղեր: Չուխի կրծքի երկու կողմերը եզրափակված են կլապիտոնով:

«Բիշմերտ կամ բիշմեթ».— Կարում են սև կամ կարմիր լաստիկից: Փեշերը լայն են, մեջքի կողմը ծալքերով, թևերը երկար են, կրծքից բացվում է: Կրծքի բացվածքի երկու կողմերին կարում էին ժապավենաձև կլապիտոն, որը, հագնելիս, չուխայի տակից փայլփլում է, բայց չուխայից մի քիչ կարճ են կարում, որպեսզի չերևա նրա տակից:

«Իշլըկ».— Հագնում են բլուզի կամ բիշմեթի վրա, կարում են դունդգույն լաստիկից, իսկ առջևից՝ երկու կողմերը կարում են մահուդից, հասնում է մինչև մեջքը: Անթև է: Սրա երկու կողմերի վրա նախշեր են անում:

Քրդերը հայերի, վրացիների պես երկարաճիտ գուլպաներ չեն հագնում, որոնց գուլպաների ճտքերը կարճ են լինում, գործում են կանայք, դունդգույն թելերից: Ինչպես կանայք, այնպես էլ տղամարդիկ սիրում էին հագնել զարդանախշ գուլպաներ: Այդ զարդանախշերը կրել են պաշտամունքային նշանակություն: Տղամարդկանց շալվարը, շապիկն ու վարտիքը լայն էին կարում: Ոտնամաններից տղամարդիկ հագնում էին տրեխ, կոշիկ և սապոգ:

«Շալ» (շալվար): Շալը լայն էր լինում և հասնում մինչև ոտների թաթերը: Կարում էին բրդյա կտորից, կապույտ մահուդից, փայլփլուն լաստիկից. փեշերը լայն են (45—60 սմ), առջևից բացվածք չունի, երկու կողքերից ունի գրպաններ:

Տղամարդկանց գլխի հարդարանք և զարդեր: Փոքր տղաները սովորաբար գործ էին ածում «ֆաս» կամ «ֆինո», իսկ երիտասարդներն ու մեծահասակները գլխին դնում էին «քոլոզ»: Քոլոզները լինում էին երկու տեսակ՝ երկար քոլոզ, որը դնում էին «Ջալալյա» և «Ճեկոյա» ցեղերին պատկանող տղամարդիկ, և «դավաթուքի» կոչված քոլոզ, որը գործ էին ածում բոլոր մյուս քրդերը: Դավաթուքի քոլոզի բարձրությունը 10—12 սմ է: Քոլոզները պատրաստում էին ոչխարի, ուղտի բրդից և այծի ղըֆթիկից:

Քոլոզների շուրջը փաթաթում էին ծոպավոր փուշիներ, այնպես որ քոլոզը կապելու ժամանակ այդ փուշիներից կամ «խաղմաներից» կախվող ծոպերը իջնում էին տղամարդկանց աչքերի և այտերի վրա և երբեմն էլ խանգարում նրանց տեսողությանը:

Ամենահարգինը քրդերի մեջ համարվում էր «դավաթուքի» կոչված քոլոզը: Որոշ քրդերի մեջ, ինչպես, օրինակ՝ «Ջունկա» ցեղի, տղամարդկանցից շատերը առանց քոլոզ դնելու «խազմա» էին փաթաթում գլխին, ճիշտ այնպես, ինչպես աջարացին գլխին փաթաթում է բաշլուղ:

Զարդերից տղամարդիկ գործ էին ածում չուխայի «փշալղ», արծաթե և ոսկե պատյաններ և կոթուններ ունեցող դաշույններ, կաշվե գոտիներ, որոնց երկու կողմերի վրա կախված են լինում արծաթե ոսկեզօծ կախիկներ, որոնց մի մասը ուներ հմայական նշանակություն:

Հարսանիքի և տոնակատարությունների ժամանակ անդրկովկասյան քրդերի մեջ տարածված էր «ռուդաղկըըն» (երես դաջել) սովորությունը: Միայն կանայք էին իրենց դեմքը դաջում կապույտ գույնով: Պատահում էին կանայք, որոնք հրաժարվում էին դեմքը դաջելուց, ոմանք էլ միայն ճակատն էին դաջում կամ էլ միայն այտերը: Դաջելուց հետո արդեն այտերի և ճակատի վրա մի մի փոքր կոճակի չափ կլոր սպիներ էին երևում: Բացի այդ, հարսանիքի օրերին մազեր սանրելը, ներկելը (հինայով), հյուսքեր կազմելը (կանանց մոտ), թարթիչներ ծարիրելը և «թունջըկ» թողնելը (տղամարդկանց մոտ) սովորական երևույթ էր:

Քուրդ հովվի հագուստներն ու զարդերը հիմնականում նույնն էին, ինչ որ մյուսներինը: Չմրսելու համար հովիվներն ունենում էին յափնջանման «կուլավներ», որոնց ձախ կողմի վրա դագանակը անցկացնելու համար բաց էին թողնում 2—3 անցք: Կուլավը իջնում է ծնկներից մի քիչ ցած: Քուրդ հովվի, ընդհանրապես բոլոր քրդերի մոտ, պաշտպանության միջոցից բացի որպես ամենալավ զարդ համարվում էին հրացանը, դաշույնն ու սուրը:

«Քուրդն կռիվ սուրն ու հրացանը,— ասում է Շահբազյանը,— նրանք իրենց համար անհրաժեշտ ու անբաժանելի պիտույքներ են, որոնցով միայն կարող է քաջագործություններ ընել, վրեժ լուծել ու իր գոյությունը պահպանել. քուրդը չի կրնար և չուզեր ապրել առանց զենքի, ինչպես որևէ մարդ առանց աչքի[1]»:

[1] Հ. Շահբազյան, Քուրդ-հայ պատմություն, Կ. Պոլիս, 1911, էջ 112:

Զինքը բացի այդպիսին լինելուց, քրդի համար միևնույն ժամանակ ամենահարգի զարդ էր հանդիսանում: Իսկ երաժշտական ամենասիրելի գործիքը հանդիսանում էր բլուլը, քրդական արտասանությամբ «բլուրը»:

Քրդերն ընդհանրապես սրինգի սիրահար են, հովվի ամենամեծ բավականությունն այն էր, որ նա ծաղկազարդ լեռներում, վճիտ աղբյուրների մոտ նստում և նվագում էր «ներիի» վերաբերյալ սրտառուչ մեղեդիներ: Այդ է պատճառը, որ քրդական ֆոլկլորում մեծ տեղ է տրվում բլուրին:

Ահա թե ինչպես է սիրահար աղջիկը գովերգում իր սիրած հովվին և նրա սրինգը՝

Իմ Ահմեն նվագում է,
Միշտ նվագում լեռան լանջին,
Բոյը բարձր է, աչքերը սիրուն,
Բլուրն է դրել շրթներին:

Նվագում է նա աղբյուրի կողքին,
Մատաղ լինեմ նրա շրթներին:
Ինձ է կանչում սրտանց նա,
Մատներն է շարժում արագ ահա:

Բլուրն է գեղեցիկ ընկույզի փայտից,
Անուշ ու մեղմիկ ձայն է հանում,
Երբ լսում եմ նրա ձայնը անուշ,
Փշաքաղվում է մարմինս ակար[1]:

Հագուստի կարևորները քրդերը չէին գործում, ինչպես վկայում են ազգագրական նյութերը, այլ ձեռք էին բերում գնելու միջոցով: Մինչև XIX դարի կեսերը դրանք տնայնագործական արտադրանք էին, իսկ XIX դարի կեսերից, կապիտալիզմի զարգացման հետևանքով, ռուսական չիթը ներս է մտնում նաև անդրկովկասյան քրդական կիսաքոչվորական գյուղը: Թե՛ քոչվոր, թե՛ կիսաքոչվոր և թե՛ նստակյաց կյանք վարող քրդերը մեծ քանակությամբ կաթնամթերքներ էին շուկա հանում, որպեսզի կարողանային ձեռք բերել չիթ և արդյունաբերական այլ ապրանքներ, որոնք համեմատաբար շատ թանկ էին: Բացի այդ, քրդերի շրջանում գործում էին նաև միջնորդ առևտրականները, որոնք էժան գներով կաթնամթերքներ, բուրդ, կաշի էին վերցնում, իսկ արդյունաբերական ապրանքները թանկ գներով վաճառում կիսաքոչվոր և քոչվոր քրդերին: Նրանք համակրանքով էին խոսում ռուսական չթի մասին: Այդ ժամանակից սկսած չթեղենը քրդերի մեջ ճաշակավոր և պատվաբեր կտոր է համարվում, դրա համար էլ քրդական մի ասացվածքում գովերգվում է ռուսական չիթը.

«Քե ժընե խաւակըր չիթե ուրըս,
Առւ հեժայա սիարբա հասպե արաբա»:
(Որ կինը որ հագնի ռուսական չիթը,
Նա արժանի է արաբական նժույգ նստելուն):

[1] Ասաց հանգուցյալ աշուղ Ահմե Զոլոն, Ապարանի շրջանի Ալագյազ գյուղի բնակիչ: Գրի է առել հեղինակը 1940 թ. Ալագյազ գյուղում:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐ

Քրդական նահապետական ընտանիքի կյանքում համառ պահպանողականություն էին ցուցաբերում հնագույն սովորությունները, որոնք դրսևորվում էին ընտանիքի, տոհմի և ամբողջ ցեղի անդամների փոխադարձ հարաբերություններում: Այդ սովորությունների մեջ անմիջականորեն դրսևորվում էին ժողովրդի անիմիստական հայացքները:

Ըստ քրդերի այդ հայացքների, չար և բարի ոգիները կարող են թաքնվել ջրի, հողի, արևի, ժայռերի ճեղքերի, ծառերի, լեռների, ձորերի, գետերի, աղբյուրների, բույսերի, բնության այլ առարկաների և տան մեջ: Այդ չար և բարի ոգիները միշտ ընդհարման մեջ են: Այս դուալիզմը կազմում է նաև զրադաշտական կրոնի հիմնաքարը, մի կրոն, որը նախքան մահմեդականությունը, որոշ դեր է խաղացել քրդերի կյանքում ևս:

Քրդերի համար դրանք աստվածային խորհրդավոր ուժեր էին, որոնց սիրաշահելու համար նրանց պատվին պետք է կատարվեին զոհաբերություններ: Քրդերը գերբնական ուժերի միջամտության արդյունք էին համարում նաև քնի ու մահվան երևույթները, ըստ որում դրանք համանիշներ էին համարվում: Նույն կերպ էր բացատրվում երազը: Եթե մարդը երազում իրեն տեսնում էր քայլելիս, խոսելիս, ուրիշների հետ կռվելիս, սիրելիս, սիրվելիս և այլն, ապա նա ենթադրում էր, թե իր մեջ նստած է ինչ-որ գերբնական ուժ, ինչ-որ աներևույթ բան կամ ոգի, որը նրան շարժման մեջ է դնում, իսկ նրա մարմինը հանդիսանում է այդ հոգու կայանը կամ բնակարանը:

Քրդերի պատկերացմամբ քունը մահից տարբերվում է նրանով, որ մարդու մահվան ժամանակ հոգին մարմնից հեռանում է ոչ թե ժամանակավորապես, ինչպես քնի մեջ, այլ հավիտյան, ան-

վերադարձ, և դա կատարվում է հրեշտակ Ազրաիլի ձեռքով: Այդ պատճառով նրանց մտապատկերները կենտրոնանում էին գերբնական այդ ուժերի, այդ թվում հոգու գաղափարի շուրջը, անհայտ ուժերի մարդու վրա ունեցած ներգործության հավատի վրա: Այնպես որ քրդերի մեջ շատ ուժեղ է այն հայացքը, թե մարդկային արարածը բաղկացած է նյութից և հոգուց, վերջինս կարող է մարդուն թողնել թե՛ ժամանակավորապես և թե՛ մշտապես: Հոգու և նրա կայան հանդիսացող մարմնի այս գաղափարը ցայտուն կերպով արտահայտված է քրդերի դիցաբանության մեջ:

Նախասովետական շրջանի քրդերի հասկացողությամբ, մարդը, ինչպես նաև մյուս բոլոր արարածները, երկորյակ են, բաղկացած են նախ նյութից և ապա հոգուց: Առանց հոգու մարմինը չի կարող շարժվել, գործողություններ կատարել: Միայն հոգին է, որ թելադրում է մարմնին մտածել և գործել:

Ա. ՆԱԽՆԻՆԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ

Անիմիստական մտահայեցողության հետ անմիջապես կապվում է նախնիների պաշտամունքը, որը գիտության մեջ կոչվում է մանիզմ:

Հավատալիքները առաջանալով նախնադարյան տոհմային հասարակության մեջ, կատարելագործություն են հասնում բարբարոսության աստիճանում: Այս շրջանի մարդը արդեն սկսում է մշակել բույսերը և ընտելացնել կենդանիներին:

«Բարբարոսության շրջանի բնորոշ գիծը,—ասում է Էնգելսը,—կենդանիների ընտելացումն ու բուծումն է և բույսերի մշակույթը»[1]:

Քանի որ նախնադարյան մարդու գոյությունը պայմանավորված էր կենդանիներից և բույսերից ստացված մթերքներով, ուստի և նրա ամբողջ գործունեությունն ու մտածողությունը պտտվում էր դրանց շուրջը: Նա մարդկայնացնում էր դրանց, հավատալով, թե նրանց մեջ նստած է ինչ-որ ոգի կամ հոգի:

Տվյալ տոհմի պաշտամունքի առարկա հանդիսացող կենդանուն տոհմի անդամները համարում էին իրենց նախնի՝ քանի որ սրա մեջ մարմնավորված էին համարում իրենց նախնիների ոգիները:

Այսպիսով, տոհմային շրջանի մարդու կարծիքով, նրա նա-

[1] Ֆ. Էնգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Երևան, 1948, էջ 33:

խանոր, պապերի և հայրերի հոգիները, ըստ քրդերի կարծիքի, բացի երկինք բարձրանալուց, գետնի մեջ մտնելուց, կարող էին տեղափոխվել նաև կենդանիների և բույսերի մեջ, նրանց փրկել բնու-

Քուրդ ցեղապետի դամբարան (Ապարանի շրջանի Փոքր Ջամուշլու գյուղ)

թյան արհավիրքներից, հասարակական կյանքում տեղի ունեցող դժբախտություններից ու փորձանքներից, մինչև իր կյանքի վերջը հովանավորել նրան ամեն տեսակ չարիքներից: Հետագայում, հասարակական զարգացման ավելի բարձր աստիճանում, մարդը իրեն սերված է համարում իր բուն նախնիներից, տոհմապետներից ու ցեղապետներից: Նման երևույթ տեսնում ենք մի շարք այլ ժողովուրդների ու ցեղերի մոտ ևս:

Հին հույների մոտ ամենակարող Զևսը նախ մարդ է, ցեղապետ կամ նախնի-նահապետ, իսկ հետո (տիրակալության շրջանում) երկինք է բարձրանում և ստեղծում երկնային թագավորություն: Հայերի մոտ նախահայր Հայկը հայր աստված էր համարվում, իսկ նրա թոռ Անդեղը ռազմի աստված էր: Հայերի նախահորն ու իր թոռանը վերագրվում են աստվածային հատկություններ:

Քրդական դիցաբանության մեջ նույն ձևով աստվածային առանձնահատկություններ վերագրված են քրդական ցեղերից մեկի՝ եզդիների նախահորը՝ Եզդուն: Եզդին նախ հանդես է գալիս իբրև հավաքական մեծ ուժ, որը մի օրվա մեջ կարող է բազմաթիվ զորքեր ջախջախել, ավերել քաղաքներ ու գյուղեր և հեծած ձին՝ երկինք բարձրանալ: Եզդի նահապետը, այսպիսով, աստվածացված է: Նրան սովորաբար կոչում են «Սուլթան Եզդի»: Եզդին, ըստ դիցաբանության, սկզբնական շրջանում թագավորել է երկրի վրա, իսկ հետո, ինչպես Զևսը հույների մոտ, բարձրացել է երկինք և սկսել իշխել երկնքին ու երկրին:

Եզդիական բազմաթիվ «ղաուլներում» եզդի նահապետը նույնպես աստվածացված է: Ղաուլներից մեկում ասված է:

Էզդի րը խո փադշահըյա,
Փադշահ է ա՛րդ ազմանայա:
(Եզդին ինքը թագավոր է,
Երկնքի և երկրի թագավորն է)[1]:

Ըստ բոլոր եզդիների, իրենց հոգիները հանդերձյալ աշխարհում պետք է անբաժան լինեին իրենց նախահոր՝ Սուլթան Եզդու հոգուց: Այդ բանին հասնելու համար աշխարհի բոլոր եզդիները, իբրև զոհաբերության մի տեսակ, իրենց նախահոր պատվին երեք օր ծոմ էին պահում, որ կոչվում է «ռոժիե Եզդի»: Ներկայումս այդ ծոմը պահում են հավատացյալ եզդիները:

Մանրամասն այս հայացքների հիման վրա եզդիները գտնում էին, որ իրենք պարտավոր են անմոռաց պահել իրենց նախնիների հիշատակը: Քրդական ընտանիքի անդամները իրենց նահապետի և սերնդակից մեռածների հիշատակը պահպանում էին նրանով, որ իրենց նախահայրերին անվանում էին «կալ ու բավ», ինչ-

[1] Ասաց Խուդոև Ղասոն, Արթիկի շրջանի Քարվանսարա գյուղից, 98 տարեկան, մահացել է 1955 թ.: Գրի է առել հեղինակը 1953 թ.:

պես հայերի մոտ՝ «նախնիք», ռուսների մոտ՝ „предки", հռոմեացիների մոտ՝ manes և այլն.

Քրդերի հասկացողությամբ, նախնիների հոգիները ևս, ինչպես մյուս բոլոր հոգիները, հանդերձյալ կյանքում նյութական և հոգեկան նույն պահանջներն ունեն, ինչ որ կենդանի մարդիկ այս աշխարհում: Անիմիստական այս աշխարհըմբռնման հիման վրա էլ ընտանիքի անդամներն անհրաժեշտ են գտնում թե՛ նյութապես և թե՛ հոգեպես բավարարել նախնիների, ինչպես նաև ընտանիքի մեռած անդամների հոգիների պահանջները, որպեսզի նրանք չզայրանան իրենց տան անդամների ու պամամների վրա և պատրաստ լինեն անհրաժեշտության դեպքում պաշտպանելու ընտանիքի կենդանի անդամներին և ցեղակիցներին ամեն տեսակ չարիքներից ու պատուհասներից: Իրենց նախնիների հիշատակը հավերժացնելու համար քրդերը, առաջին՝ երդվում էին նախնիների գլխով, այսպես՝ «սարե կալ ու բավակըմ» (նախահայրերիս գլխով եմ երդվում): Անեծքի ժամանակ ասում էին՝ «բըրա ռոհե կալ բավա խանիմե տավա» (թող նախահայրերի հոգիները քո հախից գան):

Երկրորդ՝ համբուրում էին նախահոր գերեզմանը և ողորմի տալիս նրա հոգուն:

Երրորդ՝ ուրիշների ներկայությամբ հիշատակում էին իրենց նախնիներին, դրանով մեծարելով նրանց:

Չորրորդ՝ իրենց երեխաներին կոչում էին նախահոր անունով և այլն:

Նախնիներին անուն տալը, մեծարելն ու պաշտելը գոյություն են ունեցել նաև կովկասյան մյուս ժողովուրդների կյանքում:

Մ. Կովալևսկու վկայությամբ, օսերի մեջ ընտանեկան ամենագլխավոր պաշտամունքներից մեկը նախնիների պաշտամունքն է եղել: Քրդերը, սովորության համաձայն, ընտանիքում իրենց նախնիների հիշատակը պահպանելու և նրանց նկատմամբ իրենց սերը արտահայտելու համար, նրանց գերեզմանի վրա պաշտամունքի առարկա հանդիսացող կենդանիների արձանիկներ էին դնում: Այդպիսի գերեզմաններից մեկը այժմ գտնվում է Ապարանի շրջանի Փոքր Ջամուշլու գյուղում: Այդ գյուղի ցեղակիցների նախնի հանդիսացող Ադամի գերեզմանի վրա կառուցված է գմբեթաձև դամբարան, որի գլխին դրված է աղավնու գեղեցկակերպ քարե արձանիկը, իսկ դամբարանի կողքերին քանդակված են արև և եզդի հոգևորականի «քուլըկը»:

Ջամուշլվանցիները հաճախ երդվում էին իրենց նախահոր գերեզմանով, նրան չէին հայհոյում, գերեզմանի շուրջը միշտ մաքուր էին պահում: Սրանք ժողովրդի մեջ մի տեսակ կուռք էին համարվում:

Բ. ՕՋԱԽԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Նախնիների պաշտամունքի հետ անմիջականորեն առնչվում է օջախի պաշտամունքը: «Օջախ» թուրքերեն ogak բառն է, որ հնագույն շրջանում նշանակել է կրակարան, իսկ հետագայում՝ նաև տուն և ընտանիք:

Օջախի պաշտամունքը բխում է կրակի պաշտամունքից: Քրդերի հասկացողությամբ օջախը առանց նախահայրերի, նախահայրերն էլ առանց օջախի առանձին-առանձին վերցրած անիմաստ են: Երբ տալիս էին օջախի անունը, պետք է հիշատակվեր նաև օջախի տիրոջ ու հիմնադրի՝ ընտանիքի նախահոր անունը: Անիմիստական այս ըմբռնմամբ ընտանիքում հեթանոսական այս ատրուշանը միշտ պետք է անբաժան լիներ նախահոր հոգուց: Ինչպես նախահոր գերեզմանով, այնպես էլ օջախով երդվում էին: Օջախով երդվելու ժամանակ անպայման տալիս էին նախահոր անունը, օրինակ՝ նրան ակնարկելիս ասում էին՝ «սարե կալ ու բավա, օջախա ուսա կըմ» (նախնիների գլխով և նրանց օջախով եմ երդվում): Օջախի հիմքը կազմում էին թոնիրն ու բուխարին: Սրանք քրդական ընտանիքի համար սուրբ էին համարվում, ուստի և սրանց մեջ թքելը, կեղտոտելը մեղք էր համարվում, մեղք էր համարվում նաև կրակարաններից ուրիշին կրակ տալը: Սրբագործված էին համարվում հատկապես հոգևորականների օջախները, որոնք բոլոր քրդերի համար հանդիսանում էին սրբավայրեր:

Օջախի պաշտամունքը, ինչպես նշեցինք վերը, սերտ կապ ունի կրակի պաշտամունքի հետ, որի արմատները պետք է փնտրել նախնադարյան հասարակության ընդերքում: Նախնադարյան մարդիկ, չհասկանալով կրակի բուն էությունը, տեսնելով ու զգալով նրա օգտակարությունն ու վնասակարությունը, նրան վերագրում էին գերբնական ուժ, հետևապես «արխայիկ մարդու աշխարհազգացումների մեջ կազմակերպվում են համապատասխան հավատալիքներ կրակի խորհրդավոր ուժի և նյութական նշանակության մասին: Այդ հավատալիքներից գոյանում է կրակի պաշտամունքը»[1]:

[1] Խ. Սամվելյան, Հին Հայաստանի կուլտուրան, Երևան, 1931, Ա. հատ., էջ 302:

Այսպես, օրինակ՝ քրդերը կարծում էին, թե տան ծալքի մեջ պարփակվում է տան ոգին, որը երբեմն, գլխավորապես պատահարների ժամանակ, հատկապես գիշերվա պահին, ձայներ է հանում, խոսում մյուս բարի ոգիների հետ, կռվում չար ոգիների դեմ ու թույլ չէր տալիս նրանց տուն մտնել:



Եզան գանգը փակցված է բնակարանի մուտքի վերև, իբրև տան հարստության խորհրդանշան

Գողերի և ավազակների հարձակման ժամանակ նա աղմուկ է հանում, իր հասու, մի քիչ էլ տարօրինակ ձայնով արթնացնում ընտանիքի անդամներին, ուստի մինչև նրանց արթնանալը ու զինվելը նա ճիվաղի կերպարանքով երևում է թշնամիների աչքին, որպեսզի վերջիններս վախենան և չմտնեն տուն: Իբրահիմ Խալիլը, ըստ հավատացյալների, չար ոգիների դիտավորություններից պաշտպանում է տան «սֆրեն», դրա համար քրդերը սեղանը օրհնելիս ասում էին՝ «բըրա առհմա Իբրահիմ Խալիլ լը վե սֆրե բա» (թող Իբրահիմ Խալիլի հովանավորությունը լինի այս սեղանի վրա):

Մամե Շվան և Զարզանե գավան իբր թե ընտանիքի անասուններին պահպանում են հիվանդություններից: Նրանք, երբեմն

կանգնում են գայլերի առաջ և չեն թողնում, որ վերջիններս անասուններին տանեն և հոշոտեն:

Խաթունա Փարխանից հետո, որի մասին բավական խոսեցինք ծննդաբերության կապակցությամբ, ընտանիքի բոլոր երեխաներին հովանավորում է «պիրա ֆատ» ոգին: Կանանց թշնամի ալքը ոչ միայն ծննդյան օրը, այլ հետագայում էլ կարող էր փչացնել մորը ու մանկանը, որոնց միակ փրկիչը հանդես էր գալիս պիրա ֆատը:

Տան այս ոգիները, ըստ քրդերի, երբեմն հանդես էին գալիս զանազան տղաների ու աղջիկների կերպարանքով: Ոգիների կերպարանափոխման մասին նման հայացքներ տեսնում ենք օսերի մեջ: Նրանք ևս կարծում էին, որ իրենց տան ոգիները երևում են երեխաների, սպիտակ գառների, նոխազների և այլ կենդանիների կերպարանքներով: Օսերը կարծում էին, թե տան ոգիներին կարող են տեսնել միմիայն կախարդներն ու երեխաները, այն էլ լոկ նոր տարվա գիշերը, որովհետև երեխաները այդ ոգիների էության մասին գաղափար չունեն[1]:

Ըստ ժողովուրդների անիմիստական հայացքների, ընտանիքի բոլոր անդամների համար, չար և ամենավտանգավոր ոգին «Քաբուսն» էր համարվում, որը գլխավորապես գիշերվա պահին աշխատում էր մարդկանց խեղդամահ անել: Քաբուսի ճիրաններից փրկվելու համար, քրդերը տալիս էին Մահմեդի, Մալաքտաուսի և տան ոգիների անունները: Քաբուսի գոյության մասին հավատացություն գոյություն ուներ նաև հայերի, վրացիների, ասորիների, ադրբեջանցիների, հրեաների և այլոց մեջ: Քաբուսը հայերի մոտ կոչվում է «խուտ-խուտ»: Ըստ վրացիների, քնելու ժամանակ մարդը միշտ պետք է պառկի ձախ կողքի վրա: Մեջքի վրա պառկելու դեպքում երևում է խեղդող ոգին: Նա քնած մարդու վրա նստում է այնպես, որ ծանրանա նրա մարմինը և նա չկարողանա շարժվել: Ոգին այնպես է սեղմում քնածի մարմինը, որ եթե վերջինս չզարթնի և չտա Քրիստոսի, ս. Գեորգի անունները անմիջապես կխեղդվի[2]:

Ցալուսի ոգին քրդերեն կոչվում է «մլխաքաթե դանչը»: Ծննդաբերության ժամանակ տղա ունենալու համար ծննդկանը հաճախ

[1] Տե՛ս *М. Ковалевский*, Современный обычай и древный закон, Москва, т. 1, 1886, էջ 85:

[2] Տե՛ս „Сборник материалов", Тифлис, 1893, вып. XVII, отдел II, էջ 17:

տալիս էր փալասի ոգու անունը, որը բարի ոգի էր համարվում: Ըստ քրդերի, եթե նա չհաներ կանանց, նրանք կմնային ամուլ և ընտանիքը կզրկվեր սերունդը շարունակելու հնարավորությունից: Այդ պատճառով՝ իբրև պաշտամունքի առարկա, քրդուհիները իրենց կրծքից կախում էին փալասանման ոսկեջրած արծաթե փարուն-գաձև մի զարդ, որը կոչվում է «խիար»:

Ինչպես մյուս պաշտամունքները, այնպես էլ փալասի պաշ-տամունքը հնագույն է և բխում է անիմիստական ընդհանուր պատկերացումներից: Նախնադարյան մարդիկ գաղափար չունենա-լով իրենց մարմնի մասերի կազմության մասին, կնոջ հղիանալն ու պտղաբերելը վերագրում էին գերբնական ուժերի միջամտությանը: Այդ պատճառով, թե՛ կնոջ հղիության և թե՛ ծննդաբերության ժա-մանակ կատարում էին մոգական գործողություններ, կրոնական արարողություններ և զոհաբերություններ՝ հղիությունից առաջ քրդուհին սրբավայր էր գնում, հանում մլխաքաթե գանջի, կատա-րում զոհաբերություններ, որպեսզի երեխաներ ունենար: Փալասի պաշտամունքը բխում է պարզել հոգիների կամ ոգիների գաղա-փարից, որ այնքան մեծ տեղ էր գրավում քրդերի կյանքում:

Դ. ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախնադարյան տոհմային շրջանում տոնակատարությունները գլխավորապես առնչվում էին բնության զարթոնքի, նրա առար-կաների պաշտամունքի, բերքատվության և արգասավորության հետ: Տոնակատարություններին միշտ զուգակցվում էին զոհաբե-րությունները: Տոնի ժամանակ, նախքան արարողություններին անցնելը, զոհաբերում էին նախօրոք նշան արված մատաղացու անասունը, որը մորթում էին կրոնական արարողություններից և ծիսակատարություններից հետո:

Տոնակատարությունների ժամանակ զոհաբերվող անասունին մորթում էին միմիայն կրոնական արարողություններից և ծիսա-կատարություններից հետո այն պատճառով, որ քրդերի պատկե-րացմամբ, զոհաբերության համար նախօրոք նշանակված անասունը, որը ունենում էր հատուկ նշաններ, պետք է սրբագործվեր կրոնա-կան արարողություններով և ապա մորթվեր, այլապես այդ կեն-դանին արժանի չէր համարվում մատաղացու լինելու:

Անդրկովկասյան քրդերը կատարում էին հետևյալ տոները՝ ռամազան, խըդրնաբի կամ խըդրալյազի (սուրբ Սարգիս), Եզ-

դու տոն, Իսմայիլ ղուրբանի (Աբրահամի), Նավրոզի (Նոր տարվա) և գերնասի տոն:

Ռամազանի արքայությանը արժանանալու նպատակով, յու-րաքանչյուր մահմեդականի սուրբ պարտականությունն էր՝ ակտիվ կերպով մասնակցել այս տոնակատարությանը և տարվա մեջ երե-սուն օր ծոմ պահել: Սակայն իրականում ոչ բոլոր մահմեդական-ներն էին, որ մասնակցում էին ռամազանի տոնակատարությանը, որովհետև այս տոնակատարության օրերին յուրաքանչյուր մահմե-դական պետք է գիշերվա կեսին ուտեր և ամբողջ ցերեկը սոված մնար մինչև արևի մայրամուտը: Սակայն ոչ բոլորն էին կարողա-նում ֆիզիկապես տանել այդ դաժան ռեժիմը, քանի որ ծոմ պա-հելու օրերին, բացի ուտելուց, արգելվում էր նաև ծխելը, ջուր խմելը, նույնիսկ հիվանդներին արգելվում էր ուտելն ու խմելը:

Ռամազանի տոնակատարության օրերին կավանին դրամ, մթերքներ և գործվածքներ էր բաժանում աղքատներին: Այդ դրամ-ներից և մթերքներից առաջին բաժինը հանում էր աղքատ այրի կանանց, երկրորդ բաժինը՝ որբերին, երրորդը՝ մոլլային, որը ծոմ պահած օրերին պարտավոր էր ամեն օր թե՛ առավոտյան և թե՛ երեկոյան «ազան» կանչել: Ռամազանի օրերին արգելվում էր ամու-սինների սեռական մերձեցումը:

Ծոմապահության երեսուներորդ օրը սկսվում էր տոնակա-տարության ուրախությունը: Գյուղի բնակիչները բաժանվում էին խմբերի, խումբ-խումբ այցելում էին միմյանց տները և ասում. «այդա ռամազանա տա բըմբարակ բա» (շնորհավոր լինի Ռամա-զանիդ տոնը): Այդ օրը գյուղում նվագում էր զուռնան: Ռամազանի տոնակատարությունը կատարում էին միայն մահմեդական քրդերը:

Խըդըրնաբիի տոնը.— Խըդրնաբիի տոնակատարությունը գո-յություն ուներ թե՛ եզդի և թե՛ մահմեդական քրդերի մեջ, միայն այն տարբերությամբ, որ եզդիները հանուն խըդրնաբու, երեք օր էին ծոմ պահում, իսկ մահմեդական քրդերը, առանց ծոմ պահելու, մի օր (գարնան սկզբին) մատաղ, կեր ու խում էին անում, ուրա-խանում և այլն: Եզդիները երեք օր ծոմ պահելուց հետո, իսկ մահմեդական քրդերը առաջին օրը սկսում էին նվագածությունն ու զոհաբերությունները: Այդ զոհաբերությունները կատարվում էին նրա համար, որպեսզի խըդրնաբին ողորմած լիներ մարդկանց նկատմամբ, տարվա բերքը, բուսականությունը առատ լիներ, մար-դիկ լինեին ուրախ և երջանիկ:

Այսպիսով, քրդերի մեջ խըդըրնաքին հանդես էր գալիս իբրև երդասավորության և բերքատվության աստվածություն, ավելի ճիշտ կլիներ ասել՝ մեռնող և հարության առնող աստվածություն:



Խըդըրնաբիի (սուրբ Սարգսի) տոնի առթիվ տան առաստաղին ալյուրով մոգական նախշեր անելիս

Խամայիլ Ղուրբանի տոնակատարությունը.— Այս տոնակատարության ժամանակ անդրկովկասյան քրդերը զոհաբերում էին միմիայն ոչխար: Այծ, խոշոր եղջերավոր անասուններ և թռչուններ զոհաբերելը մեղք էր համարվում: Այս տոնը տևում էր միայն մեկ օր:

Քրդերի այս տոնը, ըստ երևույթին, գալիս է հրեաներից: Իսմայիլը հենց իրենց, քրդերի բացատրությամբ, հրեական ավանդության մեջ նշված Աբրահամի որդի Իսահակն է:

Նավրոզ.— Այս բառը պարսկերեն է, նշանակում է «Նոր տարի» (հայերեն՝ Նավասարդ): Մահմեդական քրդերի մոտ Նավրոզը տոնվում է մարտի 22-ին, իսկ քուրդ եզդիների մոտ՝ մարտի 8-ին, դրա համար էլ այդ տոնակատարությունը նաև կոչվում էր «հայշտե ադարե» (մարտի 8):

Այս տոնը գլխավորապես առնչվում էր բնության զարթոնքի,

բերքատվության հետ, դրա համար էլ այն տեղի էր ունենում գարնան սկզբին: Հանուն այս տոնի, մորթում էին մատաղացու անասուններ, եփում, պարում և այլն: Եզդիների մեջ մարտի 8-ը դիմավորում էին երեխաների համար զույնզգույն շորեր կարած: Նախօրյակին ավելի լավ էին մաքրում տունն ու գոմը: Տոնի օրը կավանին մի մեծ գաթա էր թխում, բացի դրանից արգելվում էր ուրիշ թխվածք, բացի սովորական հացից: Նախօրոք նա նրա մեջ դնում էր «մորիա խերե» (բարի ուլունք) և ասում էր. «Յա խուդե, Նավրոզ խերբա» (ով աստված, թող Նավրոզը բարով գա):

Տան կավանին աստվածային ձեռքով կտրատում էր գաթան և նրա կտորները ավագության կարգով, հավասար չափով բաժանում ընտանիքի անդամների վրա: Այդ ուլունքը տան որ անդամին բաժին ընկներ, նա մեծ բախտի կարժանանար: Գաթան ուտելուց հետո սկսվում էին պարեր՝ «գովանդ»:

Գիտնականներից ոմանք, քրդական նշանավոր տոները, այդ թվում նաև Նավրոզը աղավաղված են ներկայացրել: Ա. Ա. Սեմենովը, քուրդ եզդիների պաշտամունքների մասին խոսելիս, իր „Поклонение сатане у Передне-азиатских курдов-езидов" (Ташкент, 1927 г.) գրքի մեջ, հիմնվելով բուրժուական գիտնական Ի. Ժոզեֆի „Devil worship, the sacred books and traditions of the yezids" (Boston, 1919) աշխատության վրա, եզդիների «հայշտե ադարենը»-ի մասին գրել է, որ այդ տոնը կատարում են ապրիլին: Նախ, ժամանակագրական տեսակետից դա սխալ է, երկրորդ, եզդիները այդ տոնակատարության ժամանակ իբր թե երաժշտական գործիքների վրա չեն նվագում, որովհետև աստված այդ օրը նստած է լինում գահի վրա (նոր տարվա համար օրենքներ է մշակում) և կարգադրում է բոլոր գիտուններին ու մերձավորներին, որ իր մոտ գան (էջ 71): Սա միանգամայն սխալ է. ընդհակառակը՝ եզդիները այդ տոնակատարության ժամանակ ավելի շատ նվագում են և ուրախանում, նկատի ունենալով գարնան գալուստը, կյանքի զարթոնքը՝ Նավրոզը:

Դերնանս.— Այս տոնը գոյություն է ունեցել և այժմ էլ ունի աշխարհի բազմաթիվ ժողովուրդների մեջ: Քրդերի, գերբերի մեջ հայտնի է «դերնանս», ռուսների մեջ՝ „сретение", հայերի մոտ «տեառնընդառաջ» կամ «դրնդեզ» անուններով: Սա իր ծագմամբ կապ ունի կրակի պաշտամունքի հետ:

Դերնանսի օրը քրդերը երթիկի վրա կրակ էին վառում և դրա մոխրից մի քիչ երթիկից ցցում տան աչքերի՝ թոնրատան, գոմի,

տխրոտի և մառանի մեջ, որպեսզի տունը լցվեր բարիքով, ընտանիքը հարստանար, ընտանիքի անդամները չհիվանդանային և այլն, իսկ երեխաները թռչկոտում էին կրակի վրայով, իրենց «գոլիզանգով» ձու և մրգեր հավաքում: Երբեմն տղամարդիկ դերնտեսի խարույկի մոխրից ցանում էին արտերի մեջ, որպեսզի բերքը առատ լինի: Այդ մոխրից լցնում էին գառների «քուրը»: Այս սովորությունը համարյա նույնությամբ գոյություն ուներ հարևան հայերի մեջ:

«Տեառնընդառաջի տոնին,—ասում է Խաչիկ Սամվելյանը,—վառված «դերնտեզի» մոխիրը կտուրը շաղ են տալիս, որ «չարը» խափանվի: «Դերնտեզի» վառ խարույկի վրայով տղամարդիկ ցատկում են, նրա բոցերով մարմնավոր ու հոգևոր ախտերից ազատվելու հույսով: Նմանապես տղամարդիկ ու կանայք իրենց փեշերի ծայրը խանձում են այդ կրակից, որպեսզի վանեն իրենցից ամեն տեսակ ցավերը. կանայք էլ իրենց «ուչխուրի» ծայրն են այրում այդ կրակից՝ երեխա ունենալու համար»[1]:

Դերնտեսի նախորդ օրը, երեկոյան գրեթե բոլոր տներում խնծոխ էին պատրաստում և մրգեր առնում՝ երեխաներին բաժանելու համար:

Այդ օրը հարսնացուները իրենց նշանածների համար գուլպա էին գործում, թաշկինակ կարում և ուղարկում նրանց: Դերնտեսի օրը, ցերեկը, գյուղի համարյա բոլոր տների երթիկների վրայից քուլա-քուլա ծուխ էր բարձրանում: Ծերունիները ուշիուշով նայում էին, թե ծուխը որ կողմն է գնում: Սրանք կարծում էին, թե, եթե ծուխը դեպի արևելք գնար, հացը լավ էր լինելու, իսկ եթե հյուսիս կամ արևմուտք՝ վատ: Տեառնընդառաջի վերաբերյալ կային բազմաթիվ այլ սնահավատություններ ևս:

Ե. ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ, ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ, ՄԱՀ ԵՎ ԹԱՂՈՒՄ

Քրդերի առողջապահական վիճակը պարզ պատկերացնելու համար անհրաժեշտ է նախօրոք որոշ գաղափար կազմել նրանց բնակարանային պայմանների մասին: Քրդական գյուղական բնակավայրերը սովորաբար տեղավորված էին լինում լեռնոտ վայրերում: Գրեթե ոչ մի գյուղում չկար բանջարանոց: Քրդի համար բանջարաբուծությամբ զբաղվելը մինչև անգամ ամոթ էր համարվում: Յուրաքանչյուր տան դռան առջև «բաամա» էին

[1] Խ. Սամվելյան, Հին Հայաստանի կուլտուրան, Երևան, 1931, էջ 302:

դցում, որից գարշահոտություն էր առաջանում, իսկ աշնանը, տան պատերին կից աթարից «դալախ» էին սարքում, ծայրին էլ մի ավել տնկում իբրև տան (օջախի) խորհրդանշան:

Անդրկովկասի քրդական գյուղերի տները, բացի Լաչինից, անցյալում գրեթե միանման էին՝ գետնափոր և կիսագետնափոր, իսկ Լաչինում կիսագետնափոր և կիրճափոր: Ահա թե ինչ է գրում Կ. Խաչատրյանը Երևանի նահանգում ապրող քրդերի բնակարանների մասին.

«Ձմռանը,— ասում է նա,— նրանք (քրդերը՝ Ա. Ա.) ապրում էին իրենց գյուղերում, այսպես կոչված գետնափոր տնակներում: Նրանց հյուղերը կառուցվում են հետևյալ ձևով. գետնի մեջ ընտանիքի անդամների համար փորում են մի քառակուսի տնակ և մի ուրիշը կովերի, ձիերի համար, ապա այդ փորվածքի վրա դնում են գերան, մարդակներ, որոնց վրա՝ ծղոտ կամ խոտ և ծածկում հողով: Տան մի կողմից սարքում են լայն դուռ, որը ծառայում է ընտանիքի անդամների ելքի և մուտքի համար: Եվ ահա պատրաստ է քրդի տունը»[1]:

Խաչատրյանի նկարագրած քրդական տան բաժանմունքները դասավորված էին այնպես՝ թոնրատանը կից էին ախոռը, մառանը, մարագը և օդանը: Սրանց դռները բացվում էին մի միջանցքի մեջ, որը կոչվում է «հաուշ» կամ «ավդար»: Գողությունից խուսափելու համար քրդերը աշխատում էին, որ ախոռներն ու գոմերը տնից հեռու չլինեն: Հարուստների տներն էլ համարյա նույն ձևով էին կառուցվում, միայն այն տարբերությամբ, որ հարուստները շինում էին նաև լուսավոր սենյակներ, կամ ինչպես իրենք են ասում՝ «օթախներ»:

Բնակարանի և օժանդակ շենքերի պատերը շարում էին քարերից, մի տեղ լցնում էին ցեխ և տրորում, որ «տեղն առնի»: Պատերի վրա խաչաձև դցում էին գերաններ, որոնց վրա շարում մարդակներ: Մարդակների վրա փռում էին խոտ ու հարդ և ծածկում հողով, այնպես, որ տան վերին մասը գնալով նեղանում էր և ստացվում բուրգաձև երդիկավոր տուն:

Թոնիրը վառելու ժամանակ, թոնրատունը և տան մյուս աչքերը լցվում էին ծխով: Տները մեծ մասամբ խոնավ էին: Բնակա-

[1] *К. Хачатуров*, Курды, черти их характера и быта, „Сборник материалов для описания местностей и племен Кавказа", Тифлис, 1894, вып. 20, էջ 66—67:

բանների մեծ մասը գրեթե զրկված էր լույսից, դրանցում պարունակվում էին անասունների աղբից գոյացած գազեր՝ հագեցած ածխաթթվով: Բնակարանային կեղտոտ պայմաններում աճման պարարտ հող էին գտնում բազմազան բացիլներ: Այս ամենը բացասաբար էր անդրադառնում ժողովրդի առողջության վրա:

Քրդերը, իբրև լեռնային ժողովուրդ, ընդհանրապես առողջ են, այնուամենայնիվ, նրանց մեջ տարածված էին մի շարք հիվանդություններ, որոնց մեծ մասը առաջանում էր բնակարանային վատ պայմաններից և կուլտուրական ցածր մակարդակից:

Գլխավորապես տարածված էին աչքացավը, ոսկրացավը, կարմրուկը և բկացավը: Քիչ էին հանդիպում քաղցկեղը, թոքախտը, աղիքային և ստամոքսային հիվանդությունները: Սա պետք է բացատրել այն հանգամանքով, որ քրդերը շատ էին գործածում մածուն, կաթնեղեն, ինչպես նաև ձավարից, բլղուրից, բրնձից պատրաստված կերակուրներ (փլավ, քուֆթա, կաթնով, տոլմա, խաշիլ, հարիսա, սպաս, ապուր և այլն):

Սնվում էին նաև բանջարեղեն կերակուրներով (թթվաշ, սիրեխ, սինձ, սո, տառրակ և այլն):

Հատկապես բանջարեղենն ու կաթնեղենը բարերար ազդեցություն են թողնում բնակիչների առողջության վրա:

Քրդաբնակ շրջաններում գոյություն չունեին հիվանդանոցներ և սանիտարական կետեր: Անդրկովկասյան լեռնականները, այդ թվում քրդերը, հիմնականում բուժվում էին գյուղական հեքիմների մոտ: Հեքիմները հիվանդներին «առողջացնելու» համար դիմում էին ժողովրդական և կախարդական հնակյալ միջոցներին:

Աչքացավ.— Հիվանդի աչքին աղծի ճարպ էին քսում: Սպիտակ շիբը մանրացնում, կաթի մեջ լուծում, բամբակի վրա քսում և դնում էին հիվանդի աչքի վրա: Օղի էին քսում, կամ դմակից մի կտոր ճարպ կտրում, ծեծում, դնում էին հիվանդ աչքին և կապում: «Գյավազ» (բույսի արմատներից պատրաստած) դեղ էին լցնում հիվանդ աչքի մեջ: Հիվանդ աչքի վրայից կախում էին կախարդական նշանակություն ունեցող ուլունք:

Ատամնացավ.— Գուլպա գործելու ճաղերից մեկի ծայրը բարկ կրակի մեջ կարմրեցնում և դնում էին հիվանդ ատամի վրա: Բերանը ողողում էին շրացքի լուծույթով: Օղի էին խմում: Եփում էին գարի հատ ունեցող տերևներ կամ բույսերի արմատներ և նրանց ջրով ողողում բերանը:

Ականջացավ.— Յուղոտ բամբակ էին դնում հիվանդ ականջի

վրա: Աղծի հալած ճարպ էին կաթեցնում հիվանդ ականջի մեջ: Տաքացրած աղ էին դնում հիվանդ ականջի վրա: Կասվհատի ձեթ էին կաթեցնում հիվանդ ականջի մեջ և կապում:

Այրվածք.— Այրված տեղը խեկույն ևեթ մածուն էին քսում և բաց թողնում, որ չորանա: Բարակ շերտով քթախոտ էին ցանում այրված տեղը: Խաշած կարտոֆիլը կճպում էին, խմորի պես շաղախում, քսում շորի վրա և դնում այրվածքի վրա: Ձիթապտղի յուղ էին քսում տեղը:

Գլխացավ.— Արյուն էին առնում գլխից և այն մի քանի օր կապում տաք շորերով: Քթի առաջ քացախ էին դնում և նրանից հոտ քաշում: Գլխին օղի էին ածում և տրորում:

Փորացավ.— Աղը տաքացնում, շորի մեջ փաթաթում և դնում էին փորին: Հասա խուփերից մեկը տաքացնում, փաթաթում շորի մեջ և դնում էին փորին:

Լուծի դեմ.— Սխտորը լավ մանրում, եփած հավկիթի վրա ցանում, երկու առավոտ, դեռ բան չկերած, անոթի փորին ուտում էին: Դեղձի դախը ջրով եփում և ուտում էին: Ցորենից և գարուց ապանձ էին անում և ուտում: Թամած մածուն էին ուտում:

Բկացավ.— Հիվանդին շաքարով կաթ էին խմեցնում: Ցորենի ալյուրը կաթով, շաքարաջրով շաղախում, քսում էին շորի վրա և դնում հիվանդի բկի վրա: Հացի միջուկը օղիով եփում, քսում էին մի կտոր կտավի վրա և դնում հիվանդի բկի վրա:

Գորտնուկ.— Սուր դանակով կամ մկրատով կտրում էին գորտնուկները: Իբրև մոգական միջոց, մարմնի վրա եղած գորտնուկների թվի չափ քարեր էին լցնում մի կտոր շորի մեջ և ծանոթ հարևաններից մեկն ու մեկի տան երդիկից ներս էին գցում, որպեսզի գորտնուկներն անցնեն այդ տան անդամների վրա: Մի քանի տեսակ բույսերի արմատներ եփում, ստացած թանձր ջրով շաղախում էին գարու ալյուրը և դնում գորտնուկի վրա:

Հարբեցողություն.— Ոգելից խմիչքներ գործածում էին միայն եզդիները: Մահմեդականների մոտ դա արգելված էր: Հարբեցողությունից առաջացած գլխացավը կտրելու համար փոքր բաժակով օղի կամ կոնյակ էին խմեցնում հարբածին: Թթու դրած կաղամբ կամ վարունգ էին ուտեցնում: Հիվանդին սառը ջրով լողացնում էին:

Թոքախտ.— Էշի և ձիու կաթ էին խմեցնում հիվանդին: Յուղ, կաթնեղեն և թերխաշ ձու էին ուտեցնում: Ընկույզի տերևները

եփում, սրա ջրի մեջ օղի ավելացնում և խմեցնում: Կապույտ չիր էին ուտում:

Թունավորվածին խմեցնում էին հում կաթ և մածուն: Արյան առնելիս նշտրակը բավական խոր խրում էին նույն թևի արյունատար երակի մեջ: Արյունը 1—1,5 րոպե հոսելուց հետո հեքիմը բազկի կապը արձակում էր, ծակած տեղը մաքուր բամբակ դնում և կապում: Արյունահոսությունից ուշագնաց հիվանդին երբեմն ուշքի էին բերում գլխին սառը ջուր ածելով: Վերցնում էին կես բաժակ օղի, մի ձվի դեղնուց, մի լիմոնի հյութ, խառնում միմյանց հետ և տալիս հիվանդին: Հիվանդին լողացնում էին սառը ջրով:

Հազի դեմ.— Հազով հիվանդին կծու պղպեղ էին ուտեցնում: Տաք կաթ և թեյ էին խմում: Կաթն ու մեղրը միասին եփում և խմում էին: Կովի կամ ոչխարի կաթը եփում, մեջը խառնում էին ձվի դեղնուց և խմում: Մի քիչ սպիտակ չիր էին ուտում: Կովի յուղը հալում և սոված ժամանակ խմում էին: Կաղնի և եղևնի ծառերի տերևները հավաքում, եփում էին մի ամանի մեջ, ապա ջուրը քամում, այդ ջրի մեջ մի կտոր շաքար լուծում և խմում:

Ձայնը կտրվելու դեմ.— Թխլխաշ կամ հում ձու էին ուտում: Խարկված սալոր էին ուտում: Եփած գարու ջուր էին խմում: Մեղրն ու ջուրը միասին եփում և տաք-տաք խմում էին:

Մալաքորի դեմ.— Սառը ջուր էին լցնում հիվանդի վրա: Այծի մազերով տրորում էին հիվանդի մարմինը: Քաղցր ջուր էին խմեցնում: Այծի մազերից մի փունջ խանձում, խանձած մազերը մի ջրի մեջ կապում և ձգում էին ծալքի տակը, որպեսզի չարքերը հեռանան:

Վախը կտրելու դեմ.— Սրբավայր էին տանում հիվանդին և, ի պատիվ ոգիների, անասուններ էին զոհաբերում:

Կարմրուկ հիվանդության դեմ.— Հիվանդին փաթաթում էին կարմիր կտորների մեջ: Մի քիչ լավանալու դեպքում կարմիր գույնի զգեստ էին հագցնում:

Բուժելու համար գործադրվում էին թե՛ մեխանիկական և թե՛ վիրաբուժական եղանակներ՝ շփելը, ծեծելը, ձգելը և այլն:

Այսպիսով, նախասովետական շրջանում, քրդերի մեջ հիվանդությունների դեմ պայքարը տարվում էր մեծամասամբ ժողովրդական դեղերով և մոգական միջոցներով:

Ըստ քրդերի անիմիստական հայացքների, ամեն մարդ ունի իր հոգին և մի աստղ երկնքում: Երբ աստղ էր վայր ընկնում,

ասում էին՝ մի մարդ մեռավ: Մեռնողի հոգին, իբր թե, տանում էր հոգեառ հրեշտակ Ազրաիլը, որի դեմ ոչ ոք չէր կարող և չէր համարձակվում պայքարել, ոչ ոգիները, ոչ էլ մարդիկ: Նա, ըստ քրդերի, ինչպես մյուս հրեշտակ ոգիները, անմարմին է, անտեսանելի: Մեռնողի «աջալը» նախախնամությունից որոշված է, աստված գիտե, թե այդ մարդը երբ պետք է մեռնի:

Երեխայի «բուժումը» սուրբ քարի միջոցով

Քրդերի մեջ շատ ուժեղ էր հավատը դեպի ֆալաքը: Եթե մեկի «ճակատին գրված» է, թե այսինչ տարեթվին, այսինչ օրը նա պետք է մեռնի, կնշանակեր, որ դա աստծու կողմից նշված նրա կյանքի ժամկետն է, որը փոփոխելը անհնար է թե՛ ոգիների և թե՛ մարդկանց կողմից, ոչ ոք ֆալաքին ընդդիմանալ չէր կարող: Արևելյան այլ ժողովուրդների, ինչպես, օրինակ՝ պարսիկների, հայկական որոշ գավառների բնակիչների և ուրիշների մոտ հոգեառ հրեշտակները համարվում էին թե՛ բարի և թե՛ չար ոգիներ: Նախկինում Ջավախքի հայերը հավատում էին, թե՝ «եթե մարդը բարի է եղել, բարի հրեշտակը գալիս և ձեռքի խնձորով խաբելով մարդուն, հոգին աղավնակերպ տանում է բերնից, իսկ եթե չար է եղել, գալիս է չար հրեշտակը, մի սուր դնում կոկորդին,

մյուսը՝ վզին և ձեռքի մզրախով սեղմում կրծքին ու տանում հոգին»[1]։

Մահամերձի տանը հավաքվում էին հարևանները, բարեկիցները, հարևան գյուղերից մարդիկ և սկսվում էր լացն ու կոծը, ախն ու վախը, իսկ սրա մահից հետո, ուժեղանում էր լացն ու կոծը, կանայք ծամեր էին կտրում և գցում դիակի վրա, իսկ տղամարդիկ խփում էին գլուխներին։ Թե՛ կանայք և թե՛ տղամարդիկ, իբրև սգո նշան, սև փուշիներ էին կապում գլուխներին, երկու-երեք ժամ սգալուց հետո տիրում էր խոր լռություն, որից հետո գալիս էին լալկան կանայք։ Սրանք սկսում էին սգո երգեր երգել և լաց լինել, որին դարձյալ հաջորդում էր խորին լռություն։ Մոլլան Ղուրանից կտորներ էր կարդում, իսկ եզդիների մեջ շեյխը կամ փիրը դուալեր երգում, անվանի մարդիկ սկսում էին խոսել հանգուցյալի լավ կողմերի մասին, ապա նորից սկսում էին երգել և լաց լինել։

Տղամարդկանց դիակի վրա հարազատ կանայք ճանկռտում էին այտերը և արյունլվա անում դեմքը։ Մեռածի դիակի վրա այտեր ճանկռտելը և մազեր կտրելը զոհաբերության տեսակներից մեկը պետք է համարել։

Մեռածի մահից մի քանի ժամ հետո սկսվում է «հասարի»։ Մահվան գույժը հասնում էր հարևան գյուղերը։ Այդ գյուղերի բնակիչներից նշանավոր մարդիկ գալիս էին մեռելատուն, բացականչում «բրառ, բրառ» կամ «խուշկե, խուշկե», բաժանելով մեռածի հարազատների վիշտը։

Մոլլան (մահմեդական քրդերի մոտ) շարունակում էր մեռածի դիակի վրա Ղուրան կարդալ, իսկ շեյխը (քուրդ եզդիների մոտ) դուալեր երգել։ Մեռելին մի օր թողնում էին տանը, հաջորդ օրը փորում գերեզմանը և «դավքոլների» համար իբրև քելեխ ոչխար էին մորթում։ Մեռելին, եթե կին էր, հոգևորականի կինն էր լողացնում, իսկ եթե մեռելը տղամարդ էր, տղամարդ հոգևորականն էր լողացնում, որից հետո հագցնում էին պատան, դեմքի վրա մի անցք բաց թողնում և խմբով տանում թաղելու։ Նշանավոր մարդկանց թաղում էին «քոսալով»։

Մեռելը թաղելուց, գերեզմանի վրա Ղուրան ու դուալեր ասելուց հետո հուղարկավորները վերադառնում էին մեռածի տուն։ Մեռելի տանը այցելում էին հարևանները (երեք օր), ուշ երեկոյան «սարխոշի» տալով մեռածի ցեղակիցներին, տան անդամներին և հեռանում։

[1] Ե. Լալայան, Ջավախք, «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1897, էջ 197։

Մեռել թաղելու օրը, երեկոյան, այն կամին, կամ տախտակին, որի վրա լողացրել էին մեռելին, դնում էին այն պղինձը, որի մեջ տաքացրել էին մեռելը լողացնելու ջուրը։ Պղնձի վրա դնում էին մի ճրագ և վառ պահում մինչև առավոտ։ Թե՛ կնոջ, թե՛ տղամարդու և թե՛ երեխայի գերեզմանի վրա ամբողջ երեք օր, երեկոները կրակ էին վառում։

Գերեզմանի վրա կրակ վառելը չպետք է բացատրել միայն ժողովրդի անիմիստական հայացքներով, որ մեռելի հոգին այն աշխարհում, բացի ջրից և կենսական այլ պիտույքներից, պետք է ունենար նաև կրակ։ Ծերունիների բացատրությամբ, գերեզմանի վրա կրակը էին վառում նաև նրա համար, որպեսզի գիշատիչ կենդանիները դիակը չհանեն։ Քուրդ եզդիների մոտ գերեզմանը այնպես էին փորում, որ մեռածի դեմքը ուղղվեր դեպի արևելք։ Այս հանգամանքը աղերսվում է արևի պաշտամունքի հետ։ Մահմեդական քրդերի մոտ գերեզմանը փորում էին հարավից հյուսիս, այնպես, որ մեռածի դեմքը ընկներ դեպի հարավ՝ Մեքքա—Մեդինա։

Մեռելին թաղելուց հետո հուղարկավորները գնում էին մեռածի տուն և «նանե դավքոլա» (հոգեհաց) ուտում։ Ուտելուց հետո մոլլան Ղուրան էր կարդում սեղանի վրա, իսկ շեյխը դուալեր երգում և ողորմի տալիս հանգուցյալի հոգուն, հավերժ հանգստություն ցանկանում նրա ոսկորներին, ու դրանով վերջանում էր ամեն ինչ։ Թաղումից մի քանի օր հետո մեռելի տերը կանչում էր մոլլային կամ շեյխին և հանձնում նրան մեռելի հագուստները։ Մի տարի հետո տալիս էին երկրորդ հոգեհացը, որը կոչվում է «խեր»։

Ըստ Լաչինի քրդերի, արդար մարդկանց հոգիները հոգեառ հրեշտակի առաջնորդությամբ մտնում են դրախտ, իսկ մեղավորներինը՝ դժոխք։ Դրախտում հոգիներն ուտում են, խմում, իրենց լավ են զգում, դժոխքում այրվում են կուպրե կարասի մեջ և տանջվում հավիտյանս հավիտենից։ Որպեսզի թե՛ դրախտի և թե՛ դժոխքի հոգիները գոհ մնային, մեռածների ընտանիքների անդամները նրանց բաժին ճաշը, հացը, գաթան, միրգն ու ջուրը տանում էին գերեզմանատուն և բաժանում աղքատներին։ Առաջին պատառը տալիս էին նահապետի գերեզմանի վրա և ապա անցնում մյուսների գերեզմաններին։

Ինչպես ասացինք վերը, քրդերը մեռածներին մեծ մասամբ թաղում էին բարակեն գերեզմանատներում, իրենց բարեկիցների

կամ արենակիցների կողքին։ Նրանք, հատկապես քուրդ եզդիները, հանդուցյալի գերեզմանաքարի վրա մակագրություններ չէին անում։

Ազգագրական այս փաստերը ցույց են տալիս, որ քրդերի մեջ հիվանդության, բժշկության, մահվան և թաղման վերաբերյալ սովորությունները շաղկապված են կրոնական, անիմիստական հայացքներով, հոգու անմահության մասին ունեցած գաղափարով։

Անիմիստական աշխարհայեցողությունը, որը, ինչպես հայտնի է, առաջ է եկել նախնադարյան տոհմային հասարակության մեջ այն բանի հետևանքով, որ մարդն ի վիճակի չի եղել գիտականորեն բացատրել իրեն շրջապատող բազմազան երևույթները, հետագայում հիմք է հանդիսացել կրոնի զարգացման համար։

Այնպես որ ընտանեկան պաշտամունքների՝ իբրև պաշտամունքների մի մասի, արմատները պետք է փնտրել նախնադարյան հասարակության ընդերքում, պաշտամունքներ, որոնց էությունը ամեն տեղ, բոլոր ցեղերի ու ժողովուրդների մեջ, վերջին հաշվով, հանգում են անիմիստական աշխարհըմբռնման։

«Բնությունից և մարդուց դուրս,—գրում է Ֆ. Էնգելսը,— չկա ոչինչ և այն բարձր էակները, որոնք ստեղծված են մեր կրոնական երևակայությամբ, միայն սեփական էության երևակայության արտացոլումներն են»[1]։

Գիտականորեն բացատրելով մի կողմից բնական և հասարակական երևույթները, մյուս կողմից կրոնական աշխարհայեցողության առաջացման պատճառները, դրանով իսկ մարքսիզմը վաղուց արդեն հերքել է այս աշխարհայեցողության սնանկությունը։

Այսպիսով, նախասովետական շրջանում անդրկովկասյան համարյա բոլոր քրդերը խարխափում էին տգիտության խավարի մեջ, կենցաղի տեսակետից հետամնաց և ճնշման ու շահագործման ենթակա՝ թե՛ օտար և թե՛ սեփական բռնակալների կողմից։

[1] Ֆ. Էնգելս, Լյուդվիգ Ֆոյերբախը և գերմանական կլասիկ փիլիսոփայության վախճանը, Երևան, 1948, էջ 18։

Քուրդ ուսանողուհի

ՄԱՍՆ II

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՔՐԴԵՐԻ ԿԵՆՑԱՂԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

ՆՍՏԱԿԵՑՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան անցյալի դաժան պայմաններից՝ օտար և սեփական ճնշողներից, տգիտության խավարից փրկեց քրդերին։ Քուրդ աշխատավորությունը ամբողջովին ազատվեց ցարական բռնապետների, աղա-բեկերի և մյուս դատույամանդների ու ցեղապետների շահագործումից։

Անդրկովկասում սովետական կարգեր հաստատվելուց հետո, քոչվորները սկսեցին աստիճանաբար անցնել նստակեցության։ Նրանք Սովետական պետությունից ստանալով հող, սկսեցին զբաղվել երկրագործությամբ։ Նստակեցության անցնելու պրոցեսն արագացնելու գործում մեծ դեր խաղաց քուրդ աշխատավորությանը գյուղատնտեսական կոոպերացիայի սիստեմի՝ հողօգտագործական արտելների, վարկային ընկերությունների, «ՓՕԿ»-երի, չքավորական խմբակների մեջ ընդգրկելը։ Սերմացու, լծկաններ, երկրագործական գործիքներ ձեռք բերելու և նոր բնակարաններ կառուցելու համար վարկային ընկերությունները վարկավորում էին չքավոր ընտանիքներին, «ՓՕԿ»-երը .նյութական անվերադարձ օգնություն էին ցույց տալիս նրանց։ Դրա համար Սովետական Հայաստանի քրդերի մեջ «ՓՕԿ»-երի մասին տարածված էր հետևյալ ասացվածքը՝ «ՓՕԿ բավե քլասիրանա» (ՓՕԿ-ը չքավորների հայրն է)։

Չքավորական կոմիտեները բազմազան ձևերով օգնում էին չքավոր ընտանիքներին։ Այն տնտեսությունները, որոնք զուրկ էին

անասուններից, ապահովված էին թե՛ խոշոր և թե՛ մանր անասուններով, լավ հողամասերով և արոտավայրերով:

Չնայած այդ միջոցառումներին, քրդական գյուղի հարուստները, «ակսակալները» աշխատում էին քուրդ աշխատավորության վրա պահպանել իրենց ազդեցությունը: Այս երևույթը զգալիորեն արտահայտվեց անտեսության ասպարեզում և հասարակական կյանքում հատկապես 1921—1929 թթ.: Այդ տեսակետից հետաքրքիր են քուրդ կուլակների գործադրած հնարքները իրենց չքավոր պառամաճների և բատրակների նկատմամբ: Կուլակները բարեկամական, տոհմակցական կապերի անվան տակ երբեմն իրենց ազդեցության տակ էին դցում պաժաժ և ոչ-պաժաժ ծառաներին ու մյուս չքավորներին, ուղղակի կամ անուղղակի միջոցներով ստիպելով նրանց չմտնել գյուղկոոպերացիայի սիստեմի մեջ:

Քրդական հետամնաց գյուղերում, բացատրական-դաստիարակչական աշխատանքները թույլ տարվելու հետևանքով, կուլակներին երբեմն հաջողվում էր հասնել իրենց նպատակին: Սակայն այս երևույթը երկար չտևեց: Հետագայում, երբ ավելի ծավալվեցին ագիտացիոն-բացատրական աշխատանքները չքավորների և բատրակների մեջ, վերջիններս սկսեցին գիտակցել իրենց դասակարգային շահերը, դրան զուգընթաց Սովետական իշխանության կողմից հետզհետե սահմանափակվեցին կուլակության տնտեսական հնարավորությունները, իսկ հետագայում այն վերացվեց իբրև դասակարգ:

Պարտիական և կոմերիտական կազմակերպությունները, գյուղատնտեսական բանվորների արհմիության կոմիտեները (բատրակկոմները) եռանդուն կերպով աշխատում էին քրդական գյուղերում, նրանց ներկայացուցիչները հաճախ լինում էին քուրդ աշխատավորների օբաներում, նրանց մեջ քաղաքական, բացատրական լայն աշխատանք էին տանում: Մեծ պայքար էր մղվում քրդական հին կենցաղի և վնասակար սովորությունների՝ վրիժառության, գլխագնի, դեռահասների և անհավասար ամուսնության, անգրագիտության և հասարակական վնասակար այլ երևույթների դեմ: Չնայած հետևողականորեն տարվող այս բոլոր աշխատանքներին և Սովետական իշխանության նյութական օժանդակությանը բատրակային, չքավորական ընտանիքներին, այնուամենայնիվ, քրդերի կյանքում գոյություն ունեցող ցեղատոհմային հարաբերությունների մնացուկները հաճախ արգելք էին հանդիսանում գյուղում տարվող սոցիալիստական շինարարության աշխատանքներին: Սակայն այդ արգելքները աստիճանաբար հաղթահարվում էին:

Քուրդ հարուստներն իրենց շահագործողական արարքները ծածկելու համար դիմում էին զանազան սուտ միջոցների: Եթե մինչ այդ աղան, բեկը կամ մի այլ հարուստ իր մոտ իբրև ծառա էր պահում նաև այլ ցեղի անդամներից, գյուղում տարվող լայն բացատրական աշխատանքներից և բատրակկոմների ուժեղանալուց հետո նրանք պահանջեցին ըստ աշխատանքային օրենսդրության իրենց հետ կնքել աշխատանքային պայմանագիր: Դա ձեռնտու չլինելով շահագործողներին, սրանք դիմեցին այլ միջոցների: Այս անգամ չնչին վարձով նրանք վարձում էին իրենց ազգականներին, թաքցնելով շահագործման մանրամասնությունները:

Բայց այս երևույթը երկար չտևեց, 1927—1929 թթ. չքավորական ընտանիքների մեծ մասը արդեն մտել էր հողօգտագործական արտելների մեջ, դրա հետևանքով ցեղական և պամամական հարաբերությունների մեջ մեծ փոփոխություններ էր առաջ եկել: Գյուղում չքավորները, բատրակները այս անգամ ոչ թե առաջվա պես ծածկում էին իրենց շահագործվելու երևույթը պաժաժ կուլակների կողմից, այլև նրանք բատրակկոմներին, պարտիական և կոմերիտական կազմակերպություններին հայտնում էին կուլակների կեղծիքները, պայքարում դրանց դեմ, դրա համար էլ այդ ժամանակ հարուստներն սկսեցին իրենց «խուլամներին» անվանել «համամներ», «ժը ույա խո գարքյարը» (ճանապարհից դուրս եկածներ):

Քրդաբնակ գյուղերում աստիճանաբար շատանում էր հողօգտագործական արտելների քանակը, որտեղ գլխավորապես համախմբվում էին չքավորական ընտանիքները:

Կառավարությունը սկզբնական շրջանում գյուղի լավագույն հողամասերը, արոտավայրերն ու ոռոգման ջուրը տալիս էր հողօգտագործական ընկերություններին: Այնուհետև գյուղի ամբողջ հողը առհավետ հանձնվեց կոլտնտեսությունների օգտագործմանը: 1927 թվականից հետո միջակներից շատերը մտան կոլեկտիվ տնտեսությունների մեջ, այնպես որ 1928 թվականից մինչև 1934 թվականը անդրկովկասյան քրդերի ճնշող մեծամասնությունը արդեն զբաղվում էր հողագործությամբ, մյուսները օրեցօր վերջ էին տալիս քոչվորական և կիսաքոչվորական կյանքին, մտնում կոլտնտեսությունների մեջ և նստակյաց, բարեկեցիկ կյանքի հիմքն էին դնում:

Կոլտնտեսություններին սկսեցին սպասարկել մեքենատրակտորային կայանները: Քրդական գյուղերում պրիմիտիվ արորի փո-

խարեն սկսեցին գործել տրակտորն ու կոմբայնը, շարքացանն ու կալսիչը, խոտհնձող և երկրագործական այլ մեքենաներ, որոնք վարում էին սովետական օրով ստեղծված քուրդ կադրերը:

Քրդական գյուղում սկսվեց արմատական վերափոխման պրոցեսը: Քուրդ աշխատավորությունը միաժամանակ ակտիվորեն մասնակցում է սովետական երկրի հասարակական և կուլտուրական կյանքին. Սովետական Միության մյուս ժողովուրդների հետ հավասար կերպով օգտվում ՍՍՌՄ Կոնստիտուցիայով սահմանված իրավունքներից և պարտականություններից:

Առաջավոր շատ քրդեր պարտիականներ և կոմերիտականներ են, նրանցից շատերը որպես գյուղի և քաղաքի աշխատավորների դեպուտատներ մասնակցում են սովետների աշխատանքներին, ժողդատարանների անդամներ են և ակտիվորեն մասնակցում են երկրի կառավարման գործին: Այսպես՝ քուրդ ժողովրդի զավակներից Ջերիկ (Ջեռկա) Պոլատբեկովը 1918 թ. Կենտրոնական Սիբիրում եղել է ժողովրդական կոմիսարների Խորհրդի նախագահ. Սովետական Միության Հերոս Սամանդ Սիաբանդովը ՍՍՌՄ Գերագույն Սովետի դեպուտատ է, Հայկական ՍՍՌ Գյուղատնտեսության մինիստրի տեղակալ, Նադո Խդո Մախմուդովը Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի դեպուտատ է և Հայկական ՍՍՌ Թեթև արդյունաբերության մինիստրության վարչության պետ, Սուլեյման Ռահիմովը Ադրբեջանի Սովետական գրողների միության վարչության նախագահն է և այլն: Բազմաթիվ են կոլտնտեսային արտադրության առաջավոր քուրդ տղամարդիկ և կանայք, որոնցից էլ հենց ընտրվում են կոլտնտեսությունների վարչությունների անդամներ և նախագահներ, առաջադրվում բրիգադավարներ և ֆերմաների վարիչներ: Բազմաթիվ քուրդ երիտասարդներ բարձրագույն կրթություն են ստանում Երևանում, Բաքվում, Թբիլիսիում, Մոսկվայում, Լենինգրադում և այլուր, սովորում են ասպիրանտուրաներում զանազան մասնագիտությունների գծով, դառնում են ուսուցիչ, բժիշկ, գյուղատնտես, զոոտեխնիկ և այլ մասնագետներ: Բազմաթիվ են ֆաշիստական հորդաների դեմ մարտնչած քուրդ ժողովրդի զավակները:

Սովետական ժամանակաշրջանում քրդերի տնտեսական, հասարակական ու կուլտուրական կյանքում կատարված արմատական վերափոխություններին համապատասխան վերակառուցվում են քըրդերի ներքին կյանքն ու կենցաղը:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՔՐԴԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Ա. ԸՆՏԱՆԻՔԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Սովետական քրդական ընտանիքի հիմնական եկամուտը ստացվում է գյուղատնտեսությունից: Ներկայումս քրդարնակ բոլոր շըրջաններում զարգացած է թե՛ երկրագործությունը և թե՛ անասնապահությունը: Սակայն տնտեսության որոշ ճյուղեր, որ կարելի է հաջողությամբ զարգացնել, դեռևս, հին նախապաշարմունքների որոշ կենսունակության հետևանքով, դանդաղ են զարգանում: Հին սովորությամբ, քրդերի մի զգալի մասը, հատկապես ավագ սերունդը, խուսափում է խոզաբուծությամբ զբաղվելուց: 1951 թ. Ապարանի շրջանի Փոքր Ջամուշլու գյուղում, պլանի համաձայն, կոլտնտեսությունը աճեցրել էր խոզեր, սակայն դրանց մեծ ամբողջությամբ հանձնվեց պետական պարտավորության դիմաց, քանի որ այն քուրդ գյուղացիները չեն օգտագործում: Ընդ որում, եթե խոզաբուծությունից խուսափելը կապված է կրոնական նախապաշարումների հետ, ապա թռչնաբուծությամբ և մեղվաբուծությամբ չպարապելը այն բանի հետևանք էր, որ այդ կուլտուրան անցյալում քրդերը չեն ունեցել: Սակայն, թե՛ առաջինը և թե՛ վերջինները հետզհետե սկսում են մուտք գործել քրդական տնտեսության մեջ:

Սովետական քրդերի կյանքում նորամուծություն են հանդիսանում բամբակագործությունն ու բանջարաբուծությունը, որոնցով զբաղվելը նախկինում ամոթ էր համարվում: Ներկայումս կլիմայական համապատասխան պայմաններում գտնվող քրդական գյուղերի կոլտնտեսությունները հաջողությամբ սկսել են զբաղվել այս կուլտուրաների մշակությամբ:



Քրդուհի կոլտնտեսականուհիները բամբակ քաղելիս (Հոկտեմբերյանի շրջան)

Շահումյանի շրջանի քրդական բոլոր գյուղերի, իսկ Ապարա-
նի շրջանի որոշ գյուղերի բնակիչներ աճեցնում են բանջարեղենի
բազմաթիվ տեսակներ: Բասարգեչարի շրջանում բնակվող քրդերը
մշակում են ծխախոտ, Հոկտեմբերյանում՝ բամբակ:

Կարտոֆիլի մշակումը Ապարանի շրջանում լայն տարածում է
գտել: Այս շրջանի կոլտնտեսությունները այժմ ցանում են «Լորխ»
տեսակի կարտոֆիլ, որի բերքատվությունը տեղականի համեմա-
տությամբ երկու անգամ բարձր է: «Լորխ» կարտոֆիլ աճեցնե-
լու փորձը Ապարանի քրդերը սովորեցին Սանիխանյանի շրջանի
հայերից, որոնք առաջինը Հայաստանում հիմք դրին բարձր բեր-
քատու այդ տեսակին: Այժմ քրդերը զբաղվում են նաև բրնձի
մշակությամբ: Քրդական շատ կոլտնտեսություններ, ինչպես, օրի-
նակ՝ Շահումյանի շրջանի Ներքին Նեջլու և այլ գյուղերի կոլ-
տնտեսությունները, բանջարեղենից, բամբակից և հացահատիկից
խոշոր եկամուտներ են ստանում: Նրանց մոտ տարեց-տարի աճում
է բերքատվությունը:

Շահումյանի շրջանի Ն. Նեջլու գյուղի Ալիգրեկովի անվան
կոլտնտեսության գյուղատնտեսության առաջադիմությունը 1949—
1952 թթ. արտահայտվում է հետևյալ ցուցանիշներով:

Կոլտնտեսության աշնանացան ցորենի ցանքատարածությու-
նը 1949 թ. եղել է 122 հեկտար, յուրաքանչյուր հեկտարից միջին
հաշվով ստացվել է 6,7 ցենտներ բերք, իսկ 1952 թ. աշնանացան
ցորենի ցանքատարածությունը կազմել է 180 հեկտար, յուրաքան-
չյուր հեկտարից՝ 10,5 ցենտներ:

1949 թ. բրնձի ցանքատարածությունը կազմել է 35 հեկտար,
յուրաքանչյուր հեկտարից ստացվել է 17 ցենտներ բերք: Սակայն
1952 թվականին, մալարիայի դեմ պայքարելու նպատակով, կառա-
վարության որոշմամբ կոլտնտեսությունը պակասեցրել է բրնձի
ցանքատարածությունը, այնուամենայնիվ, 1952 թվականին ցան-
ված 8 հեկտար հողամաս, ամեն մի հեկտարից կոլտնտեսությունն
ստացավ 21,6 ցենտներ բերք:

1949 թ. բանջարանոցային կուլտուրաների ցանքատարածու-
թյունը կազմել է 27 հեկտար, յուրաքանչյուր հեկտարից ստացվել է
24,2 ցենտներ բերք: 1952 թ. ցանված 35 հեկտար հողը պարար-
տացնելու և լավ մշակելու շնորհիվ հեկտարից ստացվել է 59,4
ցենտներ բերք:

Համեմատած 1949 թվականի հետ, 1954 թվականին պտղա-
տու այգիների տարածությունը քիչ է ավելացել, սակայն բերքա-

305–8

տվությունը բարձրացել է 8 անգամ: Խաղողի այգիների տարածությունը չի ավելացել, բայց այգիները լավ մշակելու շնորհիվ բերքատվությունը նույն ժամանակում ավելացել է երեք անգամ:

Ն. Նեջրլու գյուղի կոլտնտեսությունը աչքի ընկնող հաջողություններ է ձեռք բերել նաև անասնապահության գործում: 1949 թ. կոլտնտեսությունն ուներ 229 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, որից կով՝ 43, բանող անասուն 40 գլուխ, մանր եղջերավոր անասուն՝ 653 գլուխ, որից 634 ոչխար, այծ 19 գլուխ: Կոլտնտեսությունը ուներ նաև 11 ձի: 1952 թվականին բավականաչափ ավելացել էր անասունների գլխաքանակը և բարձրացել մթերատվությունը: 1952 թ. կոլտնտեսությունն արդեն ուներ 425 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, որից կով՝ 85, բանող անասուն՝ 83, մանր եղջերավոր անասուն՝ 834, որից ոչխար՝ 808, այծ՝ 26, իսկ ձիերի թիվը հասել էր 22-ի: 1952 թ. առաջին անգամ Ն. Նեջրլու գյուղում հիմք է դրված մեղվաբուծությանը: Կոլտնտեսությունն ունի 60 մեղվաընտանիք: Կոլտնտեսային ֆերմաներն ազնվացնում են անասունների ցեղը: Հատկապես աճել է ֆուրաժային կովերի քանակը, որոնցից յուրաքանչյուրը օրական տալիս է 15—20 լիտր կաթ: Կոլտնտեսությունն ունի նաև արհեստանոցներ (դարբնոց, հյուսնոց), ավտոմեքենաներ, սայլեր, գյուղատնտեսական այլ գույք:

Ն. Նեջրլուն փոքր գյուղ է, բաղկացած ընդամենը 85 ծխից, սակայն, ինչպես տեսնում ենք, նա հասել է զգալի հաջողությունների: Կոլտնտեսությունը հաջողություններ ունի նաև բամբակենու մշակման, շինարարության և այլ ասպարեզներում:

1952 թ. կոլտնտեսությունն ստացել է 1.896.521 ռ. դրամական եկամուտ: Նույն թվականին մեկ աշխօրի դիմաց կոլտնտեսականներն ստացել է 9 ռուբլի դրամ, 5 կիլոգրամ ցորեն, խաղող, յուղ, պանիր և այլն: Նույնը կարելի է ասել քրդական մյուս կոլտնտեսությունների մասին:

Ապարանի շրջանի Ալագյազ, Փոքր Ջամուշլու գյուղերի կոլտնտեսականները 1953 թվականին յուրաքանչյուր աշխօրի դիմաց ստացել են 11 կիլոգրամ հացահատիկ: Լաչինի շրջանի Մինքենդ գյուղի կոլտնտեսականները 1955 թվականին յուրաքանչյուր աշխօրի դիմաց ստացել են 7 կիլոգրամ ցորեն, իսկ Թալինի շրջանի Հակկո, Սաբիկ, Գյալթո, Թըլըք գյուղերի կոլտնտեսականները՝ 3—7 կիլոգրամ ցորեն, 7—10 ռուբլի դրամ, յուղ, պանիր, ձեթ և այլն: Կան կոլտնտեսություններ, որոնք լայն հնարավորություններ ունեն զարգացնելու բանջարաբուծությունը, պտղաբուծությունը, թռչնա-

բուծությունը և մեղվաբուծությունը: Սակայն այդ հնարավորությունները դեռևս լավ չեն օգտագործվում, որի հետևանքով նրանց եկամուտները դանդաղ են աճում: Այդպիսի կոլտնտեսությունների թվում են Լաչինի շրջանի Աղջաքենդ, Թալինի շրջանի Գյալթո, Բասոժ, Ապարանի շրջանի Ղուրբողազ և այլ կոլտնտեսություններ: Կան կոլտնտեսություններ, որոնց վարչությունները ուշադրություն չեն դարձնում նաև հանրային անասնապահության համար կերի կայուն բազա ստեղծելու վրա:

Անասնակերի համար արդյունավետ է սիլոսի պատրաստման գործը կոլտնտեսություններում, մի բան, որի մասին նախկինում քրդերը գաղափար չունեին: Այժմ անասունների համար սիլոսի պատրաստումը սովորական երևույթ է դարձել: Սակայն որոշ գյուղերում սիլոսի պատրաստումը դեռ լայն տարածում չի գտել:

Անասնապահության զարգացման համար և կոլեկտիվ տնտեսությունների եկամուտների տեսակետից մեծ նշանակություն ունեն արոտավայրերը: Նախասովետական շրջանում արոտավայրերը կենտրոնացված էին աղաների ու բեկերի և մյուս շահագործողների ձեռքում: Սովետական օրով այդ արոտավայրերը հանձնվեցին կոլեկտիվ տնտեսությունների տնօրինմանը: Արոտավայրերը լավ օգտագործելու և հանրային հոտը լավ խնամելու շնորհիվ, քրդաբնակ մի շարք շրջաններում (Ապարան, Արտաշատ) վերջին երկու տարիներին, նախորդ տարիների համեմատությամբ, անասունների կաթնատվությունը բարձրացել է մինչև 150 տոկոսով: Զգալիորեն պակասել է անասունների կորուստը, իջնում է ստերջության տոկոսը:

Ձեռք բերված հաջողությունները ամրացնելու համար, կոլտնտեսությունները սովորել են դեռ վաղ գարնանից սկսած լավ կազմակերպել արոտը, օգտագործելով հնարավորությունները՝ Ծաղկունյաց, Լաչինի լեռների, Աղմաղանի, Արագածի հարուստ արոտավայրերը: Լաչինի շրջանում լայնորեն արմատավորվել է արածեցման հերթափոխային կամ վանդակային ձևը: Այդ սիստեմի առավելությունն այն է, որ արոտավայրը բաժանվում է առանձին մասերի և օգտագործվում հերթականորեն, նկատի ունենալով տվյալ արոտավայրի դիրքը, տեղը, ջրովի կամ անջրդի լինելը և այլն: Այդ սիստեմի կիրառումը հնարավորություն է ընձեռում ամբողջ ամառը հոտն ապահովել կանաչ կերով:

Արոտավայրերի օգտագործման այս ձևը գործադրում են Լաչինի, Ապարանի և Թալինի քրդաբնակ գյուղերը: Արոտավայրերը հերթականությամբ օգտագործելու նպատակով ամեն տարի կոլտն-

տնտեսությունների նախագահներից, մասնագետներից, ֆերմաների վարիչներից, հողաշինարարներից և հովիվներից կազմվում են հանձնաժողովներ, որոնք վաղ գարնանը լինում են տեղերում, ուսումնասիրում արոտավայրերը և դրանք բաժանում առանձին վանդակների: Հակառակ այս սկզբունքի, Թալինի շրջանի քրդական որոշ կոլտնտեսություններ վանդակի բաժանված արոտավայրերը

Շահումյանի շրջանի 18-րդ պարտհամագումարի անվան կոլտնտեսության առաջավոր կթվորուհի Ֆիդանա Մրազը կովը կերակրելիս

հաճախ օգտագործում են հին եղանակով, այդ պատճառով արդյունքը քիչ է լինում:

Կոլտնտեսությունները անասունների ամառային արոտը լավ կազմակերպելու նպատակով ձեռք են առնում նաև այլ միջոցներ: Հոտը համապատասխան արոտավայր տեղափոխելու ժամանակ գործադրում են զոոանասնաբուժական զննման ու նախազգուշական մշակման միջոցառումներ, որպեսզի կանխեն հիվանդությունները:

Անասունների առողջության և կաթնատվության համար մեծ նշանակություն ունի նրանց ջրով ապահովելու խնդիրը: Կոլտնտեսությունները ժամանակին կարգի են բերում ջրելատեղերը և կառուցում տաշտակներ, որպեսզի անասուններին ջուր մատակարարվի մաքուր վիճակում: Կաթնատվությունը բարձրացնելու նպատակով, առաջավոր անասնապահների փորձը նկատի ունենալով, ամառային արոտի շրջանում ավելացնում են կերաբաժինը:

Ապարանի շրջանի Ջարջառիս գյուղի կոլտնտեսության կթվորուհի Շուրան փորձ է արել կովերին օրական երեք անգամ կթել և նա համեմատաբար շատ կաթ է ստացել: Մյուս կթվորուհիները նույնպես հետևում են Շուրայի օրինակին: Այսպիսով, հետզհետե արմատանում է կովերի երեք հերթի կիթը:

Շուրան Ապարանի ամբողջ բնակչության մեջ հայտնի է իբրև առաջավոր կթվորուհի: Այս շրջանում կան բազմաթիվ այլ կթվորուհիներ ու անասնապահներ, որոնք անասնապահության մթերատվության ասպարեզում իրենց կատարած լավ աշխատանքների համար արժանացել են կառավարական պարգևների: Անասնապահության գործում ձեռք բերած բարձր ցուցանիշների համար Սոցիալիստական Աշխատանքի Հերոսի կոչման են արժանացել Նախիջևանի ԱՍՍՌ Նախիջևանի շրջանի Սուս գյուղի կոլտնտեսականներ Ղաղնաֆարև Նաղին, Ղասմե Հուսեյնը, Նաբիև Թամոն և ուրիշներ:

Նախկինում, նախապաշարված քրդերի համար, ինչպես բնության բազմաթիվ այլ երևույթներ, կաթը ևս սուրբ է համարվել: Կաթի հետ վարվում էին զգուշաբար, իսկ նոր ծնած անասունների կաթը դուրս տալը մեղք էր համարվում: Կաթը մշակվում էր պրիմիտիվ եղանակով, նրա մշակման պրոցեսում քրդուհիները գործադրում էին մոգական բազմաթիվ միջոցներ:

Այժմ կոլտնտեսություններում կաթի մշակման գործում մի շարք նորամուծություններ են կատարվել: Լայն տարածում են ստացել կաթնաչափ դույլերը և կովկիթները, սերզատները, սառցարանները և այլ սարքավորումներ: Որոշ կոլտնտեսություններում (Ապարանի շրջանի Բոքբուլաղ, Լոչինի շրջանի Վերին Ջերմի, Թալինի շրջանի Բասոժ և այլն) նորամուծությունները, այնուամենայնիվ, դեռևս շատ քիչ են: Սերզատի օգտագործումից բացի, կաթի վերամշակումը հնից քիչ բանով է տարբերվում: Եթե նախկինում կաթը տաքացնում էին փոքր կաթսաների մեջ, այժմ անասնապահական ֆերմաներում օգտագործում են մեծ տարողությամբ (20—25 դույլանոց) կաթսաներ: Եթե առաջ մածունը հարում էին կավե կամ փայտե խնոցիներում, այժմ որոշ տեղերում հարում են նաև տակառաձև մեծ խնոցիներում: Այժմ գործ են ածում շրդանից պատրաստված մերան՝ պանիր պատրաստելու համար: Յուղը ստանում են հում սերից կամ մածնից:

Մերանը պատրաստում են հետևյալ ձևով՝ վերցնում են խոշոր եղջերավոր անասունների շրդանը կամ նրա լորձաթաղանթը, դնում պանրի սրջուկի մեջ, հետո սրա վրա լցնում երկու բաժակ մաքուր ջուր, հետը խառնում քիմիական որոշ նյութեր: Այս նյութերի մեջ 16 օրվա ընթացքում շրդանը կոնսերվանում է և ապա մերանը պատրաստ է լինում:

Բացի կոլտնտեսային կաթնամշակման կետերից, քրդական որոշ գյուղերում գործում են նաև պանրագործարաններ (Արթիկի րջանի Բարվանասրա, Ապարանի շրջանի Ալագյազ գյուղեր), որտեղ պատրաստում են «թուշի», «ռոկֆոր», «մոթալ» և այլ տեսակի պանիրներ:

Քրդական բոլոր կոլտնտեսություններում աշխատանքի բաժանման տեսակետից հետաքրքիրն այն է, որ տրադիցիոն կերպով միմիայն կանայք են կատարում կաթնամշակման աշխատանքները (ոչխար, կով կթելը, կաթ տաքացնելը, մածուն մերելն ու հարելը, յուղ, պանիր պատրաստելը և այլն), իսկ տղամարդիկ միմիայն անասուններ են խնամում: Կթելը, մածուն, յուղ ու պանիր պատրաստելը տղամարդկանց համար ամոթ է համարվում: Համարյա վերջ է տրված կաթնամշակման հետ կապված աղոթքներին, սնահավատությանը և նախկինում գործադրած կախարդական միջոցներին:

Քրդուհին գրագետ է, բացի այդ նա տեսնում է, որ մեքենաների միջոցով կաթ մշակելը ավելի արդյունավետ է: Այդ պատճառով անցյալի նրա պատկերացումները ոգիների գոյության մասին կորցրել են իրենց սնող հողը: Այժմ կոլտնտեսական քրդուհու համար ըմբռնելի է, որ ոչ թե երևակայությամբ ստեղծած ոգիների ու մոգական միջոցների շնորհիվ է ավելանում կաթը, անասունների մթերատվությունը, այլ դա ձեռք է բերվում արոտատեղիների, անասնաբուծության լավ հիմքերի վրա դնելու և նորագույն մեթոդներով, նոր տեխնիկայի օգնությամբ կաթնամթերքները մշակելու միջոցով:

Բացի կոլտնտեսությունից ստացած բարիքներից, ընտանիքի եկամտի մյուս աղբյուրը տնամերձ հողամասն է և անձնական սեփականություն կազմող անասունները: Լաչինի քրդերի մի մասը տնամերձ հողամասը անվանում է «թաղա ռուֆատ», մյուս մասը՝ «ավերի»: Հայաստանի Արտաշատի շրջանի քրդերը գործ են ածում ադրբեջանական «տամերի» բառը: Ալագյազի և Թալինի շրջանի քրդերը փոխ են առել հայկական «տնամերձ» բառը, որը քրդերենում «ձ» հնչյունի բացակայության պատճառով հնչվում է «տնամերզ» տառադարձությամբ:

Բ. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Քրդական գյուղերի կոլտնտեսություններում մի շարք աշխատատար պրոցեսներ նույնպես մեքենայացված են: Արորի փոխարեն համարյա բոլոր գյուղերում այժմ օգտագործվում է տրակտորը: Լայն տարածում են ստացել նաև երկրագործական այլ մեքենաներ ու նոր գործիքներ:

Ապարանի շրջանի Ալագյազի ՄՏԿ № 2 բրիգադի տրակտորիստ Մաղուլե Ռաշոն վար անելիս

Ապարանի շրջանի թե՛ հայկական, թե՛ քրդական գյուղերին սպասարկում են Ծաղկահովտի, Ալագյազի ՄՏ կայանները, նույնպես է նաև մյուս շրջաններում, բացի Լաչինից: Լաչինի շրջանը, որը խիստ լեռնոտ է և տեղանքն էլ խիստ կտրտված, չունի ընդարձակ հովիտներ, ուստի և այստեղ բարդ գյուղմեքենաների ներդրումը արտադրության մեջ դժվարությամբ է կատարվում: Այդպես, ներկը դեռևս կատարվում է եզնաքարշ

գութանով, հունձը կատարվում է մանգաղով, հացահատիկը տեղափոխվում է սայլերով։

Կոլտնտեսային աշխատանքները կատարվում են արտադրական բրիգադների միջոցով։ 1932—1934 թթ., կոլտնտեսային բրիգադներ ստեղծելու շրջանում, բրիգադների անձնակազմի մեջ երբեմն մեծ մասամբ մտնում էին արենակից ազգամիներ, որոնք սերտ հարաբերությունների մեջ էին միմյանց հետ։ Այսպիսի բրիգադների անդամները մեծ մասամբ ապրում էին գյուղի մի թաղում։ Այս կապերի հիման վրա հաճախ տեղ էին գտնում կողմնապահությունը, անտարբերությունը, կոլտնտեսության ունեցվածքի հափշտակումը, վրիժառությունը և այլն։ Այս երևույթները խոչընդոտ էին հանդիսանում կոլտնտեսությունների զարգացմանն ու ամրապնդմանը։ 1935 թվականից հետո բրիգադները վերակառուցվեցին այն ձևով, որ դրանք սկսեցին կազմվել գյուղի տարբեր մասերի և տարբեր թաղերի անդամներից։ Դա զգալիորեն նպաստեց քրդական գյուղում նոր հարաբերությունների զարգացմանը։ Եթե մինչ այդ հնարավոր էր բրիգադի մեջ մտնող բարեկամ կոլտնտեսականների աշխատանքի չներկայանալու դեպքում նրանց աշխօր գրանցել կամ նման այլ զեղծումներ կատարել, ապա դրանից հետո նշանակալիորեն նման երևույթները սահմանափակվեցին։

Ավելի ուժեղացավ բրիգադի ղեկավարումը։ Աշխատանքից հեռացվում, պատժվում և փոխվում են կոլտնտեսությունների այն նախագահներն ու բրիգադավարները, որոնք թայֆաբազությամբ են զբաղվում, պաշտպանում իրենց արենակիցներին։ Կոլտնտեսությունների կազմակերպման սկզբնական շրջանում, քրդական որոշ գյուղերում բրիգադին «քոմ» էին անվանում, որոշ գյուղերում էլ դրանք կոչվում էին թաղերի անուններով, այսպես՝ «քոմա տայա» (տախացիների խումբ), «քոմա կորկոյա» (ծավարապաշտների խումբ), «քոմա Աթոյա» (Աթոյանների խումբ) և այլն։

Բրիգադների վերակառուցումից հետո, գրեթե վերացան նման անվանումները և բրիգադներն սկսեցին կոչվել իրենց արտադրական համարներով, իսկ այժմ հին անունները հիշվում են որպես մնացուկ։ Աշխատանքի լավ կազմակերպման շնորհիվ բարձրացել է կոլտնտեսությունների արտադրողականությունը, հետևապես շատացել են նրանց եկամուտները։

Բրիգադավարները սովորել են նպատակահարմար օգտագործել իրենց ուժերն ու միջոցները։ Ամբողջ տարվա մեջ բրիգադի կազմը գրեթե փոփոխության չի ենթարկվում, որը նպաստում է կարգապա-

հության ամրապնդմանը։ Բրիգադի անդամները աշխատանքի ընթացքում մտերմանում են միմյանց հետ, պայքարում կենցաղային վատ երևույթների, գործալքների ու ծույլերի դեմ։

Թե՛ կոլտնտեսային և թե՛ տնային աշխատանքի բաժանման ժամանակ դեռ որոշ դեր են խաղում հին սովորություններն ու ավանդույթները։ Այսպես, տնային աշխատանքները բացառապես կանայք են կատարում՝ հաց թխել, կերակուր եփել, գորգագործությամբ, ձեռագործությամբ զբաղվել, անասուններ կթել, կաթնամթերքներ մշակել, իսկ աղջիկները կերակուր են տանում կոլ-

Բաղը մանգաղով (Հաշին)

տնտեսային դաշտերը, տնային աշխատանքներում օգնում են իրենց մայրերին։

Դաշտային աշխատանքներին ակտիվ կերպով մասնակցում են նաև քրդուհիները։ Կոլտնտեսային դաշտերում նրանք փոցխ են անում, օգնում են դիզմանը, ավտոմեքենաների ու սայլերի բարձմանը և այլն։

Թե՛ կոլտնտեսության և թե՛ տնային դժվարին աշխատանքները կատարում են տղամարդիկ, նրանք մշակում են թե՛ կոլտնտեսության և թե՛ տնամերձ հողամասերը, հնձում են, դեզ անում, խոտն ու ծղոտը տեղափոխում, աղունը աղում, անասունները խնամում

և այլն: Երեխաները իրենց կարողության չափով նույնպես մասնակցում են կոլտնտեսային աշխատանքներին:

Բրիգադներում աշխատանքները ներկայումս հիմնականում բաժանվում են անդամների վրա՝ ըստ նրանց ուժերի և կարողության: Սակայն դեռ լինում են մեծահասակ մարդիկ, որոնք կառչելով հնին, դժվար են հրաժարվում բմրա-ցեղային սովորություններից: Նրանք դեռևս այն մտայնության են, որ իրենց ցեղակից բրիգադավարը առաջնություն պետք է տա իրենց, ուստի և այս կերպ տվյալ բրիգադավարը, նրանց կարծիքով, եթե այդպես չվարվի, նա «նամարդ» կհամարվի իր ազգականների նկատմամբ: Այս և նման այլ մնացուկային երևույթներ հետզհետե վերանում են կենցաղից և մարդկանց հոգեբանությունից: Սակայն այս ամենը մշակվում է տևական դաստիարակչական աշխատանքի, հնի և նորի մեջ տեղի ունեցող հարատև պայքարի միջոցով:

Աշխատանքային կարգապահությունն ամրապնդելու և արտադրողականությունը բարձրացնելու գործում մեծ դեր է կատարում սոցիալիստական մրցման արմատավորումը կոլտնտեսային արտադրության մեջ: Սովորաբար մրցման մեջ են մտնում առանձին կոլտնտեսականներ, բրիգադներ, կոլտնտեսություններ միմյանց հետ:

Չնայած դեռևս սոցմրցումը խոր չի արմատացել որոշ հեռավոր կոլտնտեսությունների մեջ, որն ավելի կնպաստեր փորձի լայն փոխանակմանը, այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ սոցմրցումը դարձել է կոլտնտեսային աշխատանքի կազմակերպման հիմնական մեթոդը:

Կոլտնտեսային դաշտավարական բրիգադները բերքատվությունը բարձրացնելու նպատակով գործադրում են մի շարք ագրոտեխնիկական միջոցառումներ՝ սերմացու հացահատիկը ախտահանում են, ցանում սերմացրիչ մեքենայով, կիրառում են ցանքաշրջանառություն, հանքային և տեղական նյութերով պարարտացնում են հողը: Մինչդեռ նախկինում հույսը դնում էին նախախնամության և մոգական միջոցների վրա, երաշտի դեպքում դիմում էին «թասա բարանե»-ի[1] օգնությանը:

[1] Երաշտի ժամանակ հոգևորականներից մեկը իր տանը թանկագին կտորների մեջ պահված պղնձե թասը հանում էր դուրս և աղոթում անձրևաբեր ոգիներին, որ նրանք թույլ տան անձրև գալու: Միևնույն ժամանակ նա դիմում էր համագյուղացիներին՝ աստծու և ոգիների սիրտը շահելու համար մատաղ ոչխար մորթելու: Գյուղացիները կատարում էին հոգևորականների պատվերը:

Լայն տարածում է ստացել նաև արհեստական ոռոգումը, որի համար ավելի լայն հնարավորություններ կստեղծվեն Թալինի ջրանցքի շինարարության աշխատանքներն ավարտվելուց հետո: Դրանով մշակելի կդառնա 12 հազար հեկտար տարածություն: Բրդարինակ շատ գյուղերի բնակիչներ (Թալինի շրջանի Սարանիշի,

Ապարանի շրջանի Փոքր Ջամշլու գյուղի կոլտնտեսության գյուղատնտես Լաթիֆե Ամարը ցորենի արտում:

Գյալթո, Զորա, Ապարանի շրջանի Ալագյազ, Ղոնղարազ, Արտաշատի շրջանի Ն. Նեջլու և այլն), որ անցյալում զուրկ էին նույնիսկ խմելու ջրից, ներկայումս ունեն ոչ միայն խմելու, այլև ոռոգման ջուր:

Քրդական սոցիալիստական գյուղի վերակառուցման շնորհիվ արմատապես վերափոխվում է նաև քուրդ աշխատավորի կենցաղն ու հոգեբանությունը:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՇԵՆՔԵՐ, ՀԱՆԴԵՐՁԱՆՔ, ՈՒՏԵԼԻՔ

Ա. ԳՅՈՒՂԱԿԱՆ ՇԵՆՔԵՐ

Սովետական շրջանում գյուղական շենքերը ևս զգալի փոփոխությունների են ենթարկվել: Կոլտնտեսականների բնակելի և օժանդակ տնտեսական շենքերը գտնվում են տնամերձ հողամասերում: Գյուղական բնակավայրերը հետզհետե վերակառուցվում են պլանային կարգով: Քրդերը կառուցում են քաղաքային տիպի լուսավոր սենյակներ (օթախ), երկհարկանի տները սկսել են

Մի տեսարան Ադրբեջանական ՍՍՌ Լաչին քաղաքից

տարածվել Լաչինում, Ապարանի շրջանի Ալագյազ գյուղում, այնուամենայնիվ գյուղերում դեռևս կանգուն են մնում բավականաչափ հնաձև տներ: Սրանց մի մասը վերափոխված է, մյուսները (ախոռ, քիլար, սրահ) դեռևս նույնությամբ մնում և օգտագործվում են:

Նոր բնակարաններ կառուցելիս քրդերն այլևս առաջվա պես նկատի չունեն պաշտամունքայինը՝ քուրդ եզդիների մոտ տան դռները դեպի արևելք, իսկ մահմեդական քրդերինը՝ դեպի Մեքքա—Մեդինա բաց անելու հանգամանքը: Վերացել է նախկինում գոյություն ունեցող այն նախապաշարմունքը, ըստ որի նոր տուն կառուցելիս ջանում էին ընտրել բարեբախտ տան տեղ, քանի որ, ըստ քրդերի, կային բախտավոր և անբախտ տեղեր: Ներկայումս բնակարան կառուցելիս հաշվի են առնվում տվյալ վայրի կլիմայական պայմանները և տեղանքը:

Տնամերձ հողամասերից ստացվող հացահատիկը ծեծելու համար տան առջևը կամ ետևը ընկած է կալը: Խոտի դեզը, ինչպես նաև քակորի ամրոցը գտնվում են տան կողքին: Գյուղացիների մեծ մասը վերջ է տվել տան առաջ գոմաղբ թափելու, «քաամա» գցելու սովորությանը: Հիմա քաամա գցում են, բայց տնից հեռու: Հացահատիկը, որ անցյալում բացառապես պահում էին հորերում, ներկայումս մեծ մասամբ պահում են շտեմարաններում: «Օդան», որ նախկինում գյուղացիների հիմնական հավաքատեղին էր, գրեթե ամբողջովին կորցրել է այդ ֆունկցիան, հենց ինքն՝ օդան, հետզհետե վերանում է:

Անցյալում քուրդն աշխատում էր տունը կառուցել իր արենակցի տանը կից, այնպես, որ քրդական համարյա բոլոր գյուղերը կառուցված էին ցեղա-տոհմական սկզբունքներով: Սովետական օրով, արենակցական-պատմական կապերի խիստ թուլացման հետևանքով, աստիճանաբար վերանում են ազգակցական թաղերը: Կոլտնտեսականները նոր բնակարանները կառուցում են իրենց հատկացված տնամերձ հողամասի վրա, որը կարող է մոտ կամ հեռու լինել ազգակիցներից: Որպես հետևանք այս ամենի, վերացել է նաև «դոլըկ»-ի անհրաժեշտությունը, ուստի և նորակառույց տներում այն բացակայում է:

Այժմ էլ քրդերն իրենց տնտեսական օժանդակ շենքերը (ախոռ, գոմ, մառան և այլն) կառուցում են բնակարաններին՝ թոնրատանն ու սենյակներին կից: Սրանց դռները մեծ մասամբ ինչպես նախկինում, այժմ էլ բացվում են տան ընդհանուր սրահի մեջ: Բացի Արտաշատի մի քանի գյուղերից, թե՛ Լաչինում, թե՛

Ապարանում, թե՛ Թալինում և թե՛ Կիրովաքարում նորակառույց բնակարանների պատերը շարվում են քարից, ծեփվում ցեմենտի և հողի շաղախով:

Արտաշատի շրջանի գյուղերում, որտեղ դժվար է քար ձեռք բերել, պատերը շարում են կավի ցեխից պատրաստված աղյուսներով: Որոշ փոփոխություններ են կատարվել օժանդակ տնտեսական շենքերի օգտագործման մեջ: Այսպես, անցյալում մարագում պահում էին հարդը և երկրագործական գործիքները: Ներկայումս անասնակերը՝ խոտն ու ծղոտը կոլտնտեսականները դարսում են դրսում՝ երկարավուն բուրգի ձևով, որը կոչվում է «լոգ»: Այսպիսով մարագների պահանջն ինքնըստինքյան վերանում է: Կոլտնտեսականների խրձից անմիջապես հացահատիկից զատված հարդը լցնում են հին մարագները, այդպիսին չունենալու դեպքում՝ տան աչքերից մեկն ու մեկում: Լաչինի որոշ գյուղերում հարդը բրգաձև դարսում են և ծածկում խոտով, երկար կճմերի ծայրերից քարեր կապում և գցում այդ խոտի վրա, որպեսզի դեզը քամուց պաշտպանված լինի: Նաև գյուղերում անասուններին ջրով բավարարելու շնորհիվ, գործածությունից դուրս է եկել նախկինում խոշոր եղջերավոր անասունների գոմերում գոյություն ունեցող «դարլըղը», որի միջոցով ձյան ջրով ձմռանը ջրում էին անասուններին:

Գյուղերում բոլորովին նոր երևույթ է հասարակական շենքերի կառուցումը: Նախասովետական շրջանում գյուղերում նույնիսկ գրասենյակներ գոյություն չունեին: Գյուղական համայնքի ժողովները և այլ հավաքույթները գումարվում էին որևէ օդայում:

Սովետական օրով գյուղական սովետների համար կառուցվեցին գրասենյակներ: Բացի դրանցից, ինչպես հարևան ժողովուրդների մոտ, այնպես էլ քրդական բոլոր գյուղերում կառուցվել են կոլտնտեսության գրասենյակներ[1], դպրոցական շենքեր, ակումբներ, բժշկական կետեր, ինչպես նաև հանրային անասնագոմեր և այլն: Այդ տեսակետից օրինակելի է Ապարանի շրջանի Ալագյազ գյուղը (նախկին Մեծ Ջամուշվան): Նախկինում կիսաքոչվորական և նստակյաց կյանք վարող ջամուշվանցիների գետնափոր տների փոխարեն այժմ կառուցվել են բազմաթիվ բնակելի և հանրային շենքեր, քաղաքատիպ, լուսավոր սենյակներ, սալահատակված մեծ-մեծ գոմեր, ախոռներ, բաղնիք, հիվանդանոց, դպրոց,

[1] Հայաստանի քրդերը գրասենյակի համար առանձին բառ չունեն, ուստի գործ են ածում հայերեն «գրասենյակ» բառը:



Ապարանի շրջանի Ալագյազ գյուղի կոլտնտեսության էլեկտրակայանի ներքին տեսքը



Կուրդ բանվոր Թեմուրև Շամոն Լենինականի տեքստիլ կոմբինատում

դեղատուն, փոստի շենք, էլեկտրաղաց, սղոցարան, դպրոց և հասարակական այլ շենքեր: Ալագյազում կառուցվել է երկու աղբյուր-հուշարձան:

Նախկինում քրդերը արհեստով չէին զբաղվում, նրանց մեջ չկային որմնադիրներ և այլ վարպետներ: Այժմ շենքերի մեծ մասը իրենք, քուրդ վարպետներն են կառուցում: Բացի որմնադիրներից, կան հյուսներ, դարբիններ և այլ արհեստի վարպետներ, որոնք աստիճանաբար տիրապետում են տան կառուցելու տեխնիկային: Կան քաղաքում աշխատող բանվորներ:



Թբիլիսիի ծխախոտի առաջին ֆաբրիկայի քուրդ բանվորուհի Նազա Ղաչախը

Բնակարաններ և հանրային շենքեր կառուցելիս քրդերի վրա տեսնում ենք հայերի և ադրբեջանցիների ազդեցությունը: Զնայած քրդական գիր ու գրականության առկայությանը, Հայաստանի քըրդերը նորակառույց տան ճակատին տան տիրոջ անունը և տարեթիվը գրում են հայերեն: Այս հանգամանքը նույնպես պետք է վերագրել հայերի ազդեցությանը ընդհանրապես:

Բ. ՔՐԴԻ ՏԱՆ ՆԵՐՔԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԿԱՀԱՎՈՐՈՒՄԸ

Քրդերի նոր տիպի սենյակները կահավորվում են քաղաքային ճաշակով: Բայց հենց այդ նույն սենյակներում էլ կարելի է

տեսնել հին ճաշակի իրեր: Սենյակի հատակին հաճախ փռում են թաղիքներ, որոնք հիշեցնում են քրդական հին օդան: Որոշ ընտանիքներում մահճակալների վրա դնում են հին ձևի բարձեր, այդպիսի քաղաքատիպ սենյակներում արդեն վերացել է թոնիրը:



Քրդական բնակարանի ներքին տեսքը

Այժմ անկողինները դասավորում են մահճակալների վրա: Սենյակի անկյուններից մեկում (դռան մոտ) սովորաբար դնում են թիթեղյա վառարան, իսկ մյուս անկյուններից մեկում՝ ռադիո-ընդունիչ կամ կարի մեքենա:

Սենյակի պատերից կախում են գորգեր և դրանց վրա փակցնում ձեռագործներ: Այժմ քրդուհիները սովորել են նաև քաղաքի ճաշակով ձեռագործ անել: Նորակառույց սենյակների պատուհանների առջև ներսից կախում են վարագույրներ:

Ամանեղենը պահում են պահարաններում: Ուտելու ժամանակ որոշ ընտանիքներում գործ են ածում անձեռոցիկներ: Տներում ներկայումս քիչ կարելի է հանդիպել պաշտամունքային առարկաների՝ երկաթե կոտրների, երկաթից և պղնձից պատրաստված ամանների, եղան եղջյուրների, առանձին կժերի, կարասների, սափորների՝ զարդանախշերով և այլ իրերի:

305—9

Հին սովորությամբ փայտե մեծ տակառը, որ սովորաբար պահվում է ալյուրը, դնում են թոնրատունը, որպեսզի ալյուրը չխոնավանա, չմորվի, չորբոտնի, իսկ սրահում դնում են փայտե շտեմարանը, որը քրդերեն կոչվում է «ըմբար», կամ «ամբար»: Սրահում ամբարի կողքին շարում են պղնձե և կավե ամաններ՝



Հացատան ներքին տեսքը (թոնրի վրա կերակուր եփելը)

սափորներ, «դիզկներ», «գյումգյումներ» (Լաչին, Քյալբաջար, Արտաշատ): Այնտեղ, ուր դեռ գոյություն չունի էլեկտրական լուսավորություն, սրահում հարմար պատերից մեկի մեջ սարքում են «փենջրա» և դրա վրա դնում նավթի լամպը: Սրահներում կամ գոմերում քակոր, գոմաղբ, հարդ և խոտ կրելու նպատակով դնում են «սաբաթներ»: Ամառն շոգին հանգստանում են սրահում դրված տախտակների վրա, որոնք ծածկում են թաղիքով կամ գորգերով: Թոնրատանը պահում են «թաշտը», «ալակը», «գրտնակը», «սափադեն», «շիշը» և «հասափֆը»: Այս պարագաները, բացի տաշտից, սովորաբար կախում են թոնրատան սյունից:

Քրդական շատ գյուղերում գոյություն չունեն թռչնաբուծական ֆերմաներ, այդ պատճառով ինչպես կոլտնտեսությունները, այնպես էլ կոլտնտեսականները հավանոցներ չունեն: Հավերին պա-

հում են «թառլաններում», որտեղ սյուներից փայտե երկար ձող են կապում, որը ծառայում է որպես թառ: Բացի այդ, աղավնիների համար գոմում սյուներից խոտով լի քթոցներ են կախում:

Անդրկովկասյան համարյա բոլոր քրդերի մոտ, ինչպես առաջ, այժմ էլ պահպանվում է «դուլթիա բուկեն»-ն (հարսի արկղ), որի մեջ հարսը դնում է իր օժիտը, հարսանեկան զարդերն ու հագուստները: Նորակառույց սենյակում, բացի պահարաններից, դնում են նաև աշակերտական գրադարակ:

Նախկինում ճաշելիս ուտելիքը դնում էին «սֆրայի» կամ «սուֆրայի» վրա, ծալապատիկ նստում հատակին փռած թաղիքներին և ուտում էին մատներով: Այժմ, ամենուր կենցաղի մեջ են մտել սեղանն ու աթոռը, դգալն ու պատառաքաղը:

Փայտե, պղնձե և կավե ամաններից բացի, գործ են ածում նաև հախճապակուց, ալյումինից, ցինկից և այլ մետաղներից պատրաստված ամաններ (ափսե, շաքարաման, դգալ, շերեփ և այլն): Օգտագործվում են էլեկտրական և նավթավառ լամպեր:

ԶԳԵՍՏ ԵՎ ԶԱՐԴ

Սովետական բոլոր քրդերի մեջ տղամարդկանց առօրյա ազգային տարազը համարյա վերացել է: Հազ ու կենտ մարդկանց կարելի է հանդիպել, որոնք դեռևս հագնվում են հին տարազով:

Քրդական գյուղերում տղամարդիկ ունեն հին տարազ, որոնք օգտագործում են միայն ուրախալի (տոնական, հարսանեկան և այլ) օրերին, իսկ իբրև ամենօրյա հագուստ, այն մինչև անգամ ամոթ են համարում հագնել: Այժմ բոլոր քուրդ տղամարդիկ քաղաքային զգեստներ են հագնում: Հետաքրքիրն այն է, որ քրդական գյուղերում քրդուհիները դեռևս չեն փոխել իրենց հագուստները: Քաղաքներում ապրող քրդուհիների մի մասը միայն, իրենց կուլտուրական մակարդակի բարձրացման և քաղաքի բնակչուհիների ազդեցությամբ, կիսով չափ, ոմանք էլ լրիվ փոխել են իրենց տարազը, օրինակ՝ Թբիլիսիի քրդուհիների տարազը քրդական հին և քաղաքի բնակչուհիների հագուստների խառնուրդ է: Թբիլիսիի քրդուհու տարազը կարելի է բաժանել երեք տեսակի՝ առաջին, քրդուհիներ, որոնք քաղաքացուհիների պես են հագնվում: Սրանցից շատերը վզներից գույնզգույն ուլունքների շարան են կախում: Երկրորդ, քրդուհիներ, որոնք ըստ քրդական ճաշակի մի քանի թեթև դեյրա են հագնում, մի դեյրա էլ առջևից են կապում,

տոլխազի վարտիքը չերևա: Երբեմն, քրդուհիները, որոնք հագնում են քրդական մի երկու դեյրա, իսկ գլխին փաթաթում են փոքրիկ կարմրավուն փուշիներ:

Թբիլիսիի քրդերը իրենց երեխաներին արդեն հագցնում են քաղաքի երեխաների պես: Մահմեդական քրդերի (Կալբաջարի, Բասարգեչարի, Լաչինի, Արտաշատի շրջաններ) հատկապես կանանց վրա ազդել է ադրբեջանական տարազը: Սրանց կանայք

Քրդուհի հարսը աղբյուրից ջուր տանելիս (Լաչին)

հագնում են երեք-չորս դեյրա: Դեյրաների ներքևի մասը ժապավենում են գույնզգույն կտորներով: Այժմ էլ մեծ մասը գլուխներին դնում է թեք «քոֆի» և կապում ադրբեջանական ճաշակով փուշիներ: Լաչինի, Արտաշատի, Բասարգեչարի քրդուհիներից շատերը դեռևս հագնում են կարմիր և կապույտ վարտիքներ և ոտքերին կապում ոլոնքների շարաններ:

4. ԿԵՐԱԿՈՒՐ ԵՎ ԽՄԻՉՔ

Ա. Կերակուր: *Սննդամթերքները կազմում են կաթնեղենը, մսեղենը, ձվեղենը, ձավարեղենը, բանջարեղենը և փոքր քանակությամբ մրգեղենը:*

Լեռնային և նախալեռնային շրջաններում (Ալագյազ, Լաչին, Թալին, Բասարգեչար, Արթիկ) սննդի հիմնական մթերքները կազմում են կաթնեղենն ու մսեղենը, իսկ դաշտավայրերում ապրող քրդերը (Արտաշատ, Հոկտեմբերյան և այլն), բացի կաթնեղեն և մսեղեն մթերքներից, շատ են գործածում բուսեղենը:

Կերակուրների մեջ նորամուծություն են հանդիսանում «բոզբաշը», «բորշը» և «կոտլետը»: Ներկայումս ընտանիքի անդամները, հատկապես կանայք և տղամարդիկ, հետզհետե վարժվում են միասին ճաշելուն: Չնայած ոչ միշտ և խիստ չի պահպանվում ավագության կարգը, այնուամենայնիվ, իբրև հարգանքի նշան, նախապատվությունը տրվում է մեծահասակներին, հորն ու մորը:

Բուսեղեն կերակուրներ: *Անդրկովկասյան քրդերը թխում են «թափթափա», «նանե սելե» (սաջի հաց), «բոքոն» և «լավաշ» տեսակի հացեր: Լավաշը մյուս բոլոր տեսակի հացերից համեղ է լինում: Լավաշ թխելը Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի քրդերն ու անդրկովկասյան ժողովուրդները սովորել են հայերից: Արտաշատի, Ապարանի և Լաչինի քրդերը մեծ մասամբ թխում են «թափթափա» և «նանե սելե» տեսակի հաց: Սաջի հացը, որը քոչվորական կյանքի արդյունք է, նույնպես համեղ է լինում, այժմ թխում են միայն լաչինցիները:*

Հացը թխում են թոնրում, իսկ Կալբաջարի, Լաչինի և Արտաշատի շրջաններում նաև դրսում՝ աղյուսից պատրաստված փոքրիկ փռերում: Սաջի հացը թխում են այն պարագաներով, որոնք արդեն նշվել են վերը՝ հին կենցաղի կապակցությամբ:

Անդրկովկասյան քրդերը գործ են ածում հետևյալ կերակուրները և խմորեղենները.

Բիշի— *ցորենի ալյուրից հունցում են խմոր, կլորաձև բաց անում, ապա հալած յուղի կամ արևածաղկի ձեթի մեջ ձգելով տապակում:*

Հավրիշկ *(Լաչինում՝ հրուշկ)— թոնրից հացը հանում կամ սաջի հացը տաք-տաք բրդում են կարագի կամ հալած յուղի մեջ, ճմլում են և ուտում:*

Հաուլա— *առավելապես նշանդրեքի, հարսնատեսի և հարսանիքի ժամանակ են պատրաստում: Հաուլա պատրաստելու համար յուղը դաղում են, վրան լցնում ցորենի մաղած ալյուր և խառնում բարակ կրակի վրա: Երբ հաուլան սկսում է կարմրել, մի քիչ «շարբաթ» են լցնում վրան, խառնում: Հաուլան բավականաչափ եփվում է, ապա լցնում են անագե փոքր ամանների մեջ, երեսը ու-*

բորում գդալով, երբեմն մատներով փոքրիկ նախշեր անում և թողնում սառչի:

Քաքա— *խմորը մի քիչ չոր են հունցում, համապատասխան չափով յուղ են հալում, լցնում տաշտի մեջ և շաղախում, ապա ցանկացած չափի «շարբաթ» կամ մեղր են լցնում ու խառնում: Մի քանի րոպե խմորը հարելուց հետո, ալյուր են ավելացնում և նորից շաղախում:*

Մրթոխայով քաքա— *նույն ձևով խմոր են պատրաստում, հետո խառնում են շաքարից, յուղից և ալյուրից պատրաստած մրթոխան, որը նման է հալվային, խմորը գնդում են, հետո ձեռքով բաց անում, նորից մրթոխայից մի քիչ լցնում մեջը և նրա ծայրերը մրթոխայի վրա բերելուց հետո՝ գրտնակով կամաց տարածում են, հարթում, ապա հարած ձու կամ ոչխարի մածուն քսում երեսին ու թխում: Թոնրից քաշման հանելիս կարմիր գույն է ունենում:*

Տրշո— *ավելուկը խաշում են, ջուրը հեռացնում, երկու ձեռքով քամում են և դնում եռացող յուղի մեջ, տապակելուց հետո, խառնում են սխտորաջուր և ապա հացով ուտում: Սա բուսեղեն լավագույն կերակուրներից մեկն է համարվում:*

Գրարագաու— *ավելուկը կամ սպանախը կանաչ վիճակում լվանում են, մանր կտրատում և դնում եփվող ձավարի մեջ, հետո վրան լցնում թան և անընդհատ խառնում, որ չփռվի, հենց որ եփ եկավ, դադարում են խառնելուց, որից հետո մի բուռ ցորենի ալյուր մի բաժակ ջրի մեջ շաղախում և լցնում են ղազանի մեջ, թողնելով, որ եփ գա: Գրարագաուն սովորաբար ուտում են առանց հացի և ամենասիրված կերակուրներից մեկն է համարվում:*

Կռնդր— *դդումը բաժանելով երկու մասի, դանակով կճպում են կեղևը, ապա մեծ-մեծ կտորում և դնում եռացրած ջրի մեջ, եփում, սոխարած պատրաստում և լցնում վրան, խառնում և հացով ուտում:*

Սմաակ— *սա հայերեն «եզան լեզու» կոչված բույսի պես ունի լայն, բայց մոխրագույն տերևներ: Այս բույսը ցանովի չէ: Քաղում են, մաքրում, դանակով կտրատում, եռացրած ջրի մեջ խաշում, ապա ջուրը քամում, վրան աղ ցանում, յուղով ու ձվով կամ պանրով տապակում և ուտում: Նույն ձևով են տապակում և ուտում սիբեխը և այլ տեսակի բանջարներ:*

Կանաչ լոբի— *նախկինում լոբին, ինչպես ձմեռը, ամռանն էին համարում ուտել: Այժմ սրանք անդրկովկասյան բոլոր քրդերի համար կերակրի սովորական մթերքներ են համարվում: Կանաչ լոբին կտրատում են, լվանում ու ջրով եփում: Եփելուց հետո քամում են, աղ ցանում, լցնում յուղի մեջ, ապա վրան մի քանի ձու ջարդում, լցնում եփած լոբու մեջ, կրկին եփում և ուտում:*

Չոր լոբի— *երեկոյան լցնում են սառը ջրի մեջ, թողնում մինչև առավոտ, որ հատիկները ուռչեն: Առավոտյան քամում են և ջուրը թափում, նորից վրան ջուր լցնում, դնում կրակին եփելու: Եփելուց հետո, ալյուրի խյուս են անում, լցնում են լոբու մեջ, ապա շարունակում եփել: Պատրաստ լինելուց հետո ուտում են:*

Կարտոլ— *կարտոֆիլը ինչպես այլ ժողովուրդների, այնպես էլ քրդերի մոտ ներկայումս հիմնական սննդամթերքներից մեկն է համարվում: Կարտոֆիլը կլպում են, շերտ առ շերտ կտրատում, յուղի մեջ տապակում և հացով ուտում, կամ մանրում են տարբեր կերակուրների մեջ և ուտում: Արյան ճնշումը իջեցնելու համար ուտում են թերխաշ վիճակում:*

Կարտոլե բալանգի *(խաշած կարտոֆիլ)— կարտոֆիլը խաշում են, կլպում, դանակով կտորում, հետը խառնում սոխարած, վրան աղ ցանում և ուտում:*

Խաշիլա կարտոլա *(կարտոֆիլի խաշիլ)— կարտոֆիլը խաշում են, կլպում, գդալով տրորում, լցնում կաթի մեջ և եփում: Երկար եփելուց հետո, կաթի մեջ ջրային մասը գոլորշիանում է և ստացվում է կարտոֆիլով-կաթնով (ինչպես բրնձե-կաթնով): Սրա վրա յուղ են լցնում և ուտում:*

Ժաժաունե— *յուղը լցնում են ամանի մեջ, հալում, ալյուրը մաղում են, ջրի մեջ խառնում և լցնում այդ յուղի մեջ, կրկին խառնում մինչև պնդանա, ջրային մասերը գոլորշիանում են, հետո յուղը աստիճանաբար սկսում է վեր բարձրանալ: Սրա հետ խառնում են շաքարավազ կամ մեղր և ուտում:*

Այս կերակուրը պատրաստում են գլխավորապես ծննդկանի համար:

Խաշիլա դան *(ցորենի խաշիլ)— սա համեղ կերակուրներից մեկն է համարվում: Նախ սանդում ցորենը ծեծում են և արևի տակ չորացնում, հետո ձեռքով տրորում և քամուն տալիս և նորից փռում են արևի տակ, որ չորանա, չորանալուց հետո մաքրում քարերից և անպետք հատիկներից, ապա երկանքով աղում, լցնում ամանի մեջ, վրան համապատասխան չափով ջուր ավելացնում: Ձավարը եփվում է, ջրային մասերը գոլորշիանում են, իսկ ձավարը սկսում է պնդանալ, հետո ալյուրից «օրբա» են պատրաստում և խառնում եփվող ձավարին: Մի տասը րոպե եփվելուց հետո խաշիլը պատրաստ է լինում: Տանտիկինը շերեփով լցնում է*

պնակների մեջ, ապա մեջտեղը փոս թողնում, չորթանից մի քանի գդալ թան լցնում խաշիլի փոսիկը և վրան ավելացնում յուղ:

Շորբա— ջրալի կերակուր է: Ձավարից բավականաչափ լցնում են եռացրած ջրի մեջ, համապատասխան չափով աղ ավելացնում, փոքր քանակությամբ կարտոֆիլ կտրատում, գցում ամանի մեջ և ապա ավելացնում սոխառած, եփում և ուտում:

Քֆտա— ծեծած ցորենից երկանքով աղում, խմորի պես հունցում, վրան ավելացնում են սոխառած, կրկին հունցում: Կանայք այդ խմորից երկար կամ կլոր գնդիկներ են պատրաստում և գցում եռացող ջրի մեջ: Երկար եփելուց հետո պղպեղը և սոխը միասին լցնում են յուղի մեջ, սոխառած անում, նորից լցնում քֆտի մեջ և թողնում, որ երկար եփի:

Ավսիր— յուղով սոխառած են անում, մեջը լցնում ջարդած մի քանի ձու և փոքր քանակությամբ պանիր: Ավսիրը պատրաստ է լինում: Հացը բրդում են ափսեների մեջ, վրան ավսիր լցնում և ուտում:

Փալաու— արևելյան բոլոր ժողովուրդների, այդ թվում քրդերի մոտ ամենասիրած կերակուրն է համարվում: Այդ պատրաստելու համար բրինձը լցնում են եռացրած ջրի մեջ, թողնում, որ եփ գա, ապա աղ են լցնում մեջը, բրինձը եփելուց հետո փալաուն քամում են, ամանը լվանում, յուղ ձգում տակը, հալում, ապա քամած բրինձը լցնում ամանի մեջ և նորից յուղ լցնում վրան, խուփը ծածկում, դնում ոչ թեժ կրակի վրա: Փալաուն պատրաստ է լինում:

Փալաուա քիշմիշա— նույն ձևով եփած և յուղով փալաուի հետ չամիչ են խառնում:

Փալաուա ղայսիա— նույն ձևով եփած և յուղով փլավի հետ չիր են խառնում կամ լցնում վրան և ուտում:

Փալաուա մրիշկա— նույն ձևով եփած և քիչ յուղով փլավի հետ դնում են լավ տապակած հավ կամ ճուտ և ուտում:

Փալաուա գոշտ— նույն ձևով եփած փլավի վրա դնում են խաշլամա արած մսի կտորներ, մսի հյութը լցնում և ուտում:

Հալիսա կամ հարիսա— սանդում ծեծած կորկոտը և ոչխարի փափուկ մսի կտորները ջրի հետ միասին լցնում են թրծած պուտուկի մեջ ու թոնրի վրա սկսում եփել: Թոնիրը շեղջանալուց հետո հարիսայով պուտուկը դնում են թոնրի մեջ: Թոնրում երկար եփելուց և խառնելուց հետո միսը և ձավարը միաձուլվում են՝ վերածվելով մի մածուծիկ զանգվածի: Հայերի և վրացիների մոտ

հարիսան պատրաստում են համարյա նույն ձևով, բայց հավի կամ այլ թռչունի մսով:

Մսեղեն կերակուրներ: Քրդերը շատ են սիրում մսեղեն կերակուրներ: Ոչխարի միս ավելի շատ են գործածում, քան տավարի: Նրանց ամենասիրած կերակուրը սոխով խորոված է համարվում, որը կոչվում է «շիշլիկ»: Սրանք առանց սոխի մսեղեն կերակուրներ, բացի խաշլամայից, դժվարությամբ են ուտում: «Թեզարէ գոշտ, ուեզարէ պիվազ» (որտեղ միս կա, այնտեղ էլ՝ սոխ), ասել է, թե՝ առանց սոխի միս ուտել չի լինի: Հայկական առածը քրդերի մասին ասում է. «Սոխ չուտեմ, շաքար ուտեմ»:

Անցյալի հետ համեմատած, մսեղեն կերակուրների մեջ բավական փոփոխություններ են մտել:

Խաշլամա— միսը մեծ-մեծ կտրատում են, գցում սառը ջրի մեջ, 10—15 րոպեից հետո հանում, լվանում, վրայից պղտոր ջուրը թափում, նորից ջուր լցնում և մսով լի ամանը դնում կրակի վրա, եփում: Միսը լավ եփելուց հետո ուտում են:

Ղալի— ոչխարի չաղ միսը կտրատում են, գցում ամանի կամ փոքրիկ սաջի մեջ, եփում, ջրային մասը գոլորշիանալուց հետո, տակը մնում է հալած յուղ, որի մեջ միսը սկսում է աստիճանաբար կարմրել: Քրդուհին կարմրած միսը լցնում է ափսեների մեջ, կտրտած սոխը լցնում վրան և տալիս ընտանիքի անդամներին:

Այժմ սովորել են նաև մսեղեն կերակուրների հետ գործածել թթուներ: Առաջ թթու դնելու սովորություն գրեթե չունեին, իսկ եզդիները մինչև անգամ մեղք էին համարում կաղամբ և կաղամբի թթու ուտել:

Այժմ ամենից շատ եզդին է կաղամբ գործածում և կաղամբից թթուներ պատրաստում: Բորշ, կոտլետ, տոլմա և նորամուծ այլ կերակուրներ պատրաստում են այնպես, ինչպես քաղաքներում:

Սավարե գոշտ— միսը եփում են պուտուկի մեջ, վրան լցնում ձավար, խառնում, ապա ջուր են ածում վրան, պուտուկի բերանը խուփով ծածկում և դնում թոնրի մեջ, որ եփվի: Երեք ժամից հետո կերակուրը պատրաստ է լինում:

Գոշտ ու բրնջ— միսն ու բրինձը առանձին-առանձին եփում են, խառնում իրար, առանց սոխառածի ուտում: Այս կերակուրը այնքան էլ սիրված չէ քրդերի մեջ, այնուամենայնիվ, հյուրերի համար հարգի ուտելիք է համարվում:

Ղավուրմա— ոչխարի կամ տավարի միսը լավ եփում են, այն աստիճան, մինչև ջրային մասը գոլորշիանա: Միսը կարմր-

բում է, որից հետո լցնում են կարասի մեջ, վրան լցնում ճարպ և բերանը որոշ ժամանակ բաց թողնում, որ սառչի: Այնուհետև ստացվում է ղավուրմա: Ղավուրմայի կարասը սովորաբար դնում են մառանի անկյուններից մեկում: Ղավուրման ձմռանն են գործածում:

Քֆտե գոշտ— մեքենայով միսը մանրացնում են, հետո խառնում ձավար, հաճար կամ բրինձ և մանրած սոխ, փոքր գնդում և եռացրած ջրի մեջ գցում, որ եփվի. հետո սոխարած են լցնում վրան և ուտում:

Խաշ— տավարի ոտքերն ու գլուխը բարկ կրակի վրա կամ թոնրի մեջ խանձում են, քերում, կտրտում և մի քանի անգամ մանրացած միսը լվանում, գցում պուտուկի մեջ և դնում թոնրի վրա, եփում: Երկար եփելուց հետո, ջուրը մածուծիկ է դառնում, ապա սխտորաջուր են լցնում վրան և ուտում: Խաշը սովորաբար ուտում են առավոտյան պահին:

Խաշե պեզ կամ քյալափաչա (փաչա)— ոչ միայն Անդրկովկասի, այլ բոլոր քրդերը գերադասում են ոչխարի խաշ ուտել: Խաշ պատրաստելու համար ոչխարի ոտներն ու գլուխը կրակի վրա խանձում են, կտրտում, քերում և լավ լվանում: Մաքրում են նաև ոչխարի ստամոքսը, կտրտում, գլխի ու ոտների հետ գցում պուտուկի մեջ, դնում թոնրի կամ վառարանի վրա եփելու: Եփելուց հետո աղ են լցնում, ավելացնում սխտորաջուր և ուտում:

Գոշտե մրիշկե— հավը մորթում են, մի քանի անգամ թաթախում եռացրած ջրի մեջ, փետուրներն ու փորը մաքրելուց հետո կտրտում, յուղի մեջ տապակում և ուտում: Հավի մսով պատրաստում են նաև սուպ:

Նախկինում որոշ կենդանիների՝ նապաստակի, եղջերուի, աղվեսի միսը չէին ուտում: Ինչպես ցույց են տալիս ազգագրական և ֆոլկլորային նյութերը, ոչխարի և այծի ուղեղ ուտելը նույնպես արգելված է եղել: Սա տոտեմ-պաշտամունքի նկատմամբ կիրառվող արգելքի մնացուկ է, որը դեռևս կենսունակ է ծերունիների մոտ:

Կերակուր ուտելուց առաջ սեղանի վրա աղոթքներ ասելու սովորույթը իսպառ վերացել է: Հին սերնդին պատկանող մարդիկ, որոնք դեռ հետևում են կրոնական օրենքներին, սեղանի շուրջը նստած երիտասարդների ներկայությամբ պատշաճ չեն համարում աղոթք անել:

Կ ա թ ն ե ղ ե ն կ ե ր ա կ ու ր ն ե ր: Այժմ էլ կաթնեղենը, ինչպես առաջ, քրդերի ամենահիմնական սննդամթերքն է համարվում:

Մաստ— քրդերը հրաշալի մածուններ պատրաստում: Ընդհանրապես հայտնի է հայերի գովաբանած «քրդի մածունը» և ադրբեջանցիների «քուրդ կաթըղը»:

Տոմաստ— սա կաթնեղեն ուտելիքներից մեկն է համարվում: «Տոմաստ» բառացի նշանակում է «սեր և մածուն»: Ամռանը ոչխարի մածունը քամում են, նրա հետ խառնում համապատասխան չափով սեր և կարագ, հետո լցնում են տիկերի մեջ, բերանը լավ կապում և պահում ձմռանը ուտելու:

Շորբա շիր— ձավարը և բրինձը ջրի մեջ եփում են, մի քիչ աղ կամ աղի փոխարեն շաքար լցնում վրան, նայած որքան քաղցր են ցանկանում, ապա ավելացնում գոլ կաթ, խառնում, դնում կրակին, որ նորից եփվի և, երբ ջրալի կերակուր, ուտում են: Արտաշատի քրդերի մոտ «շորբա շիրը» կոչվում է «բրինջշիր»:

Սուտլի կամ սուտլու— բրինձը լվանում են, լցնում կաթով ամանի մեջ և դնում ոչ բարկ կրակին: Կերակուրը պնդանալուց հետո տանտիկինը այն լցնում է ափսեների մեջ, խաշիլի պես մեջտեղը փոս անում, փոսի մեջ հալած յուղ են լցնում և ուտում: Սուտլին ուտում են առանց հացի:

Դաու— մածունը լցնում են խնոցու մեջ, վրան ջուր ածում, հարում, ստացվում է կարագ, կարագից հետո եղած մածնաջուրը կոչվում է «դաու»: Դաուից պատրաստում են ձավարով թանե ապուր:

Տորախ— թանը դնում են թոնրի վրա և եփում, դեռ եռ չեկած վիճակում սկսում է փորվել: Փորված թանը մի տոպրակի մեջ ածելով, բերանը ամուր կապում ու քարեր են դնում վրան, տոպրակը փայտե փոքրիկ թիակներով քերում, որպեսզի ջրային մասը շուտ ծորվի, որից հետո ստացվում է տորախ: Տորախից էլ պատրաստում են չորթան, որը ձմռան օրերին գոլ ջրի մեջ տրորում են, նորից թան է ստացվում: Այս թանը, ինչպես նշվեց վերը, լցնում են խաշիլի վրա ու ավելացնում յուղ և ուտում: Տորախը պահում են տիկերի մեջ:

Նախկինում շատ կարագ, պանիր, յուղ և լոռ ստանալու համար գործադրում էին մոգական բազմաթիվ միջոցներ՝ չար աչքի դեմ խնոցու պարանից կապույտ ուլունք կամ կլոր քարեր էին կախում: Խնոցուց կախում էին երկաթի կտորներ և այլն: Ներկայումս

էլ որոշ ընտանիքներում պատածենը շատ «հաջողված» ստանալու համար շարունակում են դիմել այդ միջոցներին: Իբրև հնի մնացուկ՝ կաթնամթերքների նկատմամբ գործ են ածում որոշ անեծքներ, ինչպես, օրինակ՝ «դատարկ բդալը» (թանգ կարմի), «հում ուտե շիր նարինն» (դուք կաթի երես չտեսնեք) և այլն:

Նախասովետական շրջանում քրդական ընտանիքի անդամները մեծ մասամբ ուտում էին մի ամանից. այժմ օգտվում են առանձին ամաններից: Աշխատող ընտանիքի անդամների համար ընտանիքն է կերակուր պատրաստում և ուղարկում կոլտնտեսային դաշտ: Երբեմն, շաբաթը մեկ կամ երկու անգամ, տալիս են հասարակական սնունդ:

Բ. Խմիչք: Նախասովետական շրջանում, կրոնական օրենքներով, մահմեդական քրդերի համար խիստ արգելված էր ոգելից խմիչքների գործածությունը, իսկ քուրդ եզդիների մոտ թույլատրվում էր: Սակայն հարբեցողությունը բոլոր քրդերի մոտ ամոթալի երևույթ է համարվում: Անդրկովկասյան մահմեդական քրդերը, իբրև խմիչք, հարսանեկան ուրախության և այլ խրախճանքների ժամանակ անցյալում շարբաթ էին գործածում:

Խմիչքների վերաբերյալ գոյություն ունեցող կրոնական նախապաշարմունքները ներկայումս վերացել են: Այժմ թե՛ մահմեդական և թե՛ եզդի քրդերը գործ են ածում այն բոլոր խմիչքները, որոնք ընդհանրապես գործածական են հարևան մյուս բոլոր ժողովուրդների մոտ:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՔՐԴԵՐԻ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

Սովետական ժամանակաշրջանում, ինչպես ասվեց արդեն, արմատապես բարելավվել են Անդրկովկասի քրդերի նյութական պայմանները և այդ հիմքի վրա անճանաչելիորեն վերափոխվել է նրանց կուլտուրական մակարդակը:

Սովետական Միության Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը հենց սկզբից առանձնահատուկ ուշադրություն դարձրին նախկինում հետամնաց փոքր ժողովուրդների և ազգային փոքրամասնությունների, այդ թվում և քրդերի կուլտուրական մակարդակի բարձրացման վրա: Այդ խնդիրն իրագործելու համար Սովետական Հայաստանի մայրաքաղաք Երևանում ստեղծվեց քրդական այբուբեն: Այդ գործը հանձն առավ 1922 թվականին և սիրով կատարեց քրդերենի ու քրդերի կենցաղի ու կուլտուրայի քաջ գիտակ Լազոն (Հակոբ Ղազարյան)[1]: Նա հայկական տառերը հարմարեցրեց քրդերենի հնչյունաբանությանը, կազմեց քրդական նոր այբուբեն և այդ այբուբենով գրեց քրդերեն առաջին՝ «Շամս» դասագիրքը (հրատարակվել է 1922 թվականին, Էջմիածնում):

1928 թվականին Հայկական ՍՍՌ Լուսավորության Ժողովրդական Կոմիսարիատի որոշմամբ վերացվեցին հայերենի հիման վրա կազմված քրդական տառերը և Արաբ Շամիլովի ու Մարագուլովի միջոցով կազմվեց քրդերեն նոր այբուբեն՝ լատինական տառերի հիման վրա, որը գործածության մեջ մտավ 1929 թվականին:

1 Քրդական սովետական կուլտուրայի անխոնջ մշակ Լազոն մեծ համբավ ուներ քրդերի մեջ: Նրան քրդերը անվանում էին «ապո» (հորեղբայր), «ապե Լազո», իսկ նրա կնոջը, Օլգա Ղազարյանին (որը նույնպես շատ վաստակ ունի), անվանում էին «դայե» (մայր), ի նշան հարգանքի ամենախոր արտահայտության:

ԽԱ̄ԹԱՆ

Ա—ա	Ղ—ղ	Փ—փ
Բ—բ	Ճ—ճ	Ք—ք
Գ—գ	Մ—մ	Ո—ո
Դ—դ	Յ—յ	Ֆ—ֆ
Ե—ե	Ն—ն	Ա̄—ա̄
Զ—զ	Շ—շ	Ւ—ւ
Ը—ը	Չ—չ	Ւ̄—ւ̄
Թ—թ	Պ—պ	Յե—յե
Ժ—ժ	Ջ—ջ	Յա̄—յա̄
Ի—ի	Ռ—ռ	Յա—յա
Լ—լ	Ս—ս	Յո—յո
Խ—խ	Վ—վ	Յւ—յւ
Կ—կ	Տ—տ	Եյ—եյ
Հ—հ	Ր—ր	Ւյ—ւյ

Քրդական այբուբենը, կազմված հայկական տառերի հիման վրա

ԼԱԶՈ



Քրդական առաջին դասարանի առաջին դասագրքի շապիկը

Əlifbaje tәzә kurmanci

НОВЫЙ КУРДСКИЙ АЛФАВИТ • ՔՐԴԱԿԱՆ ՆՈՐ ԱՅԲՈՒԲԵՆԸ

Aa *Aa* Ա А	Bв *Bв* Բ Б	Cc *Cc* Չ Ч	Ꞓꞓ *Ꞓꞓ* Ճ ТЧ	Çç *Çç* Ջ ДЖ
Dd *Dd* Դ Д	Ee *Ee* Է Э	Əə *Əə* ԵԱ ЭА	Ff *Ff* Ֆ Ф	Gg *Gg* Գ Г
Ƣƣ *Ƣƣ* Ղ Г *мягкое*	Hh *Hh* Հ	Ii *Ii* Ի И	Ьь *Ьь* Ը Ы	Jj *Jj* ԻՅ Й
Kk *Kk* Կ К	Ķķ *Ķķ* Ք К *твердое*	Qq *Qq* ԿՂ КЫ	Ll *Ll* Լ Л	Mm *Mm* Մ М
Nn *Nn* Ն Н	Oo *Oo* Ո О	Өө *Өө* О *мягкое*	Pp *Pp* Պ П	Ꝑꝑ *Ꝑꝑ* Փ Пh
Rr *Rr* Ր Р	Ss *Ss* Ս С	Şş *Şş* Շ Ш	Tt *Tt* Տ Т	Ţţ *Ţţ* Թ Т *твердое*
Uu *Uu* ՈՒ У	Yy *Yy* ՈՒ(ս)У *мягкое*	Vv *Vv* Վ В	Ww *Ww* ՈՒՅԵ	Xx *Xx* Խ Х
Zz Զ З	Ƶƶ Ժ Ж			

Քրդական այբուբենը, կազմված լատինական տառերի հիման վրա

1944 թ. Հայկական ՍՍՌ կառավարության որոշմամբ վերացվեց նաև լատիներենի հիման վրա կազմված քրդական այբուբենը։ Ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Հ. Ջնդիի, հանգուցյալ գրող Վ. Նադրի և սույն աշխատության հեղինակի ջանքերով, ռուսական տառերի հիման վրա նույն թվականին կազմվեց քրդական

Әлифба

Аа	Зз	Ӧӧ	Хх
Бб	Ии	Пп	Һһ
Вв	Йй	П'п'	Һ'һ'
Гг	Кк	Рр	Чч
Г'г'	К'к'	Р'р'	Ч'ч'
Дд	Лл	Сс	Шш
Ее	Мм	Тт	Щщ
Әә	Нн	Т'т'	Ьь
Ә'ә'	Оо	Уу	Ээ
Жж		Фф	Qq
			Ww

Քրդական այբուբենը, կազմված ռուսական տառերի հիման վրա

նոր այբուբենը։ Դա կատարվեց այն նպատակով, որպեսզի քուրդ աշխատավորությունն ավելի մոտ կանգնի սովետական ժողովրդի կուլտուրային, ավելի դյուրացվի այդ կուլտուրայի նվաճումների ընկալումը։

Քրդական այբուբենի հիման վրա հենց սկզբից ծավալվեց դպրոցական գործը։ Առաջին իմպերիալիստական պատերազմի հետևանքով, ինչպես ասվել է արդեն, բազմաթիվ քրդեր, հատկապես քուրդ եզդիները, Ղարսի մարզից, Սուրմալուի գավառից և այլ

Քուրդ դպրոցականներ (Լաչին)

վայրերից գաղթեցին Անդրկովկասի զանազան քաղաքներն ու գյուղերը։ Սրանց մի մասը բնակություն հաստատեց Թբիլիսիում։ Այստեղ վերաբնակված քրդերը լինելով անգրագետ և չտիրապետելով որևէ մասնագիտության կամ արհեստի, ստիպված սկսեցին զբաղվել բեռնակրությամբ և սևագործությամբ։ Քուրդ եզդիների մեծ մասը կիսամերկ և բոկոտն թափառում էր Թբիլիսիի փողոցներում, մուրացկանություն անում։ Նկատի ունենալով Թբիլիսիի քուրդ երեխաների վիճակը, Սովետական Վրաստանի կառավարությունը մեծ ուշադրություն դարձրեց նրանց վրա։

Այս գործով անմիջապես զբաղվում էր Սովետական Վրաստանի Լուսժողկոմատը։ Թբիլիսիում նախ բացվեց մանկատուն, որը ղեկավարում էին Լազոն և Հովհաննես Միսյանը, իսկ

1922 թվականին սկսեց գործել նաև քրդական տարրական դպրոցը, որը կիսաինտերնատի բնույթ էր կրում, որովհետև երեխաներին, բացի կրթությունից, տալիս էին նաև սնունդ, բայց նրանք գիշերում էին իրենց տներում։ Այդ ժամանակ դպրոցում դեռևս չկային քուրդ դասատուներ, դասավանդում էին հայ, ռուս և վրացի մանկավարժներ Լազոն, որը միաժամանակ վարիչն էր, և իր կինը՝ Օլգա Ղազարյանը (քրդերեն լեզու), Կոտե Բախտաձեն (վրացերեն լեզու), Վերա Կալոշինան (ռուսաց լեզու) և ուրիշներ։ Այս դպրոցը հանդիսացավ քրդական սովետական կուլտուրական հաստատությունների առաջնեկը և մեծ դեր կատարեց Անդրկովկասի քրդերի կյանքում։ Դպրոցը քուրդ երեխաների մեջ սեր պատվաստեց ուսման նկատմամբ, տվեց սովետական քուրդ մտավորականության անդրանիկ կադրերին՝ Ղանատե Քուրդո (ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու), Տիտալէ Մրադ (ժուռնալիստ), Խալթե Զառո (պատմական գիտությունների թեկնածու), Բալլոզե Զաչան (պատասխանատու աշխատող), Ազոե Զանգո (պատասխանատու աշխատող), Խոսե Մանեկ (բժիշկ) և շատ ուրիշներ։ Միաժամանակ դպրոցական լայն ցանց ստեղծվեց քրդական գյուղերում։ Կուլտուրական ռևոլյուցիայի շրջանում դրվեց մեծահասակների անգրագիտության վերացման խնդիրը։ Այդ նպատակին հասնելու համար քրդական գրեթե բոլոր գյուղերում բացվեցին անգրագիտության վերացման կայաններ («լիկկայաններ»), ուր հիմնականում սովորում էին տղամարդիկ, իսկ կանանցից, չնայած պարտիական ու կոմերիտական կազմակերպությունների ձեռք առած միջոցառումներին, շատ քչերն էին հաճախում լիկկայան, այն էլ մեծ մասամբ գյուղի առաջավորների՝ պարտիականների և կոմերիտականների ընտանիքներից։ Այնուամենայնիվ, տղամարդկանց մեծ մասը և կանայք մասամբ, լիկկայանների միջոցով կարողացան վերացնել իրենց անգրագիտությունը։

Անդրկովկասում, ինչպես նշվել է արդեն, քրդերը մեծ մասամբ բնակվում են Հայաստանում, ուստի և Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայից հետո Երևանը դարձավ քրդական սովետական կուլտուրայի կենտրոնը։ Հայկական ՍՍՌ Լուսավորության ժողկոմ Ա. Մռավյանը իր զեկուցումներից մեկում որպես հրատապ խնդիր դնում էր ազգային փոքրամասնությունների համար հատկապես ուսուցչական կադրեր պատրաստելու խնդիրը[1]։

[1] Տե՛ս «Ժողովրդական լուսավորություն» հանդեսը, Երևան, 1929, № 5։

Մի շարք կոնկրետ միջոցառումների շնորհիվ, կարճ ժամանակամիջոցում լուծվում է նաև այս խնդիրը։ Ուսուցչական կադրերի պատրաստումը հիմնականում կատարվում է 1931 թվականին Երևանում բացված քրդական մանկավարժական տեխնիկումի միջոցով։ Իսկ այժմ գործում է Երևանի հայկական մանկավարժական ուսումնարանի քրդական բաժինը, որը շարունակում է ուսուցչական կադրերի պատրաստման գործը։ Եթե 1926 թվականին ամբողջ Անդրկովկասում կար երկու քուրդ ուսուցիչ (հանգուցյալ Ալիխան Շամիլովը և հեղինակը), ապա այժմ Երևանում, Թբիլիսիում, Ապարանի, Լաչինի, Թալինի, Արտաշատի, Արթիկի, Բասարգեչարի, Էջմիածնի, Կալբաջարի, Հոկտեմբերյանի, Վեդու և քրդաբնակ այլ շրջաններում դասավանդում են մեծ թվով քուրդ ուսուցիչներ և ուսուցչուհիներ, որոնք ունեն միջնակարգ, թերի բարձրագույն և բարձրագույն կրթություն։ Նրանցից երեքը՝ Մամոյե Ախոնդովը (Լաչին), Սհիդե Մրազը և Ջասմ Մամոն (Ապարան) ունեն վաստակավոր ուսուցչի կոչում, կան մեդալակիր ուսուցիչներ՝ Բախչոե Իսկոն (անվանի մանկավարժ), Վերդի Ալիխանովը, Շաքրոե Ավդալը, Միրզոե Օզմանը և ուրիշներ։

Ուսուցչական կադրերի որակավորումը բարձրացնելու համար մի շարք միջոցառումներ են կիրառվում։ Ուսուցիչները մասնակցում են Երևանի և Բաքվի քրդական ուսուցչական վերապատրաստման դասընթացներին, հեռակա կարգով ձեռք են բերում բարձրագույն կրթություն։ Քուրդ երիտասարդությունը բարձրագույն կրթություն է ձեռք բերում Երևանում, Բաքվում, Թբիլիսիում, Մոսկվայում և Լենինգրադում։

Այժմ քրդական գյուղերում մտավորականության հիմնական կորիզը կազմում է ուսուցչությունը։ Քուրդ աշխատավորները, որոնց հայրերը իրենց ողջ կյանքում չէին հանդիպել ուսուցչի, այսօր տեսնում են իրենց որդիներին ուսուցիչ դարձած։

Քուրդ ուսուցիչները իրենց դպրոցում և գյուղի հասարակության մեջ գիտություն տարածող ու կոմունիստական դաստիարակություն իրականացնող առաջավորներն են։ Թե՛ Հայաստանի և թե՛ Ադրբեջանի քրդական շատ գյուղերում ներկայումս քուրդ ուսուցիչների հետ միասին աշխատում են նաև հայ, ռուս, ադրբեջանցի, ասորի և հույն ուսուցիչներ։ Նրանք միահամուռ ջանքերով պայքարում են քրդական հին, նահապետական կենցաղի մնացուկները վերացնելու, աշակերտությանը կոմունիստական ոգով դաստիարակելու համար։

Բացի դպրոցից, քուրդ աշխատավորությանը կոմունիստական ոգով դաստիարակելու, նրանց կուլտուրական մակարդակը բարձրացնելու և հոգեբանությունը վերափոխելու գործում մեծ նշանակություն ունեցան և ունեն գյուղի կուլտուրական մյուս օջախները՝ խրճիթ-ընթերցարանները, ակումբները և կուլտուրայի տները՝ գրադարան-ընթերցարաններով, կինոյով, թատրոնով, ռադիոյով, համերգներով, դասախոսություններով, զեկուցումներով և այլ միջոցառումներով։

Գյուղի բոլոր մտավորական ուժերը ներգրավված են ակումբի աշխատանքներում, ողջ հասարակությունը համախմբված է ակումբի՝ որպես կուլտուրայի օջախի շուրջը։ Նրանք այստեղ ստանում են իրենց հետաքրքրող բազմաթիվ ու բազմապիսի հարցերի պատասխանը։ Այս բնույթի միջոցառումներից բացի, անհրաժեշտ է հատկապես նշել կինո-թատրոնի դերը քուրդ աշխատավորության վերադաստիարակման գործում։ Գյուղացիները սիրով հաճախում են կինոթատրոն, որի ներգործուն ուժը ավելի մեծ է։ Դրա միջոցով հետզհետե ընդլայնվում է նրանց մտահորիզոնը, վերափոխվում հոգեբանությունը։ Կինոն Անդրկովկասի քրդերի կենցաղի մեջ է ներթափանցել։ Մինչդեռ հնում քրդերը քիչ գաղափար ունեին դրա մասին։ Ներկայումս խիստ հետամնաց վիճակում են գտնվում արտասահմանի շատ քրդեր։ Այսպես՝ Վ. Ստեպանովը, խոսելով Իրանի քրդերի մասին, գրում է.

«Դարկա ցեղի քրդերի ճնշող մեծամասնությունը իրենց ամբողջ կյանքում չի տեսել որևէ կինոֆիլմ և ընդհանրապես կինոյի մասին պատկերացում չունի։ Նրանց համար անհայտ է թատրոնը»[1]։

Գյուղական ակումբ-գրադարանները զգալի գործ են կատարում նաև գյուղացիների մեջ գյուղատնտեսական գիտելիքներ տարածելու, առաջավորների փորձի փոխանակման, ցուցադրական ագիտացիա կազմակերպելու, պատի թերթեր լույս ընծայելու և այլ բնագավառներում։

Ակումբը հենց սկզբից խոշոր դեր է կատարել ժողովրդի գեղարվեստական ինքնագործունեությունը կազմակերպելու, քրդական ինքնատիպ արվեստը զարգացնելու գործում։ Այս տեսակետից հատկանշական է 1923 թ. Թբիլիսիում ստեղծված «Շավաղ» ակումբի դերը։ Ակումբում գործում էր թատերական խմբակ, որը հետագայում վերածվեց թատրոնի և կոչվեց «Թբիլիսիի քրդական թատրոն»։

[1] „Новая время", Москва, 1949, № 24, 25.

Սկզբում թատրոնը ինքնուրույն ռեպերտուար չուներ: Լազոն այդ թատրոնի համար գրել է «Դոստիկ», «Դաուրեշ», իսկ Հաջ. Սիսոյանը՝ «Միրաճարված Թեկլին», «Արյունարբու չեյխը», «Շամխորի որբավայրը» պիեսները: Բեմադրվել են նաև թարգմանական գործեր, որոնք նույնպես այս հեղինակներն են կատարել:

Սկզբում չկային քրդուհի դերասանուհիներ, ուստի խաղում էին շատ, թե քիչ քրդերեն իմացող հայ և վրացի դերասանուհիները: Սակայն, կարճ ժամանակից հետո երևան եկան գրագետ քրդուհիներ, որոնցից մի քանիսը դարձան շնորհալի դերասանուհիներ՝ Մրդեխա Շամոն, Զարոյա Թամոն և Սայրանա Ֆարզը:

Թբիլիսիի քրդական պարի և երգի անսամբլը, ինչպես առաջ, այժմ էլ մասնակցում է ժողովրդական գեղարվեստական ինքնագործունեության օլիմպիադաներին և հաճախ ելույթներ ունենում Թբիլիսիի ակումբներում, իսկ չորս անգամ ելույթ է ունեցել Մոսկվայում: Երևանում կազմակերպվել է քրդական երգի-պարի խմբակ, որը գործում է մինչև այժմ և պարբերաբար ելույթներ է ունենում Անդրկովկասի քրդաբնակ վայրերում:

Անդրկովկասյան քրդերի կյանքում մեծ դեր կատարեց նաև Երևանում կազմակերպված քրդական պետական շրջիկ թատրոնը: Բացի Հայաստանից, թատրոնը ներկայացումներ էր տալիս նաև եղբայրական մյուս ռեսպուբլիկաներում՝ Վրաստանում և Ադրբեջանում: Այս թատրոնի ռեպերտուարը նույնպես կազմված էր ինքնուրույն և թարգմանական գործերից: Հետաքրքիր են հատկապես ինքնուրույն, քրդական կյանքից վերցրած գործերը, որոնք արձագանքում էին ժամանակի սոցիալիստական շինարարության հրատապ խնդիրներին: Ինքնուրույն գրած պիեսներից հայտնի են Սողոմոն Տարոնցու «Մամեն ու Զինեն» (քրդական ժողովրդական սիրային վիպերգ, պիեսի վերածած), Սուրեն Գինոյանի «Միրաքի աղջիկը», «Կաա ու Բուլուք» (քրդական հերոսական վիպերգ, պիեսի վերածած), «Սիաբանդ և Խաջեզարե» (սիրային պոեմ, պիեսի վերածած), «Հասո», «Մութ լեռան աղջիկը», Ահմադե Միրազու «Զամանե Զուր», Հարություն Շալջյանի «Ուղևորության ճանապարհին» և այլն:

Քրդական թատրոնի դերասանական խումբը, որը ստեղծվել է բացառապես սովետական շրջանում, բավականին հասունացած է: Այդ, ինչպես և Թբիլիսիի խմբի հաջողությունները վկայում են, որ համապատասխան նպաստավոր պայմանների առկայության դեպքում քուրդ ժողովուրդը նույնպես ընդունակ է զարգացնելու թատերական արվեստը, որ դարերով չխոսական քրդուհին նույնպես

Հ. Սիսոյան

Թբիլիսիի քրդական երգի-պարի անսամբլը (գեղարվեստական ղեկավար Հ. Սիսոյան)

կարող է բեմ բարձրանալ և ամենքից իր խոսքն ասել: Սա կուլտուրական մեծ հեղաշրջում է քրդերի կյանքում:

Անդրկովկասի քրդերի կուլտուրական մակարդակի բարձրացման հետ զուգընթաց, Սովետական Հայաստանում 1929 թվականին, քրդական նոր այբուբենի ստեղծումից հետո, հիմնադրվեց և իր զարգացման պրոցեսն է ապրում նաև քրդական սովետական գրականությունը:

1930 թվականից սկսած հրատարակվում է քրդերեն «Ռյա թազա» («Նոր ուղի») լրագիրը, որը խոշոր դեր է կատարում քըրդերի քաղաքական, հասարակական և կուլտուրական կյանքում: Քրդերեն լույս են տեսնում գեղարվեստական, քաղաքական և գիտական գրքեր, պարբերաբար հրատարակվում են դասագրքեր:

Սովետական ժամանակաշրջանում մեծ թափով զարգանում է հատկապես քրդական գեղարվեստական գրականությունը: Քրդերն ունեն բազմաժանր, հարուստ բանահյուսություն: Սովետական քուրդ գրողները՝ Ջարդոե Գենջոն, Վ. Նադրը, Ա. Շամիլովը, Հ. Ջնդին, Ջ. Ջալիլը, Նուրին (Հով. Մարգարյան), Ղաչաղե Մրադը, Ռ. Դրամյանը և ուրիշներ, գրական ասպարեզ իջան 1930-ական թվականներին: Նրանք իրենց ստեղծագործություններում սովետական ժողովրդի կյանքն ու պայքարը, մեր առօրյան գեղարվեստորեն արտացոլելու հետ միաժամանակ, գրի են առնում և մշակում քրդական ժողովրդական բանահյուսությունը: Իրենց գրական-գեղարվեստական ստեղծագործություններով, գիտական հոդվածներով քրդական գրականության և լեզվի զարգացման գործում նշանակալից աշխատանք են կատարել նաև Ուսվե Բաքոն, Ռազգոե Ջալիլը, Միրոյե Ասադը, Բախչոյե Իսկոն, Շաոե Բրոն, Օրդիխե Ջալիլը, Միքայել Ռաշիդը, Տահրե Բրոն, Սհիդը և ուրիշներ:

Լույս են տեսել քրդերեն գրական-գեղարվեստական ժողովածուներ, ինչպես՝ „ə'frandьna ənlьn“ («Առաջին ստեղծագործություններ» Երևան, 1932 թ.), „ə'frandьna dyda“ («Երկրորդ ստեղծագործություններ», Երևան, 1934 թ.), „ə'frandьna cьsia“ («Երրորդ ստեղծագործություններ», Երևան, 1935 թ.), „ə'франдне ивиск'аро кöрманца советие“ («Սովետական քուրդ գրողների ստեղծագործությունները», Երևան, 1944 թ.), „Нвискаре кöрманща советие„ («Սովետական քուրդ գրողներ», Երևան, 1954 թ.) և առանձին գրողների ժողովածուներ:

Սովետական քրդական գրականության ստեղծման ու զարգացման ասպարեզում մեծ գործ են կատարել հատկապես քուրդ

գրողներ Արաբ Շամիլովը, Հաջիե Ջնդին ու Ջասմե Ջալիլը: Արաբ Շամիլովը գրել է «Ալագյազի քրդերը», «Քուրդ հովիվ», «Քոչակի դարաբին» (սուտասան գրքույկը) և այլն: Հ. Ջնդին մշակել է քրդական ժողովրդական բանավոր ստեղծագործությունները՝ «Կոռ ու Քուլուկե Սլեմանե Սլիվի» (քրդական ժողովրդական էպոս, Երևան, 1941 թ.), «Քյոռ Օղլի» էպոսի քրդական պատումները (Երևան, 1953 թ.), «Մամե ու Զինե» (Երևան, 1956 թ.) և այլն: Գրել է պատմվածքներ՝ «Ջոզան», «Ես իզուր չսեցի քեզ», «Դասասարրակ» (եղբայրակիցներ), պոեմներ՝ «Դըմդըմ», «Մոր նվերը», «Փոքրիկ հովիվը» և մի շարք այլ գործեր: Նա գրել է նաև հեքիաթներ և բանաստեղծություններ: Դրանց մեջ հեղինակը վառ գույներով արտահայտել է սովետական մարդկանց պայքարը հին կենցաղի դեմ, պայքարը կոմունիզմի կառուցման համար:

Հումանիստական, հայրենասիրական, քաջարիության և խաղաղասիրական ոգով են գրված գրողներ Արաբ Շամիլովի և Ջասմե Ջալիլի ստեղծագործությունները: Արաբ Շամիլովը գրել է արձակ գրվածքներ և բանաստեղծություններ, Ջասմե Ջալիլը՝ պոեմներ, բալլադներ, լիրիկական բանաստեղծություններ և այլ ժանրի գրվածքներ: Հատկապես արժեքավոր են նրա վերջին շրջանի գործերը՝ «Ալագյազ» (Երևան, 1954 թ.), «Քրդական սիրավեպեր» (Երևան, 1955 թ.) և այլն:

Այս գործերը մեծ մասամբ հրատարակվել են հայ բանաստեղծ Սողոմոն Տարոնցու թարգմանությամբ և խմբագրությամբ: Շնորհալի ստեղծագործություններ են տվել Ահմադե Միրազին («Ջամանե չուխ»), Վ. Նադըրը («Նուբար»), Ջ. Գենջոն («Դեպի կոլտնտեսային գյուղը»), Ղ. Մրադը («Բանաստեղծություններ»), Օ. Շաոոն («Բանաստեղծություններ»), Նուրին («Բանաստեղծություններ»):

Քրդական գրականության և ընդհանրապես քրդական կուլտուրայի զարգացման ասպարեզում մեծ գործ են կատարել Նուրե Պոլատովյան, Խալթե Ջալալին, Հրաչյա Քոչարը, Նադո Մախմուդովը, Վ. Պետոյանը, Ս. Սիրաբանդովը, Հարություն Մկրտչյանը, Պ. Ոսկերչյանը և Սարմենը:

Մի շարք գեղարվեստական գործեր տալու և քրդական թարգմանչական գրականություն ստեղծելու գործում աչքի ընկնող աշխատանք է կատարել հանգուցյալ Ռ. Դրամբյանը:

Վերջին շրջանում գրական ասպարեզ իջան նոր, շնորհալի քուրդ գրողներ՝ Ուսվե Բաքոն, Միքայելե Ռաշիդը, Բախչոե Իս-

կոն, Տահրե Բրոն, Օրդիխե Ջասմը, Կարլենե Արամը, Մհիկե Իբոն և Ազիզե Իսկոն: Ուսվե Բաքոն իր «Մըհիդ» ստեղծագործության մեջ ցայտուն կերպով արտահայտել է Իրանի քրդերի ծանր վիճակը, վաճառականների խարդախությունը և նրանց ծայր աստիճանի ստորությունները քուրդ աշխատավորության նկատմամբ:

Միքայելե Ռաշիդի, Բախչոե Իսկոյի, Տահրե Բրոյի և մյուս երիտասարդ գրողների ստեղծագործություններում պատկերված են սովետական մարդկանց կերպարները, նրանց ձգտումներն ու խոհերը, մարդու հաղթանակը բնության նկատմամբ:

Քուրդ գրողների ստեղծագործությունները լույս են տեսնում «Ռյա թազա» թերթում և քրդերեն, հայերեն ու ռուսերեն լեզուներով հրատարակվող ժողովածուներում:

Քրդերի կուլտուրայի բարձրացումը դրսևորվում է նաև նրանց առողջական վիճակի արմատական բարեփոխման մեջ, որ կատարվել է սովետական շրջանում: Դա տեղի է ունեցել ինչպես աշխատավորության նյութական և բնակարանային պայմանները բարելավելու, նույնպես և գյուղերում առողջապահական հիմնարկների ցանց ստեղծելու, բժշկական կադրեր պատրաստելու շնորհիվ:

Շրջանային հիվանդանոցները կապված են Երևանի և Բաքվի ականավոր բժիշկ-մասնագետների հետ և պարբերաբար նրանցից ստանում են անհրաժեշտ կոնսուլտացիաներ: Քուրդ ազգաբնակչությունը նույնպես վաղուց արդեն սովորել է հիվանդությունների դեպքում առողջապահական հիմնարկների օգնությանը դիմել, բացառյալ առանձին մարդիկ, որոնք դեռևս իրենց հույսը դնում են մոգական և առհասարակ սնոտիապաշտական միջոցների վրա: Հաճախ դիմում են նաև սնդչինների և ժողովրդական դեղերի օգնությանը:

Նախասովետական շրջանում բոլորովին չկար արտահիվանդանոցային բուժում, իսկ հիմա այն իրագործվում է պոլիկլինիկաների, բժշկական կոնսուլտացիաների և այլ միջոցներով: Ավելի լավ հիմքերի վրա է դրվել մայրության և մանկության պաշտպանության գործը, նրանք ժամանակին ստանում են մանկաբարձական-բժշկական օգնություն, որի շնորհիվ երեխաների մահացության դեպքերը, համեմատած անցյալի հետ, չնչին տոկոս են կազմում: Երեխաներին առօրյա կյանքում զանազան հիվանդությունների վտանգից հեռու պահելու համար գոյություն ունեն մանկական կոնսուլտացիոն կայաններ: Օրեցօր ավելանում է դեղատների ցանցը գյուղում (Լաչին, Քյալբաջար, Ալագյազ, Բասարգեչար և այլն): Վա-

րակիչ հիվանդությունների դեմ պայքարելու համար քրդական գյուղերում սիստեմատիկ կերպով կատարվում են նախազգուշական պատվաստումներ: Սա արդեն սովորական երևույթ է դարձել գյուղերում:

Քրդաբնակ շրջանները տարեցտարի ստանում են բժշկական որակյալ նոր կադրեր: Գյուղերում հիմնադրվել է և իր զարգացման պրոցեսն է ապրում նաև ֆիզիկական կուլտուրան:

Այս միջոցառումների շնորհիվ քրդական գյուղերում վերացել են հնում տարածված աչքացավը և վարակիչ այլ հիվանդությունները:

Կուլտուրայի բարձրացման շնորհիվ և երևույթների գիտական բացատրությանը ծանոթանալով, քրդերի աշխարհայացքից վերանում են «բարի» և «չար» ուժերի մասին նրանց ունեցած անիմիստական պատկերացումները: Այս ամենի շնորհիվ, զգալի վերափոխումներ են կատարվել մեռել թաղելու սովորությունների մեջ: Գրեթե վերացել է հոգեառ հրեշտակի՝ Ազրաիլի նկատմամբ եղած սարսափը: Վերացել են նաև մեռած տղամարդու դիակի վրա նախկինում կատարվող զոհաբերությունները: Եթե առաջ քուրդ եզդիները գերեզմանը փորում էին արևելքից արևմուտք, նկատի ունենալով արևի պաշտամունքը, իսկ մահմեդական քրդերը՝ հյուսիսից հարավ՝ Մեքքա-Մեդինայի ուղղությամբ, ներկայումս այնքան էլ չեն հետևում այդ ավանդույթին:

Հատկապես հրաժարվում են նաև թաղմանը շեյխին, մոլլային հրավիրելուց, հոգևոր և կրոնական մի շարք արարողություններ կատարելուց: Թաղումից հետո, ներկայումս էլ երեկոյան գերեզմանի վրա կրակ են վառում և «խեր» տալիս, միայն այն տարբերությամբ, որ նախկինում խերի ժամանակ մեղք էր համարվում ոգելից խմիչքներ գործածելը, իսկ հիմա գործածում են՝ հանգուցյալի ոսկորներին հանգստություն մաղթելով: Նշանավոր մարդկանց թաղելիս ճառեր են արտասանում՝ մեռածի դրական հատկությունների և գործունեության մասին:

Վերացել է մահացածի դիակը կամի կամ տախտակի վրա լողացնելու, երեք օր պղնձի վրա ճրագը վառ պահելու սովորությունը, բայց դեռևս շարունակվում է երեք օր երեկոները անընդհատ մեռելի տուն այցելելը, որից հետո վերջանում են թաղման արարողությունները:

* * *

Քրդերն իրենց հարևան հայերի, վրացիների, ադրբեջանցիների և սովետական մյուս ժողովուրդների հետ միասին տոնում են Հոկ-

տեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի տարեդարձը, Մայիսի մեկը, Մարտի ութը և ռեսպուբլիկաներում սովետական կարգերի հաստատման տարեդարձերը, տոնում են նաև իրենց կոլտնտեսությունների հիմնադրման տարեդարձը, ուշ աշնանը՝ «բերքի տոնը»: Նման դեպքերում սովորաբար նշում են կոլտնտեսության հաջողությունները, խրախուսում առաջավորներին, վեր հանում թերությունները և ուղիներ նշում հետագա առաջընթացի համար: Հանդիսավոր նիստերից հետո, սովորաբար, տեղի է ունենում համերգ, ցուցադրվում են կինոնկարներ և այլն: Հանդիսավոր նիստերը, ինչպես նաև գյուղի հասարակական ժողովները, տեղի են ունենում կոլտնտեսության ակումբներում: Հանդիսավոր նիստերից հետո աշակերտները տալիս են ներկայացումներ և համերգներ: Այդ օրերին երբեմն շրջանային կենտրոններ և կենտրոնական գյուղեր են մեկնում Երևանի և Բաքվի թատրոնները և գյուղի աշխատավորությունը սպասարկում իրենց գրական-գեղարվեստական ելույթներով:

Տոնակատարությունները հաճախ վերջանում են ընկերական խնջույքների ձևով: Տոն օրերին կարգի են բերվում բնակարանները՝ զարդարվում են գորգերով և պահվում մաքուր վիճակում:

Կոլտնտեսականները հագնում են տոնական զգեստներ՝ տղամարդիկ նոր տարազով, իսկ կանանց մի մասը հին տարազով: Ռևոլյուցիոն տոնակատարությունները կազմակերպում են ոչ թե ընտանիքները առանձին-առանձին, ինչպես կատարում էին նախասովետական շրջանում՝ կրոնական տոնակատարությունների ժամանակ, այլ կոլտնտեսության ողջ կոլեկտիվի հետ:

Հոկտեմբերյան ռևոլյուցիայի տոնը, Մայիսի մեկը, Մարտի ութը և ռեսպուբլիկաներում սովետական կարգեր հաստատվելու տարեդարձերի օրերը համաժողովրդական տոներ են: Համաժողովրդական տոն է համարվում նաև հունվարի մեկը՝ Նոր տարին:

Հունվարի մեկի տոնակատարությունը նորություն է անդրկովկասյան քրդերի կյանքում, որովհետև, ինչպես նշեցինք վերը, քրդական Նոր տարին՝ Նովրոզը (Նովրուզը) մահմեդական քրդերի և «Հալչան ադարենը» (մարտի ութը) քուրդ եզդիների մոտ սկսվում էր գարնանը, իբրև բնության զարթոնքի, մեռնող և հարության առնող աստվածության տոն: Իսկ հունվարի մեկին Նոր տարվա տոնակատարությունը քրդերի մեջ մտել է հարևան ժողովուրդների, մեր նոր կյանքի, նոր կենցաղի ազդեցության տակ:

Քրդական որոշ ընտանիքներում ժողովրդական հին տոներից պահպանվում են «Ռամազանը», «Ղուրբան բայրամը» (մահմեդական քրդերի մոտ), «Ակյա Եզդի» և «Ակյա Խըդրնաբի» կամ «Ակյա Խըդրալյազ» տոները (եզդիների մոտ): Այս տոնակատարությունները քրդերի կուլտուրական մակարդակի բարձրացման հետևանքով որոշ փոփոխություններ են կրել: Այսպես, նախկինում նախքան տոնակատարությունը թե՛ մեծերը և թե՛ փոքրերը ծոմ էին պահում (մահմեդականները՝ երեսուն օր, իսկ քուրդ եզդիները՝ երեք օր): Այժմ հիմնականում վերջ է տրվել ծոմ պահելու սովորությանը: Ծոմ պահում են միայն կրոնամոլ հատ ու կենտ ծերունիներ, պառավ կանայք, այն էլ երբեմն կիսով չափ՝ 1—12 օր, բացի այդ, նման տոնակատարությունների ժամանակ նախկին կրոնական արարողությունները լրիվ չեն կատարվում: Դրանք վեր են ածվում ուրախառիթ օրերի, ընդ որում դրանց կատարումը խրախճանքի բնույթ է ստացել ոգելից ըմպելիքի մուտք գործելու հետևանքով, մի բան, որ հնում խստիվ արգելվում էր:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՄԱՆՈՒԿ ՍԵՐՆԴԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մանուկ սերնդի, որպես մեր գալիքը կառուցողների, դաստիարակությունը սովետական հասարակարգում խիստ կարևոր նշանակություն ունի՝ ուստի և՛ Կոմունիստական պարտիան և՛ Սովետական կառավարությունը այդ գործի վրա առանձնահատուկ ուշադրություն են դարձնում:



Փոքր մանուկները մանկապարտեզում

Նախասովետական շրջանում քուրդ երեխաները դաստիարակվում էին նահապետական սովորությունների ու կենցաղի միջա-

վայրում, նրանց դաստիարակության վրա ուշադրություն չէր դարձվում, նրանք կրավորական կերպով ընկալում էին այն ամենը, վատ թե լավ, ինչ գոյություն ուներ ընտանիքում և հասարակական կյանքում: Ներկայումս քուրդ մանուկ սերնդի դաստիարակությամբ և կրթությամբ զբաղվում են դպրոցը, պիոներական, կոմերիտական ու պարտիական կազմակերպությունները՝ համագործակցած ընտանիքի և գյուղական ողջ հասարակության հետ: Միաժամանակ սրանք, հատկապես դպրոցը, աշակերտության միջոցով մեծ ազդեցություն են թողնում քրդական ընտանիքի կենցաղի ու սովորությունների վերափոխման վրա: Այսպիսով, դպրոցի դերը խիստ մեծ է ոչ միայն քուրդ երեխաների, այլ ընտանիքի և գյուղական հասարակության վերադաստիարակման տեսակետից:

Դպրոցի աշակերտների մեջ հետևողականորեն պատվաստվում է շիտակություն, թերությունների նկատմամբ քննադատական մոտեցում, սեփական արժանապատվության գիտակցում և միաժամանակ հարգանք հասարակության մյուս անդամների՝ հատկապես մեծահասակների ու կանանց նկատմամբ և մի շարք բարոյական նման այլ հատկանիշներ, որոնք անհրաժեշտ են սովետական ազնիվ քաղաքացի դառնալու համար:

Դպրոցը և ընտանիքը փոխադարձ սերտ կապ են պահպանում միմյանց հետ, որն արտահայտվում է ծնողների հաճախակի այցելություններով դպրոց, ուսուցիչների նույնպիսի այցելություններով ընտանիք: Դա նպաստում է դպրոցական և ընտանեկան դաստիարակության մեջ եղած տարբերությունների համահարթմանը և միասնականացմանը, այլապես մեկը կարող է ակամա խանգարել մյուսին, հատկապես դպրոցի արածը խաթարվել ընտանիքի կողմից, ինչպես երբեմն պատահում է, երբ թույլ է լինում դպրոցի և ընտանիքի կապը:

Շահումյանի շրջանի Փոքր Նեջլու գյուղի ուսուցիչ Ուսոյը շաբաթվա մեջ որոշ օրեր, ուշ երեկոյան, առանց աշակերտների ընտանիքներին նախազգուշացնելու, մտնում է նրանց բնակարանները, հետաքրքրվելու, թե դասերը պատրաստելու համար ինչպե՞ս է աշխատում տվյալ աշակերտը, ինչպիսի՞ պայմաններում սերտում, թե՞ թոնրի կողքին նստած, ինչպիսի՞ լուսավորության տակ, սենյակում աղմուկ է, թե՞ լռություն, սենյակը տաք է, թե՞ ոչ, տանը ընտանիքի անդամներից մեկն ու մեկը օգնում է արդյոք աշակերտին: Ընկ. Ուսոյը միևնույն ժամանակ զրույց է ունենում ծնողների հետ, նրանց երեխաների առաջադիմության, վարքի մասին և

այն մասին, թե ծնողները ինչպես պետք է հետևեն երեխաների տնային հանձնարարությունների կատարմանը և այլն:

Չնայած սովետական օրով երեխաների դաստիարակության ասպարեզում մեծ տեղ է տրվում դպրոցին, ուսուցչական կոլեկտիվին, այնուամենայնիվ, երեխաներին դաստիարակելու հիմնական պատասխանատվության զգալի մասը ընկնում է ծնողների և ընտանիքի ձեռնհաս մյուս անդամների վրա:

Քուրդ ծնողներից ոմանք, ակտիվորեն մասնակցելով հասարակական կյանքին, աշխատելով պետական և հասարակական կոոպերատիվ հիմնարկ-ձեռնարկություններում և հանդես գալով որպես սովետական ակտիվ քաղաքացիներ, սակայն, ընտանեկան կենցաղում որոշ պահպանողականություն են ցուցաբերում: Ճիշտ է, հին կենցաղի մեջ էլ կան դրական կողմեր, անխախտ օգտակար սովորություններ, որոնք կարելի է փոխ առնել, ինչպես, օրինակ՝ հարգանքը դեպի ծնողները, կարիք եղած դեպքում հարևաններին թե՛ տնտեսապես և թե՛ բարոյապես օգնելը, հյուրասիրությունը և այլն, բայց մեր կյանքն ու կենցաղը սկզբունքորեն տարբերվում է հնից:

Ընտանեկան դաստիարակության ասպարեզում ծնողներին հաճախ օգնում են դպրոցի ուսուցիչները, որոնց միջամտությամբ հարթվում են ներընտանեկան որոշ վեճեր: Վերցնենք, օրինակ՝ երեխաների նկատմամբ խորթ մոր վատ վերաբերմունքի վերացումը, ընտանիքում երեխաներին ծեծելու դեմ պայքարելը, երեխաների մեջ դեպի աշխատանքը սերն ուժեղացնելը և այլն:

Նախկինում երեխաների խնամքը թողնված էր ինքնահոսի, իսկ նրա կարիքների նկատմամբ հոգատարությունը մեծ մասամբ հանձնված նախախնամությանը: Այժմ երեխաներին ժամանակին հագցնում են, կերակրում և կուլտուրական կերպով կազմակերպում նրանց հանգիստը: Ներկայումս մանուկ սերնդի դաստիարակության ասպարեզում նորություններից մեկն էլ այն է, որ դաստիարակությունը դրված է ընտանիքի հավասարության հիմունքների վրա, ընտանիքի երկսեռ անդամների միջև խտրություն չդնելու հիման վրա:

Երեխան դպրոցում կոփվում է մտավոր և ֆիզիկական դաստիարակությամբ: Լավ դաստիարակության պարագայում երեխան միշտ ձգտում է ամեն ինչով նմանվել ուսուցչին և հաճախ ավելի հետևում է նրան, քան ծնողներին: Բայց ընտանիքում միշտ չէ, որ հետևում են երեխաների դաստիարակության գործին, վարք ու

բարքին: Կան ընտանիքներ, որտեղ նույնիսկ փչացնում են այն, ինչ երեխան ստացել է դպրոցում: Երեխայի դաստիարակության գործում բացասական հետևանք է ունենում ընտանիքի հասուն անդամների ոչ միասնական վերաբերմունքը երեխաների նկատմամբ, որի հետևանքով, ինչպես իրենք են ասում, «Հար յակ ալիկի դըջչինա» (ամեն մեկը մի կողմ է քաշում):

Ընդհանուր առմամբ, սակայն, քուրդ ընտանիքները դարձել են բավական կուլտուրական և նրանք դպրոցի հետ միասին հաջողությամբ են իրագործում երեխաների դաստիարակության գործը: Այդպիսիններից է Բաշարգեչարի շրջանի Կոլարաշ գյուղի բնակիչ Շարանով Միրզոյի ընտանիքը: Շարանովն ունի վեց երեխա, որոնցից հինգը սովորում են միջնակարգ դպրոցի տարբեր դասարաններում: Ապարանի շրջանի Ալագյազ գյուղի բնակիչներ Լեշոն և իր կինը՝ Զալխեն, մեծացրել և դաստիարակել են երեք տղա, որոնք ստացել են բարձրագույն կրթություն և պատասխանատու աշխատանք են տանում պետական հիմնարկներում: Խդոյե Մհոյի ընտանիքում կան երեք տղա և երեք աղջիկ: Խդոն պարտիզական է, սրա տղաներից մեկը աշխատում է իբրև ուսուցիչ, մյուսը քրդական «Ռյա թազա» թերթի պատասխանատու քարտուղարն է: Երկուսն էլ ունեն բարձրագույն կրթություն, երրորդ տղան՝ Տիտալը սովորում է Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտում, իսկ Խդոյի աղջիկները սովորում են Ալագյազի միջնակարգ դպրոցում: Ջնդիև Ալոյի ընտանիքը: Ինքը՝ Ջնդիև Ալոն և կինը՝ Սանամա Սմոն, առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմի ժամանակ Ղարսի մարզի Ղզլչա գյուղից գաղթել են Ալագյազ գյուղը: Նրանք ունեին յոթ տղա, որոնցից մեկը՝ Միշաե Ջնդին, զոհվեց Հայրենական Մեծ պատերազմում, մնացած վեց տղաներից մեկը սովորում է Երևանի Անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտում, երկուսը առաջին կարգի շոֆերներ են, իսկ մյուս երեք տղաները սովորում են Ալագյազի միջնակարգ դպրոցում: Հայրը մահացել է, մոր՝ Սանամի ջանքերի շնորհիվ որդիները ստացել են օրինակելի դաստիարակություն, ձգտում են աշխատանքի և ուսման, ընկերասեր ու մարդասեր են:

Քրդերը սովորում են հարևան ժողովուրդների երեխաների հետ միասին: Ապարանի, Թալինի, Բաշարգեչարի, Էջմիածնի, Հոկտեմբերյանի շրջանների բազմաթիվ գյուղերում նրանք սովորում են հայերի ու ադրբեջանցիների, Լաչինի, Քյալբաջարի շրջաններում՝ ադրբեջանցիների, իսկ Վրաստանում (Թբիլիսի) ռուսների, հայերի և վրացիների հետ:

Տարբեր ժողովուրդների, այդ թվում քրդերի դպրոցական աշակերտները միմյանց հետ կապված են ընկերական, եղբայրական սերտ կապերով, նրանք միասին խաղում են, զվարճանում ու սովորում, հաճախում կինո և թատրոն: Այս ժողովուրդներն ունեն բազմաթիվ միասնական պարեր, երգեր և այլն: Դրանց պարերից հայտնի են «Լեզգինկան», «Քոչարին», «Ռոմանին», «Փափուրին», «Սանդարին» և այլն: Խաղերից՝ «բըռ», «լախտի», «չալիկ-մալիկ», «երկար էշ», «ալըղ», «հավալաս» և այլն:

Խաղերը, պարն ու երգը քրդերի, ինչպես նաև անդրկովկասյան մյուս ժողովուրդների մեջ լայն տարածում ունեն: Այս երգերը, պարերը և խաղերը քրդերի համար շատ հարազատ են և կատարվում են հարսանյաց ուրախության, խրախճանքների ժամանակ:

Սովետական շրջանի քրդերի կենցաղի մեջ են մտել եղբայրական մյուս ժողովուրդների երգն ու պարը, որոնք նույնպես նպաստում են բարեկամության ամրապնդմանը նրանց միջև:

Բայց կան հետամնաց ծնողներ, որոնք իրենց երեխաներին դաստիարակում են հնի ոգով: Նման դաստիարակություն ստացած երեխաները պիոներական, ընկերական կոլեկտիվներում իրենց հետամնացությամբ իսկույն աչքի են ընկնում: Կոլեկտիվը անմիջապես ուշադրություն է դարձնում նրանց վրա և վերադաստիարակում:

Քուրդ երեխաները բազմազան միջոցներով ընկերական, եղբայրական սերտ կապեր են հաստատում այլազգի երեխաների հետ: Ուսուցիչների ղեկավարությամբ կազմակերպվում են դպրոցականների էքսկուրսիաներ Մոսկվա, Լենինգրադ, Թբիլիսի, Երևան, Բաքու և այլ վայրեր: Էքսկուրսիաների միջոցով նրանք ծանոթանում են միութենական արդյունաբերական վայրերին, քաղաքներին և գյուղերին, թանգարաններին, կուլտուրական օջախներին ու կենդանի կապ հաստատում տեղերի դպրոցականների հետ:

Այս ամենը նպաստում է երեխաների կոմունիստական դաստիարակության մեծ գործին:

Մանուկ սերնդին գործնական կյանքի նախապատրաստելու տեսակետից, կենսական նշանակություն ունի նրա աշխատանքային դաստիարակությունը: Քրդերի համար այն հատկապես կարևոր է այն նկատառումով, որ անցյալում տիրող դասակարգի կողմից, որը ոգեշնչվել է մահմեդական կրոնի աշխարհայացքով, արհամարհական վերաբերմունք է դաստիարակվել աշխատանքի նկատ-

մամբ, աշխատանքը նրանց մոտ համարվել է «շնուն հարկանա» (անասունի գործ), քարոզվել է սրի ուժով, ավարառությամբ, ուրիշների հաշվին ապրելու գաղափարը, հետևելով «մարդը մարդու նկատմամբ գայլ է» սկզբունքին: Չնայած սրան, իրենց քըրտինքով ապրող խաշնարած և երկրագործ քրդերը միշտ էլ խորապես հարգել են աշխատանքը և աշխատավորին:

Մեր երկրում աշխատանքը որպես ապրուստի, կյանքի աղբյուր, դարձել է փառքի ու պատվի գործ: ՍՍՌՄ Կոնստիտուցիայում՝ արձանագրված է. «Ով չի աշխատում, նա չի ուտում»: Ժողովրդական այս ասացվածքը, որ տեղ է գտել մեր պետական բարձրագույն օրենսգրքում, լրիվ կերպով արտահայտում է մեր հասարակարգի վերաբերմունքը աշխատանքի նկատմամբ:

Այժմ քրդական սովետական գյուղում չաշխատողին կամ աշխատանքից խուսափողին, որոնք շատ քիչ են, պարսավանքի են ենթարկում, այդ երևույթը որակելով զանազան նախատական մակդիրներով՝ «ատալա» կամ «ավարա», «բեճարա», «լոդր», «սիմսլանդ», «բեխամ», «բեղուծ» և այլն:

Քրդական ընտանիքում երեխաներին սովորեցնում են աշխատել դեռ մանուկ հասակից, իհարկե, իրենց ուժերի չափով: Երեխայի աշխատանքն անմիջապես առնչվում է իր առօրյա կյանքի և ընտանեկան ապրելակերպի հետ:

«Ինքս հաճույքով տեսնում եմ,—ասում է Արթիկի շրջանի Փանասար գյուղի բնակչուհի Բաշեա Զաչյան,— թե ինչպես շարժվում են իմ որդու փոքրիկ մատները, նա կոճկում է կոճակները, կոշիկները սրբում և հագնում, գլխարկն ու մյուս հագուստները խոզանակով մաքրում, դասագրքերը կարգի բերում գրապանակներում: Նա աշխատում է դպրոցական փորձադաշտում, ջուր բերում տունը մոտակա ծորակից, ձմռանը փոքրիկ թիակով դռան ձյունը մաքրում և կատարում այլ աշխատանքներ»:

Ազատ ժամերին և արձակուրդներին երեխաները մասնակցում են նաև գյուղատնտեսական աշխատանքներին՝ ոչխարի կթին, հնձվորների համար ուտելիք տանելուն, գառներ արածեցնելուն, փոցխ անելուն և այլ աշխատանքների: Աշխատանքից խուսափող երեխաների նկատմամբ ծնողները ոչ թե առաջվա նման դիմում են մարմնական պատիժների կիրառման, այլ խրատելու, համոզելու մեթոդին:

Ընդհանուր առմամբ ժամանակակից քրդական ընտանիքում

մանուկ սերունդը դաստիարակվում է դժվարությունները հաղթահարելու, ծուլությունը ատելու ոգով:

Քրդական գյուղերում, սակայն, դեռևս գտնվում են այնպիսի ընտանիքներ, որոնց երեխաներին աշխատանքի չեն վարժեցնում՝ «ամոթ» պահելու միտումով: Կան նաև այնպիսի ընտանիքներ, որոնք չգիտեն, թե ինչպես իրենց երեխաներին սովորեցնեն աշխատել, ինչից սկսել և ինչով վերջացնել: Որոշ ընտանիքներում մեծ եղբայրն օգտվելով ավագության հին կարգից, որի մնացուկներն այսօր էլ կարելի է տեսնել գյուղում, իր կնոջ հետ միասին երբեմն շահագործում է փոքր, համեստ եղբորը կամ որբ երեխային, նրանց նույնիսկ զրկելով դպրոցից, որի դեմ, սակայն, պայքարում են թե՛ գյուղական հասարակությունը և թե՛ տեղական կազմակերպություններն ու վարչական մարմինները:

Այսպիսով, ընտանիքը և դպրոցը, հասարակական կազմակերպություններն ու վարչական մարմինները իրագործում են մանուկ սերնդի դաստիարակությունը քրդական սովետական գյուղում, երեխաների մեջ պատվաստելով աշխատասիրություն, կոմունիստական բարոյականություն, հայրենասիրություն և ինտերնացիոնալիզմ:

Սա միաժամանակ վկայում է այն մասին, որ քրդական սովետական ընտանիքը իր նեղ շահերով ապրող միավոր չէ, ինչպիսին էր նա անցյալում: Նա սերտ կապերի մեջ է դպրոցի, հասարակական, քաղաքական կազմակերպությունների, ամբողջ հասարակության հետ:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՆՈՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱԶՄԸ

Անդրկովկասում սովետական կարգեր հաստատվելուց հետո քրդական գյուղը հիմնական վերակառուցման պրոցես ապրեց, որի հետևանքով ընտանիքը թե՛ կազմի և թե՛ ընտանեկան հարաբերությունների տեսակետից արմատական փոփոխության ենթարկվեց:

Դեռևս Սովետական իշխանության առաջին տարիներին Անդրկովկասի քրդական գյուղերում սկսվում է մեծ ընտանիքների տրոհումը, որոնք հիմնականում կուլակային ընտանիքներ էին: Այս երևույթը սկսեց ավելի ուժեղանալ 1930-ական թվականներին, երբ նրանց նկատմամբ կիրառվեց հատուկ հարկային քաղաքականություն:

Գերդաստանի տրոհմանը նպաստեց նաև կոլտնտեսային զարգացումը քրդական գյուղում: Հետագայում, գյուղացիությունը կոլտնտեսությունների մեջ ընդգրկվելուց հետո, աշխատավորական մեծ ընտանիքների տրոհումը այլ բնույթ է ընդունում:

Այդ շրջանում տնամերձ հողամասի դերը դեռևս մեծ էր քրդական ընտանիքի համար, որի հետևանքով էլ շատ թե քիչ մեծ ընտանիքները բաժանվում, մանրատվում էին՝ տնամերձ հողամասեր ստանալու ակնկալությամբ:

Այս պայմաններում բաժանքը անմիջապես հետևում էր հարսանիքին, կանխորոշվում էր դեռևս հարսանիքի նախապատրաստության շրջանում: Միաժամանակ նախապատրաստվում էր ապագա ամուսնական զույգի բնակարանն իր կահավորումով և նորահարսին ուղղակի տանում էին նոր բնակարան: Սրա հետև-

վանքով 1930-ական թվականներից հիմնականում առաջանում են փոքր ընտանիքներ։

Մեծ ընտանիքների վերացման հետևանքով, վերանում են նաև ազգականներին տնային տնտեսության մեջ շահագործելու երևույթի մնացուկները, որը հատկապես լայն կիրառում ուներ կուլակային ընտանիքներում։

Փոքր ընտանիքը, նոր արտադրահարաբերությունների պայմաններում, ինքն է մշակում իր տնամերձ հողամասը և կատարում տնային տնտեսության մյուս աշխատանքները։

Ընտանիքների մանրացմանը՝ գյուղի կոլեկտիվացման սկզբնական շրջանում, նպաստել են նաև նոր սերնդի ներկայացուցիչները, որոնք ըմբռնելով կոլտնտեսությունների առավելությունները, հակառակ մոլլայի և քրմապետի կամքի, իրենց կանանց և երեխաների հետ բաժանվում էին հայրական տնից և մտնում կոլեկտիվ տնտեսությունների մեջ, կազմելով առանձին ընտանիք։ Այս երևույթը փոքրացնում էր հայրական ընտանիքը, իսկ բաժանվողներն էլ դարձյալ փոքր ընտանիք էին դառնում։ Այս բոլորի հետ միաժամանակ լինում էին նաև կեղծ բաժանքներ, որոնք բխում էին տարբեր դրդապատճառներից, սակայն, հիմնականում արդյունք էին մասնավոր սեփականատիրական տենդենցների։

Ներկայումս քրդական կոլտնտեսային գյուղում գոյություն ունեն հետևյալ կարգի ընտանիքները։

Առաջին — «Բուլֆամեն նաֆարփրա» (բազմանդամ ընտանիք), որտեղ միասին ապրում են մի քանի եղբայրներ՝ իրենց կանանցով, երեխաներով, պապերով և տատերով։ Եթե սրանց երեխաները շատ են լինում և ընտանիքի անդամները ցանկանում են ավելի կուլտուրական ապրել, բաժանվում են և կազմում առանձին ընտանիքներ։ Որոշ բազմանդամ ընտանիքներ դարձյալ հին սովորությամբ երկար ժամանակ չեն բաժանվում, որպեսզի շեն պահեն իրենց պապենական օջախը։ Այսպես, Լաչինի շրջանի Մինքենդ, Ապարանի շրջանի Քրդի Փամբ, Թալինի շրջանի Հակո և բազմաթիվ այլ գյուղերի ընտանիքների 10—15 տոկոսը այդպիսի ընտանիքներ են, որտեղ միասին ապրում են եղբայրներ՝ իրենց կանանցով և երեխաներով։ Նման ընտանիքի անդամների թիվը թեպետ 15—18 հոգուց չի անցնում, այնուամենայնիվ, դրանք անվանվում են «մալա մազն»։

Բաժանվող եղբայրները, ըստ հին սովորության, անշարժ գույքի հիմնական մասը թողնում են ավագ եղբոր ընտանիքին, որը մնում է հին տան հարկի տակ։

Երկրորդ — «Մալե դըհիժըն հավ» (խմբավորված ընտանիքներ)։ Այսպիսի ընտանիքների թիվը շատ քիչ է։ Սրանք խմբավորվում են արենակցական-ազգակցական կապերի հիման վրա՝ նկատի ունենալով հետևյալ հանգամանքները. ա) փոխօգնության

Ապարանի շրջանի Քրդի Փամբ գյուղի կոլտնտեսական Ուսուբե Իբոյի ընտանիքը

կարգը, բ) այն զավակներ չունեցող դառամյալ ծնողների միացումը իրենց փեսաների, ամուսնացած աղջիկների, եղբայրը կամ որդիները կորցրած ընտանիքների հետ։ Այսպիսի ընտանիքները սոցիալական պայմաններում մի տեսակ կոլեկտիվիստական բնույթ ունեն, սրանց անդամներն աշխատում են փոխադարձաբար օգնել միմյանց, օգնել ծերերին։

Երրորդ — «Բուլֆամեն փըրդառա» (բազմազավակ ընտանիք)։ Այսպիսի ընտանիքի հիմնական կորիզը կազմում են ծնողներն իրենց զավակներով։ Նման ընտանիքներում կարող են ապրել

տան ու պապը, այրիացած հորաքույրը և այլն: Բազմազավակ է կոչվում մոտավորապես 6—12 երեխա ունենալու դեպքում:

Չորրորդ — «Քուլֆաթե ճուկ» (փոքր ընտանիք): Այս տիպի ընտանիքը բաղկացած է լինում ծնողներից և փոքրաթիվ երեխաներից, երբեմն էլ նաև պապից ու տատից կամ սրանցից մեկից:

Կարևոր է հատկապես ընտանիքի ղեկավարության գործում կատարված փոփոխությունը: Քրդական սովետական ընտանիքը իր անդամների համաձայնությամբ, սովորաբար ղեկավարում է համեմատաբար ամենաընդունակ ու բանիմաց անդամը: Ընդհանուր առմամբ տան գլխավորը համարվում է տղամարդը: Բայց շատ դեպքերում սա ձևական բնույթ է ունենում, որովհետև կան բազմաթիվ ընտանիքներ, որտեղ ղեկավարելու ասպարեզում քրդուհին ավելի մեծ դեր է խաղում, քան տղամարդը:

Գյուղական սովետները, կոլտնտեսությունների վարչությունները այս տիպի ընտանիքներում որպես ղեկավար անձի ճանաչում են այն տղամարդուն կամ կնոջը, որին ընտանիքը համարում է իր գլխավորը: Եթե ընտանիքի մալխոեն կամ հայրը ողջ է, նա է համարվում տան գլխավորը, իսկ բացակայելու դեպքում նրան փոխարինում է մեծ որդին կամ այրին:

Իսպառ վերացել է հոր մահից հետո տան ղեկավարությունը արենակից ապամին անցնելու սովորությունը: «Դե մը ապամ չեթրա» (մայրը ապամից լավ է), հաճախ կրկնում են ընտանիքի անդամները: Այդ նշանակում է, որ հոր մահից հետո տան գլխավոր անձը պետք է համարվի ոչ թե ապամներից կամ բարեկամներից մեկը, ինչպես լինում էր առաջ, այլ մայրը կամ տանը ղեկավարելու ընդունակությունն ունեցող տատը:

Այս ամենով հանդերձ, սովետական պայմաններում, քրդական ընտանիքում գործերը անօրինում են հայրն ու մայրը, հաշվի առնելով չափահաս զավակների կարծիքը: Վերջին տարիների ընթացքում մեր ուսումնասիրությունները քրդաբնակ շրջաններում ցույց են տվել, որ տանը ղեկավարող երիտասարդների թիվը գնալով շատանում է: Այսպիսով հիմնականում վերջ է տրվել տանը ղեկավարելու մալխոեության հին ձևին:

Գյուղական ընտանիքի այն անդամները, որոնք ժամանակավոր աշխատանքի են գնում քաղաքները, սերտ կապ են պահպանում ընտանիքների հետ, ձմռանը ապրում և աշխատում են քաղաքներում (Երևան, Բաքու, Թբիլիսի, Լենինական, Ստեփանակերտ, Կիրովաբադ և այլն) և իրենց վաստակի մի մասը ուղար-

կում ընտանիքներին: Իրենք էլ, արձակուրդ ստանալով, հաճախ գնում են գյուղ՝ հանգստանալու: Ամռան ամիսներին սրանց քաղաքից գյուղ գնալը կոչվում է «չոյինա դաշտ» (ամառանոց գնալ): Սրանցից շատերը ամռան ամիսներին աշխատում են կոլտնտեսություններում: Ընտանիքի արտաքին տեսակետից որոշ նշանակություն ունի նաև ընտանիքի անդամների՝ քաղաքներում աշխատելը, քանի որ դրանցից շատերն ընկալում են քաղաքացիների վարքն ու բարքերը, ընտելանում են քաղաքի կյանքին և իրենց ընտանիքով մշտական բնակություն են հաստատում քաղաքներում:

Ազգագրագետ Դ. Վարդումյանը սովետական հայ ընտանիքի մասին խոսելիս, իրավացիորեն գրում է. «Մասնավոր սեփականության վերացման հիման վրա էլ գյուղացու ընտանիքը դադարել է հասարակության հիմնական տնտեսական միավոր լինելուց, որպիսին նա հանդիսանում էր նախասովետական ժամանակաշրջանում»[1]: Այս բնորոշումը ընդհանուր առմամբ վերաբերում է նաև քրդական սովետական ընտանիքին:

Այսպիսով, սովետական ժամանակաշրջանում քրդական գյուղում նոր, սոցիալիստական արտադրահարաբերությունների առաջացման, ինչպես նաև քրդերի կուլտուրական մակարդակի բարձրացման հետևանքով փոխվեց նաև քրդական ընտանիքի կազմը: Ընդմիշտ վերացավ նահապետական մեծ ընտանիքը, առաջ եկավ քրդական նոր ընտանիքն իր տարբերակներով «քուլֆաթե նաֆարփրա», «մալե գզհիժն հավ», «մալա փրդատա», և «քուլֆաթե ճուկ»:

Ընտանիքի կազմում տեղի ունեցած այս փոփոխությունների հետևանքով ստեղծվեցին ընտանեկան նոր հարաբերություններ:

Բ. ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սովետական օրով ընտանեկան հարաբերություններում ամենագլխավոր երևույթներից մեկը քրդուհու իրավահավասարությունն է տղամարդու հետ: Հատկապես սովետական օրենսդրությունը մեծ ազդեցություն ունեցավ քրդական ընտանիքի, նրա անդամների փոխադարձ հարաբերությունների վերափոխման վրա: Սովետական օրենքներով վերացվեցին նահապետական սովորութական իրավունքի մի շարք չափանիշների մնացուկները, ընտանեկան բազմաթիվ վնասակար սովորություններ, այդ թվում՝ կնոջ գլխագինը,

1 Դ. Վարդումյան, Լոռեցիների նոր կենցաղը, Երևան, 1956, էջ 80:

բազմակնությունը, հակառակ կնոջ ցանկության նրան չսիրած տղամարդու հետ ամուսնացնելը, կնոջ ծեծը, անչափահաս աղջկան ամուսնացնելը, լևիրատը, կնոջ առևանգումը, տիրապետող էնդոգամիան և այլն:

Այժմ կնոջ և տղամարդու ամուսնական կապերը հիմնված են միմյանց օգնելու, հարգելու և փոխադարձ սիրո վրա: Քրդուհին փշրեց նահապետական կենցաղի շղթաները, նա դուրս է եկել հասարակական-քաղաքական կյանքի ասպարեզ և դարձել է ինքնուրույն, շատ հաճախ չի ենթարկվում դեռևս որոշ ընտանիքներում դրսևորվող տղամարդու բռնակալությանը: Նա ակտիվորեն մասնակցում է հասարակական կյանքին: Ապարանի շրջանի Ալագյազ գյուղից քրդուհի Նիգարա Ղադրը, հակառակ ընտանիքի որոշ անդամների ցանկության, որոնք ուզում էին նրան փոքր տարիքում ամուսնացնել, կրթություն ստացավ և դարձավ ուսուցչուհի: Նման բազմաթիվ օրինակներ կարելի է բերել:

Հասարակական կյանքին մասնակցելու շնորհիվ, հետզհետե վերանում է քրդուհի հարսի չխոսկանությունը: Նկատելի է, որ կոլտնտեսային աշխատանքների ժամանակ քրդուհին ավելի ազատ է զգում իրեն, քան թե տնային պայմաններում, բայց առաջինի ազդեցությամբ ընտանիքում նույնպես քրդուհին աստիճանաբար սկսում է իրեն անկաշկանդ պահել ոչ միայն ոչ-ազգակիցների, այլև արենակից-ազգակից տարեց տղամարդկանց հետ: Եթե առաջ ընտանիքում բերանը չծածկող կնոջը նախատում էին «շարմա» բառով, այժմ նույն բառը գործ են ածում այն կանանց նկատմամբ, որոնք փորձում են բերանը ծածկել սկեսրայրի, սկեսրի, տեգրերի և այլոց ներկայությամբ:

Այսպիսով, բացի սովետական օրենքների ազդեցությունից, համատեղ աշխատանքը նպաստավոր պայմաններ է ստեղծել սովորութական իրավունքի չափանիշների մնացուկներն ընտանեկան կենցաղից վերացնելու համար:

Քրդուհու նկատմամբ վերաբերմունքը փոխվել է նաև երեխաների դաստիարակության գործում: Եթե նախկինում երեխաներին դաստիարակելու նախապատվությունը տրվում էր տղամարդուն կամ տան մալխեին, այժմ ընդհակառակը, կինը երեխաների դաստիարակելու ասպարեզում նույն իրավունքներն ունի, ինչ որ տղամարդը կամ տան գլխավոր անձը:

Ընտանեկան այս իրավունքները, իհարկե, ձևակերպված չեն օրենսգրքերում, այնուամենայնիվ, սովետական ընտանեկան պայ-

մաններում ստեղծված նոր հարաբերությունների և ընտանիքի անդամների նոր մորալի շնորհիվ այդ բանը արմատապես մարմնավորվել է նրանց մեջ: Բացի այդ, կնոջ նկատմամբ Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության նյութական, բարոյական օգնությունն ու հոգատարությունը չափազանց բարձրացրեց քրդուհու պատիվն ու հարգանքը ընտանիքում և շրջապատում:

Այսպիսով, կնոջ նկատմամբ լրիվ սովետական օրով կատարվեց Ֆ. Էնգելսի կանխատեսումը:

«Կնոջ ազատագրումը,—ասում է Էնգելսը,—այն ժամանակ միայն հնարավոր կդառնա, երբ նա կկարողանա լայն հասարակական մասշտաբով մասնակցություն ունենալ արտադրության մեջ, իսկ տնային աշխատանքը նրան կզբաղեցնի միայն աննշան չափով»[1]:

Անդրկովկասյան քրդական ընտանիքի անդամների միջև եղած հարաբերությունները խարսխված են փոխադարձ օգնության և սիրո վրա: Ընտանիքի անդամներն ամեն մի քայլափոխում աշխատում են թե՛ նյութապես և թե՛ բարոյապես օգնել միմյանց՝ տղամարդը՝ կնոջը, ծնողները՝ երեխաներին, եղբայրները՝ քույրերին և հակառակը:

Ընտանիքում կնոջ դերի ու հարգանքի մասին է խոսում այն հանգամանքը, որ նախկինում բազմազավակ կնոջ նկատմամբ գործածվող վիրավորական «խոլա հեժկա» (ձագերի տեր) արտահայտությունը հիմնականում վերացել է, դրա փոխարեն այժմ նման կնոջն անվանում են «ժընա դոշաև» (կարող կին), «ժընա ազիա» (հերոս կին), «ժընա զոր» (զորեղ կին) և այլն:

Քրդուհու ինքնուրույնությունը դրսևորող որոշ տարրեր էլ գալիս են խոր անցյալից: Քրդուհին, ինչպես անցյալում, ներկայումս էլ ամուսնությունից հետո գրվում է ոչ թե ամուսնու, այլ հորենական ազգանունով:

Սակայն, թեև ընտանիքում հիմնականում վերացել է կանանց չխոսկանությունը, նորահարսները ավագ սերնդի ներկայացուցիչների ներկայությամբ, իբրև հարգանքի նշան, դեռևս շարունակում են պահպանել այդ սովորությունը: Բայց դա անցյալի նման երկարատև չի լինում, նորահարսը հարսանիքից մի քանի ամիս հետո

1 Ֆ. Էնգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Երևան, 1948, էջ 214:

աստիճանաբար սկսում է խոսել ընտանիքի ավագ անդամների՝ սկեսրայրի, սկեսրոջ և տեգրերի հետ:

Հակառակ նախահեղափոխական շրջանի քրդական ընտանեկան սովորութական իրավունքի, նորափեսան ընտանիքում ազատ կերպով տալիս է կնոջ ու երեխաների անունը, իսկ նորահարսը ընտանիքի անդամների և դրսի մարդկանց ներկայությամբ տալիս է ամուսնու անունը: Ամուսինները իրենց կանանց հետ, ընտանիքի անդամների ներկայությամբ, առանց քաշվելու խոսում են, զրուցում, մտքեր փոխանակում, ընտանեկան խնդիրներ լուծում, իրենց երեխաների հետ զբաղվում, գրկում ու փայփայում նրանց, և այս բոլորը, որ հին ընտանիքում բացառված էր, այժմ արդեն կենցաղ է դարձել:

Ընտանեկան հարաբերությունների մեջ գրեթե վերացել է նաև ավագության կարգը, որը ստրկացուցիչ մի երևույթ էր ընտանիքի կրտսեր անդամների, մանավանդ հարսների համար: Չնայած դրան, այժմ էլ ընտանիքի ավագ անդամների, ծնողների նկատմամբ կա պատշաճ հարգանք, որը գնալով խորանում է: Ի նշան հարգանքի, ճաշելիս, նստելիս, աշխատելիս և այլ պարագաներում նախապատվությունը տրվում է ընտանիքի մեծահասակ անդամներին, ծնողներին: Ճաշելու ժամանակ ընտանիքի անդամների, առանց սեռերի խտրության, համախմբվելը միևնույն սեղանի շուրջը, հետըզհետե լայն տարածում է ստանում:

Ընտանեկան հարաբերությունները պարզաբանելու տեսակետից որոշ նշանակություն ունի ժառանգության հարցը: Այժմ քրդական ընտանիքում փոխվել են նաև ժառանգության նորմաները:

Նախահեղափոխական շրջանում գոյություն ունեցող պետական օրենքի համաձայն, կինը ամուսնու մահվանից հետո իրավունք ուներ ժառանգելու անշարժ գույքի մեկ յոթերորդ և շարժականի մեկ քառորդ մասը: Սակայն քրդերը նույնիսկ այդ օրենքը չէին կիրառում, նրանք ղեկավարվելով սովորութական իրավունքով, ամուսնու մահվանից հետո ընտանիքի ունեցվածքից ոչինչ չէին տալիս կնոջը: «Ժըն չըյա, ուկի միրաթե բաքինա (կինն ի՞նչ է, որ ժառանգորդ դառնա), ասում էին նրանք:

Սակայն մեր երկրում, որտեղ ոչնչացված է մասնավոր սեփականությունը, ժառանգության՝ սովետական պետական իրավունքը օժանդակում է ընտանիքի անդամների անձնական սեփականության պահպանմանը, ընտանիքի ամրապնդմանը:

Սովետական օրենքով, որոշակի պայմաններում, կինը նույն իրավունքներով կարող է ժառանգորդ հանդիսանալ, ինչպես տղամարդը: Կնոջ նկատմամբ պետական նման հոգատարության շնորհիվ, քրդական ընտանիքում ավելի է բարձրանում կնոջ պատիվն ու հարգանքը: Այս հանգամանքը մեծ նշանակություն ունի ընտանիքում ավելի լավ հարաբերություններ ստեղծելու տեսակետից:

Այժմ քրդական ընտանիքում ծնողների և զավակների, ամուսինների ժառանգության իրավունքները փոխադարձ են: Ինչպես զավակները՝ ծնողների, նույնպես էլ կինը ամուսնու մահից հետո իրավունք ունեն ժառանգելու նրանց ունեցվածքը: Այս մասին կա ձևակերպված կետ սովետական պետական օրենսգրքում: Սա ցույց է տալիս ընտանիքում կնոջը լիակատար իրավունքներ տալու հանգամանքը:

Այն անձը, որի ունեցվածքը իր մահից հետո անցնում է մի ուրիշ անձի, դա լինի իր զավակը, թե՛ արենակիցը, միևնույն է, քրդերեն կոչվում է «խուդմիրաթ», իսկ նա, որին անցնում է ժառանգությունը՝ «միրաթխոր»: Մահացածի ամբողջ ունեցվածքը կոչվում է «միրաթ»:

Այս բառերը հին ծագում ունեն, հավանորեն առաջ են եկել նախնադարյան տոհմային հասարակության շրջանում, երբ տոհմի անդամներից մեկը մահանում էր, տոհմային իրավունքի համաձայն, նրա ունեցվածքը ժառանգում էին վերջինիս ազգականները՝ որդիները, հորեղբայրները և այլն:

Այժմ «միրաթը» հավասար չափով կնոջը ևս տրվելու շնորհիվ, առաջացել է հետևյալ դարձվածքը՝ «ժընա խուդմիրաթ» (ժառանգորդ կին): Այս դարձվածքը քուրդ ծերունիների ականջին խորթ է հնչում, նրանցից ոմանք երբեմն մրթմրթում են՝ «շըխալե դընյաեյա» (աշխարհի բանն է): Ժառանգորդը անձնական սեփականության, աշխատանքային եկամուտների, խնայողությունների և սպառման բոլոր առարկաների նկատմամբ ունի ժառանգելու իրավունք: Այսպես, մահացածի որդին կամ արենակիցը, աղջիկը կամ կինը սովետական օրենքների հիման վրա ժառանգում է հանգուցյալի կենդանության ժամանակ վաստակած, բայց դեռևս չստացած աշխօրերի վարձատրությունը:

Ընտանիքում, ծնողների մահից հետո, ժառանգներ հանդիսանում են այն երեխաները, որոնք սերվել են գրանցված ամուսնության մեջ գտնվող ծնողներից: Այստեղ որոշ դեր են խաղում նաև սովորութական իրավունքի մնացուկները, որովհետև լինում

են չգրանցված ամուսիններ, որոնց մահից հետո ժառանգությունն անցնում է զավակներին կամ ազգականներին՝ սովորութային իրավունքով:

Այս դեպքում ևս, սովետական օրենքների ազդեցությամբ, ընտանիքում քրդուհու իրավունք է վերապահվում՝ ժառանգելու ամուսնու ունեցվածքը: «Միրաթի» կտակման ձևը նախկինում շատ թույլ է եղել քրդերի մեջ, որը պետք է բացատրել քրդերի մեջ գոյություն ունեցած գերդաստանական, բարական հարաբերություններով:

Քրդական ընտանեկան տրադիցիաների համաձայն, իբրև մնացուկ, որոշ ընտանիքներում այժմ էլ ընտանիքի սեփականությունը կազմող ունեցվածքի մեջ չեն մտնում հարսի հոր տնից բերած «ջըհեզը», «շքարթը» և նվերները, այդ բոլորը կազմում են հարսի անձնական սեփականությունը, անձեռնմխելի են համարվում, ժառանգման ենթակա չեն:

Այս սովորությունը, իբրև հնի մնացուկ, այժմ էլ գոյություն ունի Անդրկովկասի գրեթե բոլոր քրդերի մեջ:

Ընտանեկան բաժանքներ— Ներկայումս ընտանեկան բաժանքները մեծ մասամբ առաջ են գալիս ընտանիքի անդամների կուլտուրական մակարդակի բարձրացման հետևանքով: Բաժանքը որոշ դեպքերում հետևանք է լինում նաև հարսների դժտությունների՝ միմյանց և սկեսրոջ հետ: Բաժանվելով հորենական տնից, եղբայրներն իրենց ընտանիքներով՝ կնոջով ու երեխաներով, ապրում են առանձին բնակարաններում՝ իրենց հնարավորություններին համապատասխան և, ցանկացած ձևով կահավորելով այն, կազմակերպում են իրենց ներընտանեկան կյանքը: Մինչև անգամ եղբայրները դժվարությամբ են համաձայնվում միմյանց հետ երկար ժամանակ ապրել մի հարկի տակ:

Եթե նախկինում բաժանքները կատարվում էին ցեղապետների, բարապետների միջոցով, այժմ, ընդհակառակը, բաժանքը կատարվում է առանց նրանց, առանց արենակից ազգականների և պաշտոնյաների միջամտության, առանց կռիվների, փոխադարձ ըմբռնման պայմաններում:

Ներկայումս բաժանքը հաճախ ձևակերպվում է «բաժանագրերով», որը բոլորովին նոր երևույթ է քրդերի կյանքում, այն հաստատվում է տեղական իշխանության կողմից: Սակայն տեղի են ունենում նաև այնպիսի բաժանքներ, որոնք չեն վավերացվում պետական համապատասխան օրգանների կողմից, այլ կատարվում

են սովորութական իրավունքի կանոններով՝ փոխադարձ համաձայնության և հավատարմության հիման վրա:

Քրդական սովետական ընտանիքում այժմ էլ գոյություն ունեն հին կենցաղի մնացուկներ, որոնք որոշ դեր են խաղում ընտանեկան հարաբերություններում: Այդ մնացուկներն ընտանիքում բախումներ են առաջ բերում հին և նոր սերնդի ներկայացուցիչների միջև:

Ոմանք կարծում են, թե ընտանիքում ծագած այդ վեճերն ու անախորժությունները ընտանիքի որոշ անդամների «վատ բնավորության» հետևանք են: Դա սխալ է: Ընտանեկան այդ վեճերն ու անախորժությունները ոչ այլ ինչ են, եթե ոչ հին ու նոր բարքերի, տրադիցիաների բախման արդյունք: Հնի և նորի պայքարում վաղուց արդեն ետին պլան են մղվել հնի մնացուկները, միշտ ստեղծվում է նորը՝ ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կենցաղը, որը քրդական սովետական ընտանիքում նոր որակ է կազմում:

Ընտանիքում հետաքրքիր են ամուսինների, ծնողների, երեխաների, պապերի, տատերի, նրանց որդիների և թոռների, եղբայրների և հարսների փոխադարձ հարաբերությունները: Ամուսինների հարաբերությունները, ինչպես ասվեց, հիմնված են նրանց փոխադարձ սիրո և օգնության վրա: Ներկայումս համարյա վերջ է տրվել կնոջ ստրկացմանը, որա հետևանքով ծագած ընտանեկան անախորժություններին և արյան վրեժառությանը: Նույնը կարելի է ասել ծնողների և երեխաների փոխադարձ հարաբերությունների մասին: Երեխաների նկատմամբ նախկինում գոյություն ունեցող խստությունները վերացել են: Վերացել է նաև երեխաներին ծեծելու, տնից վռնդելու և հայհոյանքի միջոցով «խելքի բերելու» սովորությունը: Երեխաների նկատմամբ, որոնք դաստիարակվում են սովետական դպրոցում և կրթություն ձեռք բերում, նման միջոցների դիմելը ընտանիքում այժմ ամոթալի է համարվում: Երեխաները քրդական ընտանիքում այնպես են դաստիարակվում, որ իրենց ուժերի ներածին չափ կատարում են որոշ պարտականություններ, հարգում են տան անդամներին, հարևաններին, ձգտում են ուսում ձեռք բերել, լինել աշխատասեր, հայրենասեր և ընկերասեր: Այդ պատճառով էլ ծնողների և իրենց զավակների միջև սերը ավելի ու ավելի է խորանում:

Ինչ վերաբերում է եղբայրների փոխհարաբերություններին, ինչպես նախասովետական շրջանում, այնպես էլ այժմ նրանց հա-

րաբերությունները հիմնված են փոխադարձ հարգանքի վրա: Եթե կրտսեր եղբայրը սովորում է, աշխատող եղբայրը նյութապես օգնում է նրան, որպեսզի նա կարողանա ուսում ձեռք բերել, նույն օգնությունը տրվում է նրան նշանդրեքի, հարսանիքի կամ որևէ դժբախտության դեպքում: Եղբայրները միշտ պայքարում են ընտանիքի բարօրության համար և պատրաստ են պաշտպանել միմյանց, իրենց ընտանիքի անդամներին և նրանց արժանապատվությունը:

Պապերն ու տատերը՝ հին սերնդի ներկայացուցիչները, չնայած ընտանիքում նրանց ունեցած արժանավայել տեղին, այնուամենայնիվ, իբրև հին կոլխոզնիկներ, ընտանիքի երիտասարդ անդամների վրա մեծ ազդեցություն չունեն:

Ընտանիքում հետաքրքիր են խորթ մոր, խորթ հոր և խորթ զավակների փոխհարաբերությունները: Դեռևս ընտանիքի անդամներից շատերը տարբերություն են դնում իրենց հարազատ և խորթ զավակների միջև: Հին համեմատությամբ, ընտանեկան այդ երևույթի մեջ կատարված փոփոխությունները կայանում են նրանում, որ այժմ խորթությունը չի արտահայտվում դեսպոտական միջոցներով, ինչպես այդ տեսնում ենք նախասովետական շրջանի քրդական ընտանիքում: Անցյալում խորթ երեխաներին ուղղակի շահագործում էին, ստիպում էին նրանց կատարելու թե՛ տնային և թե՛ դրսի աշխատանքները՝ հորից քշել, գիշերվա պահին արտի կամ ալթանի եզները արածեցնել, գառներ պահել, անտառ ու գոմը մաքրել և այլն: Ծնողները հարազատ երեխաներին ավելի լավ էին խնամում, քան խորթերին: Այս բոլորն ազդում էր վերջիններիս հոգեբանության վրա, ընկճում նրանց:

Ընտանիքում նման վերաբերմունքը դեպի խորթ երեխաները հիմնականում վերացել է, այնուամենայնիվ, դեռևս գոյություն ունեն այնպիսի ծնողներ, հատկապես կանայք, որոնք շարունակում են վատ վերաբերվել խորթ և որբ երեխաների հետ, դրա համար ամուսինների և ընտանիքի մյուս անդամների միջև հաճախ տեղի են ունենում անախորժություններ, կռիվներ, մինչև անգամ այդ պատճառով միմյանցից բաժանվելու դեպքեր:

Չնայած հին մի շարք մնացուկներին, քրդական սովետական ընտանիքը դարձել է հասարակության հետ միաձույլ, նրա շահերով ապրող միավոր, որն էլ հենց դրսևորվում է նրա անդամների փոխհարաբերություններում:

Գ. ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՐՍԱՆԻՔ

Ամուսնություն: Անդրկովկասյան քրդական ընտանիքի տնտեսական հիմքերի փոփոխման և կուլտուրական մակարդակի բարձրացման հետևանքով, փոփոխման ենթարկվեցին ամուսնության և հարսանեկան սովորությունները:

Նախառևոլյուցիոն շրջանում անդրկովկասյան քրդերի մեջ գոյություն ունեցող ամուսնության հին ձևերը հիմնականում վերացան: Այժմ ամուսնության միակ ձևը, կարելի է ասել, մենամուսնությունն է: Չնայած բազմակնության, բարդելիության և առևանգմամբ ամուսնության ձևերի վերացմանը, այնուամենայնիվ, դրանց մնացուկներին դեռևս կարելի է հանդիպել քրդաբնակ թեպետ սակավաթիվ, բայց որոշ վայրերում (Թալին, Լաչին): Դեռևս կան որոշ մարդիկ, որոնք մեկից ավելի կին են պահում: Այսպես, Ապարանի շրջանի Ղոնդաղսազ գյուղի բնակիչ Շամոե Տիկոն երկու կին էր պահում: Երկարատև ընտանեկան կռիվներից և անախորժություններից հետո, Շամոն բաց թողեց առաջին կնոջը: Սրանք մեծ մասամբ հին սերնդի ներկայացուցիչներ են, նոր սերնդի ներկայացուցիչներից դժվար է գտնել մի քուրդ, որ մեկից ավելի կին ունենա, ինչպես քրդերն են ասում՝ «բըքյավա բըն խաեղա հեուխա» (հեուինների հոգսը քաշի):

Ամուսնության ասպարեզում ինչպես սովետական մյուս ժողովուրդները, այնպես էլ քրդերը շարժվում են պետական օրենքներով, օրենքներ, որոնցով նախատեսված է միայն մենամուսնության ձևը, իսկ սոցիալիստական հասարակության մեջ մենամուսնությունն իրենից ներկայացնում է դարեր շարունակ ամուսինների միջև գոյություն ունեցած հակասությունները վերացնելու, տնտեսական, կուլտուրական և քաղաքական ասպարեզում կնոջ դերը բարձրացնելու միջոցներից մեկը:

Անդրկովկասյան քրդական գյուղում կոլտնտեսությունների կազմակերպումից հետո, արտադրական աշխատանքների կոլեկտիվ ձևերի և ընտանիքում կատարված փոփոխությունների շնորհիվ, գյուղի երկու սեռի ներկայացուցիչների միջև ստեղծվեցին փոխադարձ շփման և ճանաչման լայն հնարավորություններ: Այժմ, աշխատանքի պրոցեսում քուրդ տղաներն ու աղջիկները ազատ խոսում են միմյանց հետ, ճանաչում միմյանց և մտերմանում: Նման հնարավորություններ են ստեղծվում նաև տոնական, հարսանեկան հանդեսների, ինչպես և խնջույքների, կոմերիտական, բան-

305—12

վորական, կոլտնտեսային ժողովների, և համատեղ զբոսանքների դուրս գալու ժամանակ և այլն։

Այսպիսով, ամուսնացող զույգերը միմյանց հետ փոխադարձ շփման, ճանաչման և ազատ սիրո սկզբունքի հիման վրա, առանց ուրիշների միջամտության, պայմանավորվում են ամուսնանալ միմյանց հետ։ Անտարակույս նման դեպքերում հաշվի են առնում նաև ծնողների կարծիքը։ Այս բոլորի շնորհիվ գյուղերի միջից հիմնականում վերացվել են ծերունիների, պառավ կանանց և «պատվավոր» մարդկանց նախկինում գոյություն ունեցած ամուսնական միջնորդությունները, իրենց մուրազին հասնելու համար սրբավայրեր գնալն ու «դուրբան» անելը, քուչակներին և առհասարակ մոգական միջոցներին դիմելը, զանազան ծիսակատարություններ կատարելը և այլն։ Այս նշանակում է, որ գյուղական սովետական ընտանիքում փոխադարձ սիրո հիման վրա կայացած ազատ ընտրությունն է հիմնականում որոշում ամուսնությունը։ Այն ծնողները, որոնք հին սովորության համաձայն ստիպում են իրենց զավակներին, հակառակ վերջիններիս կամքի, ամուսնանալ, սրանց կողմից ընդդիմության են հանդիպում։ Նման ծնողներին երբեմն իրենց ամուսնացող տղան կամ աղջիկը, թերևս կոպիտ ձևով, պատասխանում է՝ «տու րը խուս րըստինա» (դու ինքդ առ) ասել է, թե՝ ինքդ ամուսնացիր քո ընտրած աղջկա կամ տղայի հետ։

Սովետական օրով, գյուղական ցեղերի վերջնական տրոհման և ազգակցական կապերի խիստ թուլացման հետևանքով, վերացավ դարեր շարունակ գոյություն ունեցող էնդոգամ ամուսնությունը, որը ամուսնության բոլոր ձևերի մեջ ամենահիմնականն էր հանդիսանում քրդերի կյանքում, ամուսնության տիրապետող մի ձև, որն այսօր էլ գոյություն ունի արտասահմանյան համարյա բոլոր քրդերի մեջ։

Այժմ ընտանիքում նորություն է այլազգիների հետ ամուսնությունը։ Մահմեդական կրոնը թույլատրում է մահմեդական ժողովուրդներին ամուսնանալ միմյանց հետ, իսկ ամուսնություն քրիստոնիայի և այլ դավանանքի պատկանողի հետ, թույլատրվում է միայն այն դեպքում, եթե վերջինս ընդունում է մահմեդականությունը։ Մահմեդական հավատը չընդունելու դեպքում, մահմեդականի հետ ամուսնացող անձը, իբրև «անարդար ծննդի արդյունք» կվտարվեր ընտանիքից, իսկ քուրդ եզդիները այլազգիների հետ բոլորովին չէին ամուսնանում։ Այժմ թե՛ մահմեդականները և թե՛ եզ-

դիները ազատ կերպով ամուսնանում են այլազգիների հետ, առանց նկատի ունենալու կրոնական դավանանքը։

Քուրդ տղամարդիկ մեծ մասամբ ամուսնանում են ռուս, ադրբեջանցի, վրացի և այլազգիների հետ։ Ամուսնանալու համար աղջիկն ու տղան միմյանց խոսք տալուց հետո, թեկուզ ամոթխածությամբ, իրենց ամուսնության մասին (հատկապես տղաները) հայտնում են ընտանիքի անդամներին և ապա ծնողներին։ Ծնողների համաձայնությունը ստանալուց հետո սկսվում է «խազգինին»։

Եթե հնում խնամախոսների և աղջկա տերերի միջև գլխավորապես հետապնդվում էին անտեսական նպատակներ (դալան, ջհեզ, շքարթ, գարմալի), այժմ, ընդհակառակը, հիմնականում ապահովվում է խնդրի բարոյական կողմը։ Չնայած գաղտնի, բայց առաջվա հետ համեմատած փոքր չափով գլխագին տալու հանգամանքը, այնուամենայնիվ, երիտասարդներին ամուսնացնելու ժամանակ հաշվի է առնվում։ Ներկայումս ուշադրություն է դարձվում նաև ծնողների բարոյական կողմի վրա, իսկ անտեսական խնդիրները ընտանիքում լուծվում են հօգուտ ամուսնացողների՝ նրանց անտեսական պայմանները բարելավելու նպատակով։

Ընտրությունից և ծնողների համաձայնությունից հետո, ինչպես նախասովետական շրջանում, տղայի ընտանիքի անդամների ցանկությամբ, ընտանիքի անդամներից և գյուղի նշանավոր մարդկանցից նշանակվում են խազգինի-խնամախոսներ, որոնցից մեկը նախօրոք հայտնում է աղջկա ծնողներին կամ նրանց ընտանիքի մյուս անդամներին, որ իրենք, նրանց աղջկան իրենց տղայի համար ուզելու և «սրեկլըռնի» համար այցելելու են նրանց։ Եթե աղջկա ծնողները համաձայն են լինում, խնամախոսներին հյուրընկալելու նպատակով իրենց տանը նախապատրաստություն են տեսնում։ Խնամախոսներն այցելում են աղջկա ծնողների տուն, հյուրընկալվում։ Այդ ժամանակ, ինչպես առաջ, աղջկա կողմից հյուրերի ձեռքին ջուր լցնելու սովորությունը վերացել է։ Խնամախոսներից ամենապատվավոր մարդը հայտնում է աղջկա ծնողներին, որ եկել են իրենց տղայի համար նրանց աղջկան ուզելու և խնդրում, որ աղջկա ծնողները իրենց բարի խոսքն ասեն։

Այդ արարողության ժամանակ աղջիկը, ինչպես նաև տղան, կարող են ներկա գտնվել կամ չգտնվել։ Կան ծնողներ, որոնք տրադիցիոն կերպով իրենց աղջկա պատիվը բարձրացնելու համար, խնամախոսների առաջին այցելության ժամանակ մերժում են տալ «սրեկլըռնը» բառը։ Ամուսնության, ինչպես նաև

հարսանիքի ընթացքում մնացուկային ձևով երևան եկող նման սովորությունները իրենց մահացման պրոցեսն են ապրում:

Խնամախոսների երկրորդ այցելության ժամանակ տեղի է ունենում նշանդրեք, որ քրդերեն կոչվում են «նիշանկրընե»: Նշանդրեքի ժամանակ ավելի մեծ քանակությամբ խնամախոսներ (թե՛ կին, թե՛ տղամարդ) են այցելում աղջկա տուն: Հնում նշանդրեքի համար տանում էին մի փուշի, իբրև նորահարսի քող: Քրդական ավելի կուլտուրական ընտանիքներում համարյա վերացել է հարսի նշանդրեքի ժամանակ փուշի տանելու սովորությունը: Այժմ տանում են ժամացույց և ոսկե մատանի:

Տղան, սովորաբար, խնամախոսների հետ միասին, հակառակ հին սովորության, նշանդրեքի ժամանակ գնում է աղջկա տուն, ազատ կերպով խոսում նրա ծնողների և խնամախոսների հետ: Սա նոր երևույթ է ամուսնության պատմության մեջ, որովհետև քրդական նահապետական ընտանիքում տղային նման իրավունք չէր տրվում:

Այժմ նոր սերնդի ներկայացուցիչները առանց քաշվելու և ծեսերին կարևորություն տալու ինքնուրույն կերպով (ծնողների գիտությամբ) ամուսնության, հարսանիքի հարցերը իրենք են լուծում: Ծնողներն իրենց տղային ամուսնացնելուց առաջ, ընդհանրապես ամուսնության վերաբերյալ որոշ հարցերում համաձայնություն էին գալիս նաև իրենց պամամների հետ, իսկ պամամները մեծ ուրախությամբ մասնակցում էին իրենց արենակցի ամուսնությանը և հարսանիքին վերաբերվող խնդիրների լուծմանը: Չնայած ամուսնության խնդրում նման սովորությունների մնացուկների առկայությանը, այնուամենայնիվ, այժմ քրդերի մեջ ամուսնությունը տեղի է ունենում պետական օրենքներով ԶԱԳՍ-ով, որը նպաստում է ընտանիքի կայունացմանը:

Պամամների միջամտությունը ամուսնության գործում ավելի մեծ լրջություն է մտցնում հատկապես այն ժամանակ, երբ ամուսնությունը տեղի է ունենում գյուղից դուրս, երբ աղջիկն ու տղան այնքան էլ իրար լավ չեն ճանաչում: Այստեղ, պամամների մասնակցությունը իրենց աղջկա կամ տղայի ամուսնությանը ակնառու և գործին օգնող, անհրաժեշտ մի հանգամանք է դառնում:

Արեկլըընից մի երկու ամիս հետո, ամուսնացողների ծնողները, նրանց պամամները, նշանդրեքի համար խնամախոսների հետ տալիս են մի քանի նշանավոր մարդկանց անուններ: Սրանց խումբը ոսկե մատանի և ժամացույց վերցրած, խմբով, դհոլ-զուռ-

նայի նվագակցությամբ գնում են աղջկա տուն: Նշանդրեքի սովորություններում քրդերի մոտ տեղի ունեցած փոփոխություններից առաջինն այն է, որ հիմա հոգևորականները նշանդրեքի արարողությանը քիչ դեպքերում են մասնակցում, երկրորդ՝ վերացել է «նաքահը», երրորդ՝ հակառակ նախկինում գոյություն ունեցած սովորության՝ փեսացուն, խնամախոսների հետ միասին, ազատ խոսում է հարսնացուի հետ: Նշանդրեքի ժամանակ սկզբում աղջիկը չի երևում խնամախոսների աչքին, նրան նախապես տեղափոխում են մի այլ սենյակ կամ թոնրատուն, որտեղ նրան հագցնում և հարդարում են:

Խնամախոսները աղջկա պամամների, ընտանիքի գլխավոր անդամների հետ միասին նստում են և բավականաչափ խոսում առօրյա խնդիրների շուրջը, որից հետո, խնամախոսներից մեկը մեծ խանդավառությամբ սկսում է խոսել նախ աղջկա և ապա տղայի դրական հատկությունների մասին և վերջիվերջո խոսք բաց անում աղջկա և իրենց տղայի նշանդրեքի մասին:

Ըստ հին սովորության, աղջկա ծնողները մի փոքր ընդդիմանալուց հետո համաձայնության խոսք են տալիս տղային: Բոլոր հանդիսականները ուրախանում են: Այդ ժամանակ խնամախոսներից մի կին և մի տղամարդ դուրս են գնում, մտնում են հարսնացուի առանձնարանը, մատանին դնում նրա մատը, ժամացույցը կապում թևին, ձեռքից բռնում, բերում նախապես պատրաստված սեղանի շուրջը և նստեցնում փեսացուի կողքին: Սկսվում են նվագն ու պարերը: Երգում են նշանդրեքի վերաբերյալ և հարսանեկան թե՛ հին և թե՛ նոր երգեր: Ահա այդ երգերից մի հատված.

«Մեզ վրա, մեզ վրա,
Ծառի բունը մեզ վրա,
Անձրևն է գալիս մեզ վրա:

Ես ձեր տան հարսն եմ,
Ծառի բունը մեզ վրա,
Անձրև է մաղում մեզ վրա:

Վկաներով քոնն եմ ես,
Ծառի բունը մեզ վրա,
Անձրևն է մաղում մեզ վրա»[1]:

[1] *H. Gəndi u Ə. Əvdal.* Folklora kyrmança, Rəwan, 1936, էջ 449:

Ինչպես նշանդրեքի, այնպես էլ հարսանիքի արարողության ժամանակ երգում են նաև ռուսական, հայկական, վրացական, ադրբեջանական երգեր։ Նշանդրեքի ժամանակ հաճախ «դոլանդ» են բռնում և մի երկու օր ուրախանում։ Նորահարսին և նորափեսային, ինչպես նշանդրեքի, այնպես էլ հարսանիքի արարողության ժամանակ սեղանի կողքին, միմյանց մոտ նստեցնելը նորություն է քրդերի մոտ, որովհետև նախկինում փեսան իրավունք չուներ նշանդրության ծեսին ներկա գտնվել, խոսել հարսնացուի հետ։ Այժմ, նորահարսը նորափեսայի, ինչպես նաև հարսնևորների հետ ազատ խոսում, երգում և ուրախանում է։

Այս երևույթը քրդուհու կյանքում չտեսնված առաջադիմություն է, որ նա ձեռք է բերել նոր պայմաններում։

Նշանդրեքի ժամանակ, ինչպես առաջ, արարողությունը վերջանալուց հետո ներկա եղողները ասում են. «Ա՛վի շայա բըմբարըկ պիրոզբը» (այս արարողությունը արդյունավետ լինի)։

Նշանդրեքի և հարսանիքի միջև ընկած ժամանակամիջոցում, ծնողները և կնեգները աղջկա համար 1—2 ամսվա ընթացքում պատրաստում են համապատասխան օժիտ։

Անցյալի համեմատությամբ փոխվել է օժիտի բնույթը։ Եթե առաջ աղջկա գլխագինը կազմող 25—30 ոչխարներից 10—15 ոչխարի գինը ծնողների կողմից ծախսվում էր իրենց աղջկա օժիտի վրա, ներկայումս գլխագինը չափազանց պակասելու, համարյա նվերների աստիճանի հասնելու հետևանքով, օժիտը կազմվում է ծնողների կողմից տրված փոքր նվերներից, աղջկա ձեռքով պատրաստած ձեռագործներից, կարպետներից, ձեռքի օճառից, գուլպաներից և այլն։ Այժմ օժիտը թերևս կարելի է անվանել ծնողների կողմից աղջկան տրվող նվեր։ Սակայն «ջհեզ» տերմինը դեռևս պահպանվում է։

Նախասովետական շրջանում աղջկա կրթության մասին խոսք լինել անգամ չէր կարող, այդ ժամանակ խիստ հազվագյուտ էր գրագետ քրդուհին։ Այժմ քրդուհին ամուսնանում է գրագետ վիճակում, այդ պատճառով, նշանդրեքի և օժիտի մասին խոսելիս, հաճախ կրկնում են՝ «խունդն ջհեզե դիզեյն, ջհեզ դըհա չըռանն» (աղջկա օժիտը կրթությունն է, էլ ինչո՞ւ է պետք օժիտը)։ Իրենց աղջիկներին գլխագնով չամուսնացնելու, հին սովորություններով, կրոնական ծիսակատարություններով նշանդրեք չանելու գործում օրինակելի են գյուղի կոմունիստներն ու կոմերիտականները, գյուղի ողջ ինտելիգենցիան։ Ներկայումս նշանդրությունից

մինչև հարսանիքն ընկնող ժամանակամիջոցը զգալիորեն կրճատվել է։ Դա պետք է բացատրել այն հանգամանքով, որ նախկինում քրդերի կյանքում գոյություն ունեցած նշանդրեքի և հարսանիքի հետ կապված ծիսակատարությունները, հարսի համար ժողովրդական տոներին և ընդհանրապես մեծ-մեծ նվերներ հայթայթելու սովորությունները հիմնականում վերացել են։

Նշանդրեքի և հարսանիքի միջև ընկնող ժամանակամիջոցի երկարաձգության ամենագլխավոր պատճառը անցյալում պետք է համարել աղջկա գլխագինը, մանավանդ չքավորական ընտանիքում, որի անդամները տարիներ շարունակ քրտնաջան աշխատում էին, որպեսզի վաստակած միջոցներով կարողանային ամուսնացնել իրենց տղաներին։ Այդ գործում որոշ դեր էր խաղում նաև օժիտը, աղջկան անչափահաս նշանելու հանգամանքը։ Ներկայումս, երբ աղջկա օժիտը պատրաստ է լինում, նրա ծնողները հայտնում են նորափեսայի ընտանիքի անդամներին, որ վերջիններս կարող են սկսել հարսանիքը, իսկ երբ տղայի ծնողները կատարել են հարսանիքի բոլոր նախապատրաստությունները, սկսվում է հարսանյաց հանդեսը։

Իբրև հնի մնացուկ, այժմ էլ հարսանիքը կոչվում է տղայի անունով։ Ասում են՝ «դաւատա Ջըլի» (Ջըլու հարսանիքը), «դաւատա Մաջիտ» (Մաջիտի հարսանիքը) և այլն։ Աղջկա անունը չի տրվում։ Նախքան հարսանիքն սկսվելը, պսակվողներից կամ գյուղի նշանավոր մարդկանցից մեկին ընտրում են «սարգաւատի», որի ղեկավարությամբ ընթանում է հարսանիքը։

Ինչպես հնում, այնպես էլ այժմ սարգաւատի ընտրությունը կատարվում է հետևյալ ձևով՝ տղայի ծնողները մի գույնզգույն փուշի կապում են որևէ ոչխարի վզին և իբրև նվեր տանում են այն անձնավորության տուն, որին պետք է ընտրեն քավոր, ասելով «բավե կուռե մա տույի» (մեր տղայի հայրը դուն ես)։

Նորընտիր քավորը սովորաբար պատասխանում է՝ «սար ճավե մըն» (աչքիս վրա) և հյուրասիրում նրանց։ Ինչպես առաջ, այժմ էլ քավորը տղամարդ է լինում։ Քավորի ընտրությունից հետո սկսվում է հարսանիքը։ Ամենից առաջ նորահարսի համար քավորը համապատասխան նվերներ է պատրաստում, բերում աղջկա տուն և հանձնում նրան։ Ընտանիքի անդամները շնորհակալություն են հայտնում սարգաւատի— քավորին, իսկ նորահարսը խոնարհաբար գլուխը թեքում է քավորի կրծքին։ Վերջինս շոյում է նրա գլուխը և ճակատը համբուրում։ Հարսի համար նվերներ են

տանում նաև փեսայի դաստաբրակները, իսկ աղջկա համար՝ կնեքները, որոնցից ավելի հասակավոր և պատվավոր կանանցից մեկը նշանակվում է «բարբու» կամ «բարբուկ»: Սրանք համարվում են նորափեսայի և նորահարսի ուղեկիցները հարսանյաց ուրախության համարյա բոլոր պրոցեսներում:

Բազմաթիվ ընտանիքներում վերացել է հարսանիքի ժամանակ «դարա բուկե ու զավե» (հարսի և փեսայի ծառ) զարդարելու սովորությունը: Այն ընտանիքներում, որտեղ այդ սովորությունը դեռևս պահպանվում է, քավորը կարգադրում է նախօրոք պատրաստել «դարա բուկեն ու զավեն», հարդարել սենյակները և պահել մաքուր վիճակում: Ապա հրավիրում է իր ցանկացած նվագածուներին և «դանդրեժներին», որոնք բացի դանդրեժներից, իբրև վարձվողներ, պարտավոր են մինչև հարսանյաց ուրախության վերջը նվագել: Բացի այդ, քավորի ղեկավարությամբ մի քանի օրվա ընթացքում հարսանեկան ուրախությունը լավ անցկացնելու նպատակով նյութական բոլոր անհրաժեշտ նախապատրաստություններ են տեսնվում: Այս գործում ակտիվ մասնակցություն են ցուցաբերում նորափեսայի պսմաճներն ու դաստաբրակները:

Նյութական դժվարությունների դեպքում, նորափեսայի ընտանիքին օգնում է կոլտնտեսությունը, քաղաքներում ընկեր-պրոմաճները, տեղական կոմիտեները:

Հարսանեկան սովորության մեջ նորամուծություն է հարսնեվորներին հրավիրատոմսերով կանչելու ձևը: Լաչինի, Բասարգեչարի և Թալինի շրջաններում դեռևս պահպանվում է հարսին «բըլադաթ» հագցնելու սովորությունը: Հարսանիքի ընթացքում աչքերին ծարիր, իսկ մազերին և ձեռքերին հինա քսելու փոխարեն, նորահարսը դուխի է ցանում իր մարմնի և զգեստների վրա:

Վերացել է նախկինում փեսայի կուրծքը զարդարող և մոգական նշանակություն ունեցող եռանկյունաձև «նվըշտը»: Հակառակ հին սովորության, փեսան, ինչպես նաև բոլոր տղամարդիկ, հագնվում են քաղաքացու տարազով, իսկ հարսների մեծ մասը՝ հին տարազով: Նորափեսայի հետ կապված ծեսերը վերացված են, իսկ աղջկա հետ կապված որոշ ծեսեր, որոշ փոփոխություններով, դեռևս պահպանվում են, սակայն քաղաքներում (Թբիլիսի, Երևան, Բաքու, Ստեփանակերտ, Լենինական) ապրող քրդուհի հարսը (գըլխավորապես քաղաքի աղջիկները) սիրահար չեն նման ծեսերի և մյուս հին սովորությունների:

Որոշ գյուղերում ավագ սերնդի կանանց կողմից պահանջվող այդ սովորությունների որոշ մասը անցնում է նոր սերնդին, որոնց համար դրանք ոչ այլ ինչ են, եթե ոչ որոշ չափով հարսանիքը ձգձգող երևույթներ: Դրանցից են՝ նախքան հարսին հարսանեկան տոնահանդես տանելը, վերջինիս մեկ օրով կամ մի քանի ժամով հյուրընկալումը քավորի կողմից: Հարսը քավորի տանը իրեն շատ ազատ է զգում, ուտում, խմում և խոսում ընտանիքի բոլոր անդամների հետ, որից հետո, քավորի ուղեկցությամբ վերադառնում է նոր տուն: Այս սովորությունը հետզհետե վերանում է:

Այլ գյուղերից հրավիրված հարսնեւորները հյուրընկալվում են տղայի պսմաճների, դաստաբրակների և մյուս հարևանների կողմից: Այժմ քրդական բազմաթիվ ընտանիքներում նոր ձևի հարսանիքը, ինչպես այլազգիների մոտ, կատարում են խնջույքի ձևով, տանը, իսկ հին ձևի հարսանիքը, որտեղ մասնակցում է գյուղի ողջ հասարակությունը, հարսանիքի համար նախօրոք պատրաստված գոմերից մեկում: Երեկոյան, դհոլ-զուռնայի նվագակցությամբ հարսնեւորները հավաքվում են հարսանքատուն:

Նախկինում հարսանյաց պարերից տիրապետողը «գովանդն» էր, իսկ այժմ գովանդն ու մենապարը: Եթե նախկինում հարսանյաց ուրախության ժամանակ փեսան որոշ ժամանակով անհայտանում էր, ինչպես նշեցինք վերը, հիմա հակառակն է կատարվում՝ նորափեսային և նորահարսին կողք-կողքի նստեցնում են հարսանյաց սեղանի գլխին՝ ամենապատվավոր տեղը: Սեղանակիցները հարսի և փեսայի կենացը խմելիս ասում են՝ «աշխա դու գուլա» (երկու ծաղիկների կենացը): Այս սովորությունը փոխանցվել է հայերից: Հարսանեկան այս երևույթը նորություն է, առնչվում է ամուսնացածների ազատ կամքի և հետագայում ընտանիքում համահավասար իրավունքներ ունենալու սկզբունքի հետ մեր պայմաններում: Ինչպես առաջ, այժմ էլ կենացներ խմելիս, իբրև հարգանքի նշան, կենացի վրա երգում և պարում են: Գովանդի «պարբաշին» ծածանում է թաշկինակը, իսկ քավորը հարսի ձեռքից բռնած կանգնում է գովանդի վերին ծայրում՝ կարգում է պարբաշի, դրամ տալիս թմբկահարին, իսկ վերջինս նորահարսի գլխի վրա թմբուկի ձողիկը պտտեցնելով, ասում է՝ «շաբա՜շ, մալի ավա» (շաբա՜շ, տունդ շեն մնա):

Նախկինում, հարսանիքի ուրախության ընթացքում տեղի ունեցող «զավափաշայության» սովորությունը նույնպես վերացել է, որը նորափեսայի պսմաճների կողմից կատարվում էր ծպտյալ ձևով:

Նախքան հոր տնից հարսին փեսայի տուն տանելը, հարսի ծնողները տրադիցիոն կերպով տղայի և աղջկա բարեկամներին ցույց են տալիս հարսնացուի օժիտը: Եթե օժիտը հարուստ է լինում, ասում են՝ «մա՜շալլա», իսկ եթե քիչ, աղքատ, ներկա եղողները այնքան էլ գոհ չեն մնում:

Օժիտը ցույց տալուց մի քանի ժամ հետո, հարսին հոր տանից դուրս են հանում: Այդ ժամանակ սկսվում է լացն ու կոծը: Տղայի ծնողները ծիծաղելով են խոսում աղջկա ծնողների հետ, նրանց սիրաշահելու համար կատակներ անում և մխիթարում:

Աղջկա ծնողների և ընտանիքի մյուս անդամների լացն ու կոծը, ինչպես առաջ, որևէ ծիսակատարության, սնոտիապաշտության կամ պաշտամունքի հետ կապ չունի, դա պետք է համարել ծնողների և մյուս արենակիցների զգացմունքների դրսևորում:

Վերացել է հարսանեկան սովորությունների մեջ նախկինում գոյություն ունեցած հարազատ եղբայրների հսկողությունը: Հարսին նորափեսայի տուն տեղափոխում են մեծ մասամբ ավտոմեքենաներով: Այդ պատճառով քրդերեն «բուկխարկըրըն» բարդ բառի փոխարեն այժմ գործ են ածում «բուկբըրըն» բարդ բառը, որը շատ հատկանշական է այժմյան հարսանեկան սովորության մեջ: Առաջին բառը, որը նշանակում է «հարսին ձի նստեցնելը», արտահայտում է այն երևույթը, որ անցյալում քրդերը հարսին միայն ձիով էին փեսայի տուն տանում, այլ կերպ (սայլով, հետիոտն և այլն) տանելը խիստ ամոթ էր համարվում, մինչդեռ ներկայումս տանում են թե՛ ձիով և թե՛ սայլով, բայց մեծ մասամբ ավտոմեքենայով, որի համապատասխան էլ առաջացել է վերջին տերմինը, որը պարզապես նշանակում է՝ «հարսին տանել», առանց ինչով տանելը մասնանշելու:

Հիմնականում վերացել է նաև փեսայի դռան մոտ հարսի ոտքերի տակ ափսե կամ գդալ դնելու սովորությունը, որը մեր կարծիքով առնչվում է ֆալոսի պաշտամունքի՝ արգասավորության և հարսին չար աչքերից փրկելու հանգամանքների հետ: Նորահարսը փեսայի տանը շրջապատվում է հարսներով և աղջիկներով:

Նոր ձևով կատարվող հարսանիքում, սովորաբար, երեկոյան պատրաստում են հարսանեկան սեղանը: Պատրաստում են մսեղեն կերակուրներ՝ խաշլամա, տապակած միս, տոլմա, ապա մանրբրնձով փլավ: Սեղանին դնում են նաև կոնյակ, օղի, գինի և այլն: Առաջինը քավորն է վերցնում կենաց բաժակը և խմում «դու գյունարի» կենացը, սեղանակիցները նորափեսային և նորահարսին բարեմաղթում են առողջություն, երջանիկ կյանք: Ապա խմում են նորափեսայի և հարսի ծնողների և սեղանի շուրջը հավաքված մարդկանց կենացը:

Ամեն մի կենաց խմելիս նվագում է երաժշտախումբը, երգում են առանձին դանգբեժները: Նախկինում, հարսանեկան ուրախության ժամանակ նվագում էին դհոլ-զուռնա, «մայա», իսկ այժմ նվագում են նաև կլարնետ, թառ, մանդոլինա և երաժշտական այլ գործիքներ:

Հարսանիքի ուրախությունը վերջանալուց հետո սկսվում է «տաչու», որը, նախկինի համեմատությամբ ձևափոխված է: Առաջ տաչուն կազմվում էր անասուններից և դրամից, այժմ՝ կարի մեքենաներից, ժամացույցից, կտորեղենից, ապակեղենից, հագուստներից, կոշիկներից և այլն:

Իսպառ վերացել են նախկինում հարսանիքից հետո անմիջապես տեղի ունեցող «մարկըրըն» կամ «խեյաթ»-ի կապակցությամբ կատարվող ծիսակատարություններն ու մոգական միջոցները, որոնք ծայր աստիճանի նվաստացնում էին քրդուհուն: Սակայն, այսօր էլ պահպանվում է «շքարթի» սովորությունը: Հարսանիքից հետո աղջկա ծնողների կողմից իրենց աղջկան տրվող «շքարթը» կազմված է լինում ոչ թե անասուններից, ինչպես նախկինում, այլ այնպիսի նվերներից, ինչպիսիք տեսանք «տաչուի» ժամանակ: Նորահարսին տրվածը, հակառակ հին սովորության, կազմում է ընտանիքի սեփականությունը:

Ժամանակակից քրդական հարսանիքը, ինչպես տեսնում ենք, հնից պահպանել է ժողովրդական ուրախալի սովորությունները, սակայն աստիճանաբար վերանում են զուտ կրոնա-պաշտամունքային բնույթի արարողությունները:

Նախասովետական շրջանում քրդական հարսանեկան ուրախությունը նորահարսի ծնողների, նրանց ընտանիքի, բարեկամների համար վեր էր ածվում հրաժեշտի արարողության՝ բազմաթիվ ծեսերով և մոգական միջոցներով: Դա պետք է բացատրել գլխավորապես որպես աղջկա կողմից հայրական տունը, ծնողներին, պամաններին թողնելու արտահայտություն: Այդ ժամանակ դհոլ-զուռնաչիները, մայա նվագողները, դանգբեժները երգում էին սրտառուչ, տխուր երգեր:

Սովետական պայմաններում, երբ անհամեմատելիորեն բարձրացավ կնոջ դերը, փոփոխություններ առաջացան նաև հարսանեկան սովորությունների մեջ: Ներկայումս հարսանիքը կիսով չափ

կատարվում է աղջկա, կեսով չափ էլ տղայի տանը։ Նախքան Հղարխասնա բույն ժը մալա բալեծ (հարսին հայրական տանից դուրս հանելը), աղջկա ընտանիքը ևս պատրաստում է հարսանեկան սեղան, որը ղեկավարելու համար նշանակվում է թամադա, մի բան, որ չկար անցյալում։

Նորահարսը նորափեսայի տուն տեղափոխվելիս գիտե, որ, հակառակ նախասովետական շրջանի քրդական սովորութական իրավունքի, ընտանիքում նա տղամարդուն համահավասար իրավունքներ է ունենալու, ազատ կերպով խոսելու է ընտանիքի բոլոր անդամների հետ, նրանց հետ սեղան է նստելու, մասնակցելու է տան ներքին գործերին և ղեկավարությանը, ինչպես նաև հասարակական կյանքին։

Այս ամենը գիտակցելով, հարսնացուի հարազատները հանգիստ սրտով ճանապարհում են իրենց աղջկան, նոր՝ ամուսնական կյանք սկսելու համար։

ՀԱՄԱՌՈՏ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, նախասովետական շրջանում Անդրկովկասի քրդերը թե՛ տնտեսապես, թե՛ կուլտուրապես և թե՛ քաղաքականապես գտնըվում էին զարգացման ցածր աստիճանի վրա։ Նրանք քոչվորական ու կիսաքոչվորական, մասամբ էլ նստակյաց կյանք էին վարում։ Աշխատում էին երկրագործական պրիմիտիվ գործիքներով։ Երկրագործական մեքենաների մասին քիչ գաղափար ունեին։ Նրանք հողերը լավ մշակելու, սերմը ցանելու փոխարեն, լավ բերք ստանալու համար իրենց հույսը դնում էին նախախնամության վրա։

Անդրկովկասյան քուրդ աշխատավորությունը խարխափում էր տգիտության խավարի մեջ, շահագործվում և ճնշվում աղա ու բեկերի, մյուս հարուստների կողմից։ Նրանք իրենց անգրագիտության պատճառով հնարավորություն չէին ունենում որևէ պաշտոն ձեռք բերել։ Չքավոր ընտանիքի անդամները (տղամարդիկ) իրենց ընտանեկան հոգսերը հոգալու համար թողնում էին հայրենի գյուղը, գնում արտագնացության՝ Անդրկովկասի քաղաքները (գլխավորապես Թբիլիսի), զբաղվում բեռնակրությամբ և կատարում այլ տեսակի ծանր աշխատանքներ։ Ընտանիքը ապրում էր նահապետական նիստուկացով. գերիշխողը տոհմացեղային հարաբերություններն էին։

Ընտանեկան հարաբերություններում տիրում էր ավագության ստրկացուցիչ կարգը։ Ընտանիքում կնոջ նկատմամբ գոյություն ուներ արհամարհական վերաբերմունք՝ նա զրկված էր ամենատարրական իրավունքներից։ Գլխագինը և անչափահաս վիճակում ամուսնացնելը, մարմնական պատժի ենթարկելը, առևանգելը և նման բազմաթիվ այլ հանգամանքներ ստորացուցիչ վիճակի մեջ էին դնում քրդուհուն։ Հատկապես վնասակար էին տղաբերքի, ծննդի, երեխաների դաստիարակության, մահվան և թաղման հետ կապված ընտանեկան սովորությունները, որոնց կատարումը զուգակցվում էր կրոնական ֆանատիզմով։ Ընտանեկան բազմաթիվ պաշտամունքները ահ ու սարսափի մեջ էին դնում և հոգեպես ընկճում մանուկ սերնդին։

Արյան վրիժառության սովորույթի խիստ կենսունակության հետևանքով, անընդհատ տեղի էին ունենում ցեղամիջյան և ներցեղային կատաղի կռիվներ, առաջ էին գալիս ընտանեկան անախորժություններ, որոնք կասեցնում էին ժողովրդի զարգացումը և պատճառում էին մարդկային զոհեր։ Ընդհանուր առմամբ նախասովետական քրդական գյուղը շատ հետամնաց էր։

Սովետական իշխանությունը մեր երկրի ժողովուրդներին, այդ թվում նաև Անդրկովկասի քուրդ աշխատավորությանը ընդմիշտ ազատագրեց կապիտալիստների, կալվածատերերի, աղա ու բեկերի և մյուս ձրիակերների շահագործումից ու ճնշումից, ոչընչացրեց մասնավոր սեփականությունը, արգելեց հողի և ջրի առուծախը։ Գյուղի աշխատավորությունն ստացավ լավագույն հողամասեր։

Կոլտնտեսային կարգը քրդերին դուրս բերեց կուլտուրական և լուսավոր կյանքի ուղին՝ կատարելով հեղաշրջող դեր։ Անցյալի գիրկն անցան աղքատությունն ու անգրագիտությունը։

Վերակառուցվել և վերակառուցվում է քրդական սովետական գյուղը, փոխվել է նրա տեսքը։ Լաչինում, Ալագյազում, Ջյալթաջարում, Թալինում, Բասարգեչարում և քրդաբնակ մյուս բնակավայրերում կառուցվել են քաղաքատիպ բազմաթիվ բնակարաններ, հասարակական-կուլտուրական շենքեր։

Գյուղի տնտեսական բազայի ինտերնացիոնալիզմի շնորհիվ, փոփոխության ենթարկվեց նաև քրդերի հոգեբանությունը, նրանց աշխարհայացքը։ Կոլտնտեսականների անհատական շահերը զուգակցվում են հասարակական շահերի հետ։ Աշխատավորությունը դաստիարակվում է կոլեկտիվիզմի, ինտերնացիոնալիզմի ոգով։ Այդ գործում մեծ դեր է խաղում դպրոցի և ընտանիքի համագործակցված աշխատանքը։

Ստեղծվել է քուրդ ինտելիգենցիայի մեծ բանակ։ Նոր սերնդի ներկայացուցիչները բոլորովին նոր մարդիկ են, դաստիարակված կոմունիստական բարոյականության ոգով, մարդիկ, որոնք ունեն քաղաքական-հասարակական լայն հայացքներ, համակված են մատերիալիստական մտայնությամբ, ձեռք են բերել պետական վարման ունակություններ, կազմակերպչական ձիր։

Գյուղի կոմունիստներն ու կոմերիտականները կոլտնտեսային արտադրության մեջ օրինակելի աշխատողներ են հանդիսանում, սոցմրցման գործի կազմակերպիչներ։ Գյուղի քուրդ ինտելիգենցիայի ներկայացուցիչները կոլտնտեսության մեջ, քաղաքներում, տանում են նաև ագիտացիոն-մասսայական աշխատանքներ, զեկուցումներ են կարդում, կոլտնտեսականների հետ ունենում զրույցներ առօրյա աշխատանքների, կոլտնտեսային արտադրությունը բարձրացնելու և այլ խնդիրների շուրջը։

Փոխվել է կոլտնտեսականների բնակարանների ներքին տեսքն ու կահավորումը։ Հին օդայի, սաքուի, բուխարիկի փոխարեն այժմ նորակառույց սենյակներում դրված են նիկելազօծ մահճակալներ, աթոռներ, սեղան, հանդերձարան, պահարան և այլն։ Գյուղը ողողված է էլեկտրական լույսով։

Նյութական և հոգևոր կուլտուրայի բուռն զարգացման շնորհիվ Անդրկովկասի քրդերի ընտանեկան և հասարակական հարաբերությունների մեջ տեղի ունեցան բազմաթիվ փոփոխություններ։ Տղամարդուն համահավասար չափով քրդուհին մասնակցում է հասարակական և ընտանեկան կյանքին, նա ընտրում և ընտրվում է պետական օրգաններում։

Ամենուրեք կոլտնտեսականները, քաղաքի քուրդ աշխատավորները սերտ կապեր են պահպանում կուլտուրական օջախների հետ և օժանդակում նրանց աշխատանքներին։ Գյուղի աշխատանքներում մեծ ակտիվություն է ցուցաբերում ինտելիգենցիան՝ ուսուցիչները, զոոտեխնիկները, ագրոնոմները, բժիշկները, հաշվապահները և այլն։ Բուռն զարգացում է ապրում քրդական նոր գրականությունը և արվեստը։

Այսպիսով, Սովետական իշխանության, կոլեկտիվ տնտեսության կարգի շնորհիվ, արմատապես փոփոխության ենթարկվեց Անդրկովկասի քրդերի կենցաղը, նրանց հոգեկան ողջ աշխարհը։ Կոլտնտեսական քուրդ գյուղացին նոր մարդ է, ազատագրված նահապետական կենցաղից և սնոտիապաշտությունից։

Հասարակական և ընտանեկան նոր հարաբերությունների և սովետական սոցիալիստական կոլեկտիվ կյանքի շնորհիվ, քրդերի միջից վերացավ նաև ցեղամիջյան և ներցեղային պայքարը, դարավոր վրեժառությունը, վերացան նաև վերոհիշյալի հետևանքով տեղի ունեցող արյունահեղությունները և այլն։

Այսպիսով, Անդրկովկասի քրդերը Սովետական իշխանության տարիներին ստացան տնտեսապես և կուլտուրապես բարգավաճելու բոլոր հնարավորությունները։ Նրանք վերջնականապես անցան նստակյաց կյանքի և ՍՍՌՄ ժողովուրդների մեծ ընտանիքում ակտիվորեն մասնակցում են նոր հասարակարգի կառուցման մեծ գործին։

ՀԱՎԵԼՎԱԾ

ԳՆԱ՛, ՈՐԴԻՍ[1]

Գնա՛, որդիս, բարի ճանապարհ,
 տղամարդ եղիր,
Նախնիներիդ նման քաջ եղիր,
 այրված եղիր,
Մեր թշնամու դեմ երկերան
 թուր եղիր,
Պատերազմում, ծանր օրերին
 քաջարի եղիր,
Քո տակի ձին մի կարմիր ձի է զորեղ։
Գնա՛, որդիս, բարի ճանապարհ,
 տղամարդ եղի՛ր,
Եղբորդ նման քաջ եղիր,
 այրված եղի՛ր։
Գնա՛, որդիս, բարի ճանապարհ,
Քո մոր կաթը քեզ թող հալալ
 լինի,
Զարկի՛ր ֆաշիստներին, որ Հայրենիքը մեր
 ազատ լինի։
Քաջ եղի՛ր, որ սիրտդ էլ այնպես
 ուրախ լինի։
Գնա՛, որդիս, բարի ճանապարհ,
 տղամարդ եղիր,
Քեռուդ պես քաջ եղի՛ր,
 այրված եղի՛ր,
Մեր թշնամու դեմ երկերան
 թուր եղի՛ր,
Պատերազմում, ծանր օրերին
 քաջարի եղի՛ր։

---

[1] Ewləded wəten (Հայրենիքի զավակները), կազմել են Հ. Ջնդին և Ը. Ծասպարյանը, Երևան, 1943, էջ 5—6։

Ղ Ո Դ Ր Ղ

Ղոդըղը ժողովրդի հերոսն էր և թշնամին՝ հարուստների։ Նա սիրահարված էր իր հորեղբոր՝ Մահմադի աղջկան։ Մի օր գնաց Մահմադի մոտ.

— Հորեղբայր, ինձ աղջիկդ կտա՞ս։

— Քեզ աղջիկ չեմ տա,— պատասխանեց Մահմադը։

— Ինչո՞ւ չես տա,— զարմանալով հարցրեց Ղոդըղը։

— Աղջիկս կարող եմ տալ քեզ միայն հետևյալ պայմանով, եթե կտրես Միրե արաբայի[1] գլուխը և նրա ձին բերես ինձ։ Այդ դեպքում միայն կարող ես տիրանալ իմ աղջկան։ «Գնա՞մ, թե՞ չգնամ»,— մտածում էր Ղոդըղը։ Երկար խորհելուց հետո հանկարծ սթափվեց։

«Ո՛չ, պիտի գնամ, ոչ միայն իմ սիրածին տիրանալու, այլև ռայաթին[2] այդ դաժան, քարասիրտ թագավորի ձեռքից ազատելու համար»։

Ղոդըղը թուրը կապեց, կլոր վահանն առավ, հեծավ արաբական քհելին[3] և գնաց դեպի արաբների երկիրը։

Շատ գնաց, թե քիչ՝ դժվար է ասել։ Հասավ մի գետի, նստեց նրա մոտ և նայեց դիմացի կողմը. լեռան լանջին վրաններ երևացին։ Դրանց միջից երկու գեղեցիկ աղջիկներ դուրս եկան և գնացին դեպի գետը, սակայն Ղոդըղին չտեսան։ Նրանք հանվեցին և մտան գետը։ Հեռվից մի երիտասարդ եկավ և նստեց աղջիկների հագուստների վրա։ Աղջիկներից մեկը դուրս եկավ ջրից, երիտասարդը նրա հագուստը հանձնեց իրեն։ Աղջիկը հագնվեց և փախավ, իսկ մյուսը մնաց ջրում և ամաչում էր դուրս գալ։

— Երիտասարդ,— ամաչելով ասաց աղջիկը,— շատ եմ խնդրում, շորերս թող և գնա, չէ՞ որ աղջիկ եմ, ամոթ է, ուզում եմ հագնվել և գնալ։

— Ուզում եմ քեզ փախցնել, խոսք տուր, որ իմն ես։ Եթե խոսք տվիր գալ ինձ հետ, այն ժամանակ շորերդ կտամ, իսկ եթե մերժեցիր, քեզ այդպես կթողնեմ ջրում։

— Թո՛ղ Ղոդըղի թուրը վիզդ կտրի— երիտասարդին անիծելով ասաց աղջիկը։

---

[1] Միրե արաբա— արաբների թագավոր։

[2] Ռայաթ— աշխատավոր, երկրագործ ժողովուրդ։

[3] Քհել— նժույգ։

Ղոդըղը թաքնված լսում էր աղջկա աղաչանքն ու պաղատանքը։ Նա տեղից վեր կացավ, թուրը հանեց պատյանից, հասավ շորերի վրա նստած երիտասարդին։ Երիտասարդը փախավ։ Ղոդըղը նրա մազոտ աբան հագավ և գնաց գետից հեռու, պառկեց գետնին ու նայեց կապույտ երկնքին։ Աղջիկը դուրս եկավ ջրից, արագ հագնվեց և մոտեցավ Ղոդըղին։

— Ո՞ւմ աղջիկն ես,— շտկվելով ասաց Ղոդըղը։

— Միրե արաբայի,— պատասխանեց աղջիկը,— այդ փախած երիտասարդը մեր քաղաքի ամենահարուստ մարդկանցից մեկի՝ Սասադի տղան է։ Նա սիրահարվել է ինձ, իսկ ես նրան չեմ սիրում։ Նա ուզում էր զոռով փախցնել ինձ։ Այդ աղջիկը, որ փախավ դեպի վրանները, նրա հարազատ քույրն էր։ Նա ինձ խաբեց, բերեց այստեղ, ինչպես տեսար ինքդ, փախավ, ինձ էլ թողեց, որպեսզի եղբայրը փախցնի։

— Նեղ տեղ ընկած ժամանակ այդ ո՞ւմ էիր կանչում,— իրեն միամիտ ձևացնելով հարցրեց Ղոդըղը։

Ղոդըղին,— պատասխանեց աղջիկը։

— Ո՞վ է Ղոդըղը։

— Բա չե՞ս լսել, Ղոդըղը հերոս է, նեղ ընկած մարդուն օգնող, խեղճերի ու աղքատների միակ պաշտպանը։

— Չէ՞ որ դու թագավորի աղջիկ ես, նա ինչո՞ւ պետք է օգներ քեզ, քանի որ նա խեղճերի ու աղքատների պաշտպանն է։

— Թագավորներն ու իրենց որդիները, երբ նեղ տեղն են ընկնում, նապաստակներից էլ խեղճ են լինում։ Չէ՞ որ ես էլ կին եմ։

— Ուրեմն դու նապաստա՞կ ես,— ժպտալով հարցրեց Ղոդըղը։

— Այո՛, հիմա նապաստակից էլ վախկոտ եմ դարձել։

— Ղոդըղը ո՞ր ցեղից է,— հարցրեց Ղոդըղը։

— Քրդական հայտնի «խալտա» ցեղից, քաջ Մահմադի եղբոր տղան է։

— Քո ասած Ղոդըղը ես ինքս եմ...

— Ի՞նչ ես ասում,— ճչաց աղջիկը։ Մատաղ լինեմ քեզ Ղոդըղ, այդ որտեղի՞ց դուրս եկար։ Թող միշտ ողջ և առողջ լինես։ Բայց առանց իմ հոր թույլտվության ոչ ոք չի կարող մտնել այս հողը. դու ո՞նց եկար այս երկիրը։ Հայրս դաժան մարդ է, եթե իմանա, քեզ կսպանի։

— Սիրուն աղջիկ, չեմ կարող ասել, քո հոր հողը ուտեմ գրել նրա համար, որ նրա ձին՝ Բեջամին տանեմ և...

— Եվ, ի՞նչ,— հարցրեց աղջիկը,— լավ տղա, ասա՛, ինչ որ ուզում էիր ասել, ինձնից մի՛ պահիր, քո՛ ասածները կմնան սրտիս մեջ, ես պարտական եմ քեզ, մի օր քո լավության տակից դուրս կգամ:

... Ղզըլը նրա հորը սպանելու մասին բան չասաց:

— Գնանք մեր տուն,— Ղզըլին առաջարկեց աղջիկը: Իրիկուն էր, երբ նրանք օբան մտան:

— Ղզը՛լ,— ասաց աղջիկը,— դու քաղցած ես, իսկ հորս վրանը լիքն է հյուրերով. այստեղ սպասի՛ր, հաց բերեմ կեր, մինչև հյուրերը գնան, հետո կմտածենք, թե ինչ պիտի անենք, աստված ողորմած է, Մալաքետաուսը[1] կօգնի մեզ:

Վրանում քսանհինգ աղաներ նստած սուրճ էին խմում և զրուցում: Երկար զրուցելուց հետո աղաները ցրվեցին: Վրանում մնաց միայն Միրե աղան: Նա նայեց վրանի սյուներից կախված իր զենքերին՝ ղարաբինին, բրդանգին, կեռ սրերին, դաշույններին, ապա հանվեց և մտավ անկողին:

Աղջիկը մնաց քարացած վիճակում, հետո վրանից դուրս եկավ և ներս հրավիրեց Ղզըլին: Ղզըլը մտավ վրանը, տեսավ վրանի ներքին սարքը, աղջկա հոր անկողինը, որում քնած էր ծերունին: Ղզըլը մի փոքր մտածելուց հետո մտքում ասաց. «Այս աղջկա առաջ ի՞նչ խղճով պիտի սպանեմ նրա հորը: Ո՛չ, այդ տղամարդու գործ չէ. անկողնում, կամ գաղտագողի սպանելն ու ապա աղջկա մոտ պարծենալը վախկոտի գործ է, ո՛չ, ոչ, չե՛մ սպանի»:

Ապա դիմելով աղջկան ասաց.

— Ե՛կ, Բեջանին տուր ինձ, տանեմ:

Նրանք գնացին դեպի գոմը: Աղջիկը վերցրեց բանալին, բաց արեց գոմի դուռը և Բեջանին դուրս բերեց:

— Այս էլ քեզ Բեջանը,— ցածր ձայնով ասաց աղջիկը,— աստված քեզ հետ, գնա, բայց լսիր խրատս. ճանապարհին, երբ հանկարծ տեղից մի ծիտ թռչի, Բեջանը վատ բնավորություն ունի, նա քեզ գետնին կտա, շատ զգույշ եղի՛ր... Դեհ, բարի ճանապարհ քեզ, գնա՛:

1 Մալաքետաուս— սիրամարգ-հրեշտակ, քուրդ եզդիների երկրպագության աստվածը:

Ղզըլը նայեց աղջկան, աչքերն արցունքով լցվեցին: Նա համբուրեց աղջկա ճակատը, հեծավ Բեջանին և հեռացավ: Աղջիկը նայեց Ղզըլի հետևից և սիրտը լցվեց: Նա գլուխն առավ ձեռքերի մեջ և լաց եղավ:

Աղջիկը կես գիշերին մտավ վրանը, շորերով ընկավ անկողին և շարունակեց լալ:

— Ա՜խ, ինչո՞ւ հանդիպեց ինձ այս հրեշտակը՝ այն գեղեցիկ տղան: Ինչո՞ւ նա այսպես շուտ գրավեց իմ սիրտը, իսկ հիմա չկա,— ասում էր նա մտքում, և սիրտը մղկտում էր:

Ղզըլը երկու օր ճանապարհ գնալուց հետո, հանդիպեց մի ջրհորի, որի միջից հանկարծ երեք աղավնի դուրս թռան: Բեջանը սարսափահար տեղից վեր թռավ և Ղզըլին հորը գցեց, իսկ ինքը վերադարձավ տիրոջ վրանը:

Միրե՛ աղայի աղջկան՝ Շարիբանին թվում էր, թե ահա Ղզըլը մի օր կվերադառնա իր մոտ և ամեն ինչ լավ կլինի: Բայց ավա՜ղ, հանկարծ Բեջանը մոտեցավ վրանին: Շարիբանի սիրտը թպրտաց, նա վախեցավ և տխրեց:

«Ղզըլին վատ բան է պատահել»,— մտածեց նա: Եվ առանց հորը հարցնելու Շարիբանը հեծավ մի ուրիշ ձի, Բեջանի սանձից բռնած՝ քաշ տալով գնաց Ղզըլի հետևից:

Շարիբանը շատ գնաց, թե քիչ, դժվար է ասել, հասավ հորերին ու նայեց դեսուդեն:

Ղզը՜լ, Ղզ՜ըլ... կանչում էր նա: Հեռվից մի խուլ ձայն լսվեց.

— Էստե՜ղ եմ, էստե՜ղ...

Շարիբանը մոտ եկավ և գտավ նրան խոր հորում:

— Ղզըլ,— մղկտալով ասաց Շարիբանը,— քոռանամ ես, չէ՞ որ ասացի զգույշ եղիր: Ա՜յ քեզ, անխելք սիրունիկս:

Շարիբանը մեջքի գոտին արձակեց, կախեց հորի մեջ և ասաց.

— Ղզը՛լ, գոտիս կապի՛ր մեջքիդ, քեզ հիմա հորից կհանեմ:

Նա գոտին կախեց հորը, գոտին կարճ էր և չէր հասնում նրան:

Շարիբանը կիսով չափ կռացավ հորը, որպեսզի գոտին հասցնի, բայց ինքն էլ ընկավ հորը, իսկ երկու ձին դրսում մնացին անտեր-անտիրական:

Միրե աղան առավոտյան տեղից վեր կացավ, տեսավ Շարիբանը տեղում չէ: Նա զարմացավ, մնաց քարացած և հանկարծ աջ ձեռքով խփեց ճակատին:

— Վա՜յ լը մրն (վա՜յ ինձ),— բացականչեց նա և դուրս եկավ վրանից: Դրսում երկու ձին էլ չէին երևում: Ամեն ինչ կորած էր Միրե արաբայի համար: Միրը հրամայեց խուլամներին տագնապի թմբուկ զարկել: Թմկահարները շտապեցին վրանի մոտ և սկսեցին թմբկահարել: Միրի ձիավորներն իսկույն հավաքվեցին վրանի առջև: Նրանց ղեկավարը՝ Մստոն, ձեռքը կրծքին, մոտեցավ Միրին կիսով չափ խոնարհվեց և սպասեց հրամանին:

— Դուք գիտե՞ք, իմ հավատարիմներ,— հուզված ասաց Միրը,— ի՞նչ է պատահել ինձ: Այս գիշեր թշնամիները առևանգել են իմ միակ աղջկան՝ Շարիբանին և իմ լավագույն երկու ձին: Դուք պետք է ճանապարհ ընկնեք, թշնամիներին կոտորեք և ուր որ է, աղջկանս ու ձիերիս գտնեք, բերեք:

Ձիավորները բաժանվեցին խմբերի: Ամեն մի խումբ մի կողմ գնաց:

«Բառի» կոչվող ճանապարհով գնացող խմբից երկու ձիավոր բաժանվեցին և գնացին դեպի ջրհորները, խմբի մյուս ձիավորները արագ հեռացան ջրհորներից: Ձիավորները հեռվից երկու ձի տեսան, մոտեցան նրանց: Մոտիկ ջրհորից ձայներ լսեցին, գնացին և կանգնեցին ջրհորի եզրին: Հորում տեսան աղայի աղջկան մի սիրուն երիտասարդի հետ միասին՝ կիսով չափ ջրի մեջ կանգնած: Նրանք պարանով Շարիբանին և երիտասարդին հանեցին հորից և սկսեցին աղջկա համար կռվել: Ձիավորներից մեկը ասում էր, թե Շարիբանն իրենն է պատկանելու, իսկ մյուսը, թե՝ իր կինը պիտի լինի:

Ղոզըրը մտածում էր. «Ի՞նչ անել, որ աղջկան ազատի այդ մարդասպաններից»: Նա որոշեց կռվել նրանց դեմ: Թուրը քաշեց ու ասաց.

— Ով որ հաղթի, Շարիբանը նրանն է:

Երեք քաջերը սկսեցին կռվել: Ղոզըրը նրանց հաղթեց, ապա Շարիբանի հետ նստեց նրանց ձիերի վրա և գնացին դեպի Ղոզըրի տունը: Երբ նրանք տուն հասան, Ղոզըրը, որպես նվեր, այդ 2 ձիերն ուղարկեց հորեղբորը: Հորեղբայրը լուր ուղարկեց Ղոզըրին, թե համաձայն չի ու աղջկան չի տա, քանի որ պայմանը կիսով չափ է կատարել և Միրե արաբայի գլուխը չի բերել:

Ղոզըրը թալալի (մունետիկ) միջոցով լուր ուղարկեց հորեղբորը.

— Քեզ պես տմարդ չեմ, աղջիկդ քեզ հալալ լինի, ես արդեն կին ունեմ:

Ղոզըրը ամուսնացավ Շարիբանի հետ: Շարիբանին փնտրողները վերադարձան օրեն: Ղոզըրի հետ կռվողները պատմեցին նրա հաղթանակի և Շարիբանին տանելու մասին:

Երկու ամսից հետո Ղոզըրը հորեղբոր՝ Մահմադ աղայի հետ գալիս է Միրե արաբայի տուն՝ Շարիբանի ղալանը որոշելու և մեջտեղից թշնամությունը վերացնելու համար: Միրե արաբան ոչխար է մորթել տալիս և պատրաստել է տալիս «ղալիա սիլե»[1] ու շարբաթ[2]: Շարիբանի ղալանը որոշեցին 50 ոչխար, մի ձի, երկու հրացան և մի չուխա հոր համար: Դրանով վերջացավ ամեն ինչ:

ՄՈԼԼԱ ՆԱՍՐԵԴԻՆ

Մոլլան մի մարդուց դրամ է պարտք անում: Պարտքատերը հետո գնում է մոլլայի մոտ և պարտքը պահանջում:

— Պարտքդ կտամ,— ասում է մոլլան,— սրածայր փայտեր եմ տնկել ոչխարի ճանապարհին ու փարախի կողքին, որ ոչխարները անցնելիս քսվեն այդ փայտերին, բուրդը կպչի դրանց ծայրերին և փունջ-փունջ պոկվի ու փայտերի վրա մնա, կամ էլ գետին թափվի: Այդ փայտերը սուր են, ոչ ոք իրավունք չունի նրանց մոտենալու: Հենց որ ոչխարների բուրդը պոկվի ու թափվի, կգնամ այդ բուրդը կհավաքեմ, կծախեմ և պարտքդ կտամ:

Պարտքատերը քահ-քահ ծիծաղեց:

— Այ՛, արդեն պարտքդ ստացար,— պարտքատիրոջը դիմելով, կեղծավորաբար ասում է մոլլան,— քեզ ո՞վ կարող էր այսպես ուրախացնել:

Պարտքատերը փոռ ու փոշման վերադառնում է տուն և պատմում կնոջը[3]:

ՃՈՊԱՆԸ

Գյուղացիներից մեկը մի օր գնում է մոլլայի մոտ և ասում.

— Մոլլա՛, ճոպան չունեմ, սայլիդ ճոպանը մի երկու օրով տուր, խոտը դաշտից բերեմ:

1 Ղալիա սիլե—սաջի խորոված, ղաուրմա:

2 Շարբաթ— քաղցր ջուր:

3 Պատմեց Ուսըվե Բոսոն, Թբիլիսիի Գոնչարնայա փողոցի № 43 տան բնակիչ, 62 տ., գրի է առել հեղինակը 1949 թ.:

4 Ասաց Իբոե Ամոն 1943 թ. Արթիկի շրջանի Բարվանսարա գյուղում:

— Ճոպանի վրա ցորեն եմ փռել,— պատասխանում է մոլլան։

— Ինչպե՞ս կարելի է ճոպանի վրա ցորեն փռել,— զարմացած հարցնում է գյուղացին։

— Բա ի՞նչպես պետք է ճանապարհ գնել մարդուն,— պատասխանում է մոլլան, և երկուսով էլ քահ-քահ ծիծաղում են։

«Այսպես են բոլոր մոլլաները», մտքում ասելով՝ գյուղացին դատարկաձեռն վերադառնում է տուն[1]։

ՈՐՍՈՐԴ ՄԱՀՄՈՒԴԸ, ՀՍԿԱ ՕԶՄԱՆՆ ՈՒ ՊԱՀԱՆՋԿՈՏ ԱՍԱԴԸ

Մշո երկրում ապրում էր Ավդալ աղա անունով մի մարդ։ Նրա հովանավորության տակ էին հազար տուն։ Նա ուներ ութսուն հազար տղամարդ, յոթ կին և յոթ որդի՝ Ռոստամ աղա, Բալուլ աղա, Ավդի աղա, Սալման աղա, որսորդ Մահմուդ, հսկա Օզման և պահանջկոտ Ասադ անուններով։ Ավդալ աղան շատ հարուստ էր, ուներ անչափ ձի, ոչխար ու տավար։

Ավդալ աղան ուներ նաև Նազիհե անունով մի աղջիկ։ Նազիհեն շատ գեղեցիկ էր՝ նրա ծամերը երկար էին, աչքերը՝ սև, քիթը՝ բարակ։ Երբ մեկն ու մեկը կանգնում էր նրա մոտ, ուզում էր չուտի, չխմի, նրան նայի։

Երբ Նազիհեն դարձավ տասներկու տարեկան, երիտասարդներից շատերը խնամախոսներ էին ուղարկում՝ նրան իրենց համար ուզելու, բայց Ավդալ աղան պատասխանում էր.

— Նրանք ինձ արժանի մարդ չեն, ես իմ աղջիկը չեմ տա նրանց, նրանք կարող են միայն իմ ծառաները լինել, իմ աղջիկը պետք է տամ աղաներից մեկին, այն էլ ինձ հավասար աղայի։

Այդ ժամանակ աղայի հովանավորության տակ գտնվող մարդիկ զայրացան, հրաժարվեցին աղային տուրք տալուց, հեռացան, տեղափոխվեցին այլ տեղ։

Մի օր աղան կանչեց իր յոթ որդիներին։

— Տղաներս,— ասաց նա,— տեսնու՞մ եք, իմ «էլի» մարդիկ հեռացան ինձնից, միևնույն է, նրանք պետք է հեռանային, պատճառ էին փնտրում, բայց աղջկանս դարձրին պատճառ։ Ճիշտ է, աղջիկն իմն է, բայց ինչպես կարող եմ տալ ստորադրյալներին, իմ խուլամներին և այդ խուլամներին ընկեր դառնալ։ Դուք գիտեք, որ այդ բանը չի կարող լինել։ Հիմա մտածեցեք, ի՞նչ եք ասում։ Կարող է պատահել, որ խելքս չի կտրում, դուք ձեր ասելիքն ասեք։

Աղայի երեք մեծ որդիները համաձայնություն տվին հոր ասածին, որ նրանց քույրը չպետք է ամուսնանա իրենց հոր խուլամների կամ նրա հովանավորության տակ գտնվող մարդկանց հետ։

— Հայր,— ասացին նրանք,— կան մարդիկ, որոնք քո մարդկանց վանեցին քեզնից, մենք պետք է կռվենք նրանց դեմ, որպեսզի քեզնից փախածներին վերադարձնենք մեզ մոտ։

Չորրորդը՝ միջակ որդին, ասաց.

Հա՛յր, դու քո ժողովրդից պետք է հարկ չվերցնես։

— Թող քո ասածը լինի,— ասաց հայրը, եթե նրանք վերադառնան։

— Հայր,— ասաց նա,— մեր քույրը՝ Նազիհեն, արդեն հասած աղջիկ է, տուր մեկն ու մեկին, թող գնա, թե չէ՝ մեկն ու մեկի հետ կփախչի և մեզ համար ամոթալի կլինի, ցեղապետների մեջ կխայտառակվենք։

Այս ասածի համար աղան իր այդ որդուն տնից հեռացրեց։

Իսկ որսորդ Մահմուդը, հսկա Օզմանն ու պահանջկոտ Ասադը խոնարհվեցին հոր առաջ և ասացին, որ իրենց չորրորդ եղբոր ասածը ճիշտ է։

Ավդալ աղան նրանց էլ տնից վռնդեց։

— Թող այդպես լինի,— ասացին եղբայրները։

Այս վերջին երեք եղբայրները ձի նստեցին և գյուղից դուրս եկան։ Շատ գնացին, թե քիչ, դժվար է ասել։ Հասան մի ճամփաբաժնի, որտեղից երեք ճանապարհ բաժանվում էին իրարից։ Նրանք համաձայնության եկան, որ ամեն մեկը մի ճանապարհով գնա և երեք տարուց հետո գան, այդ նույն տեղը իրար տեսնեն ու գնան իրենց հոր մոտ։

Մահմուդը դեպի աջ տանող ճանապարհով գնաց, Օզմանը՝ միջին ճանապարհով, իսկ Ասադը՝ դեպի ձախ տանող ճանապարհով։

Այժմ խոսենք Ավդալ աղայի և իր մեծ որդիների մասին։

Ավդալի աղջկա ուզողները զինված եկան Ավդալ աղայի դեմ կռվելու։ Ավդալ աղան գնաց իր արենակիցների մոտ, որ հավաքվեն հարձակվողներին դիմադրելու։ Ավդալ աղայի արենակիցները, որոնք նույնպես հարկ էին տալիս նրան, մերժեցին։

[1] Ասաց Իբրև Ամոն։

— Աղան մեզանից էլ է հարկ առնում, մեզ ճնշում է, ինչու նրա համար ուրիշների դեմ կռվենք։

Ոչ ոք չլսեց աղային, բացի նրա մի քանի եղբայրներից ու պսմամիներից։ Նրանք, մոտ հիսուն տղամարդ, հեծան իրենց ձիերը և դուրս եկան կռվի ասպարեզ։

Երկու կողմից ձիավորները, ասես առյուծներ, կանգնեցին դեմ-հանդիման։

Ավդալ աղան ձեռքին ուներ մի երկար նիզակ։ Նույնպիսի մի նիզակ էլ ժողովրդի ղեկավար Դադոն ուներ։ Բոլորն էլ սրեր ու վահաններ ունեին։

— Լո՛, լո՛, անխիղճ և դաժան Ավդալ,— հեռվից կանչեց Դադոն,— դու աղջկանդ չէիր տալիս մեր ջահելներին, մեծ-մեծ տուրքեր էիր առնում մեզնից բավական չէ, դեռ ծաղրում էլ էիր մեզ, իմացի՛ր, այսօր արյուն է թափվելու։

— Վաղուց էի ծաղրում, հիմա էլ եմ ծաղրում, վախկոտնե՛ր, դուք վախից փախաք, հեռացաք մեզանից։

— Եթե վախկոտ լինեինք, հիմա չէինք հարձակվի քեզ վրա,— պատասխանեց Դադոն։

— Հիմա կռվով ցույց կտամ քեզ,— ասաց Ավդալը։

Կռիվն սկսվեց։

Հովիվ Դադոյի որդին՝ Հասոն էլ էր եկել կռիվ։

Հասոն նիզակով Ավդալին խփեց, սպանեց։ Ավդալի արբանյակները փախան, բարեկամներից շատերն սպանվեցին, ոմանք վիրավորվեցին, ոմանք էլ գյուղ վերադարձան։ Դադոն իր մարդկանցով շրջապատեց գյուղը։ Նազինեին տարան Հասոյի համար, հետո էլ աղայի ունեցվածքը։

Այժմ լուր տանք Ավդալի երեք որդուց։ Նրանք երեք տարուց հետո, մայիսի մեկին, իրենց հետ մի-մի կին առած, միմյանց հանդիպեցին պայմանավորված ճանապարհում, բարևեցին, համբուրվեցին, ծանոթացան միմյանց կանանց հետ և քիչ զրուցեցին։

Նրանցից մեծ եղբայրը հովվությամբ էր զբաղվել և հովվի աղջիկ էր բերել իր համար, միջնեկը մի գյուղում նախրապան էր եղել և նախրապանի աղջիկ էր բերել, փոքրն էլ աղայի աղջիկ էր փախցրել։ Այսպես վեց ձիավորներով վերադարձան Ավդալի գյուղը և լսեցին իրենց հոր՝ Ավդալի և Դադոյի կռվի մասին։

— Նրա ճամփեն այդ էր,— ասաց միջնեկ եղբայրը[1]։

[1] Ասաց Աթամե Սլթոն, Ապարանի շրջանի Ալագյազ գյուղից։ Գրի է առել հեղինակը 1952 թ.։

ՊՂԻՆՁԸ

Մի օր մոլլան գնում է մի աղքատ գյուղացու տուն և մի պղինձ խնդրում։ Գյուղացին իր մեծ պղինձը տալիս է մոլլային։ Մի քանի օրից հետո մոլլան խորամանկությամբ մի փոքրիկ պղինձ է դնում գյուղացու մեծ պղնձի մեջ և տանում, տալիս է նրան ու հայտնում իր խորին շնորհակալությունը։

— Բա միջի էս փոքրիկ պղինձն ո՞ւմն է,— հարցնում է գյուղացին։

— Քո պղնձի ճուտն է, պղինձդ ծնեց, ճուտ բերեց,— պատասխանում է մոլլան և հեռանում, մտքում ասելով՝ «միամիտ գյուղացի է, հա՜...»։

— Մի քանի օրից հետո մոլլան նորից գնում է նույն գյուղացու տուն և մեծ պղինձը նորից խնդրում։ Նրա կինը այս անգամ էլ մեծ պղինձը տալիս է մոլլային։ Մոլլան տանում է ու էլ ետ չի բերում։

— Մոլլա, պղինձն ի՞նչ արիր, բե՛ր,— դիմում է մոլլային պղինձը տվող կինը։

— Ձեր պղինձը մեռավ,— ասում է մոլլան։

— Ո՞նց թե մեռավ, էդպես էլ բան, ո՞վ է տեսել, որ պղինձը մեռնի,— բացականչում է կինը։

